

ԽՈԳԻԿԱՆՔ

ՍԱՄԿԵԼ ԿԱՐԱՊԵՏՅԱՆ



ՀԱՅԱՍՏԱՆԻ ԳՐԱՏՈՒԹՅԱՆ ՈՒՍՈՒՄՆԱՍԻՐՈՂ ՀԻՄՆԱԳՐԱՄԻ (RAA) ԳԻՏԱԿԱՆ ԽՈՋԻՎԱՆԻ
Գր., պրոֆ. Ա. Մուրադյան (Փարիզ), դր., պրոֆ. Հ. Հոֆրիսթեր (Քայզերսլաութերն), դր., պրոֆ. Մ. Բունեման-Հախնազարյան
(Աախեն), դր., պրոֆ. Հ. Մուրուզյան (Կահիրե), դր., պրոֆ. Լ. Ջեքիյան (Վենետիկ), դր., պրոֆ. Մ. Հասրաթյան (Երևան), դր., պրոֆ.
Ա. Ղազարյան (Մոսկվա), պրոֆ. Ն. Սարգսյան (Երևան), պրոֆ. Ռ. Գալստյան (Լոնդոն), դր. Մ. Բալայան (Ստեփանակերտ),
Ժ. Մանուչարյան (Լոս Անջելես), Հ. Սիմոնյան (Լոզան), Մ. Լալայան (Երևան)

ՀՈՋԻՎԱՆԻ ԳԻՏԱԿԱՆ ՈՒՍՈՒՄՆԱՍԻՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Գիրք ժողով

ԽՈՋԻՎԱՆԻ

ՍԱՄՎԵԼ ԿԱՐԱՊԵՏՅԱՆ

ХОДЖИВАНК

SAMBEL KARAPETYAN

KHOJIVANK

SAMVEL KARAPETYAN



ՀԱՅԱՍՏԱՆԻ ԳՐԱՏՈՒԹՅԱՆ ՈՒՍՈՒՄՆԱՍԻՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ

ԵՐԵՎԱՆ 2024

ՀՏԴ 94(479.25):726
ԳՄԴ 63.3(53)+85.11
Կ 294

Կ 294 **Կարապետյան Սամվել**

Խոջիվանք / Ս. Կարապետյան.-Եր.:

Հայկական ճարտարապետությունն ուսումնասիրող հիմնադրամ, 2024. գիրք ԺԹ.–208 էջ:

Աշխատությունը ներկայացնում է Վրաստանի Հանրապետության մայրաքաղաք Թբիլիսիի Հավլաբար թաղամասում գտնված և այժմ ամբողջությամբ ոչնչացված հանրահռչակ Խոջիվանքի գերեզմանոցի պատմությունը: Հասցեագրվում է ընթերցող լայն հասարակությանը:

ՀՏԴ 94(479.25):726
ԳՄԴ 63.3(53)+85.11

ISBN 978-9939-843-66-7

© Հայկական ճարտարապետությունն ուսումնասիրող հիմնադրամ (ՀՃՈԻ), 2024

www.armenianarchitecture.org, www.artsakhmonuments.org, www.raa-am.org ✉ raayer@sci.am, raatransfer@yahoo.com

Նախահրատարակչական աշխատանքները կատարվել են «Գալուստ Կիլպէնկեան»
հիմնարկության և ՀՃՈՒ-ԱՄՆ-ի աջակցությամբ

Տպագրական աշխատանքները կատարվել են
ՀՀ ԿԳՄՍ նախարարության աջակցությամբ

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

Երկու խոսք	5
Խոջիվանք. Ծիրանավոր Սբ. Աստվածածին վանքը և գերեզմանոցը	6
Ընդհանուր տեղեկություններ Տփղիսի հայոց գերեզմանոցների վերաբերյալ	6
Տեղադրությունն ու սկզբնավորումը	7
Ծիրանավոր Սբ. Աստվածածին կամ պարզապես Խոջիվանք	7
Ծիրանավոր Սբ. Աստվածածին վանքի ճարտարապետությունը	13
Խոջիվանքի որմնանկարները	13
Խոջիվանքի գերեզմանոցը	17
Գերեզմանոցի ոչնչացումը	31
Գերեզմանոցի ավերումից հետո այլևայլ կառույցների որմերում որպես շինանյութ գործածված տապանաքարերը	35
Կացությունը մինչև 1961 թ.	36
Կացությունը մինչև 1994 թ.	37
Գերեզմանոցատեղին վերջնականապես յուրացնելու քայլերի հաջորդականությունը 1994-1999 թթ.	38
Ոսնձգություն Խոջիվանքի պանթեոնի նկատմամբ	40
Սամեթա (Սբ. Երրորդություն) եկեղեցու կառուցման ավարտն ու հոգևոր սեմինարիա հիմնելու փորձը	41
Սամեթա եկեղեցին և մեղքերի գիտակցման նախանշաններ	42
Գերեզմանոցում ամփոփված հանգուցյալների թվաքանակի մասին	42
Գերեզմանոցում ամփոփված հանգուցյալների՝ մեզ հայտնի ցանկը	45
Անհայտ տարեթվեր	177
Խոջիվանքի պանթեոնի նորագույն թաղումները	177
Խոջիվանքն անվանի հայրդղիների հուշերում	179
Օգտագործված գրականության ցանկ	180
Անձնանունների ցանկ	187
Տեղանունների ցանկ	206

ԵՐԿՈՒ ԽՈՍՔ

Հայկական սկզբնաղբյուրներում Վրաստանի Հանրապետության՝ Տփղիս անվանը հայտնի մայրաքաղաք Թբիլիսիի պատմության ուսումնասիրության, ընդհանրապես և դարեդար (մինչև 1920-ական թթ.) նրա բնակչության մեծամասնությունը կազմած հայ համայնքի թողած պատմական հետազոծի քննության առումով չափազանց մեծ նշանակություն ունի քաղաքի հին գերեզմանոցների հետազոտությունը:

Մեր օրերում, սակայն, այդ աշխատանքները, ըստ էության, պատշաճ ձևով հնարավոր չէ կատարել, քանի որ հայկական բոլոր հին գերեզմանոցները քաղաքային իշխանությունների նախաձեռնությամբ համատարած ոչնչացվել են՝ սկսած դեռևս Վրաստանում ռուսական տիրապետության հաստատման սկզբնական տարիներից և առավել վայրագ դրսևորումներով ավարտվել 1930-ական թթ. վերջերին:

Այս վերջին իրողությունը, անշուշտ, լրջագույնս բարդացնում, է՛լ առավել՝ գրեթե անհնարին է դարձնում հին Տփղիսի հայկական գերեզմանոցներից որևէ մեկը բավարար չափով ուսումնասիրելու հնարավորությունը, սակայն հաշվի առնելով խնդրի կարևորությունը նույնիսկ առկա իրավիճակում՝ վաղուց անհրաժեշտություն էր զգացվում փորձելու ի մի բերել հնավայրերի պատմությանն առնչվող գիտական շրջանակներին ցարդ հայտնի և անհայտ, կցկտուր և ամբողջական տվյալները և դրանց հիման վրա ներկայացնել երբեմնի հռչակավոր հնավայրերի պատմությունը:

Այս շարքից առաջինը ստանձնելով Խոջիվանքի գերեզմանոցի պատմության ուսումնասիրության գործը՝ կարևոր է պատասխանել առնվազն մի քանի կարևոր հարցերի.

ա. Ե՞րբ է սկզբնավորվել Խոջիվանքի գերեզմանոցը:

բ. Գեղարվեստի և ճարտարապետության տեսանկյունից նյութական մշակույթի ի՞նչ հուշարձաններ կային գերեզմանոցում:

գ. Հիմնադրումից ի վեր և մինչև 1937 թ. ներառյալ, երբ իշխանությունների որոշմամբ գերեզմանոցն ամբողջությամբ և վերջնականապես ավերվում է, թեկուզ մոտավոր հաշվարկներով որքա՞ն հանգուցյալ էր ամփոփված գերեզմանոցում:

Սույն աշխատությամբ փորձել ենք առկա տվյալների հիման վրա ժամանակագրական դասակարգմամբ ստեղծել գերեզմանոցում ամփոփված հանգուցյալների՝ զոնե մեզ հայտնիների հնարավորինս ընդգրկուն ցանկը:

ԽՈՋԻՎԱՆՔ. ԾԻՐԱՆԱՎՈՐ ՍԲ. ԱՍՏՎԱԾԱԾԻՆ ՎԱՆՔԸ ԵՎ ԳԵՐԵԶՍԱՆՈՑԸ

Ընդհանուր տեղեկություններ Տփղիսի հայոց գերեզմանոցների վերաբերյալ. որքան էլ բազմադարյան Տփղիս քաղաքը հարուստ է պատմական հուշարձաններով, այնուամենայնիվ, ինչ վերաբերում է հին գերեզմանոցներին և այն էլ հատկապես հայկական, ապա դրանք ժամանակի ընթացքում գրեթե առանց բացառության ոչնչացվել են:

Գերեզմանոցների ոչնչացման գործընթացը, ըստ էության, Տփղիսում սկիզբ էր առել ռուսական տիրապետության հաստատումից ի վեր:

Գրանցից մեկի մասին, օրինակ, 1817 թ. գերմանացի դիվանագետ Մորից ֆոն Կոցեբուն վկայում է, որ գեներալ Երմոլովի կարգադրությամբ հիմնավորապես քանդել էին (ամենայն հավանականությամբ՝ հայոց) Տփղիսի հին գերեզմանոցը. «Քաղաքի կենտրոնում կար մի հին գերեզմանատուն, շատ հարգված հին գերեզմանաքարերի պատճառով. դա բավական տարածություն էր գրավում և շրջապատված էր տեղի ամենակեղտոտ անցքերով: Գեներալը հրամայեց, որ պատերը քանդվեն, և գերեզմանաքարերը վերադարձվեն այն ընտանիքներին, որոնց պատկանում էր, որպեսզի կարելի լինի գետինը հարթել»¹:

Շուտով անհետանում է նաև Տափի քաղում գտնվող հայկական վանքապատկան գերեզմանոցը, որի հարևանությամբ նահանգապետ Երմոլովի թույլտվությամբ դպրոց է կառուցվում²:

Անհետանում են նաև 1876 թ. վկայված եկեղեցապատկան կալվածք «Մանիշակի տախտ անուանեալ գերեզմանատեղին»³ և Աբասաբադյան հրապարակի տարածքում եղած հայոց հին գերեզմանոցը⁴, որի մնացորդները շինարարական տարբեր աշխատանքների բերումով ի հայտ էին գալիս դեռևս 1880-ական թվականներին. «Աբաս-Աբաթեան հրապարակի վերայ, ...նոր ջրանցք (արխ) բա-

նալիս երևացել է գերեզմանատուն: Գերեզմանաքարերը և հանգուցեպաների ոսկորները դուրս են ձգել: Սոյն քաղի բնակիչները շատ անբաւական են սորա համար: Ի՞նչ կլինէր, որ մեր հանգուցեալ պապերի նշխարները հանգիստ թողնէին»⁵:

Սակայն, եթե ցարական տիրապետության ժամանակահատվածում հին գերեզմանոցներն ավերվում էին նոր կառուցապատումներով տարեցտարի ընդարձակվող քաղաքի՝ օրավոր սրվող քաղաքաշինական խնդիրներին լուծում տալու նպատակով, ապա 1930-ական թթ. կեսերին հայկական գերեզմանոցների (նաև եկեղեցիների) զանգվածային ավերումներն արդեն պայմանավորված էին նախկին հայաքաղաքը վրացական նկարագրով հանրապետության մայրաքաղաքի վերածելու մտահոգությամբ:

Հենց այս ծրագրի շրջանակներում էլ 1930-ական թթ. ընթացքում Տփղիսի համայնապատկերից մեկընդմիջտ անհետացվում են առաջնորդանիստ Վանքի (Հարանց կամ Փաշավանք) եկեղեցական համալիրը՝ բակում գտնվող ընդարձակ գերեզմանոցով⁶, թաղական մի շարք (Հավլաբարի Սբ. Գրիգոր Լուսավորիչ, Խարփուխի Սբ. Սարգիս, Նավթլուղի Սբ. Գևորգ, Մեյրանի Քառասնից մանկանց կամ Սբ. Հրեշտակապետաց, Կուկիայի Սբ. Աստվածածին, Տափիթաղի Սբ. Գևորգ, Ջգրաշենի Սբ. Ավետյաց, Ջրկինյանց Սբ. Կարապետ և այլն) եկեղեցիներ՝ իրենց կից գերեզմանոցներով հանդերձ, և, ի վերջո, Խոջիվանքի գերեզմանոցը:

հանգուցյալներին ամփոփում էին հետագայի Աբասաբադյան հրապարակի տարածքում գտնվող հայոց գերեզմանոցում (Тифлисский листок. № 36. 12 февраля 1912 г. С. 2; բնագրում՝ «Впоследствии Ходживанк обращен в кладбищенскую церковь, в ограде которой хоронят теперь всех членов из рода кн. Бебутовых, а также игумений монастыря с разрешения тех-же кн. Бебутовых; вне церкви-же вся местность отведена под общественное кладбище. До этого-же времени местом вечного упокоения армян служила нынешняя Абасабадская площадь, где теперь разведен прелестный сквер»).

5 «Մեղու Հայաստանի», 1884, № 87, 8 նոյեմբերի, էջ 3:

6 Վրաստանի Հանրապետությունում մոլեզմող ազգային խորական քաղաքականության պայմաններում քաղաքային իշխանությունների կամայականություններն այնպիսի սանձարձակ չափեր էին ընդունել, որ հայկական դարավոր սրբավայրերը քանդելուց առաջ նույնիսկ հանդգնում էին հրապարա-

1 **Հակոբյան Հ.**, Ուղեգրություններ, 2, Երևան, 1934, էջ 504 (բնագիրը տե՛ս Narrative of a journey into Persia in the suite of Imperial Russian embassy in the year 1817, by **Moritz Von Kotzebue**, London, 1819, p. 55):

2 **Գեորգեան Խ.**, Պատմության էջերից, «Վարագ», 2008, № 55, էջ 11:

3 «Մշակ», 1876, № 41, 28 հոկտեմբերի, էջ 4:

4 Հայտնի է, որ նախքան Խոջիվանքի գերեզմանոցի՝ տոհմականից հասարակականի վերածվելը թիֆլիսցիներն իրենց

Տեղադրությունն ու սկզբնավորումը. գտնվում էր Թիֆլիսի Հավլաբար թաղամասի հյուսիսարևելյան կողմում՝ Մախաթ սարի հարավարևմտյան լանջին:

Առաջին վկայություններից մեկը, որը վերաբերում էր այն տարածքին, որտեղ հետագայում սկզբնավորվել էր Բեհրուդյանների տոհմական գերեզմանոցը, իսկ ավելի ուշ՝ նաև Ծիրանավոր Սբ. Աստվածածին վանքը, 1392 թ.-ից է, որի համաձայն՝ վայրը մաս էր կազմում Մցխեթի կաթողիկոսական տիրույթների⁷:

Հայտնի է, որ վրաց Ռոստոմ թագավորը (1632-1658 թթ.) 1654 թ. բավարարում է դրամահատման արքունի տան պատասխանատու և միաժամանակ Տփղիսի մելիք թաղաքագուխ (եթե վերջինիս կարելի է նույնացնել մելիք Բայանդուրի հետ, ուրեմն Տփղիսի մելիք՝ 1650 թ.-ից) խոջա Բեհրուտի խրնդրանքը վերոնշյալ վայրում, այն է՝ Մախաթ լեռան ստորոտում՝ Հավլաբար թաղամասի հարևանությամբ գտնվող Բեհրուդյանների տոհմական գերեզմանոցում եկեղեցի կառուցելու վերաբերյալ: Խոջա Բեհրուտը նշյալ վայրում տնկում է այգի և ջրանցք անցկացնում՝ սեփական կալվածքները ոռոգելու համար⁸:

Ծիրանավոր Սբ. Աստվածածին կամ պարզապես Խոջիվանք. ինչպես երևում է, 1654 թ.՝ վերոնշյալ թույլտվությունը ստանալուն պես, խոջա Բեհրուտն անմիջապես ձեռնարկում է շինարարական աշխատանքները և հաջորդ իսկ տարում հաջողությամբ ամբողջացնում կառույցը: Համենայն դեպս, այդ մասին է վկայում կառույցի շինարարական քառատող արձանագրությունը:

Արձանագրություն. եկեղեցու պատին ազուցված սրբատաշ քարերից մեկն էր, որը, բարեբախտաբար, փրկվել է վանքի քանդման ժամանակ:

Ի թվիս Հայոց ՌՃԴ (1655), կանոնքն Ա](ստու)-[ծ]ոյ ես՝ խոջայ Բեհրուտէ, [եւ] | եղբա(յ)ր իմ Խատին (եւ) կողակից իմ Լալին | շինեցի ս(ուր)բ եկեղե(ց)իս աղօթի(ւք) Ալանին:

Հրատ. **Мурадян П.** Армянская эпиграфика Грузии: Тбилиси. Ереван, 1988. С. 96:

Ճանոթ. բովանդակությունը հուշում է, որ վիմագիրը կարող էր շարունակված լինել նաև կից քարին: Ի դեպ, հրատարակչը բաց է թողել Ալան անձնանունը և ունի մանր այլ տարրերբերցումներ:



Ծիրանավոր Սբ. Աստվածածին (Խոջիվանք) վանքի եկեղեցու շինարարական արձանագրությունը (լուս.՝ Ս. Դարչինյանի, գրչ.՝ Ս. Կարապետյանի)

կել նյութեր, թե իբր հայերն իրենք էին խնդրում, որ հայկական հիշատակներն անհետացվեին: Այս առումով ուշագրավ և չափազանց խոսում է 1938 թ. հրապարակված հետևյալ հաղորդագրությունը. «Թիֆլիսի խորհրդի նախագահությունը բավարարեց Թիֆլիսի աշխատավոր հայերի միջնորդությունը, որոնք խնդրում էին քանդել Վանքի եկեղեցու շենքը: Հողամասը կհատկացվի 1939 թ. հայկական լրիվ միջնակարգ դպրոց կառուցելու համար» («Խորհրդային Վրաստան», 1938, № 85, 23 սեպտեմբերի): Ի դեպ, արձագանքելով այդ լուրին՝ 1938 թ. գրող, թարգմանիչ և մշակութային գործիչ Սուրեն Ավչյանն իր օրագրում նշում է. «Ստում եք սրիկայաբար, շա՛ն որդիք, ձեզ ոչ ոք չի խնդրել, այլ բողբոխն ահ ու սարսափի տակ ստորագրել տվեցիք, իսկ եթե հայերից մեկը ինքնական ստորագրել է, նա էլ է ստոր և սրիկա...»:

7 Грузинские документы IX-XV вв. в собрании Ленинградского отделения института востоковедения АН СССР. Перевод и комментарии **С. Какабадзе.** Москва, 1982. С. 101 (բնագրում՝ «Авлабарский монастырь все-святой с его долей владений и с авлабарским прибрежным полем...»).

8 **Ջեթոճե տ.**, լճ տձոցոնո զձմոնճ, տձոցոնո, (**Բերին Թ.**, Եվ հայտնվեց Թիֆլիսին) 1977, ՅՅԳՐ: 116: Տե՛ս նաև **Мурадян П.** Армянская эпиграфика Грузии: Тбилиси. Ереван, 1988. С. 96.

Թերևս Բեհրուդյան ընտանիքի անդամներից մեկի՝ ոմն Սանդուխտի հիշատակն էր հավերժացնում 1715 թ. կերտված և եկեղեցու ներսում՝ հյուսիսային որմին կից կանգնեցված գեղաքանդակ խաչքարը: Վերջինիս քիվին և հիմնախաչի հորիզոնական թևերից ցած՝ ավելի փոքր խ ա չ ա ք ա ն դ ա կ ն ե թ ի ստորին թևերի երկու կողմերում փորագրված արձանագրությունն ազդարարում է.





Ծիրանավոր Սր. Աստվածածին (Խոջիվանք) վանքի գավթուն 1715 թ. կամ գնեցված խաչքարը (լուս.՝ 1930-ական թթ. սկիզբ, հեղինակը՝ անհայտ և Ս. Դարչինյանի, 1976 թ.)

Ով քառաթեւ, բարեխոս լեր Սանդուխտին, / քվ(ին) ՌՃԿ/Դ (1715):

Հրատ. **Мурадян П.** Тбилиси. С. 97.

Ծանոթ. հրատարակիչը չունի քվականը, իսկ «քառաթեւ»-ի փոխարեն ունի «քառեա (°) այթ (°) եւ» տառակապակցությունը:

Կառուցումից 125 տարի անց՝ 1780 թ., ըստ ամենայնի, շինությունն արդեն հասցրել էր բավականաչափ քայքայվել, ուստի նույն տոհմի ներկայացուցիչ, Տփղիսի քաղաքագլուխ մելիք Ավետիք Աղայան Բեհբուդյանցը (1768-1795) ստանձնում է եկեղեցու վերաշինության գործը. «[Հ]ավլաբարից դուրս, հարթավայր տեղում, [Հ]ավլաբար թաղից մի փոքր հեռավորությամբ կա եկեղեցի փառաշեն գրմբեթավոր, քարուկրով [կառուցված], պարսպով պատած, հանուն ամենասրբուհի ծիրանազարդ Աստվածածնի, որ Խոջա Բե[հ]բուդովի ժամ է կոչվում և որը կառուցված է հենց նույն իշխան Բե[հ]բուդովների ծախքով 1780 թվին և հետագայում նրանցից բազմիցս նորոգված: Այս եկեղեցին կառուցված է իշխան Բե[հ]բուդովներից իբրև իրենց դամբան»⁹:

Ինչպես ցույց են տալիս հետագա վավերագրերը, եկեղեցու՝ 1780 թ. սկսված վերաշինության աշխատանքները շարունակվում են նաև հետագա տարիներին: Ընդ որում, գործին լծված քաղաքագլուխը՝ մելիք Ավետիք Բեհբուդյանցը, դիմում է Ամենայն Հայոց կաթողիկոս Ղուկաս Ա Կարնեցուն (կաթողիկոս՝ 1780-1799 թթ.)՝ կամավոր նվերներ և հանգանակություն ժողովելու թույլտվություն ստանալու խնդրանքով: 1782 թ. օգոստոսի 2-ի պատասխան գրության մեջ մասնավորապես նշվում է. «Թուղթ ի Թիֆլիզ առ մելիք Աւետիքն, ի պատասխանի նորին թղթոյն, որով զկոնդակ էր խնդրեալ ի վերայ բոլոր երկրին յաղագս Հալուաբարու անապատին իւրեանց, զի երկրացիքն այնու զկամատոր ողորմութիւնս տացեն ի շինութիւն նոյն սրբոյ անապատին: ...թուղթն քո էհաս առ մեզ, հանդերձ ի հոգեւոյս տէր Ղազար սրբազան կաթողիկոսէն շնորհեցեալ կոնդական վասն Հալուաբարու անապատին սրբոյ, ձեռամբ Բաղտասարին...»¹⁰:

Նույն ամսաթվով մեկ այլ գրություն էլ արդեն ակնարկում է վերաշինության հաջող ավարտը. «...սրբոյ անապատին Ծիրանատոր կոչեցելոյ, որ ի

9 **Մելիքսեթ-Բեկ Լ.**, Վրաց աղբյուրները Հայաստանի և հայերի մասին, հ. Գ, Երևան, 1955, էջ 268-269: Ի դեպ, Բեհբուդյանցները Տփղիսում կառուցել են նաև Կուսանաց վանքը. «...տիրապետող վրաց ազգութեան համեմատութեամբ՝ Թիֆլիսի հայք հարուստ էին: Իհարկէ անցեալ դարու քաղաքիս կրած մեծամեծ աւերմունքները ջնջեցին այստեղի հայոց բարեգործութեանց յիշատակների մեծ մասը, բայց և այնպէս մեզ հասած են Թիֆլիզի հայերի մեջ միշտ առաջին դիրք ունեցող՝ իշխան Բեհբուդեանցների կառուցած Կուսանաց անապատը և Խօջի վանքը...» (**Երիցեան Ա.**, Բարեգործութիւնը հայոց մէջ, «Արձագանք», 1882, № 11, 2 մայիսի, էջ 169): Հայտնի է, որ Բեհբուդյանցների միջոցներով էր կառուցվել նաև տփղիսամերձ Նախշիրգորա գյուղի Ննջման Սր. Աստվածածին եկեղեցին:

10 Դիվան հայոց պատմության (այսուհետ՝ ԴՃՊ, հմպտ. գրքով և հատորով), գիրք առաջին, հ. Ա, Երևան, 1984, էջ 335: Ի դեպ, հատկանշական է, որ «Հավլաբարու անապատը» հոգաձուրյան ներքո է եղել նաև Ղազար Ձահկեցի կաթողիկոսի գահակալության տարիներին (1737-1751 թթ.):

լուսահոգին նախնեացն ձերոց ի դաշտին Հալուաբարու կառուցեալ է յանուն սրբուհոյ Աստուածածնին և ի բազում ամաց հետէ անմարդարնակ եղեալ, այժմոյս շինացեալ է նորապէս...»¹¹:

Կամավոր նվիրատվություններից գոյացող միջոցներով եկեղեցու պահպանության խնդիրը կաթողիկոսի ուշադրության ներքո է եղել նաև հետագա տարիներին: Այդ է վկայում 1788 թ. դեկտեմբերին գրված կաթողիկոսական կոնդակը. «Կոնդակ մի ժողովարարութեան ի վերայ Թիֆլիզու, ի Գօրոյ եւ Կախեթու վասն Ծիրանաւոր կոչեցեալ սրբոյ Աստուածածնի անապատին, որ է ի Հալուաբարու դաշտին, որք յամենայնում ամի մի անգամ զկամաւոր ողորմութիւնս տացեն այնմ սրբոյ անապատին՝ ի շինութիւն նորին»¹²:

1817 թ., ի թիվս Տփղիսի հայոց 25 եկեղեցիների, հիշվում է նաև Խոջիվանքի Ծիրանավոր Սբ. Աստվածածինը¹³:

Ուշագրավ է, որ չնայած գերեզմանատան մեջ գտնվելու հանգամանքին և նույնիսկ ներսում¹⁴ Բեհբուդյան տոհմից նոր հանգուցյալների ամփոփման իրողությանը՝ 1858 թ. այն գործում էր որպես ծխական եկեղեցի, «յորում շարունակի անխափան ժամերգութիւն և սբ. պատարագ»¹⁵:

1861 թ.՝ ծխատեր Ավետիս քահանայի պաշտոնավարության ժամանակ, դարձյալ հիշվում է «Սբ. Ա(ստուա)ծածնի եկեղեցի գերեզմանատան կնեագացն Բեհբուտեանց...»¹⁶:

Որպես տոհմական եկեղեցի՝ ինքնին հասկանալի է, որ բարեգարդությանն ու մասնակի նորոգություններին առնչվող բոլոր ծախսերը մշտապես հոգում էր Բեհբուդյան իշխանատոհմն իր նյութական միջոցների հաշվին: Սա է արձանագրվել 1872 թ. «Ձծախսն տոյն եկեղեցոյ հոգան ազգատոհմն Բեհբուդեանց»¹⁷:

Կախված եկեղեցու ծխատեր քահանայի՝ կառույցի հանդեպ տածած հոգածության չափից՝ երբեմն տեղի էին ունենում նաև ցավալի իրադարձություններ: Կացությունը մասնավորապես անմխիթար էր 1880 թ. վերջին. «...մի ամիս է, ինչ որ Խոջիվանքի եկեղեցին կոտրել և միջի մի քանի անօրներ

գողացել են, այն ինչ այս մասին ոչ եկեղեցու քահանան, ոչ ժամկոչը և ոչ հոգևոր իշխանութիւնը տեղեկութիւն ունէին: Երևելի հոգացողութիւն»¹⁸:

Դրությունն ավելի բարվոք էր եկեղեցուն սպասվորած Բարդուղիմեոս քահանա Հովհաննիսյան Մարկոսյանցի պաշտոնավարության տարիներին, որը 1887 թ. հուլիսի 27-ից մինչև կյանքի վերջը՝ 1924 թ., բարեխղճորեն կատարել է բոլոր պարտականությունները¹⁹:

Խորհրդային կարգերի հաստատումից հետո՝ 1926 թ., Խոջիվանքի Սբ. Աստվածածին եկեղեցին իշխանությունների հովանավորությամբ փոխանցվում է «ազատականներին»²⁰:

1931 թ. փետրվարի 7-ին թեմի առաջնորդ Արտակ եպիսկոպոսը Էջմիածնի գերագույն հոգևոր խորհրդին հղած զեկուցագրում մտահոգություն է հայտնում, որ «ազատ եկեղեցականներն» անարգել բռնագրավում են Թիֆլիսի եկեղեցիները. «Նոյնիսկ Կառավարութեան ներկայացուցիչ Լինիցկու քանաւոր խոստումները թեմիս տ. առաջնորդին, ինչպէս նաև հայրապետական լիագոր տ. Գէորգ արքեպիսկոպոսին, ս. Սարգիս, Խոջիվանքի և Ծիրանաւոր եկեղեցիները մեզ վերադարձնելու մասին չիրականացան»²¹: Նույն թվականի մայիսի 3-ին Արտակ եպիսկոպոսը Վրաստանի Հանրապետության կենտրոնական գործադիր կոմիտեին ներկայացրած բողոքագրում նշում է. «Թեմական խորհուրդը մի քանի անգամ դիմել է ուր հարկն է՝ Խոջիվանքի եկեղեցին վերադարձնելու և սուրբ Նշան եկեղեցին բանալու միջնորդութեամբ, բայց բազմակի միջնորդութիւնների վերաբերեալ մինչև օրս ոչ մի կարգադրութիւն չի եղել»²²:

Մինչ թեմական խորհուրդը և անձամբ թեմակալը բողոքագրերով փորձում էին հետ ստանալ հանիրավի օտարված Խոջիվանքի եկեղեցին, վրացական իշխանությունները որոշում են կայացնում Երկրի երեսից ընդհանրապես ջնջել արդեն 280-ամյակը բոլորած վանական համալիրը, ներառյալ ոչ միայն եկեղեցու անմիջական հարևանությամբ գտնվող Բեհբուդյանների տոհմական, այլև Խոջիվանքի հայոց լայնարձակ և նվիրական գերեզմանոցը:

Ընդարձակ հնավայրի զանգվածային ոչնչացումը սկսվում է 1935 թ. և ավարտվում 1936 թ.: Շուտով հրապարակվում է քաղաքային իշխանությունների որոշումն այլևս երբեմնի վանքի և լայնածավալ գերեզմանոցի տարածքը կանաչապատելու մասին. «Կանաչապատման տրեստը ձեռնամուխ եղավ

11 Նշվ. աշխ., էջ 336:

12 ԴՀՊ, գիրք առաջին, հ. Բ, Երևան, 2003, էջ 425:

13 Հայաստանի ազգային դիվան (ՀԱԴ), ֆ. 53, ց. 1, գ. 3792, ք. 1-14: Ի դեպ, վավերագրում նշված է 27 եկեղեցի, բայց դրանցից երկուսը (Թելեթի Սբ. Գևորգ և Դաշտիխաչ) չենք նշել բուն քաղաքի սահմանագծից դուրս գտնվելու պատճառով:

14 Համոզված ենք, որ բոլոր այն վկայությունները, որոնք բաղումներ են մատնանշում «եկեղեցու ներսում», իրականում նկատի են ունեցել եկեղեցուն արևմուտքից կից գավիթը կամ վերջինիս էլ արևմուտքից կից կամարակապ սյունասրահը, քանի որ հայ առաքելական եկեղեցու ծիսակարգով խստիվ արգելված էր բուն աղոթասրահում թաղում կատարելը:

15 ՀԱԴ, ֆ. 56, ց. 1, գ. 3675, ք. 1:

16 ՀԱԴ, ֆ. 53, ց. 1, գ. 3835, ք. 140:

17 ՀԱԴ, ֆ. 53, ց. 1, գ. 3859, ք. 15-16:

18 «Մեղու Հայաստանի», 1881, № 5, 27 յունուարի, էջ 4:

19 ՀԱԴ, ֆ. 56, ց. 18, գ. 1020, ք. 225: Տես նաև «Արձագանք», 1887, № 28, 2 օգոստոսի, էջ 415:

20 Վավերագրեր հայ եկեղեցու պատմության, գիրք Գ, Արտակ եպիսկոպոս Սմբատեանց (Տաուշեցի), Երևան, 1997, էջ 526:

21 Նշվ. աշխ., էջ 511:

22 Նշվ. աշխ., էջ 516:



Խոջիվանք. Ծիրանավոր Սբ. Աստվածածին վանքը հարավ-արևմուտքից (լուս.՝ 1900-ական թթ.)

նախկին Խոջիվանքի գերեզմանատան տեղում այգի հիմնելուն»²³:

23 Вечерний Тбилиси. № 73. 26 марта 1936 г. С. 2 (բնագրում՝ «Трест зеленого строительства приступил к разбивке парка на месте бывшего Ходживанкского кладбища (район им. 26)»).

Ինչ վերաբերում է գրոսայգի հիմնելու աշխատանքներին, ապա քաղաքային իշխանությունները նախատեսել էին դրանք ավարտին հասցնել 1937 թ.²⁴:

24 Вечерний Тбилиси. 1936, № 8.



Խոջիվանք. Ծիրանավոր Սբ. Աստվածածին վանքը հարավ-արևելքից (առաջին լուսանկարը՝ Ա. Բարտիշևսկու, 1935/36 թթ., իսկ երկրորդը՝ անհայտ հեղինակի)

Աչքի առաջ ունենալով գոնե խորհրդային տա-
րածաշրջանի խոշոր այլ քաղաքների զարգացման
ընթացքով պայմանավորված լայնածավալ կառու-
ցապատումների հետևանքով վնասված կամ իսպառ
ավերված պատմական հուշարձանների օրինակ-
ները՝ կարելի է հաստատապես նշել հետևյալը. սո-

վորաբար համանման ավերումներից հետո հո-
ղատարածությունները կառուցապատվել են գլխա-
վորապես բնակելի կամ հասարակական այլևայլ
շինություններով, մինչդեռ Խոջիվանքի պարա-
զայուն եկեղեցական համալիրն ու գերեզմանոցն իշ-
խանությունները փաստորեն քանդեցին կարծես



Խոջիվանք. Ծիրանավոր Սբ. Աստվածածին վանքի սյունասրահն արևմուտքից (լուս.՝ անհայտ հեղինակի)

ընդամենն անհետացրած լինելու համար, քանի որ նրա լայնարձակ տարածքը որևէ նորակառույցի չտրամադրվեց, այլ հարթեցվեց: Հափշտակվեցին տասնյակ հազարավոր շիրմաքարեր և որպես շինանյութ գործածվեցին զանազան կառույցների որմերում, իսկ պատմությունից «մաքրագործված» նախ-

կին հնավայրի ընդարձակ տարածքը որոշվեց վերածել ոչ ավել, ոչ պակաս աշխատավոր դասակարգի հանգստյան գոտու: Այդ նպատակով էլ սկսեցին կանաչապատել (այս վերջինն այն դեպքում, երբ գերեզմանոցի տարածքի կանաչապատումը տասնամյակներ շարունակ մշտական հոգա-

ծության առարկա է եղել, և արդեն իսկ նրա տարածքում բավականաչափ ծառեր էին տնկված):

Ծիրանավոր Սբ. Աստվածածին վանքի ճարտարապետությունը. Խոջիվանքի հնագույն կառույցը՝ Սբ. Աստվածածին եկեղեցին, եղել է ուղղանկյուն հատակագծով գմբեթավոր սրահ: Կենտրոնում իշխող դիրքում էր սրածայր վեղարի ներքո առնված նեղ ու ձգված լուսամուտներով ութանիստ թմբուկը: Արևմտյան ճակատին կից էր գավիթը (դժվար է որոշել՝ վերջինս միանա՞լ էր, թե՞ եռանավ), որին էլ նույնպես արևմտյան կողմից՝ սյունասրահ-նախամուտքը: Վերջինիս էլ դեպի արևմուտք նայող չորս կամարակապ բացվածքներից երեքը համահավասար էին, իսկ մեկը՝ գավթի մուտքի առջևինը՝ ավելի բարձր ու ընդարձակ: Ի դեպ, ԺԷ դարին այնքան հատկանշական այսօրինակ նախասրահները լայն տարածում ունեին հատկապես Նոր Ջուղայում, որտեղից հրավիրված շինարարները, ամենայն հավանականությամբ, գործել էին նաև Խոջիվանքում (արդեն իսկ հայտնի է 1650 թ. Տփղիսի Նորաշենի Սբ. Աստվածածին եկեղեցու գմբեթը կառուցած ջուղայեցի ուստա Պետրոսը)²⁵:

Միմյանց կից կենտրոնական կառույցներից փոքր-ինչ դեպի արևմուտք եռահարկ զանգակատունն էր: Վերջինիս առաջին հարկը ծառայել է իբրև դարպաս, երկրորդում եղել է քառանկյուն հատակագծով սրահ, իսկ երրորդ հարկը սրածայր, թույլ շեշտված հովհարածև վեղարով ավարտվող ութանիստ թմբուկ էր:

Բոլոր կառույցների որմերը աղյուսաշեն էին՝ պատված սվաղի շերտով:

Նախասրահի մեջ բացված գավթի մուտքի բարավորին ագուցված է եղել վերնամասում սրավուն ավարտվող միակտոր քարին քանդակված խաչային հորինվածք: Վերջինս, որը կիսով չափ տեսանելի է նաև, ըստ էության, սուկ որմնանկարները ներկայացնող 1930-ական թթ. սկզբներին կատարված լուսանկարում, հողի տակից բախտի բերմամբ հայտնաբերվել է 1995 թ., երբ էքսկավատորները սկսել էին փորել կառուցվելիք Սամեթա եկեղեցու հիմքերը:


Վանքը շրջափակված էր արևելք-արևմուտք ուղղությամբ ձգված ուղղանկյուն հատակագիծ ունեցող պարսպով, որի արևելյան զույգ անկյունները հզորացված էին ներսում սենյակավոր բոլորածև կիսաշտարակներով:

Խոջիվանքի որմնանկարները. 1936 թ. սկզբին՝ հուշարձանախմբի ոչնչացման ժամանակ, տեղում որոշ ուսումնասիրություններ են հասցնում կատարել նյութական մշակույթի պահպանման գծով տեսուչ Չեյշվիլին և վաստակավոր նկարիչ Գր. Շարբաբչյանը: Այդ հետազոտություններից հետո նշվել է. «Մուտքի կամարին՝ սվաղի շերտի տակից հայտ-





Խոջիվանք. Ծիրանավոր Սբ. Աստվածածին վանքը հարավ-արևմուտքից (լուս.՝ 1910-ական թթ.) և զանգակատունն արևմուտքից (լուս.՝ 1936 թ., քանդելուց ընդամենը շաբաթներ կամ զույգ օրեր առաջ)


25 Brosset M., Rapports sur un voyage archéologique dans la Géorgie et dans l'Arménie, II I., cinquième rapport, St-Petersbourg, 1850. Мурадян П. Тбилиси. С. 76.



Խոջիվանքի գերեզմանոցը և նրան հարող տարածքն ըստ Վախուշտի Բագրատիոնի կազմած հատակագծի) և 1850 (բնագիրը տե՛ս “Кавказский календарь на 1851 г.” գրքի ներդիրում) քվականների հատակագծերի



Խոջիվանքի գերեզմանոցը և նրան հարող տարածքը 1887 թ. (Սուրբ Պետրբուրգ) և 1902 թ. (թարսեզի հատակագծերի ցանկում 51 համարի ներքո նշված է Хаджи-ванкский монастырь), իսկ գերեզմանոցների ցանկում 68 համարի ներքո՝ Хаджи-ванкское (армяно-григорянское)



Խոցիվանքի գերեզմանոցը և նրան հարող տարածքն ըստ 1920-ական թթ. և 1975 թ. հատակագծերի

նաբերվեցին հետաքրքիր կոմպոզիցիայով հին որմնանկարներ: Նկարիչ Շարբաբչյանի ենթադրությամբ այդ որմնանկարները պատկանում են Նաղաշ Հովնաթանյանի վրձնին, որը Վախթանգ Չ-ի (ԺԷ դար) արքունի նկարիչն էր»²⁶:

Խոջիվանքի գերեզմանոցը. ինչպես արդեն արդեն նշել ենք, նախքան 1654-1655 թթ. Սր. Աստվածածին եկեղեցու (Խոջիվանք) կառուցումն այս վայրում Բեհբուդյան իշխանական գերդաստանն արդեն իսկ տոհմական գերեզմանոց ուներ, որտեղ և եկեղեցու կառուցումից հետո էլ շարունակում են ամփոփել միայն Բեհբուդյան տոհմի հանգուցյալներին:

Դեռևս ԺԷ դարում, բայց առավելապես սկսած 1810-ական թվականներից, երբ ռուսական իշխանությունների նախաձեռնությամբ քաղաքի վերակառուցումների ծրագրերի համեմատ մեկը մյուսի հետևից ավերվում են կենտրոնական մասերում գտնվող հայկական մի քանի գերեզմանոցներ, քաղաքաբնակ հայերի համար Խոջիվանքի գերեզմանոցը կամաց-կամաց վերածվում է հայ հասարակությանը պատկանող քաղաքի գլխավոր գերեզմանոցի: Ընդ որում, տարածքն այն աստիճան էր հագեցել թաղումներով, և տեղի անձկությունն էլ՝ դարձել ակնառու, որ Բեհբուդյան իշխանները, թերևս այս վայրի նկատմամբ ունեցած իրենց ավանդական պարտավորությունների համեմատ, հարակից սեփական ու նաև ոչ սեփական կալվածքներից որոշ հողամասեր են նվիրում գերեզմանոցին: Այդ առթիվ էլ 1837 թ. հունիսի 18-ին նրանց իր գոհունակությունն է հայտնում Հովհաննես կաթողիկոսը. «Տանք զողջույն տէրունական հայագգի պայծառափայլ իշխանաց ղեներալ մայեօր Վասիլի, պոդպօլկովնիկաց Ասլանայ և Դաթի, նաղվօրնի սօվետնիկ Գրիգորի, որդոց Ասլանայ՝ Աղէքսանդրի և Դիմիտրի և որդոյ Գրիգորի՝ Յովսէփայ և դստեր Վասիլ՝ Սօփիայի Բեհբուդեանց...: Չկնի ողջունի և օրհնութեան մերոյ առ Ձեզ ծանուցանենք աստուածատէր և հայրենատէր սիրելեացդ մերոց, ...բարեշնորհ երախտեաց Ձերոց առ հայրենի ազգս Ձեր, այն է՝ զնուիրումն Ձեր ի սեպիական կալուածոց Ձերոց զմասն տեղոյն յիշատակելոյ յանուն Գաբաշեանց ի սեպիականութիւն հասարակութեան ազգի



Գրվագ գավթի մուտքին հարող կամարին պահպանված որմնանկարներից (լուս.՝ 1936 թ.) և ի սկզբանե Ծիրանավոր Սր. Աստվածածին վանքի գավթի արևմտյան ճակատից բացված մուտքի բարավորին ագուցված խաչքարը, որը 1936 թ. վանքի ավերումից հետո՝ մինչև 1995 թ. ղեկտեմբեր ամիսը, մնացել էր հողի տակ (ներկայումս ագուցված է Կաթողիկե Սր. Գևորգ եկեղեցուն հարակից եկեղեցապատկան շենքի որմի մեջ)

26 Вечерний Тбилиси. № 68, 20 марта 1936 г. С. 3 (բնագրում՝ «Обследование обнаружило под слоем штукатурки над входной аркой старинные фрески интересной композиции. По предположению художника Шарбабчяна, эти фрески принадлежат кисти Накаша Овнатанова, который был придворным художником при Вахтанге VI (XVII век)»). Ի դեպ, չնայած տևական որմնումներին՝ մեզ այդպես էլ չհաջողվեց գտնել նկարիչ Գր. Շարբաբչյանի ուսումնասիրությունների՝ թեկուզ ձեռագիր օրինակները (անշուշտ, եթե դրանք ընդհանրապես գոյություն են ունեցել), ուստի որևէ տեղեկություն չունենք, թե, բացի գավթի մուտքին հարող արտաքին մակերեսներից, արդյոք եկեղեցու կամ գավթի ներքին ծավալներն էլ որմնանկարազարդված են եղել, թե՞ ոչ:



Խոջիվանքի գերեզմանոցը հարավ-արևմուտքից (լուս.՝ 1890-ական թթ.)

հայոց բնակչաց քաղաքիդ Տփխիսոյ վասն ընդարձակութեան տեղոյ հանգստարանի ննջեցելոց. լսելով և մեր գառաջինն՝ արդարև մխիթարեցաք 7 հոգի և օրհնեցաք զարժանատրոս...: Ընդ այսպիսի շնորհ Ձեր, և այնոցիկ, որք ընդ Ձեզ շնորհեցին զսեպիական բաժին կալուածոց իւրեանց յընդարձակութիւն տեղոյ գերեզմանոցին, որոշեսցին յատուկ-յատուկ առանձին տեղիք յայդմիկ վայրի յանուն Ձեր իւրաքանչիւրոց վասն հանգստարանի ասդէն փոխելոցըն ի Ձէնջ և սերնոց Ձերոց յետ Ձեր»²⁷:

Սակայն, ինչպես երևում է, դեռևս 1833 թ. նույն Բեհրուդյանները գերեզմանոցին հարող իրենց սեփական հողամասերից որոշ հատվածներ էլ վաճառել էին պետությանը, մինչդեռ գերեզմանոցը, տարեցտարի անվերջ ընդարձակվելով, շարունակաբար կլանում էր հարակից հողամասերը²⁸ և ակնհայտորեն դուրս էր եկել Ներսես Ե կաթողիկոսի (1843-1857 թթ.) նախաձեռնությամբ կառուցված շրջապարսպի սահմաններից²⁹:

Ստեղծված իրավիճակում արդեն 1865 թ. պետական մարմինները դժգոհություն են հայտնում քաղաքին պատկանող հողամասերի յուրացման փաստի կապակցությամբ և առաջարկում գերեզմանոցապատկան և հարակից հողամասերի միջև հստակ սահմանագատում ապահովելու նպատակով գերեզմանոցի զբաղեցրած տարածքն առնել կանոնավոր շրջապարսպի ներքո, այսինքն՝ քաղաքի այլ գերեզմանոցների նման այն ևս շրջապարսպել³⁰:

նական անհաատարիմ վերակացուաց և թէ առ անտերութեան այդ հանգստարան մերոց նախնեաց և ազգայնոց օր քան գոր խոնարհեցաւ ի յետին անշքութիւն, զի հետզհետէ ներքին վայելչագարդութիւնք նորին խանգարեցան, պարիսպքն քայքայեցան ի տեղիս տեղիս, տախտակամածք անցից մեծի դրանն փտեալ և հնացեալ մերձ են ի քակտումն, որովք այդ գերեզմանատուն եղեալ է այժմ աներակ, պատակ հօտից և անտուրբ անասնոց և ապաստանարան անառակ և աւագակարարոյ անձանց...» (ՀԱԳ, ֆ. 57, գ. 12, գ. 410, թ. 1): Նաև՝ «Գերեզմանատների բարեգարդութեան հարցը առաջ բերելով, կարողացանք նաև պարզել, թէ որպիսի բարոյական շահեր պիտի շարժեն մեզ դէպի մեր ցանկացած բարեգարդութիւնը: Բայց այս բարեգարդութիւնից բոլորովին զուրկ է Հալաբարու հինատուրց և ընդարձակ գերեզմանատունը, որ Տփխիսու Հայ ժողովրդեան նախորդների ոսկորները իւր մէջ ընդունել է և ընդունում է քանի մի հարիւրատր տարիների ընթացքումը: ...այդ գերեզմանատունը Ներսէս երջանկայիշատակ Կաթողիկոսի օրերից սկսեալ և նոյն իսկ նորա հոգատարութեամբ շրջապատած է պարսպով, որով այս խորհրդատր վայրը ազատվեցաւ իւր նախկին քստմնելի դրութիւնից» (**Քոչարեանց Ա.**, Հալաբարի հայոց գերեզմանատան այժմեան վիճակը, «Մեղու Հայաստանի», 1875, № 13, 5 ապրիլի, էջ 3):

27 Մաշտոցի անվան Մատենադարան (ՄՄ), ֆ. 49, թղթ. 148, վավ. 182:

28 Վրաստանի ազգային դիվան (ՎԱԳ), ֆ. 8, գ. 1, գ. 4928, թ. 3, 5: Տե՛ս նաև. Кавказ. № 41. 27 мая 1856 г. С. 163 (բնագրում՝ «...обширное кладбище...»):

29 Այս մասին վավերագիրը վկայում է. «Հայրապետն Ամենայն Հայոց Ներսես Ե, ի միջի այլոց ազգասօգուտ մեծագործութեանց իւրոց ետ կառուցանել շուրջ գիանգստարանան հայոց Հավարարի զվայելուչ պարիսպ և առ դրամք նորին գտնեալս ի բնակութիւն պահապանաց...: Գեղեցիկ օրինակի յիշեալ մեծամուն հովուապետին հետևեալ իշխանագն Բէրուդեանք և այլ բարեպաշտք ոմանք բարեգարդեցին զայն գերեզմանատուն հոյակապ մատրամքք, սեղանատամքք և գեղեցկաշէն պարտիզօք, իսկ սպա թէ անհոգութեամբ երբեմն-

30 ՎԱԳ, նույն տեղում (բնագրում)՝ «Князья Бебутовы продали казне под постройку казенных зданий кладбищенское место за Авлабаром у подошвы холма Махаты, отведенное обществу еще в 1833 г. по распоряже-



Խոջիվանքի գերեզմանոցն արևմուտքից (լուս.՝ 1910-ական թթ.)

Գերեզմանոցի հին շրջապարիսպը, որն արդեն, իրոք, բավականաչափ քայքայված էր, վկայում է նաև 1864 թ. այցելուն (նա ընդհանրապես բարձրիքով վիճակում էր տեսել հասարակության նվիրական այդ վայրը). «...խօսքս Հալաբարի հանգստարանի խեղճ դրուքեան վրայ է: Չխօսելով այն ամմաքրութեան վրայ, որ առհասարակ տիրապետում է այնտեղ, մեր ուշադրութիւնը դարձավ հանգստարանը շրջապատող պարսպի վրայ, որ քանի գնում քայքայվում է, տեղ-տեղ էլ բոլորովին քանդվել է»³¹:

Այդպես երկար շարունակվել չէր կարող, և ահա մույն՝ 1864 թ., գործի գլուխ կանգնած թիֆլիսցի Հովհաննես Մատինյանցը մի քանի տարվա ընթացքում (մինչև 1870 թ.) «...հոգևոր իշխանութեան և ժողովրդի ցանկութեան համաձայն ամենայն ջերմեռանդութեամբ յանձն առաւ ժողովրդից նուէրներ ժողովել յանուն Հալաբարու գերեզմանատան և եօթը տարուայ միջոցում գերեզմանատան պարիսպը նորոգեց, որ արդէն շատ տեղերումը քայքայուել էր, շինեց սենեակներ պահապանի համար և կարգեց պահապան, ռոճիկ վճարելով նրան ժողովրդից իւր հետևողութեամբ ժողոված գումարից, և ի վերջոյ հրաժարելով այս պաշտօնից 1870 ամի վերջերումը իւր յաջորդին, որ է պարոն Անտոն Տէրտէրեանցը,

յանձնեց առձեռն գումար այն գերեզմանատան պատկանեալ 814 ռ. 40 կ.»³²:

Այնուհանդերձ, ինչպես երևում է, գերեզմանոցը բարեկարգ վիճակում պահելու նպատակով նյութական միջոցների հավաքագրման եղանակները երբեմն հատում էին տրամաբանության սահմանները: Այդպիսին էր 1880 թ. կայացված որոշումը, որի համաձայն՝ հարկման ենթակա էին հանգուցյալների հիշատակին տեղադրվող տապանաքարերը. «Խոջանց վանքի գերեզմանատան մէջ գերեզմանների վրա քար դնելու համար նշանակված է մի առանձին տուրք, որի հաւաքելը կապալով տուած է մի պարոնի: Այդ կարգադրութիւնը մինչև այսօր թէ հայոց կօնսիստօրիայի և թէ հոգևոր կառավարութեան կողմից պաշտօնապէս յայտարարված չը լինելով, ժողովրդին դեռ յայտնի չէ. այս պատճառով մեծ անկարգութիւններ են պատահում: Քանի օր առաջ մի քանի օտարաքաղաքացի հայեր, պատրաստել էին քար իրանց հայրենակցի գերեզմանի վրա դնելու համար: Այդ խորհրդին պատճաշաւոր հանդէտով նրանք բազմութեամբ տանում են քարը, բայց գերեզմանատան դռները նրանց առջև չեն բաց անում, ասելով թէ կապալառուից հրաման չը կայ: Մինչև կապալառուին գտնում են, ժամեր են անցնում, յետոյ մի ահագին դալմադալ է լինում հրաման ստանալու համար: Ինչպէս երևում է, շուտով մեր եկեղեցական բոլոր արարողութիւնները կապալով կը տրվեն»³³:

нию начальства вследствие этого заведывающий работой не позволяет погребать на том месте мертвые тела. Так как означенное место составляет городское общественное достояние, то просители, в предупреждение на будущее время всякого спора ходатайствуют о дозволении им обнести таковое, по примеру других кладбищ, каменною оградюю...»):

31 «Մեղու Հայաստանի», 1864, № 20, 23 մայիսի, էջ 167:

32 Միայն պարսպի նորոգության վրա ծախսվել էր 1449 ռ. 18 կոպ. (**Քոչարեանց Կ.**, նշվ. հոդվ., «Մեղու Հայաստանի», 1875, № 13, 5 ապրիլի, էջ 3):

33 «Մշակ», 1880, № 210, 26 նոյեմբերի, էջ 2-3:



Խոջիվանքի գերեզմանոցը հարավ-արևմուտքից (լուս.՝ 1890-ական թթ.)





Պատվածներ Խոջիվանքի գերեզմանոցից (լուս.՝ 1920-30-ական թթ.)

Ի դեպ, արդեն 1880 թ. գերեզմանոցի տնօրինության առջև ծառայել էր նաև տարածքը գոնե ինչ-որ չափով ընդարձակելու խնդիրը, քանի որ նոր հանգուցյալներին ամփոփելու համար դժվարությամբ էր տեղ գտնվում. «...ի հիսիսոյ կամ յարևելից կուսէ առ բլրովն Մախաթի նշանակել զչափատր տարածութիւն գետնոյ, ուր յարմար դատեսցի, վասն թաղելոյ անդ զնոր ննջեցեալս առյապայն ի պատճառս

նուագելոյ կամ ոչ ևս գոլոյ պարապորդ տեղոյ ի հին հանգստարանին...»³⁴:

Պարիսպների վերջին նորոգությունից հազիվ մեկուկես տասնամյակ անց՝ 1881 թ., գերեզմանոցը դարձյալ անխնամ վիճակում էր («...անհոգ դրութեան մէջ է: Նրա քանդված պարիսպների միջից

³⁴ ՀԱԴ, ֆ. 57, ց. 12, գ. 410, ք. 1:



Պատվածներ Խոջիվանքի գերեզմանոցից (լուս.՝ 1920-30-ական թթ.)

մտնում են ամեն տեսակ կենդանիներ, նոյնպես և ամեն տեսակ գողեր ու առազակներ, որոնք քանդում, կոտորում են մահարձանների քարերը և վանդակները: Ժողովուրդը մի առանձին հաճութեամբ յիշում է այդ գերեզմանատան բարեկարգ վիճակը հանգուցեալ Ներսէսի ժամանակ: Այժմ այդ գերեզմանատանից ոչ հեռու փորվում է ապագայ Բագու-Թիֆլիսեան երկաթուղու համար գիծը, և եթէ փորված հողը ածվի պարիսպի շուրջը, դրանից կը գոյա-

նայ դարձեալ թումբի նման մի բաւական ամուր հողէ պարիսպ, որ առ ժամանակ կարող է փոխարինել քարէ պարիսպը: Մեռելոցների ժամանակ անդադար ժողովում են փողերը գերեզմանատան դրան մուտքի առջև, իբր թէ պարիսպ շինելու համար, բայց այդ պարիսպը երբէք չի շինվում»³⁵, և հայ հասարակութեան առջև վերստին դրվել էր հատկապես

35 «Մշակ», 1881, № 37, 28 փետրվարի, էջ 3:



Պատվածներ Խոջիվանքի գերեզմանոցից (լուս.՝ 1920-30-ական թթ.)

պարիսպները նորոգելու խնդիրը. «Հալաբարի գերեզմանատան պատերը բոլորովին քանդուել են, և որի նորոգութեան մասին գուցէ մտածող անգամ չը կայ: Գերեզմանատան հարաւ արեւելեան կողմը բնակվում են ռուսներ և մի քանի տուն էլ հրէայք. դրանց երեխաները սկսած 10-12 տարեկան հասակի, կիւրակէ օրերը մտնում են գերեզմանատուն և սկսում են կոտրատել զանազան գեղեցիկ արձաններ և արձանագրութիւններ: Քանի տարի է, ինչ որ

ասում են դորա համար մի առանձին մասնաժողով կայ, որ փողեր է ժողովում գերեզմանատան պատերը նորոգելու համար: Յիրաւի, իւրաքանչիւր նոր գերեզմանաքար բերել տոտղից առնում են 3-4-5 ռուբլի, բայց թէ ուր է զնում այդ փողերը, հասարակութեան համար դա մի գաղտնիք է»³⁶:

³⁶ «Մեղու Հայաստանի», 1881, № 228, 4 նոյեմբերի, էջ 3:



Պատվածներ Խոջիվանքի գերեզմանոցից (լուս.՝ 1920-30-ական թթ.)

Վիճակը շտկելու նպատակով 1881 թ. դեկտեմբերին Թիֆլիսի հայ հասարակության ընտրությամբ և հոգևոր բարձր իշխանության հաստատմամբ կազմվում է 3 անձից (պետական խորհրդական Արտեմ Իվ. Շամխարյանց, Միքայել Սալամբեկյանց, Հակոբ Իվ. Մելիքյանց)³⁷ բաղկացած առանձին հոգա-

բարձություն «Հալաբարի Խոջիվանքի հայոց գերեզմանատանը բարեվայելուչ ձև տալու համար: Հանգստարանին վայելուչ ձև տալու համար՝ հոգաբարձութիւնն աչքի առաջ ունի հետևեալ բարենորոգումները: Գերեզմանատան շուրջը քաշել ամուր պարիսպ աղիսից 3,1/2 արշին բարձրութեամբ (բացի հիմքը) և 600 սաժէն երկարութեամբ: Մշտական հսկողներ նշանակել գերեզմանատան վերայ նրան կարգին պահպանելու համար: Պարսպի ներսը շի-

³⁷ «Մեղու Հայաստանի», 1881, № 273, 29 դեկտեմբերի, էջ 4; № 274, 30 դեկտեմբերի, էջ 4:



Պատվածներ Խոջիվանքի գերեզմանոցից (լուս.՝ 1920-30-ական թթ.)

նել ածու կանոնաւոր գծագրուած բաժիններով, շաւիղներով և այլն»։ Գործի համար կատարված նվիրատվությունների գումարը հասնում է 6742 ռուբլու³⁸։

Գեո բարեկարգման աշխատանքները չձեռնարկած՝ կացութիւնն առավել բարդանում է հոգևորականների անփութութեան հետևանքով. «Հալաբարի Խոջիվանքի գերեզմանոցը այս թուլեիս մի անա-

խորժ տեսարան է ներկայացնում։ Յուլիսի 5-ին, երկուշաբթի, Մեռելոցի օրը, տիրացուները գնացած լինելով քահանաների հետ գերեզմաններն օրհնելու, անգգուշութեամբ բուրվառներից վայր են ածում կրակը և խոտը սկսում է այրվել։ Վնասված են նոյնպէս մի քանի փայտեայ վանդակներ»³⁹։

Առկա անհանդուրժելի կացութեան մասին հերթական հեղինակն էլ հազիվ մեկ ամիս անց նշում է. «Մեր հասարակութեան մէջ շատ անգամ խօսուել է

38 «Մեղու Հայաստանի», 1882, № 81, 1 օգոստոսի, էջ 3: Նվիրատուների անուն-ազգանունները տես № 82, 4 օգոստոսի, էջ 4:

39 «Մշակ», 1882, № 122, 9 յուլիսի, էջ 3:



Պատվածներ Խոջիվանքի գերեզմանոցից (լուս.՝ 1920-30-ական թթ.)

հայոց գերեզմանատան տխուր դրութեան մասին: Թիֆլիսում բարձի թողի, անխնամ է թողնուած: Ի՞նչ տխուր, ի՞նչ վայրենի և անճոռնի տպաւորութիւն է անում Թիֆլիսի հայոց Խոջիվանքի գերեզմանատունը, այդ կարող է նա իմանալ, ով որ տեսել է, ով որ գէթ մի քանի վայրկեան գտնուել է այնտեղ:

Բաւական չէ, որ գերեզմանատունը անճոռնի, վայրենի դրութեան մէջն է, բաւական չէ, որ նրա մէջ դուրեկան, բարեկարգ ոչինչ չը կայ, բաւական չէ, որ գերեզմանատան վերայ հսկող չը կայ, այլ և այնքան

մեռած է, հանգած է մեր քաղաքացիների մէջ յարգանքը դէպի հանգուցեալների յիշատակը, որ ամեն անգամ կարելի է գերեզմանատունով անցնելիս տեսնել կոտրած և վայր ձգած խաչեր, քարերը տեղիցը հանած, նոյն իսկ տեղն էլ ապականած»⁴⁰:

Ի դեպ, անկախ հայ հասարակության՝ գերեզմանոցը բարեկարգելու ծրագրերից, քաղաքային իշխանութիւններն էլ իրենց հերթին սկսել էին որոշ

⁴⁰ Մպանդարեան Ս., Թիֆլիսի հայոց գերեզմանատան խընդիրը, «Մեղու Հայաստանի», 1882, № 81, 1 օգոստոսի, էջ 1:

աշխատանքներ կատարել հարակից մասերում. «Հալաբարի հրապարակից մինչև Խոջիվանքի գերեզմանատունը տանող ճանապարհը, ինչպես երևում է, շուտով խճուղի պետք է դառնայ: Արդեն այդ ճանապարհի վերայ քարերի կոյտեր են երևում: Յանկալի էր, որ մի քանի մօտակայ փողոցներ ևս այդ բաղդին արժանացնէին և ամիսներով կանգնած ցեխերից ազատէին»⁴¹:

Վերջապես 1882 թ. հուլիսի 26-ին «...գեր. Մամբրե վարդապետը հայ հոգեւորականութեան հետ միասին պարսպի հիմքը օծելուց յետոյ, ինքը իր ձեռքով դրեց առաջին քարը, օրհնելով հոգաբարձութեանը և մաղթելով սկսած գործը յաջողութեամբ վերջանալուն»⁴²:

Հայտնի է, որ «...գերեզմանատան պարսպի շինութիւնը յանձնուած է տէխնիկ Տեր-Միքէլովին պայմանագրով»⁴³, որը թերևս հատկապես Տիգրանի փառավոր շէնքեր նախագծած և կառուցած մեծամուն ճարտարապետ Գաբրիէլ Տեր-Միքէլովին էր:

Շինարարության ծավալումից հազիվ 20 օր անց տեղական մամուլն արդեն սկսում է գործընթացին դրական արձագանքել. «...Խօջիվանքի գերեզմանատան շինութեան համար ...ընտրուած մասնաժողովի շնորհիւ նպատակը իրագործուած է, և բարձր ու երկայն պարիսպը սկսել է ձգուիլ գերեզմանների շուրջը...»⁴⁴: Դրվատանքի են արժանանում նաև ընթացիկ աշխատանքները. «Հալաբարի հայոց գերեզմանատան պարիսպը շատ գեղեցիկ ճաշակով է շինվում, շնորհիւ ճարտարապետ պ. Սալամբեգեանի, որ միևնոյն ժամանակ այդ գործի վրա հոգաբարձուներից մինն է ընտրված: Պարսպի համարեա երկու երրորդական մասը արդեն աւարտված է: Ասում են, որ գերեզմանոցի մէջ դիտաւորութիւն կայ ծառեր տնկել և առհասարակ բարեփոխել գերեզմանոցը: Մինչև այժմ, ինչպես բոլորն էլ վկայում են, ժողովուրդը մեծ հաճութեամբ է յիշում հանգուցեալ Ներսէս V-որդի օրով այդ գերեզմանատան բարեկարգ վիճակը»⁴⁵:

Ի դեպ, 1886 թ. մի վավերագրից պարզվում է, որ շրջապարսպի նախագծման աշխատանքներին

մասնակից է եղել նաև հոգաբարձության անդամ Արտեմ Շամխարյանը (Շամխարով, Ժամհարյան)⁴⁶:

Թվում է, թե ձեռնարկված աշխատանքները հաջողությամբ էին եզրափակվել: Սակայն գալիք 17 տարիները բավական էին շրջապարիսպը կրկին այնքան քայքայելու, որ 1899 թ. Խոջիվանքի վերատեսուչներ քահանաներ Գևորգ Արուստանց ու Գրիգորիս Մարինյանցը նշում են. «Գերեզմանատան հիւսիսային կողմի պարսպի շատ մասերը այն աստիճանի քանդուած են, որ նրանց միջով առանց արգելի ոչ միայն դատարկաշրջիկ մարդիկ գիշեր և ցերեկ հանգստարանի մէջ ապաստան են գտնում, որոնցից ոմանք գերեզմանատան ընտիր արձաններից և երկաթեայ վանդակներից խաչեր և այլ մետաղեայ զարդեր են կտորատում և յափշտակում, այլև ընտանի կենդանիների համար արօտատեղ է դարձել: Հարկ էր, որ պարսպի քանդուած մասերը վերանորոգել և կամ ժամանակաւոր տախտակամած պատնէշ ունենալ, մինչև որ կգնուի Միրզոյեանների սեփական դատարկ տեղը գերեզմանատան հետ միացնելու համար, որից յետոյ և նոր պարիսպ կունենայ...»⁴⁷: Ի դեպ, Միրզոյեաններին պատկանող հողակտորը գնելու և գերեզմանոցին միացնելու ծրագիրն արձաժվում է նաև ժամանակի մամուլի էջերում. «Խոջիվանքի գերեզմանատանը շատ ներդուածք լինելով նորանոր մեռելներ թաղելու համար, ինչպես լսում ենք, մտադրութիւն կայ գնելու գերեզմանատան կից, հիւսիսային կողմը, սեղանատան ետևը գտնուած Միրզոյեանների պարսպ գետիմը»⁴⁸:

Հայտնի է, որ նույն թվականին հաջողությամբ կատարվում են շրջապարսպի մասնակի նորոգումներ. «Մայիս և յունիս ամիսներում տեղ-տեղ վերանորոգուեց հանգստարանի պարսպի հարաւային և հիւսիսային կողմերի քարաշէն որմերը...»⁴⁹: Հավելենք, որ 1902 թ. վախճանված վաճառական Եգոր Հակոբյանի կտակով մասնաբաժին էր հատկացվում նաև Խոջիվանքի գերեզմանոցի շրջապարսպի և քաղաքային ջրմուղից գերեզմանոց ջուր անցկացնելու համար⁵⁰:

1907 թ. կրկին տարվում են շրջապարսպի վերաշինման աշխատանքներ. «Ղ. ք. Մամիկոնեանը նորոգել է Խօջիվանքի քանդուած պատերը, որի վրայ կատարուած ծախքերի համար չը կայ և ոչ մի օրինաւոր փաստաթուղթ»⁵¹: Ի դեպ, նույն թվականին «Խո-

41 «Մեղու Հայաստանի», 1882, № 22, 7 մարտի, էջ 3:

42 «Մեղու Հայաստանի», 1882, № 81, էջ 3:

43 Նույն տեղում:

44 «Արձագանք», 1882, № 26, 15 օգոստոսի, էջ 406:

45 «Մշակ», 1882, № 182, 2 հոկտեմբերի, էջ 3: Նաև՝ «Ներսէս Կաթողիկոսի օրով հայոց այդ գերեզմանատունը բարեկարգ վիճակի մէջ էր և ուներ իր մեջ գեղեցիկ այգի և ճեմելիքներ: Այժմ, վերջապես, անցեալ տարվայ ընտրված երեք հոգաբարձուները, մեծ եռանդով հաաքած լինելով մինչև 13 հազար թուրք. գումար, սկսել են այդ գերեզմանոցի պարսպի շինութեան գործը: Հիմքը դրված է արդեն և պատերը մինչև երկու արշին բարձրացել են: Վերոյիշեալ երեք գործունեայ հոգաբարձուներն են. Մելիքեան, Սալամբեկեան և Շամխարեան: Այդ վերջինը, մասնաւոր, շատ եռանդով է կպել գործին, անդադար անձամբ Հալաբար երթևեկելով և վերահասու լինելով աշխատանքներին» («Մշակ», 1882, № 153, 22 օգոստոսի, էջ 2):

46 ՎԱԳ, ֆ. 192, ց. 8, գ. 21, ք. 70:

47 ՀԱԳ, ֆ. 53, ց. 1, գ. 3384, ք. 1: Նույն ցավալի վիճակն է արձանագրվում նաև 1902 թ. (Խոտայեան Կ., Նամակ խմբագրութեան, «Մշակ», 1902, № 131, 20 յունիսի, էջ 2), 1905 թ. («Նոր-Դար», 1905, № 41, 5 նոյեմբերի, էջ 2) և այլն:

48 «Նոր-Դար», 1899, № 47, 16 մարտի, էջ 1:

49 ՀԱԳ, ֆ. 53, ց. 1, գ. 3384, ք. 35:

50 «Մշակ», 1902, № 198, 8 սեպտեմբերի, էջ 2:

51 Գամազեանց Ն., Նամակ խմբագրութեան, «Հովիտ», 1907, № 49-50, 30 դեկտեմբերի, էջ 790:



Հատվածներ Խոջիվանքի գերեզմանոցից (լուս.՝ 1920-30-ական թթ.)

ջիվանքի գերեզմանատան պահապան Խաչատուր Մինասեանցը յայտնել է ոստիկանութեան, որ նոյ. 25-ին երեկոյեան ժամը 6-ին գերեզմանատան ծառաների բնակարանն են մտնում մի քանի զինաձանյալտ անձնատրութիւններ և մահուան սպառնա-

լիքների տակ խլում են ծառաներից 244 թուր. փող, առևտրական բանկի մի տոմս 1500 թուր. արժողութեամբ և անհետանում»⁵²:

⁵² «Վտակ», 1907, № 6, 27 նոյեմբերի, էջ 2:



Քաղաքի քարտեզի վրա գերեզմանոցի (լուս.՝ 1920-30-ական թթ.)

1908 թ. մի հաղորդագրությունից պարզվում է, որ դեռևս 1899 թ.-ից արժարժվող խնդիրը, քե գերեզմանոցը կարելի է ընդարձակել ի հաշիվ Միրզոյաններից գնելիք հողակտորի, լուծում է ստացել.

«Խոջիվանքի հայ գերեզմանատան վարչութունը գնել է հին հանգստարանին կից Միրզոյաններին պատկանող մօտ 1300 ք. սաժ. տեղ և պարսպելով ու միացնելով ընդհանուր գերեզմանատան հետ, բա-

ժամել է մանր մասերի գերեզմանատեղների համար...»⁵³:

Համեմատելով 1850-ական թթ. հետ՝ տարեցուարի շարունակաբար ընդարձակվող Խոջիվանքի գերեզմանոցին 1910-ական թթ. իր հուշերում անդրադարձած Սիքայել Սուլյանը նշում է. «1850-ական թականներում այս հանգստարանը քաղաքի տներինց դուրս էր գտնվում, բայց այժմ շատ շինութուններով շրջապատած է այնպես, որ համարեա քաղաքին կպած է: Գերեզմանները այնքան շատացել են, որ մեռածներին թաղելու տեղ դժվարութեամբ է գտնվում, մանավանդ այն պատճառով, որ գերեզմանների մեծ մասը երկաթեայ շրջապատ ունի: Շինած են մասն այնպիսի մատուռներ, որոնց կառուցանելը մեծ գումարներ է մատել»⁵⁴:

1920 թ. հոկտեմբերին, երբ Վրաստանը դեռևս խորհրդայնացված չէր, Ազգային խորհրդի ներկայացուցիչները փորձում են Խոջիվանքի գերեզմանոցի վարչությունը դուրս բերել հողևոր իրավասությունից և իրենց ենթակայության տակ վերցնել: Բռնագրավման սույն փորձի մասին անմիջապես իրագեկվում է կաթողիկոսին, ներկայացվում են բողոքագրեր⁵⁵:

Գերեզմանոցի ոչնչացումը. ճիշտ է, արդեն 1934 թ. վերջին քաղաքային իշխանություններն արգելել էին Խոջիվանքի գերեզմանոցում թաղումներ կատարել, սակայն, ըստ էության, հասարակությունը դեռևս չգիտեր, որ իրականում իշխանությունների կայացրած այդ որոշմանը հաջորդ իսկ տարում հետևելու էր լայնածավալ և բազմադարյան գերեզմանոցի (ներառյալ կենտրոնական մասում գտնվող Ծիրանավոր Սբ. Աստվածածնի վանական համալիրը)՝ ամբողջությամբ և հիմնահատակ ոչնչացումը:

Ըծվելով հայերի համար նվիրական հնավայրի ողջ տարածքում առկա պաշտամունքային և գերեզմանական տարաբնույթ և բազմահազար հուշարձանների՝ համատարած և անխնա ոչնչացման գործին (ի դեպ, վերջին հանգուցյալների հուղարկավորման նույնիսկ մեկ տարին էլ դեռ չէր լրացել)՝ քաղաքային իշխանությունները 1936 թ. սկզբին արդեն «նախկին» գերեզմանոցի մասին հայտնում են, որ մայիս ամսին վերջապես պետք է սկսվեն հանգստի և մշակույթի զբոսայգու ստեղծման աշխատանքները, որոնք և ավարտվելու են 1937 թ.⁵⁶: Դրանք իրականում սկսվում են մարտ



Առաջին լուսանկարում Թամաձյանների տոհմական մատուռն է, իսկ երկրորդ լուսանկարը պարզում է, որ որոշ հուշարձաններ մինչ քանդելը նույնիսկ չափազրվել են (ցավոք, այդ նյութերը, եթե, անշուշտ, պահպանվել են, մեզ համար մնացին անհասանելի)

53 «Հովի», 1908, № 15, 4 մայիսի, էջ 240:

54 ՀԱԳ, ֆ. 428, ց. 2, գ. 104:

55 ՀԱԳ, ֆ. 57, ց. 3, գ. 174, թ. 5-6:

56 Вечерний Тбилиси. 1936, № 8 (բնագրում՝ «Наконец в мае начнется строительство на территории бывшего Ходживанского кладбища большого парка культуры и отдыха, которое должно быть закончено в 1937 году»): Ինչևէ, անբացատրելի է մնում, թե ինչպես կարելի է համուն մշակույթի զարգացման հենց մշակույթ և պատմություն ոչնչացնել և հանգիստը վայելել տասնյակ հազարավոր պղծված գերեզմանների վրա հիմնված զբոսայգում...



Կուրի աջափնյակում գտնվող «Դեղա ենա» (Մայրենի լեզու) հուշահամալիր տանող աստիճաններն ու եզրաքարերը նույնպես կառուցվել են Խոջիվանքից հափշտակված տապանաքարերով (լուս.՝ Ս. Դարչինյանի)




Թիվ 98 դպրոցի բակի շրջապարսպի մեջ ագուցված տապանաքար և տապանաքարի բեկոր (լուս.՝ Ս. Դարչինյանի)



Խոջիվանքից հափշտակված տապանաքարերը որպես շինանյութ գործածվել են նաև դեպի պետկրկես տանող ճանապարհի հենապատը կառուցելիս (լուս.՝ Ս. Դարչինյանի)



Կուրի աջափնյակի Ալիկի անվան փողոցի մայթեզրի հին քարերը 2005 թ. նորերով փոխարինելիս բացահայտվում է, որ Խոջիվանքից հափշտակված հայերեն և վրացերեն արձանագրություններով տապանաքարերը որպես շինանյութ գործածվել են նաև այստեղ (լուս.՝ Ս. Դարչինյանի, 2005 թ.)



Խոջիվանքից հափշտակված տապանաքարերի մնացորդներ՝ հայտնաբերված 2012 թ. Բարաթաշվիլու փողոցից (լուս.՝ Ս. Կարապետյանի)

ամսին, այսինքն՝ նույնիսկ կանխավ հայտարարված ժամկետից էլ ավելի վաղ⁵⁷:

Ամիսներ անց՝ նույն թվականի դեկտեմբերի սկզբին, նշվում է, որ արդեն ավարտվել են նախկին Խոջիվանքի գերեզմանոցի տարածքում այգի հիմնելու նախապատրաստական աշխատանքները, ի մասնավորի՝ հեռացվել են շինադրոն ու քարերը (այսինքն՝ հազարավոր գերեզմանական հուշակոթողները)⁵⁸:

Այսպիսով, 1937 թ.-ից ի վեր այլևս իսպառ անհետացված գերեզմանոցի գրեթե ողջ տարածքի վրա

հիմնվում է զբոսայգի, որին էլ պաշտոնապես տրրվում է «Բարեկամություն» անվանումը: 1938 թ. օգոստոսի վերջերին տեղն այցելած ականատեսը ցավով և զայրությամբ գրում է. «Խոջավանքի հայկական գերեզմանոցը քարուքանդ է արուած. բոլոր գերեզմանաքարերը տարել են, օգտագործել շինարարության համար, իսկ գերեզմանոցը յարդարել են եւ ուզում են ...մի շքեղ այգի դարձնել: ...Գերեզմանոցի դուռը խորտակուած էր եւ տարուած անյայտ ուղղութեամբ: Պարիսպները տեղ-տեղ փլփլուած էին: ...Մուտքի աջ եզերքին, փլփլուած պարսպի երկայնքով հսկայական մի քարակոյտ էր փռուած, գոյնը գոյն, յղկուած ու անտաշ շիրմաքարերից բաղկացած:... Փառաշուք շիրմաքարաքը մնան էր խորշակածեմ արտի...: Ամեն ինչ հողին էր հաւասարեցուած: Ոչ մի շիրմաքար եւ ոչ մի հողակոյտ չէր երևում ընդարձակ տարածութեան վրայ»⁵⁹:

57 Вечерний Тбилиси. № 73. 26 марта 1936 г. С. 2.

58 Вечерний Тбилиси. № 183. 1 декабря 1936 г. (բնագրում՝ «На бывшем Ходживанкском кладбище заканчиваются подготовительные работы для закладки парка культуры и отдыха района им. 26 коммунаров. Площадь будущего парка очищена от строительного мусора и камней. В первой половине декабря будут выполнены земляные и дорожные работы. Посадка насаждений начнется с февраля 1937 года. Парк закладывается на площади около 10 гектаров»).

59 Գեորգևան Հ., Թիֆլիզի հայկ. յիշատակարանների ոչնչացումը արդի վանդալների կողմից, «Հայրենիք», 1948, № 12, էջ 23, 24-25:

Գերեզմանոցի ավերումից հետո այլևայլ կառույցների որմերում որպես շինանյութ գործածված տապանաքարերը. «Բարեկամություն» զբոսայգին ստեղծելու «շնորհիվ» Քաղաքային խորհուրդը փաստորեն մեկնեց ձեռք է բերում գերեզմանոցից հափշտակված տասնյակ հազարավոր մշակված քարեր և սկսած հենց 1936-1937 թթ.-ից՝ դրանք որպես շինանյութ սկսում է զանգվածաբար գործածել ամենատարբեր կառույցների որմերում:

Չինվորական բժիշկ Ա. Բեգիջանյանը վկայում է, որ Լ. Բերիան իր տներից մեկը կառուցելիս (Մաչաբելի փող., № 11) հենց իրենց՝ Բեգիջանյանց տոհմի հանգուցյալների հիշատակը հավերժացնող սև մարմարից կերտված տապանաքարերով երեսապատել է տալիս տան զուգարանը⁶⁰:

Տապանաքարերով են կառուցապատվել Կուրի աջափնյակում գտնվող «Դեղա էմա» (Մայրենի լեզու) պուրակ տանող աստիճաններն ու եզրաքարերը⁶¹:

Մեծաթիվ տապանաքարեր էլ որպես շինանյութ գործածվել են Վրաստանի խորհրդարանի (նախկինում՝ Սարքսիզմ-լենինիզմի ինստիտուտի՝ ИМЭЛ-ի) որմերում, որը բացահայտվում է 2009 թ., երբ շենքը հյուրանոցի վերափոխելու ծրագրով տեղում սկսում է շինարարական աշխատանքներ կատարել «Աբու Դաբի» ընկերությունը⁶²:

Տապանաքարերով են կառուցապատվել բազմաթիվ փողոցների մայթերի եզրաքարերը, որոնց մի մասն ի հայտ է գալիս 2005 թ. քաղաքային իշխանությունների նախաձեռնությամբ կատարվող բարեկարգման աշխատանքների ժամանակ. «Թբիլիսիի կենտրոնական փողոցների ինտենսիվ բարեկարգման ու ասֆալտապատման գործընթացն ուղեկցվեց տհաճ և զայրացուցիչ երևույթով: Ինչպես պարզվեց, որպես մայթերի եզրաքարեր օգտագործվել են... գերեզմաններից հանված շիրմաքարերը: Այդ մասին են վկայում դրանց վրա նշմարվող գրանցումները: Բնականաբար, դա հարուցեց հասարա-



Խոջիվանքի տապանաքարերի մնացորդներ՝ հայտնաբերված «Չոր» կամրջի վերանորոգման աշխատանքների ժամանակ (ուս.՝ 2019 թ.)

60 **Գարիբյան Ա.**, Ոչնչացված գերեզմանատան հետքերով, «Հայրենիքի ձայն», 1993, 16-22 դեկտեմբերի, էջ 5:

61 Նույն տեղում: **Գանիբյան Հովհ.**, Վրաստանը ոչնչացնում է իրեղեն վավերագրերը, «Լուսանցք», № 47, 26 դեկտեմբեր 2008 - 1 հունվար 2009, էջ 5: Ի դեպ, ռեժիսոր Ե. Գևորգյանի՝ այս և նման այլ փաստեր պարունակող «Նախնիների քարերը» ֆիլմի ցուցադրումից անմիջապես հետո քաղաքային իշխանությունները շուտափույթ լծվում են այդ այգու վերակառուցման գործին և անհետացնում ակնառու բոլոր հետքերը (**Գանիբյան Հովհ.**, նույն տեղում):

62 **Наатакян Р.** Марксизм и армянские надгробия //Голос Армении. 29 ноября 2009 г. (ընթացում՝ “Инвестиционная компания „Абу-Даби“, купившая здание в августе 2009 года, взявшись за его демонтаж, оказалась в шоке при появлении множества надгробий. Как искренне заметил один из депутатов грузинского парламента: „Никогда бы не подумал, что я каждый день шагаю по могилам,.”) Տե՛ս նաև **Тавадзе Л.** Проспект Руставели без ИМЭЛ? //Головинский проспект. 2009, № 40.

կության արդար վրդովմունքը, քանզի ոչ ոք երբեք չէր կարծում, որ ինչ-որ մեկը կհանդգներ շիրմաքարերն օգտագործել փողոցի մայթերը բարեկարգելու համար: Ճիշտ է, Վրաստանի մշակույթի նախարարության ներկայացուցչի հայտարարությամբ այդ քարերը պատմական արժեք չեն ներկայացնում, որ դրանք թվագրված են 20-րդ դարի սկզբներով, բայց և այնպես դա արդարացուցիչ հանգամանք չի կարող համարվել»⁶³:

Շատ տապանաքարեր տեսանելի էին նաև պետական կրկեսին կից հենապատի և թիվ 98 դպրոցի բակի շրջապարսպի մեջ և այլն:

Քաղաքի բարեկարգման աշխատանքների ժամանակ Խոջիվանքի գերեզմանոցից հափշտակված

63 «Վրաստան», 2005, № 73-74, 17 սեպտեմբերի:



Թբիլիսիի նախկին թիվ 44 դպրոցի շինարարական աշխատանքները (լուս.՝ 2023 թ.)

և որպես շինանյութ օգտագործված արձանագիր տապանաքարերի մի նոր խումբ էլ Բարաթաշվիլու վերելքից հայտնաբերվում է 2012 թ.: Շիրմաքարեր են հայտնաբերվում նաև «Չոր» կամրջի վերանորոգման (2019 թ.), Թբիլիսիի նախկին թիվ 44 դպրոցի (2023 թ.) շինարարական աշխատանքների ընթացքում և այլն:

Կացությունը մինչև 1961 թ. ինչևէ, վրացի բուշկիկների՝ ժողովուրդների բարեկամության ըմբռնումների համեմատ և դրա հետևանքով արդեն 1938 թ. Խոջիվանքի պատմական գերեզմանոցն ու Ծիրանավոր Սբ. Աստվածածնի վանական համալիրը փոխարինվել էին անվերապահորեն «եղբայրական» զգացումների արգասիք «Բարեկամություն» զբոսայգով, որով իշխանությունները, ըստ էության,

քարոյահոգեբանական մահացու հարված էին հասցրել տփղիսահայությանը, ընդ որում, սարսափի և ցասման մթնոլորտում ապրող տասնյակ հազարավոր հայեր պարզապես ի գորու չէին հասկանալու և է՛լ առավել՝ գնահատելու կատարվածը: Շոկային կացությունն ընդհանրական էր և ծայրահեղորեն հուսահատեցնող:

Այդ մթնոլորտում տնկված և պուրակի՝ աճյուններից սնված ծառերն անցնող տարիների հետ կամաց-կամաց սկսում էին հասակ առնել:

Շուրջ երկու տասնամյակ անց միայն, մի փոքր ավելի հանդուրժող դարձած «ժողովուրդների բարեկամությանը», Վրաստանի խորհրդայնացման 40-ամյակին մվիրված միջոցառումներին և խորհրդային մեծ երկրի առաջին քարտուղար Ն. Խրուշչովի՝ ժողովուրդների եղբայրական փոխադարձ զգացումներն ամրապնդելու կոչին ընդառաջ, տփղիսահայությանն արտոնվում է զբոսայգու վերածված երբեմնի գերեզմանոցի արևելյան մասում հիմնել մշակույթի գործիչների ազգային պանթեոն⁶⁴, որի պաշտոնական բացումը (նախագծի հեղ.՝ ճարտ. Ռուբեն Աղաբաբյան) տեղի է ունենում 1961 թ.⁶⁵:

Նորաստեղծ պանթեոնում հրաշքով փրկված Բաֆֆու հուշակոթողի մոտ տեղադրվում են հայ մշակույթի առավել հայտնի 32 գործիչների հիշատակը հավերժացնող միանման սալիկներ (անշուշտ, առանց նորակերտ տապանաքարի ներքո տվյալ հանգուցյալի աճյունի, քանի որ այդ մասունքներն արդեն առհավետ կորսված էին):

⁶⁴ **Чигогидзе Г.**, Памятник вечной дружбы // Вечерний Тбилиси. 3 июня 1961 г. С. 3.

⁶⁵ «Էջմիածին», 1961, է, էջ 58-59:

Կացութունը մինչև 1994 թ. ինչպես ցույց են տալիս անցնող տասնամյակները, «Բարեկամություն» զբոսայգին երբևէ նպատակին չի ծառայել և Թբիլիսիի քաղաքային բազմաթիվ այլ զբոսայգիների և պուրակների շարքում մշտապես աչքի է ընկել ծայրահեղ անհրապույր և բարձրորդի վիճակով: Երբևէ չեն գործել այգու մեջ կառուցված ամառային համերգասրահը, ջրավազանը, խաղահրապարակները: Չկար համանման զբոսայգիներին հատուկ դեկորատիվ հարդարանքի որևէ տարր: 1986 թ. այգու տնօրեն Ջ. Շուխոշվիլին վկայում է, որ 27 աշխատակիցներով իրենք երբևէ ի գործու չեն եղել զբոսայգին հասարակության համար գրավիչ դարձնելու⁶⁶:

Տարօրինակ է, սակայն, զբոսայգին նպատակին երբևէ ծառայած չլինելու խնդրին բազմաթիվ հրապարակումներով⁶⁷ անդրադարձած հեղինակներից և ոչ մեկն այդպես էլ չի համարձակվել արձանագրել, թե իրականում ինչու այնքան մարդաշատ (և գլխավորապես հայաբնակ) թաղամասի միակ զբոսայգին տասնամյակների ընթացքում այդպես էլ երբևէ ժողովրդականություն ձեռք չբերեց, և գերեզմանոցի տարածքում հիմնված այգու «Բարեկամություն» անվանումն էլ նույնիսկ կես դար անց հա-



Կառուցվելիք եկեղեցու տեղում գետեղված խաչը (լուս.՝ Ս. Դարչինյանի)

Կառուցվելիք եկեղեցու հիմքերը փորելու առաջին օրերը (լուս.՝ Ս. Դարչինյանի)

սարակության համար ընկալելի և ըմբռնելի չդարձավ (մարդիկ շարունակում էին տարածքը կոչել Խոջիվանք)⁶⁸:

Մինչդեռ պատասխանը հստակ էր ու պարզ. թաղամասի բնակչության մեծամասնություն կազմող (գոնե մինչև 1980-ական թթ. վերջերը) ազգությամբ հայ քաղաքացիները պղծված սրբատեղիի վայրում հիմնված այգում հոգեբանորեն ի վիճակի չէին հան-

զրստի ժամեր անցկացնելու, քանի որ անհրավի պատմությունը միայն ալեկոծում և խոցում էր հայ մարդու հոգին, տակնուվրա անում ու թարմացնելով բորբոքում սոսկալի հիշողությունները, որի պատճառով նա նույնիսկ սարսափում էր հրեշածին այդ այգուց, էլ ինչպե՞ս կարող էր այդտեղ հանգստանալ և էլ առավել՝ ուրախանալ:

Իսկ ահա 1961 թ. հիմնված Հայ մշակույթի գործիչների պանթեոնն անցնող տարիների հետ ավելի ու ավելի խորհրդանշական և ակնածալից մի վայր է դառնում քաղաքի հայ հասարակության համար: Սկսած 1982 թ.-ից՝ յուրաքանչյուր տարվա ապրիլի 9-10-ը պանթեոնում կազմակերպվում է «Հիշատակի օր» միջոցառում՝ նվիրված հայ մեծերին, որին

66 Вечерний Тбилиси. № 147. 27 июня 1986 г. С. 3.

67 Вечерний Тбилиси. № 81. 7 апреля 1987 г.; № 109, 12 мая; № 137, 13 июня; № 145, 24 июня; № 157, 8 июля; № 161, 13 июля; № 162, 14 июля; № 163, 16 июля; № 164, 17 июля; № 165, 18 июля.

68 Вечерний Тбилиси. № 166, 20 июля 1987 г. С. 2.



Չիմքերը փորելիս ի հայտ եկած տապանաքարերը և շինարարի հետ հեռացված հողախառն հագարավոր աճյուններից գոյացած բլուրները (լուս.՝ Ս. Դարչինյանի)

անխտիր մասնակցում են հասարակության բոլոր շերտերի ներկայացուցիչներ⁶⁹:

Գերեզմանոցատեղին վերջնականապես յուրացնելու քայլերի հաջորդականությունը 1994-1999 թթ. շուրջ 10-11 հեկտար տարածություն զբաղեցնող երբեմնի ընդարձակ գերեզմանոցի մի անկյունում ծվարած հայ մշակույթի գործիչների պանթեոնը, սկսած 1992 թ.-ից, դարձյալ պարբերաբար ենթարկվում է զանազան ոտնձգությունների: Այս կացությունը ձգվում է մի քանի տարի⁷⁰:

69 **Խաչատրյան Է.**, Հարգանքի տուրք, «Սովետական Վրաստան», 1986, 29 ապրիլի, էջ 4: Տե՛ս նաև **Մեղանյան Բ.**, Հավե՛րժ հիշատակ նրանց, «Սովետական Վրաստան», 1988, 5 ապրիլի, էջ 3:

70 **Գեներ,** Չայն նախնայաց շիրիմների, «Լրագիր», 1995, № 218, 13 դեկտեմբերի, էջ 5: Տե՛ս նաև **նույնի՝** Հայկական գերեզման

1994 թ. ապրիլի 24-ի նախօրեին պարզվում է, որ անհայտ չարագործները կոտրատել էին բազմաթիվ տապանաապիկներ⁷¹: Նույն թվականին քաղաքային իշխանությունները քանդում են տապանաքարերից կառուցված զբոսայգու շրջապարիսպը և փոխարինում նոր՝ բետոնե պատով: Քանդված հին պարսպից դուրս են թափվում որպես շինանյութ օգտագործված գերեզմանաքարեր, որոնք անհետացվում են հաշված օրերի ընթացքում⁷²:

Վերջապես 1995 թ. հոկտեմբերի 28-ին Իլիա Բ-ն նախագահ Էդ. Շևարդնաձեի ներկայությամբ կատարում է նոր՝ «ուժեղ և դեմոկրատական Վրաստանը»⁷³ խորհրդանշող առաջնորդանիստ եկեղեցու հիմնօրհները: Կառուցվելիք եկեղեցու տեղում կանգնեցվում է մի խաչ, իսկ մեկ շաբաթ անց տեղ հասած բուլդոզերները սկսում են հողային աշխատանքները: Հենց առաջին րոպեներից գետնի մակերևույթը պատվում է հանգուցյալների ոսկորներով և 1930-ական թվականներից ի վեր հողով կոծկված տապանաքարերով:

Շուտով մերձարևակ հայերի և լրատվության բարձրացրած բողոքի ալիքը պատճառ է դառնում աշխատանքների դադարեցման⁷⁴, սակայն շուրջ 1 տարի և 3 ամիս անց՝ Գարեգին Ա կաթողիկոսի հետ հանդիպելուց հետո՝ հունիսի 15-ին, Իլիա Բ-ն երկրորդ անգամ օծում է կառուցվելիք եկեղեցու տեղը, իսկ որոշ ժամանակ անց վերսկսվում են հողային աշխատանքները⁷⁵:

1998 թ. սկզբին շինարարներն ավարտում են կառուցվելիք հսկայածավալ եկեղեցու հիմքերի փորման հողային աշխատանքները, որոնց ընթացքում «Գերեզմանատանն ամփոփվածների ոսկորներն այս անգամ էլ զոհ գնացին էքսկավատորների ատամներին»⁷⁶:

նատան տեղում եկեղեցի է կառուցվում, «Լրագիր օր», 1996, 14 հունիսի: **Գրիգորյան Օ.**, Խոջիվանքի և պանթեոնի անցյալն ու ներկան, «Առավոտ», 1997, № 13, 24 հունվարի, էջ 5: **Մուրադյան Հ.**, Ջնջեցին մեր ներկայության հետքերը, «Երկիր», 1998, № 45, 18 հունիսի:

71 Խոջիվանքը դարձյալ վիրավոր, «Ազգ», 1994, 11 մայիսի, էջ 2:

72 **Կարապետյան Ս.**, Հայոց մասունքների տեղում վրաց եկեղեցի, «Բանբեր», 1995, № 64, էջ 3:

73 “მადლო”, 1995, № 10, 9 დეკემბერი.

74 **Կարապետյան Ս.**, Խոջիվանքի նոր ողբերգությունը, «Ալիք», 1996, № 122, 16 յունիսի, էջ 4-5:

75 **Կարապետյան Ս.**, Հայկական գերեզմանոցի տեղում վերսկսվեց վրացական եկեղեցու կառուցումը, «Հայոց աշխարհ», 1997, № 12, 2 հուլիսի: Տե՛ս նաև **Геворкян Х.** Крест Ходживанка //Голос Армении. № 73. 8 июля 1997 г. **Сафаров М.** По какому праву католикосы оскверняют могилы? //Голос Армении. № 115. 14 октября 1997 г. С. 1-2. **Сараджев М.** На радость сатане //Голос Армении. № 141. 16 декабря 1997 г. (“Богоугодное дело” приветствовал католикос Гарегин I: Выстоят ли храмы, возводимые на крови, костях и лжи? Нас вынуждают отмечать праздники святой Армянской Апостольской Церкви по грузинскому календарю”).

76 «Երկուշաբթի», 1998, № 11, 11-17 մայիսի, էջ 28: Տե՛ս նաև **Գեներ,** Խոջիվանքի գերեզմանատունն էլ քանդեցին, «Հայոց աշխարհ», 1998, № 9, 20 հունվարի, էջ 6:



Կառուցվելիք եկեղեցու հիմքը (լուս.՝ Ս. Գարջինյանի)

Ապագա եկեղեցու հիմքի համար փորված ընդարձակ փոսից հարյուրավոր բեռնատարներով բարձրված աճյունախառը հողը հեռացվում է ոչ այնքան հեռու. «Պանթեոնի մոտով սկսեցինք ավելի ու ավելի վեր բարձրանալ Պետրոպավլովսկյան գերեզմանատան միջով դեպի Մախաթի լեռը: Այդ ողջ ճանապարհը վերածվել է հիշյալ գոգափոսից հանված ընդարձակ աղբակույտի: Անցնելով ինքնաթափից շարտված հնարամիտ նախշերով և ծավալուն հուշագիր ունեցող բազալտե տապանաքարի մոտով՝ որոշեցինք զննել այդ աղբակույտերից մեկը ձորակի կողմից, որը ճեղքել էր Մախաթի և Շաքրիս սարերի միջև ընկած տեղանքը: Եվ ի՞նչ տեսանք մենք: Դեռ թարմ լցված բլրի ստորին շերտից դուրս էին ցցված կոնքոսկրեր, մարդկային գանգի, կողոսկրերի, ողերի, ծնոտների ջարդոտված մասեր: Մարդկային մասերի նույնանման պատկեր էր ներկայացնում նաև ձորակի լանջի վերին հատվածը: Դրանց վրա լցված էր թիթեղյա անոթներից, փալասներից և այլնից բաղկացած կենցաղային աղբ: Մի՞թե Հավլաբարի, Իսանիի, Ճուղուրեթիի

վաղ անցյալի բնակիչների աճյունները պետք է նման ճակատագրի արժանանային: Հավանաբար մեր անհանգիստ ու մռայլ ժամանակներում հողում էլ չի կարելի հանգիստ գտնել»⁷⁷:

Ի դեպ, հատկանշական է, որ ամենայն սառնասրտությամբ առաջ մղվող կառուցվելիք եկեղեցու հիմքերի փորման աշխատանքների առնչությամբ գործի գլուխ կանգնած Իլիա Բ-ն նույնքան սառնասրտորեն 1997 թ. տալիս է հետևյալ պատասխանը. «Ճիշտ է, այնտեղ կար նաև հայկական գերեզմանատուն, որ մինչև այսօր էլ կա, իսկ այն նոր վրացական եկեղեցին, որ կառուցվում է, շատ մոտ է գտնվում գերեզմանատանը»⁷⁸:

77 **Շաբանով Ա.** Апофеоз кощунства //Заря востока. № 7. 28-30 января 1998 г. С. 3. Տե՛ս նաև հայերեն տարբերակը՝ **Շաբանով Ա.** Սրբապղծության տոնահանդես, «Հայոց աշխարհ», 1998, № 30, 21 փետրվարի: **Տաֆարով Մ.** По какому праву католикомы оскверняют могилы? //Голос Армении. № 115, 14 ноября 1997 г. С. 1-2.

78 «Էջմիածին», 1997, Գ-Ե, էջ 57:



Բաֆֆու հուշակոթողը՝ տապալված անհայտ չարագործների ձեռքով 2000 թ. նոյեմբերին (լուս.՝ Ս. Գարչինյանի)

Վրաց հոգևոր առաջնորդի խոսքից թերևս կարելի է հանգել այն հետևության, որ նա, հայկական գերեզմանոց ասելով, ընկալում էր միայն պանթեոնը, այլ ոչ 1938 թ.-ից ի վեր «Բարեկամություն» անունը կրող զբոսայգու ներքո քողարկված գերեզմանոցի հիմնական տարածքը, որտեղ և աշխատում էին էքսկավատորները և յուրաքանչյուր օրվա ընթացքում հազարավոր աճյունների հետ մեկտեղ դուրս թափում տապանաքարերի այն մասը, որը մնացել էր հողածածկի ներքո⁷⁹:

79 Ի դեպ, վանդալական գործողություններով հագեցած հենց այս օրերին, ի պատասխան տարբեր տեղերից հնչող ահազանգերի, Թբիլիսիում լույս տեսնող «Վրաստան» թերթի գլխավոր խմբագիր, Վրաստանի հայկական մշակութային բարեգործական ընկերության փոխնախագահ Վան Բայբուրթյանը հասարակությանը շտապում է հանգստացնել՝ նշելով. «Անհապաղ գնացինք Խոջիվանք: Պանթեոնն ու շիրիմներն իրենց տեղում էին: Նույն պատկերը՝ ինչ սրանից 5-10 տարի առաջ», իսկ «հարյուրավոր հանգուցյալների ոսկորների դուրս շարտելուն և թափելուն» վերաբերող ահազանգը Վ. Բայբուրթյանը որակում է սոսկ ապատեղեկատվություն, քանի որ վրացական տաճարի կառույցի ղեկավար Արչիլ Ջավախիձեն

Մինչ ծրագրված եկեղեցին կառուցելը վրաց հոգևորականությունը որոշում է կայացնում տարածքում կառուցել փայտաշեն փոքրիկ ժամանակավոր մի եկեղեցի, որը, սակայն, ոչնչանում է հրդեհից 1999 թ. մարտի 2-ին⁸⁰:

Ոսնձգություն Խոջիվանքի պանթեոնի նկատմամբ. 2000 թ. նոյեմբերի 2-րդ տասնօրյակի սկզբին անհայտ չարագործների ձեռքով մետաղալարի գործադրմամբ տապալվում է պանթեոնի կենտրոնում գտնվող անվանի վիպասան Բաֆֆու հուշակոթողը, իսկ կոթողի վերնամասում զետեղված բրոնզաձույլ քնարն էլ՝ հափշտակվում: Սա զայրույթի և բողոքի

իրեն ասել էր, որ «հիմքը զցելու ժամանակ բանվորների հետ միասին հանգուցյալների մնացորդները հավաքվում էին հատուկ դագաղների մեջ, որոնք և այժմ թաղված են այդ նույն տարածքում», ուստի հարկ չկար անհանգստանալու, մանավանդ որ, ի դեմս իրեն, Տփղիսի հայ մշակութային արժեքների պահպանները «սարի պես կանգնած» էին («Առավոտ», 1999, № 32, 24 փետրվարի, էջ 8): Ինչպես տեսնում ենք, պ. Բայբուրթյանի փարատումների կերպը, օրինակ, Իլիա Բ-ի տված պատասխանի հետ միանգամայն նույնական է...

80 “Րջեօհեհեհե”, 1999, № 57, 3 մարտի.



Հոգևոր սեմինարիա կառուցելու համար փորված հիմքը՝ փորվածքի ուղղահայաց մակերևույթին երևացող աճյուններով և հողածածկ տապանաքարերով հանդերձ (լուս.՝ Ս. Դարչինյանի, 2009 թ.)

մի նոր ու մեծ ալիք է բարձրացնում ոչ միայն տփղիսահայության շրջանակներում⁸¹: Վանդալական գործողության դրդապատճառ էր ակնարկվում առանց Վրաստանի թույլտվության հայկական պատվիրակության այցն Աբխազիա⁸²:

Փաստորեն այս դրվագով վրացական քաղաքական որոշ շրջանակներ ակներև դարձրին այն իրողությունը, որ հայերին «կարգի հրավիրելու» միջոց կարող է ծառայել, օրինակ, նրանց խոցելը՝ ազգային նվիրական սրբավայրերը պղծելով:

Մամերա (Մք. Երրորդություն) եկեղեցու կառուցման ավարտն ու հոգևոր սեմինարիա հիմնելու փորձը. ինչևէ, 2500 քմ մակերես և 75 մ բարձրություն ունեցող ապագա կառույցի շինարարությունը 2001 թ. դեռ ընթացքի մեջ էր, երբ արդեն տեղ են հասնում

81 **Гевинян С.** Акт вандализма // Эфир. № 49. 7 декабря 2000 г. С. 2. Նաև՝ Голос Армении. № 15, 20 февраля 2001 г.

82 “Մարտալու Նախագիտ”, 2000, 20 օգոստոսյան հոդված.

ყენდამნიხაიონ დოიქად თარებერ ჯაჟებერ 9 კანცტ-
რე, ირინგეხე მებრე კვზონ ბრ აქტეჲ ჟან ნოჲ თონნა,
ქსკ ჟორბრე ჯორე 100 კგ⁸³:

2002 პ. ნკვიონ ბ, ირ ბონნ რნჰაგეჲ მებრე კონქო
ბებებეო ჯინარაროქონი მარქათნაქონ ბ აქარ-
თინ ხაგენბ 2004 პ., ირეხ ხნთო აქოთეჲ აქთე ბ
ქებრაქოქტინ ქრეგ ჰაქაქორებერ ქაქჰანეკ მ-
ბ ბებნორეკ მ-ბ მასონებებრ⁸⁴:

ბ ქებრე, 2004 პ. ნოქებებერინ ამბოეჯანონ ბნ
ქრეგ ნორ აზაეზნორქანქოთო შამებრა მარე ბებებ-
გო ჯინარარქან აქქათანებებრ:

2007 პ. არბენ კათოეკად ბებებეო ხარლანო-
ქანბ (არბებქან კოქონ) ჰარბქალ ხნამნბი გებრე-
მანგეხ თარაბებონ⁸⁵ კეხ ჯაე მქალთოქი გორბქებერ
ქანებნბი ჯრეაქარაქინ, მას ხოგნორ სემინარქა
კათოეგებო მქათალქოქ ქორქონ ბ აქნბაქოთონ ბ
მბ მებამბაქალ ჯინოქან ხბმბ, საქაქინ აქს ანგამ
ანქონებერ⁸⁶ ბებრ ჯინოქ ხნეგმან გორბნებაგინ
სქანამ ნებქა ბ ქინონ კანბაქაქაქ ქებქარქან
რ-აქქი შიგრანქან ბ თნსაბი მასბინ ბრ ბოქოქ
ბაქინ ბარბრანგონ «ბ-აქინ ბნქო» თებებქალ-
ქან გორბაქალთოქან მბეგნოქ⁸⁵: ბბქო ბ, სოქ
სახკანგან ანმბქაქნ ირსქალთონ ბ ირქან «ჯ-
ქალქან მბ იორ სარქანბ»⁸⁶, რაქე ბ ბნქაქნ გოქე ბნ
თაქინ ანგნოქ თარებებრ, ქრეგ ხოგნორქანო-
ქონნ აზაეჲ ანგამ კარბენ კაროქანონ ბ სახ-
მანაქალქე ბრ ანხარკაქე ქებრებებნებრ:
ჯამნბაქან იბაქა, აზ 2014 პ. ქორქად ხბმებერ ქრ
ჯინარარქან აქქათანებერ ჯებნ ბაქალქე:

**შამებრა ბებებებინ ბ მებებებერ გბათაქგმან მ-
ქანქანებ.** ხაქონბ ბ, ირ ქრეგ აზაეზნორქანქოთ
ბებებეო კათოეგმან იოქ რნჰაგებონ ჯინარარო-
ქანნ აზნქად რაქამბქიქ მაროქიქ ბნ გოქიქ
ჯაქარქად ხანგამანებებონ: ბაქინ, ბრარეხ ან-
ქაქინ, იბქაქოთ აქათაქარქი გოხ ბნ იბონონ მბ
ქანბ რანქორებ: ბნბნ 1996 პ. კბსაქათოქეხ
ქარე ბ რნქონონ მბ რანქორ ბ თებონ მახანონ, ქიქ
ანგ კოქონ ბ ქებრამბარბ კოთონქი ბოქანბ, ბ
კოთონქრ ჯონ ბ გაქინ ბებებეო ნოქოქანბ: 2001 პ.
ნოქებებერ 27-ბნ ქებრამბარბ კოთონქრ იბარბქალ თ-
აქალქონ ბ გებნბინ: აქს ანგამ ჯინარარებერეხ მ-
ბრ გოქიქონ ბ, ბსკ მბორე ბანბ ქბრქორქონ⁸⁷:
აქტეჲ ნოქ გებებერ ხსქაქანქან ბაქრე აქათრასთად
ქარაქებრ ბებქაქარქონ ბ ბ საქანონ რნთანბებ

ანბანებებინ: შაქანქონ ბ მას ბაქე აქათქრ-
თონ-მბებნასრ⁸⁸ აქბო მბინბარაბენ: ბ ქებრე, ბებ-
ბებო ბოთთოქანსაქარე 80-ამქა მარქტენ გოქონ
ბ ბორნ რნქად ქებებქალთონ⁸⁸:

ბქაქოთ იბაქებერ ქარგაგონებინ აქნ სათბ-
მან აზბებქადაქინ ბბინ ბ ხასარაქალქან ხნებ-
ბოქონ ბბინ სთაგებ, ირ ქრეგარქინ ბოქებერეხ მბქი
ხებინსაქნ აქოქინსაქ ხარგაქოთონ ბ არბ. «ბ⁸⁹ ბ
აქს ამნბრ, აქათაქანოქონ⁹⁰ ბ, ჰბ⁹⁰ მარქინ გ-
ბებმანგეხ ხანგოქარქებერ ხოქებებერ ანებბ:
ბებრსა ქებებებ...»⁸⁹:

შრეაქებოქან გბათაქგმანბრ აზაე ბებ მ-
ბაქოქონქან ბ ნოქინბს გეზმან გგაგონებებრ ქ-
ბათებო მქათალქოქ ჯოთოქ ბ ხათქაქენ ქრ-
გოქონ მბეგნოქ ბქქათონოქინებრ ნორ ჰაქი ბნ
ხაროქონ ბარგებოქანბ: შებრ მბოქ ბთბიგ
ბოქს ბნ თნსონ «აქნქაქ ქრასთანბ ხგოქონ-
ბრ ბოქბიქანბ» ბებებეო კარბოქონბინ ნო
ბგაქბოქონბრ მათონბზოქ ბ ქათარქანბოქ რაქამ-
ბიქ ხოქადებ: გორბი ბ ირქონ მას გბათქან
ხანსაქარგ. ბოქს ბ რნბაქონ «ბებქიქ» ხანბ-
გბათარანბ ბოქებქანბ გებებმანგეხ ქებრებებოქ
ბბბო ჯარარანბოქ, ირ ხანბბაქინ აქნ ბბრ ი-
ბებ ჯარონსაქ ბებ ბ ბარქაქინ-ხასარაქალქან
გებებმანგ, აზანგ აგკაქინ მასნაქორ აქათ-
ქანბებოქან, ირბინ ბ ხაქებრ ბბებ ბნ მბაქნ ბბ-
ბარონ, აქნ ბ გებებმანგონ გონქოქ ხაქალქან
ბებებეო ჯნობიქ, ბსკ ხოგნორქანებებინ ბბრ ბბ-
ბარეხ ბ ქებ ხანსაქარბ სქსბ ბნ არგებებ გებებმ-
ანგონ აქლგებებრ ამბოქებ⁹⁰:

ბ იბაქ, ბბინბა შამებრა ბებებეო კათოეგონ
ბოქებქანბ მარქინ გებებმანგეხ თებონ «ბანბ
ბქალ ბ ნოქინბს მებრ» ბ ხანბარქებ მას ბარქაქ-
ბინსაქან ბებრქანსაქონქან ბაქარბან თნსან-
ბონბიგ⁹¹:

**გებებმანგონ ამბოქად ხანგოქარქებერ
ბქარქანსაქ მასბინ.** ბნებბინ ხასქანაქი ბ, ირ 1935
პ.-ბე ბ ქებ გოქონქონ ჯონებოქ, საქაქინ მბინ აქო
ჯორე ბებ იბრ ბრ ნქანსაქონქანბრ ბათაქად გ-
ბებმანგონ ამბოქად ხანგოქარქებერ⁹¹ ნოქ-
ბსკ მბოთაქორ ბქარქანსაქ აქარებებ იქობინ გორბ
ბ: შაქან აზქა იოქ თქალებერ ბნბოქანბ, აქ-
ნონბნბაქინბ, კბბობებნბ სთორს გონბ მბოთაქორ-
აქს აქარებ ბნბებ:

83 “დებოს ვაბეო”, 2001, № 103, 9 მბობო. შნ მას “თბებ-
ბო”, 2001, № 52, 12 მბობო. Колокола - для самой боль-
шой церкви страны //Вечерний Тбилиси. № 54, 15-16
мая 2001 г.
84 “ხვებობებებო ბებ”. 2002, 16 ბებობო.
85 **გარბინან ა.** ბოქებქანბ. მარქანბი რბნსაქბებებერ ბბრ-
ბებ. «ბონანგებ», 2007, № 35, 23-29 ნოქებებერ, ბე 5: შნ მას
შბრქებქან გ. ქრეგოქ კებოთონ, «ბონანგებ», 2008, № 32,
12-18 სბქონებებერ, ბე 3:
86 “სბებო თობა”, 2007, № 258, 19 ბებქებებებო. შნ მას “ს-
ბბებებებო რებბებებებო”, 2007, № 183, 22 ბებქებებებო.
87 “არბობებებებო ვაბეო”, 2001, 13-19 ბებებებო.

88 “აბობ”, 2007, № 43, 17-18 აბობებო. შნ მას “სბებებ-
ბსბებებო”, 2005, № 48, 28 ბებებებებო-4 ბებებებებო.
89 “არბობებებებებო ვაბეო”, ნოქნ თებონ:
90 ჯნთარებებერ ბ, ბე ბ⁹⁰ ბრამბარქანბებებერ ბნ აზაეზნორქიქ
ხანბარგბთარანბ ხებინსაქებებ, ბებ ნებ ბნ, ირ 1655 პ.-ბე
გოქონქონ ნონებოქ ბბრანაქორ შრ. ბათქადბბინ (ბოქ-
ბანბ) ქანბი ხაქ ხოგნორქანბოქონბრ მბაქნ ბბ-
ბარებ ბებ გებებმანგონ აქლგებებ ამბოქებებონ ბ აქ-
აქს ამბოქებებ ბბებებ⁹¹ ხაქარებ გებებმანგებ: ბ⁹¹ ბ
ბანბარებ ბრანგ ნოქინ ანბებ⁹¹ სქსად ხნგ 1655 პ.-ბე: შნ
ბახათაქქან ბ. ბრბეხ ბებებ... ბოქებქანბ, «ჯ-
ბებებებ”, 2004, № 6, მარბ, ბე 22:
91 “ბებებებ”, 2011, № 69, ბე 44:

Հայտնի է, որ 1883 թ. ապրիլի 11-ից մինչև 1887 թ. մարտի 22-ն ընկած ժամանակահատվածում, այսինքն՝ շուրջ 4 տարում (ավելի ստույգ՝ 3 տարի, 11 ամիս և 10 օր, որը կազմում է 1435 օր) գերեզմանոցում ամփոփվել է 3431 հանգուցյալ (1894-ը՝ ար., 1537-ը՝ իգ., ընդ որում, մինչև 10 տարեկան վախճանված երեխաները՝ 1876, իսկ 10-120 տարեկանները՝ 1555)⁹²:

Միջին թվաքանակն տվյալների դուրսբերմամբ պարզ է դառնում, որ նշյալ 4 տարիների ընթացքում յուրաքանչյուր տարի գերեզմանոցում միջինն ամփոփվել է 870 հանգուցյալ: Այս տվյալը համադրելով, օրինակ, 1885 թ. վիճակագրության հետ, երբ քաղաքի հայ բնակիչների թվաքանակն էր 39040 (21680-ը՝ ար., 17360-ը՝ իգ.)⁹³, ստացվում է, որ տվյալ՝ 1885 թ. քաղաքի հայ բնակչության հանգուցյալների 2,2 %-ն ամփոփվել է Խոջիվանքի գերեզմանոցում⁹⁴:

Մյուս կողմից համանման տվյալ ունենք 1916 թ. համար, երբ մարդահամարով արձանագրված 142019 հայ քաղաքաբնակները⁹⁵ տվյալ տարվա ընթացքում իրենց հանգուցյալներից 2159-ին, որը կազմում է 1,5 %, ամփոփել են Խոջիվանքի գերեզմանոցում. «1916 թվին Խոջիվանքի գերեզմանոցում թաղվեցին 2159 հանգուցեալներ»⁹⁶:

Ընդամենը 1885 և 1916 թթ. գերեզմանոցում ամփոփվածների տոկոսային ցուցանիշի նվազումը (2,2 %-ից՝ 1,5 %) ոչ թե ավելի մեծ թվով հանգուցյալների՝ ուրիշ գերեզմանոցներում ամփոփելու, այլ մանկահասակների մահացության՝ բժշկության զարգացմանը գուճահեռ տարեցտարի կրճատվող թվաքանակի արդյունք է:

Այժմ հիմք ընդունելով ստացված տվյալները՝ փորձենք հասկանալ, թե տվյալիսահայությունը քանի հանգուցյալ կարող էր ամփոփված լինել Խոջիվանքի գերեզմանոցում մինչև 1934 թ. ներառյալ: Այստեղ, կարծում ենք, կարելի է հենվել 1885 թ. վերաբերող 2,2 % գործակցի վրա (թերևս հնարավոր է, որ այդ տոկոսը նախկինում ավելի բարձր եղած լիներ, բայց դա փաստելու բավարար հիմքեր չկան), որից պարզ կդառնա, որ 1812 թ. 9000 քաղաքաբնակ հայերը (ըստ Ռ. Լայլի՝ 18000 քաղաքաբնակների կեսը)⁹⁷ Խոջիվանքի գերեզմանոցում ամփոփել են 198 հանգուցյալի:

Առաջնորդվելով նույն տրամաբանությամբ՝ 1841 թ. գերեզմանոցում ամփոփված կարող էր լինել 410 հանգուցյալ, քանի որ նշյալ թվականին քաղաքն ուներ 18646 հայ բնակիչ (9671-ը՝ ար., 8975-ը՝ իգ.)⁹⁸, իսկ 1842 թ.՝ 418 հանգուցյալ (19040 հայ բնակիչ, որից 9896-ը՝ ար., 9144-ը՝ իգ.)⁹⁹:

Տարեթիվ	Հայ բնակչություն	Հանգուցյալներ
1812	9000	198
1813	9333	205
1814	9665	213
1815	9998	220
1816	10330	227
1817	10663	235
1818	10996	242
1819	11328	249
1820	11661	256
1821	11994	264
1822	12326	271
1823	12659	278
1824	12991	286
1825	13324	293
1826	13657	300
1827	13989	308
1828	14322	315
1829	14655	322
1830	14987	330
1831	15320	337
1832	15652	344
1833	15985	352
1834	16318	359
1835	16650	366
1836	16983	373
1837	17316	381
1838	17648	388
1839	17981	395
1840	18313	403
1841	18646	410
1842	19040	419
1843	19454	427
1844	19868	435
1845	20282	444
1846	20696	452
1847	21110	460
1848	21524	468
1849	21954	478
1850	22384	488
1851	22814	497
1852	23244	507
1853	23674	517
1854	24104	527
1855	24534	537
1856	24964	547
1857	25394	556
1858	25824	566
1859	26254	576
1860	26684	586
1861	27114	596
1862	27544	605
1863	27974	615
1864	28404	625
1865	31180	686
1866	31759	699

92 «Արարատ», 1887, 2, էջ 284-285:

93 ՀԱԳ, ֆ. 53, ց. 1, գ. 3879, ք. 109-110:

94 Այստեղ հարկ է շեշտել, որ 1885 թ. արձանագրված 870 հանգուցյալը կամ հայ բնակչության 2,2 %-ը բնավ չի ներկայացնում մեկ տարվա ընթացքում քաղաքաբնակ հայության բոլոր մահերը, քանի որ հայ հանգուցյալներն ամփոփվում էին նաև Վերայի, Կուկիայի և այլ տարիներին գործող (այդ թվում՝ տոհմական) այլ գերեզմանոցներում, սակայն հայտնի է, որ հանգուցյալներ ընդունելու առումով Խոջիվանքի գերեզմանոցն առաջին տեղում էր:


95 Кавказский календарь на 1917 г. Тифлис, 1916. С. 190-193.

96 ՀԱԳ, ֆ. 53, ց. 1, գ. 442, ք. 11:

97 Travels in Russia, the Crimea, the Caucasus, and Georgia by Robert Lyall, Vol. I, London, 1825, p. 512.

98 ՀԱԳ, ֆ. 53, ց. 1, գ. 3802, ք. 100-101:

99 ՀԱԳ, ֆ. 53, ց. 1, գ. 3805, ք. 102-103:



1812 թվական, ըստ բնակչության կամ գերեզմանոցում անկողիվածների թվաքանակը վերաբերում է աղբյուրներում անհղիանկում նշված թվաքանակներ և բնակչության թվաքանակներ
 1910 թվական
 1904/419 բնակչության թվաքանակ / գերեզմանոցում թաղվածների թվաքանակ

1867	32339	711	1899	42987	883
1868	32918	724	1900	43330	884
1869	33498	737	1901	43794	887
1870	34077	750	1902	44259	890
1871	34656	762	1903	44723	893
1872	35236	775	1904	45188	896
1873	35815	788	1905	45652	899
1874	36395	800	1906	61502	1194
1875	36974	813	1907	77352	1490
1876	37601	827	1908	93201	1785
1877	37761	832	1909	109051	2081
1878	37921	837	1910	124901	2376
1879	38081	841	1911	124144	2345
1880	38241	846	1912	123387	2314
1881	38400	851	1913	128045	2275
1882	38560	856	1914	132703	2237
1883	38720	860	1915	137361	2198
1884	38880	865	1916	142019	2159
1885	39040	870	1917	132560	2012
1886	39399	877	1918	123100	1866
1887	39757	883	1919	113641	1719
1888	39981	888	1920	104181	1572
1889	40267	888	1921	94722	1426
1890	40469	886	1922	85262	1279
1891	40671	884	1923	91947	1379
1892	40897	882	1924	98631	1480
1893	41123	881	1925	105316	1580
1894	41418	881	1926	112000	1680
1895	41713	882	1927	122055	1831
1896	42007	882	1928	132109	1982
1897	42302	882	1929	142164	2133
1898	42645	883	1930	152219	2284

1931	162273	2434
1932	172328	2585
1933	182382	2736
1934	192437	2887
Ընդամենը		112804

Այսպիսով, հենվելով առկա միջինացված տվյալների վրա, փաստորեն 118 տարվա ընթացքում (1812-1934 թթ.) Խոջիվանքի գերեզմանոցում ամփոփվել է շուրջ 112800 հանգուցյալ:

Հաշվի առնելով, որ առնվազն 1655 թ.-ից ի վեր գոյություն ունեցող գերեզմանոցում մինչև 1812 թ., այսինքն՝ շուրջ 157 տարվա ընթացքում կարող էր ամփոփված լինել ևս առնվազն նշյալ թվաքանակի գոնե կեսի չափով հանգուցյալ, կարելի է որոշակի պայմանականությամբ նշել, որ նախընթաց շուրջ 280 տարվա ընթացքում (1655-1935 թթ.) տվյալահայտց այս նվիրական հնավայրի ոչնչացման նախօրեին արդեն ամփոփված է եղել շուրջ 170000-180000 հանգուցյալ:

Գերեզմանոցում ամփոփված հանգուցյալների՝ մեզ հայտնի ցանկը. որևէ գերեզմանոցում ամփոփված հանգուցյալների ցանկ դուրս բերելու առաջին և հիմնական աղբյուր են ծառայում (անշուշտ, եթե համապատասխան գրանցումներով մատյաններ գոյություն չունեն) հենց գերեզմանատանը պահպանված տապանագրերը: Խոջիվանքի պարագայում, սակայն, այդ կերպ վարվելու հնարավորությունից հասկանալի պատճառներով զրկված ենք մեկընդմիջ¹⁰⁰: Ուստի առկա իրավիճակում հանգուցյալների մասին տեղեկություններ հայթայթելու միջոցներ են մնում ժամանակի մամուլում հրատարակված մահախոսականների ու մահեր գուժող հայտարարությունների ուսումնասիրությունը և դրանցից հարկավոր տվյալների դուրսբերումը: Այս կարգի տեղեկատվությունն էլ, ինչպես պարզվում է, ունեցել է որոշակի սահմանափակումներ: Նախ այդօրինակ նյութերն ավելի հաճախ ի հայտ են գալիս և պարբերականների էջերում իրենց կայուն տեղն են բռնում միայն ԺԹ դարի վերջերից, որով և բաց է մնում գերեզմանոցում ավելի վաղ ամփոփված հանգուցյալների մասին տեղեկատվություն ձեռք բերելու հարցը, ինչպես նաև կրում են մասնավոր բնույթ և չեն պարունակում տեղեկատվություն բոլոր մահերի մասին:

Ստորև ներկայացնում ենք մեզ հասու զանազան տեղեկագրերից, բայց առավելապես մամուլի հաղորդագրություններից քաղված և ժամանակագրորեն դասակարգված այն բոլոր տվյալները, որոնք վերա-

բերում են տարբեր ժամանակներում Խոջիվանքի գերեզմանոցում ամփոփված հանգուցյալներին:

ԺԷ-ԺԸ դդ.

Խաչքարի բեկոր. քիվին՝ կիսանդ 2 տող.

[Խ]աչա բարեխա[ւ/ս է] ...րանի որդի Ալեք[սահին]:

Հրատ. **Мурадян П.** Армянская эпитафика Грузии: Тбилиси. Ереван, 1988. С. 97.

Ծանոթ. ժամանակը՝ ԺԷ-ԺԸ դդ.:

1768

1768 թ. գերեզմանոցում է ամփոփվում Սայաթ-Նովայի կինը՝ Մարմարը: Տապանաքարն ունեցել է 8 տող վրացերեն արձանագրություն.

յ(րօեցց)ե շեց | յ եացլացե | ձմեա թօնե
ցօր եօօտեօցօե թեցլեց | թարթար թեցլեց
թօթթեց

Թարգմ. Քրիստոսի 1768 թ., այս գերեզմանի մեջ են Սայաթ-Նովայի կողակից Մարմարս, ողորմություն խնդրեցեք:

Հրատ. **ԶրօժՅցցլօ օ.**, եօօտեօցօ և ձեցլօ, տօցլօ, 1918, թցցրօ: 83.

1785


1785 թ. գերեզմանոցում է ամփոփվում Ավետիս Նավասարդյանը.

Տապանաքարին երեք տողով արձանագրված է եղել.

Այս է տապան Նավասարթի որդի Աւեդիսին, |
ՌՄԼԳ (1785) քվին:

Հրատ. **Мурадян П.** Армянская эпитафика Грузии: Тбилиси... С. 98.

Ծանոթ. հրատարակիչը թվականի մեջ տասնավորը՝ Լ (30)-ը, սխալմամբ ընթերցել է Գ (90), որի հետևանքով 1785 թ. տապանագիրը հայտնվել է 1845 թ. ներքո:



¹⁰⁰ Ազգային պատմության համար մեծագույն ողբերգություն է նաև այն փաստը, որ նույնիսկ գերեզմանոցի ավերման նախօրեին համայնքն ի գործ չգտնվեց իր ծոցից դուրս բերելու այն գիտակից ուժերին, ովքեր ընդամենը մի քանի օրում, եթե ոչ քար առ քար լուսանկարելով, ապա գոնե բոլոր տապանագրերը գրի առնելով՝ կարող էին և պարտավոր էին թերևս թրքի վրա փրկել նախնյաց հիշատակները:

1805

1805 թ. գերեզմանոցում է ամփոփվում Նախիջևանից սերող վաճառական Մկրտիչ Սահակյանը: Տապանաքարին 5 տողով արձանագրված է եղել.

Այս է տապան նախիջեանցի Մկրտչին, / որ է որդի մշակար Սահակին, որ եկն աստ / վ(ա)ս(ն) վաճառականութե(ան) (Խ)Ե (45) ամեայ հասակաւ: Եւ բարի մահուամբ փոխեցաւ առ տ(է)ր, / ՌՄԾԴ (1805) թվ(ին):

Հրատ. առաջին անգամ:

Ծանոթ. տապանաքարը գերեզմանոցի ավերումից հետո՝ շուրջ 60 տարի, մինչև 1995 թ., եղել է հողածածկ և, ըստ այդմ, մնացել աննկատ: Հայտնաբերվել է հայոց երբեմնի գերեզմանատան տեղում կառուցվելիք վրաց առաջնորդանիստ նոր եկեղեցու հիմքերը փորելու ժամանակ և ընդամենը օրեր անց անհետացվել (հավանաբար հեռացվել է շինադրի հետ):

Ի դեպ, հանգուցյալի տարիքը ցույց տվող տառերից տասնավորի ընթերցումը մասամբ եղծված լինելու պատճառով կասկածելի է:

Վիճագիրը ներկայացվում է ըստ Ս. Դարչինյանի լուսանկարի:



1832

1832 թ. 68 տարեկանում վախճանվում և Բեհբուդյանների տոհմական գերեզմանոցում է ամփոփվում Դարչի Ավետիքյան Բեհբուդյանը (ծնվ. 1764 թ.): 1937-38 թթ.՝ գերեզմանոցի ոչնչացման ժամանակ, երկլեզվյան արձանագրությամբ շիրմաքարը թեև երկատվում, այնուամենայնիվ, գոնե այդ վիճակում փոխադրվում է Վրաստանի ազգագրության թանգարան և պահպանվում:



1820

Տապանաքար, գերեզմանատան ավերումից հետո ծածկվել է հողով և, ըստ այդմ, մնացել աննկատ: Հայտնաբերվել է 1995 թ.՝ երբեմնի գերեզմանատան տեղում կառուցվելիք վրաց առաջնորդանիստ նոր եկեղեցու հիմքերը փորելու ժամանակ, իսկ հաշված օրեր անց՝ անհետացվել: Արձանագրությունը՝ 3 տող.

Փորնչի Գասպարի եղբայր | Միլիտոսին, 1820:

Հրատ. առաջին անգամ:

Ծանոթ. վերձանությունն ըստ Ս. Դարչինյանի լուսանկարի:



საყანაპარჩინ 7 თოე ჟოხერენოდ კ 10 თოე ქრახერენოდ არდანაგრიად ჲ.

Праху | покоящегося здесь коллежского советника Тифли|ского мелика князя Дарчия | Бибутова, скончавшагося [29]-го | февраля, 18[32] года на 68 году | от рождения.

ძარცამ. ასო ხანაგჯი ჰერიმ ლიხაქისკან ჰორირისკან, ძიქიქის მნიქი, იქისან რარქი მხერილიქი, ი 1832 ამი, 68 ამან ხასსიქი:

აქა ქუშუე ლოდის ამის დაიდუა სხეული ცვილისის მელიქისა კოლეჯესკი სოვენიციისა თავადისა მელიქ | ავეტიქის ძისა დარჩი ბებუდოვისა გარდაცუალებულისა თებერვლის ...სა ხელბ-სა შობითგან თვისთ 68 სა წელიც და მით მეგლითარედ დამტევებელისა ერთის ძისა რომელმანცა უამათ რაოდენმე დაუვიყარად სხვისათვის | და სდგნილოდი ესე ვითარცა ნიში უთღმწიწებოვს () | თვლისსა მოვლელობეს უსრულიბწ (*) ღორ ბნილისელი (*) დთ | ნესლსა (*) ამისა და ... მოვლელებიბსწო წართქმას ... (*) გვიდრეთ*

ძარცამ. ასო თაყანის მხერი, ხანაგჯიმ ჲ სქიქის მნიქი, ლიხაქისკან ჰორირისკან, იქისან მნიქი ამსიქის რორი რარქი მხერილიქი მარამხი, ქაქანდამად 1832-ი ქხერიქის ...ინ, დნიქი 68 თარესკან, რიქნიქი ასო... (თაყანაგარქი ქრახერენ ხასოქადი ქხერდანიქონიქი რი-აროქი. მასქი ჰორანსკანი):

ჰრასო. **ყარაყხეთან უ.** ძიქიქის ქოქარაგოქისკერი, მხერი, 2003, ჲ 44:

1834

1834 რ. ხიქონმხერი 24-ინ ქაქანდამიქონ კ გხერდამნიგონ ჲ ამქიქიქონ ასქაგ ხრეგ ჰიქისან არარათქანცე (დნიქ. 1761/1762 რ.):

*სა ჲ ჰიქისან შართირისან
სააგ ხრეგ არარათსან,
არქ ჰათაქნიქის კ რაროქორ,
ქაგ ნსქეცერი, დიქისკარ:
ი ქსანს იქი მანსკანც კრქი,
ორეგ, აქრესაგ ხარქ კ თადიქ:
სიარქისი კ რარესაქათ,
შარმნიქ კრქი ნოქი ანხაქათ,
სანს ასათიქი ანოქი მქასქ,
ხერი ი ნმა მნდ ქიქათასქ,
ქამს ხრესონ ქარესაგ გცერი,
სრქი გახინ თხთუქ სა ქორი:
ანცოქარაქი კ ანაგახ
ქანსქეთ ანონ ქაქრესაგ გმასქ:
ქასან აქორქიქი ქიქესქ, იქ ანგათორქ, ქიქესქ,
ქოქი ჰიქისანს ქიქესქ, ქაქორი დერი ქიქესქ:
დნიქისი ი 1761 ი-ს-ს (1762), ქიქის ან ასათიქ
ი 1834 ი-ს-ს, ი 24 ხიქონმ., 72 ამანგ:
ჰრასო. **მურაქი ი.** არქანსკაი ეპიგრაქიკა გრუქი:
ტბილსი... ს. 99-100.*

1841

საყანაგარ. გონქონ ჲ მხერიქანმხერი თონსკან გხერდამნიგონ: ხრესინ მხერიქანმხერი თონსკან გხანდამნი მხერი, ნაქი ქრახერენ (9 თოე), აქა ხარქრენ (13 თოე) არდანაგრიად ჲ (მხერქაქავქონ ჲ მქანს ხარქრენი).

*ყარესიქი ანცორქიქი რნი მნც გარასკესალ რარდიქი
ქაქს თაყანს, | თხსქ ი ანა დადქესალ სხათ ხორქი
მარქ გარამხი ჲ თანს | გშარქისან თიქისი, რორსორ
ჰიქისქიქი სქიქისქარესან, | რნიქიქი ამოქინ მნდ
გნიქარესიქი ი თანს ჰაქისან, | მნიქიქესარქარქი
იქისან ჰიქისქიქი ქაგცქ მხერიქესან, | იქი რაგ ი*





գլուխ կայ զաջոյ կողամբ տխուր մահարձան, / սա քաջուղէշ տունկ, սա մայր որդեսէր, տիկին բազմաջան, / զորոյ բարի գործս թուել մի առ մի տկարանայ բան, / այլ աւաղ զինչ այլ որդիք եւ թոռունք տխուր գերդաստան, / կարեն տրիտուր նորին երախտեաց վճարել փոխան, / բայց թէ զայս արձան թացեալ արտասուօք կանգնել ի շիրմի / եւ յընթերցողաց խնդրել սուրբ սրտիւ ասել ողորմի, / վախճանեալ ի 24-ն ապրիլի 1841 ամի, 75 ամաց:

Հրատ. **Муральян П.**, Армянская эпиграфика Грузии: Тбилиси, Ереван, 1988, С. 102.

Ծանոթ. 1979 թ. տապանաքարը Ի. Գրիշաշվիլու անվ. թանգարանի հնագիտական բաժնում է տեսել Ս. Գարշինյանը, առաջին անգամ լուսանկարել և ընդօրինակել է արձանագրությունը, ապա նյութերը տրամադրել մեզ:

1844

1844 թ. Խոջիվանքի Սբ. Աստվածածին եկեղեցու մեջ է ամփոփվում բանաստեղծ, իշխան Աշխարիբեկ Բեհբուդյանցը (ծնվ. 1786 թ.)¹:

¹ **Յարոյ Ն.**, Թռուցիկ յիշողութիւններ մեր թաղի անցեալ կեանքից, «Հովիտ», 1915, № 8, 16 յունուարի, էջ 4:

1845

1845 թ. գերեզմանոցում է ամփոփվում նկարիչ Սկրտում Հովնաթանյան Հովնաթանյանցը (ծնվ. 1779 թ.): Հեղինակ է կրոնական թեմաներով կտավների, հայ թագավորների և ռազմական գործիչների դիմանկարների: Հորն օգնելով՝ մասնակցել է Էջմիածնի Մայր տաճարի որմնանկարազարդման աշխատանքներին¹:

¹ **Խաչատրյան Հ.**, Խոջիվանք, «Հայոց լեզուն և գրականությունը դարրոցում», 1988, № 1, էջ 62:



Տապանաքար. արձանագրությունը՝ 3 տող.

Այս է տապան Նավասարթի որդի Աւեդիսին/:
ՌՄՂԴ (1845) թվին:

1853

1853 թ. գերեզմանոցում է ամփոփվում իշխանուհի Աննա Մակայանը: Շիրմաքարին արձանագրված է.

Ասում են ուռենի կայ, որ ողբում է անդադար,
դուստր իմ՝ Աննա, ես կուզեի այդ ուռենին լինել յար.

Ճիղերովս քեզ ողբալ,
Տերևովս շիրմիդ շուք տալ՝
Եւ, Քալի մօրդ միակ փափագ,
Արմատովս քեզ միանալ:
Իշխանուհի Աննա Մակայեան,
1822-1853¹:

¹ **Շգեկեան Ա.**, Գերեզմաններից, «Մշակ», 1903, № 4, 10 յունվարի, էջ 1:

1858

1858 թ. մարտի 10-ին վախճանվում և 16-ին Խոջիվանքի գերեզմանատան կենտրոնում գտնվող եկեղեցու ներսում է ամփոփվում իշխան Բարսեղ Հովսեփյան Բեհբուդյանցը (ծնվ. 1791 թ.)¹: Հանգուցյալի վերջին հրաժեշտին ներկա էին Կովկասյան բանակի հրամանատարական ողջ կազմը, Կովկասի փոխարքան, քաղաքացիական և զինվորական բարձրաստիճան պաշտոնյաներ և բազմահազար քաղաքացիներ: Հոգեհանգիստը կատարվում է Վրաստանի թեմի առաջնորդ Սարգիս արքեպիսկոպոսի գլխավորությամբ Հարանց վանքի եկեղեցում, որտեղից թափորը շարժվում է Խոջիվանքի եկեղեցու Բեհբուդյանների տոհմական գերեզմանոց. «Ի կոնսիստորիայիս լուեալ զգեկուցումն սբ. Աստուածածին եկեղեցին գերեզմանատան Հալաբարու՝ Խոջիվանք անուանեալ գոլով կառուցեալ ի նախնեաց պայծառափայլ տոհմին Բեհբուտեանց, ննջեցեալք նոցա թաղեալ են ի միջի նորին և շուրջ գնովաւ, արտաքոյ պարսայի, որոյ է հասարակաց հանգստարանն, ուստի ի 16-ն մարտի նորին պայծառափայլութիւն հանգուցեալ գեներալ օտինֆանտիրի Վասիլ Օսեփիչ Բեհբուտովն ըստ օրինակի նախ-



նեաց իւրոց թաղեցաւ ի մէջ յիշատակեալ եկեղեցոյ առանց գիտութեան հոգևոր իշխանութեան...»²: Ի դեպ, տակավին 1897 թ. եկեղեցու հյուսիսային կողմում գետեղված մեծահռչակ զորավարի գերեզմանին որևէ, նույնիսկ ամենահամեստ հուշաքար տեղադրված չի եղել, որը, ինչպես երևում է, երբևէ այդպես էլ չի իրականացվել³:

1 Кавказ. № 23, 20 марта 1858 г. С. 119, 124-125.
2 ՀԱԳ, ֆ. 56, ց. 1, գ. 3675, ք. 1:
3 Тифлисский листок. 1897. № 164, С. 2.

1861

1861 թ. նոյեմբերի 17-ին վախճանվում և գերեզմանոցում է ամփոփվում անվանի բժիշկ, բանասեր, պետական և հասարակական գործիչ, Սայաթ-Նովայի երգերի առաջին հրատարակիչ Գևորգ Ախվերդյան (05.06. 1818, Թիֆլիս): Նրա գերեզմանն անմահացնում է նկարիչ Գեվորգ Բաշինջաղյանի նախագծով կառուցված մահարձանը¹:



Տապանաքարին արձանագրված է եղել.

Բժիշկ / Գևորգ Ախվերդեան / Ախվերդեանց, / 1818-1861²:

1 **Լևոնյան Գ.**, Երկեր, Երևան, 1963, էջ 322: Տե՛ս նաև **Լևոնյան Գ.**, Գևորգ Ախվերդեան, «Անահիտ», 1929, № 2, յուլիս-օգոստոս, էջ 21-28:
2 **Երեմեան Ա.**, Թիֆլիսի հայկական պանթեոններում, Վիեննա, 1940, էջ 45: Հանգուցյալի մասին մանրամասն տե՛ս **Ավետիսյան Ա.**, Գևորգ Ախվերդյան, Երևան, 1963:

1864

1864 թ. մայիսին 104 տարեկանում վախճանվում և գերեզմանոցում է ամփոփվում Ստեփանոս Նազարյանցի մայրը¹:

1 «Մեղու Հայաստանի», 1864, № 20, 23 մայիսի, էջ 167:

1869

1869 թ. վախճանվում և գերեզմանոցում է ամփոփվում հայ բեմի ուրույն դերակատարներից Ստեփանոս Մատինյանը (ծնվ. 1843 թ.)¹:

1 **Երեմեան Ա.**, նշվ. աշխ., էջ 57-58:

1871

1871 թ. փետրվարի 10-ին վախճանվում և 13-ին գերեզմանոցում է ամփոփվում բժշկապետ Մարկիանոս Ռոտինյանցի կինը՝ Եկատերինա Սիրոնյանը¹:

1 «Մեղու Հայաստանի», 1871, № 6, 13 փետրվարի, էջ 43:

1872

1872 թ. դեկտեմբերի 27-ին վախճանվում և գերեզմանոցում է ամփոփվում Կարապետ Տեր-Աբրահամյանը: Պահպանված տապանաքարին 13 տողով ընթերցվում է.



Թ...ՈՊՀ բա... / ... / դեկտեմբերի ԻԷ (27). / այս է տապան տոնիմական պատուառո / ք(ա)ղ(ա)ք(ա)-ցի Կարապետէ, որ / էր որդի տ(է)ր Աբրահամ / ք(ա)-հ(ա)ն(ա)յի, եկեղեցոյ դր/պիր կօշերով, հանդիպօղբ այսմ շիրմի մի / բերան տուք ողորմի, / ա(ստուա)ծ զձեզ ողորմեսցի, ազգական՝ ՌՅԻԱ (1872)-ին:

Հրատ. առաջին անգամ:

Ծանոթ. տապանագրի 2-րդ տողն ամբողջ երկարությամբ հետագայում փորվել-անհետացվել է:

1875

1875 թ. փետրվարի 8-ին վախճանվում և 11-ին գերեզմանոցում է ամփոփվում Տփղիսի Կուսանաց վանքի մայրապետ Գայանե Բեհրույանցը: Նա «...ամենայն բարեկարգութեամբ կառավարեց Հայոց այդ միակ կուսանոցը»¹:

¹ «Մեղու Հայաստանի», 1875, № 6, 15 փետրվարի, էջ 3:

1875 թ. գերեզմանոցում է ամփոփվում պետական իսկական խորհրդական, Պուշկինի ստեղծագործությունների վրացերենի առաջին թարգմանիչ, բանաստեղծ իշխան Միքայել Բիրթվեյան Թումանյանը (նաև՝ Թումանով, ծնվ. 1818 թ., Գորիի շրջան, գ. Խելթուբան)¹: Հայրը՝ Բիրթվել Թումանյանցը



(Թումանիշվիլի, 1764-1836), պետական գործիչ էր, Հերակլ Բ-ի, ապա նրա որդու՝ Գիորգի ԺԲ-ի պալատական քարտուղարն ու խորհրդատուն:

Գերեզմանոցում է ամփոփվում նաև Մ. Թումանյանցի կինը՝ իշխանուհի Ելիզավետա Էնիկոյուպյանցը²:

- 1 **Туманова И.** Это похоже на переделку истории. // Голос Армении № 87, 9 августа 1997 г. С. 4. «Տարագ», 1918, № 3-6, էջ 23: Заря востока. № 20. 18-24 мая 2002 г. **Խաչատրյան Հ.**, Խոջիվանք, «Հայոց լեզուն և գրականությունը դպրոցում», 1988, № 1, էջ 62:
- 2 **Туманова И.** Там же.

1875 թ. դեկտեմբերի 11-ին վախճանվում և գերեզմանոցում է ամփոփվում Դարչո Տեր-Աբրահամյանի կողակից Էփեմիան: Պահպանված տապանաքարն ունի 9 տող հայերեն և 7 տող վրացերեն արձանագրություն (ներկայացվում է միայն հայերենը).

Ի ներքոյ յայսմիկ տա/պանի հանգչի մարմին / Տփխիսայ քաղաքացի / Դարչօ Տ(է)ր Աբրահամ/ե(ա)նցի կողակից Էփեմի/այի, վախճանելոյ ի / 11-ն դեկտեմբերի, 1875 / ամի, ընթերցողացո / խնորհ/ ասել ողորմի:

Հրատ. առաջին անգամ:



1875 թ. հունվարի 22-ին վախճանվում և գերեզմանոցում է ամփոփվում կրթական և թատերական գործիչ, դերասան Գևորգ Միրադյանը: Տապանաքարին արձանագրված է եղել.

Թատրոն ու դպրոց / դու միշտ սիրեցիր, / կեանքդ նոցա մեջ / դու ծրարեցիր, / թեև շիրմի տակ, / սա-

կայն յախտեան / անմահ է անունդ, / ազնիւ ուսուցիչ,
/ կոմիկ դերասան / Գեորգ Միրադեան, / ծն. 1840 թ., /
վախճ. 1875:

Հրատ. **Երեմեան Ա.**, Թիֆլիսի հայկական պանթեոններում,
Վիեննա, 1940, էջ 55-56:

1876

1876 թ. փետրվարի 20-ին վախճանվում և 22-ին
գերեզմանոցում է ամփոփվում Հարություն Տեր-Մել-
քիսեթյան Մուրադյանցը¹:

1 ՎԱԴ, ֆ. 192, ց. 6, գ. 50, ք. 8:

1876 թ. մայիսի 12-ին վախճանվում և գերեզմա-
նոցում է ամփոփվում Կարապետ Տեր-Աբրահամյա-
նի կողակից Մարգարիտը: Պահպանված տապա-
նաքարն ունի 8 տող հայերեն և 6 տող վրացերեն
արձանագրություն (ներկայացվում է միայն հայե-
րենը).

*Այս է տապան Տիֆլիսու քաղաք(ա)ցոյ Կարա-
պետ Տ(է)ր Աբրահամ(եան) / ք(ա)հ(ա)ն(ա)յի կո-
ղ(ա)կից Մարգարիտի, վախճանելոյ / 12-ն մայիսի
1876 ամի, / ընթերցողացոյ յայսմ / տապանի խնդրեն
ասել ողորմի:*

Հրատ. առաջին անգամ:



1878

1878 թ. օգոստոսի 26-ին գերեզմանոցում է ամ-
փոփվում Եղիսաբեթ Միրայեյյան Բեիրույանցը¹:

1 Тифлиссский листок. 1878, № 192.

1879

1879 թ. փետրվարի 5/17-
ին ինքնասպանությամբ «ա-
զատում է իրեն»¹ թատերա-
կան գործիչ, դերասան Միհրը-
դատ Ամերիկյանը (ծնվ. 1
/13.05. 1843, գ. Ծինուբան)²:



1 Իր արարքն այս խոսքերով է բնո-
րոշել ինքնասպանությունից առաջ
թողած երկտողում (տես **Երեմեան
Ա.**, նշվ. աշխ., էջ 57): «Մշակ»,
1879, № 17, 7 փետրվարի, էջ 2:

2 **Երեմեան Ա.**, նշվ. աշխ., էջ 56-57:
Հանգուցյալի մասին տես **Հա-
րությունյան Ս.**, Միհրդատ Ամերիկյան, Երևան, 1959: **Հովհան-
նիսյան Հ.**, Հայ թատրոնի պատմություն. 19-րդ դար, Երևան,
2010, էջ 245-247:

1879 թ. մարտի 3-ին գերեզմանոցում է ամփոփ-
վում Ալեքսանդր Մարտիրոսյան Ծովյանյանցը¹:
Նրա եղբայրները՝ Գեորգը և Իսահակը, ի հիշատակ
հանգուցյալի, 1000 ռուբլի նվիրում են Գայանյան
ուսումնարանին, իսկ 500 ռուբ.՝ «Արարատյան» ըն-
կերությանը²:

1 «Մշակ», 1879, № 31, 2 մարտի, էջ 4; № 32, 3 մարտի, էջ 4:

2 «Մշակ», 1879, № 32, 3 մարտի, էջ 3:

1879 թ. մարտի 6-ին գերեզմանոցում է ամփոփ-
վում Հովհաննես Ալեքսանդրյան (Ալեսյան) Ազիզ-
յանցը¹:

1 «Մշակ», 1879, № 33, 6 մարտի, էջ 4:

1879 թ. օգոստոսի 25-ին գերեզմանոցում է ամ-
փոփվում իսկական քաղաքական խորհրդատու
Դավիթ Մովսեսյան Մելիքյանցը¹:

1 «Մշակ», 1879, № 141, 23 օգոստոսի, էջ 2; № 142, 24 օգոստ.,
էջ 4; № 143, 25 օգոստ., էջ 4:

1879 թ. սեպտեմբերի 23-ին գերեզմանոցում է
ամփոփվում իսկական քաղաքական խորհրդատու
Եգոր Եգորյան Ղարաջյանցը¹:

1 «Մշակ», 1879, № 161, 22 սեպտեմբերի, էջ 4:

1879 թ. սեպտեմբերի 30-ին գերեզմանոցում է
ամփոփվում Պետրոս Գրիգորյան Պետրոսյանցը
(Գրիգորյանցը)¹:

1 «Մշակ», 1879, № 166, 29 սեպտեմբերի, էջ 4:

1879 թ. հոկտեմբերի 4-ին գերեզմանոցում է ամ-
փոփվում Մովսիս Սվեչնիկյանցը¹:

1 «Մշակ», 1879, № 168, 3 հոկտ., էջ 4; № 169, 4 հոկտ., էջ 4:

1879 թ. հոկտեմբերի 1-ին վախճանվում և 6-ին
գերեզմանոցում է ամփոփվում Հովակիմ Ավետիս-
յան Տեր-Ղազարյանցը¹:

1 «Մշակ», 1879, № 170, 5 հոկտ., էջ 4; № 171, 6 հոկտ., էջ 4:

1880

1880 թ. հունվարի 17-ին գերեզմանոցում է ամ-
փոփվում քահանա Մուշեղ Տեր-Ղևոնդյանի կինը¹:

1 «Մշակ», 1880, № 2, 16 յունվարի, էջ 4; № 3, 17 յունվ., էջ 4;
«Մեղու Հայաստանի», 1880, № 3, 16 յունուարի, էջ 4:

1880 թ. փետրվարի 14-ին գերեզմանոցում է ամփոփվում Հեղինե Հասան-Ջալալյանը¹:

¹ «Մշակ», 1880, № 22, 13 փետրվարի, էջ 4; № 23, 14 փետր., էջ 4: «Մեղու Հայաստանի», 1880, № 11, 13 փետր., էջ 4:

1880 թ. փետրվարի 14-ին գերեզմանոցում է ամփոփվում Քալի Սալամբեգյանը¹:

¹ «Մեղու Հայաստանի», 1880, № 11, 13 փետրվարի, էջ 4:

1880 թ. մարտի 18-ին գերեզմանոցում է ամփոփվում Արամ Խոջամիրյանը¹:

¹ «Մշակ», 1880, № 44, 18 մարտի, էջ 4:

1880 թ. օգոստոսի 13-ին գերեզմանոցում է ամփոփվում իշխան Պետրոս Աբխաղոմոնյան Բեհբուքյանցի կինը՝ իշխանուհի Էփեմիա Դավթյան Բեհբուքյանցը¹:

¹ «Մշակ», 1880, № 140, 13 օգոստոսի, էջ 4:

1881

1881 թ. մարտի 7-ին գերեզմանոցում է ամփոփվում Գրիգոր Հարությունյան Ղանդուրալյանցի կինը՝ տիկին Սալոմե (հոգեհանգիստը՝ Մուղնու Սբ. Գևորգ եկեղեցում)¹:

¹ «Մեղու Հայաստանի», 1881, № 32, 6 մարտի, էջ 4; № 33, 7 մարտի, էջ 4:

1881 թ. հունիսի 20-ին վախճանվում և գերեզմանոցում է ամփոփվում սազանդար Իվան Պողոսյան Ալեքսանդրյանը: Տապանաքարին հանգուցյալը պատկերված է եղել ամբողջ հասակով՝ ազգային տարազը հագին, իսկ կողին արձանագրված էր.

Այս գերեզմանի մէջ թաղուած է սազանդար Իվան Պաւլիչ Աղէքսանդրեանը, վախճան. 20 յունիսի 1881 թ. 57 ամսաց, խնորէ ասել ողորմի¹:

¹ Երեմեան Ա., նշվ. աշխ., էջ 16:



1881 թ. մեկ տարեկանում վախճանվում և գերեզմանոցում է ամփոփվում Գրիգոր Դոլուխանյանը: Տապանաքարին, որը հայտնաբերվում է 2010 թ.՝ հայոց դրամատիկական թատրոնին կից գտնվող այգում Մեեր Սկրտչյանի արձանը կանգնեցնելու և այգին վերակառուցելու ժամանակ, ռուսերենով արձանագրված է.

Григорий | Долуханов | 1880-1881 г.

Հրատ. առաջին անգամ:

1882

1882 թ. ապրիլի վերջին կամ մայիսի սկզբին գերեզմանոցում են ամփոփվում 7 հայ մշակներ. «Սպանված եօթ մշակները կենում էին Դաբախանայի կողմը գտնված մի խարխուլ շինութեան մէջ, որ պատկանում է Շիռեվին: Շինութիւնը այնքան խարխուլ էր, որ գիշերը փուլ եկաւ և իր փլատակների

տակ թաղեց քնած մշակներին: Ժողովուրդը հանեց աւերակների տակից դիակները: Տարան Ս. Գեորգ եկեղեցին, որ Մայրանի վրա է գտնվում: Բայց եկեղեցու հայ հոգևորականութիւնը հրաժարվեց թաղել զոհերին, որովհետև յոյս չունէր փող ստանալ թաղման կարգը կատարելու համար: Ննջեցեալներին եկեղեցի էլ չը մտցրին, մի սենեակի մէջ էլ, մի որևէ ամբարի մէջ էլ չը դրին դիակները, այլ թողեցին եկեղեցու բակում, բաց օդում: Ամբողջ գիշեր անձրև եկաւ, դիակները ջրով լցվեցան և ուռան: Միւս օրը ամբողջ տարաւ ննջեցեալներին թաղելու Խոջիվանքի գերեզմանոցը, առանց քահանայի: Ճանապարհին հանդիպեցին երկու քահանաներ, որոնց ժողովուրդը համոզեց իր հետ գնալ: Անցքի մասին տեղեկանալով, եկաւ, հասաւ գերեզմանատուն և Ղազարոս քահանան»¹:

¹ Մաղապետեան Յ., Մի տխրալի անցք, «Մշակ», 1882, № 79, 8 մայիսի, էջ 1:

1882 թ. մայիսի սկզբին գերեզմանոցում է ամփոփվում Կաթողիկե Սբ. Գևորգ եկեղեցու ավագ քահանա Գևորգ Թեմուրազյանը. «Մայիսի 4-ին ս. Գեորգի եկեղեցու գաւիթը հաւաքվեց ամբողջ աւագ քահանայ Թեմուրազեանցի թաղման հանդեսին ներկայ գտնվելու համար: Հանգուցեալի համար գերեզման էր փորված եկեղեցու գաւթում: Ժողովրդի միջից ձայներ լավեցան, թէ ինչի Ս. Գեորգի եկեղեցու հանգուցեալ քահանային այդքան փառքով և եկեղեցու գաւթում պէտք է թաղեն, երբ նոյն եկեղեցու քահանաները այդքան անսիրտ գտնվեցան մի քանի օր առաջ դէպի եօթ հոգի մշակները, որոնք սպանվեցան Դաբախանայում փուլ եկած շինութեան տակ և թողնելով դիակները ամբողջ գիշերը անձրևի տակ, չուզեցին էլ ննջեցեալների վրա քրիստոնեական թաղման կարգը կատարելու: Եթէ մշակները թաղվեցան Խոջիվանքում, ասում էր ժողովուրդը, և ս. Գեորգի եկեղեցու ոչ մի քահանայ չը համաձայնվեց թաղել նրանց, թող ուրեմն էլ քահանան էլ չը թաղվի եկեղեցու գաւթում, այլ Հալաբարի Խոջիվանքի գերեզմանոցում: Հեռագրեցին Էջմիածին և այնտեղից պատասխան եկաւ, որով արգելվում էր թաղել հանգուցեալ քահանային ս. Գեորգ եկեղեցու գաւթում: Հանգուցեալին տարան Խոջիվանքի գերեզմանոցի մէջ թաղելու»¹:

¹ «Մշակ», 1882, № 78, 6 մայիսի, էջ 1:

1882 թ. հունիսի 8-ին գերեզմանոցում է ամփոփվում երևանցի Մմբատ Մովսեսյան Սարգիսյանը¹:

¹ «Մշակ», 1882, № 100, 8 յունիսի, էջ 4:

1884

Տապանաքար. գործածված է որպես շինաքար բնակելի տան պատի մէջ.

Յիշատակ Ալէքսանդր Գրիգորեան Խալաթեանցի, 1884 ամի:

Ճանոթ. վերձանությունն ըստ Ս. Դարչինյանի լուսանկարի:

1884 թ. մարտի 23-ին/ապրիլի 4-ին հետին չքավորության մեջ Թիֆլիսի Միքայելյանի անվան հիվանդանոցում վախճանվում և 25-ին գերեզմանոցում է ամփոփվում նկարիչ, կրթական գործիչ, Շուշու Մարիամյան դպրոցի հիմնադրման մասնակից Ստեփանոս Հակոբյան Ներսիսյանցը (ծնվ. 1815 թ., Երևան)¹: Ի դեպ, հիմնվելով մեզ անհայտ աղբյուրի վրա, հուշաքարին ծննդյան քվականը նշվել է 1807:

Ստեփանոս Ներսիսյանցը մարտի 25-ին «քաղվեց Խոջիվանք գերեզմանատանը...: Հանգուցեալը Ներսես V-ի որդեգիրն էր: Ներսիսեան ուսումնարանում աւարտելուց յետոյ, նրան ուղարկեցին Պետերբուրգի նկարչական ակադեմիա, որտեղ աւարտելուց նա մինչև այժմ պարապում (3) էր նկարչութեամբ (մի քանի տարի էլ պարապել է ուսուցչութեամբ): ...Հանգուցեալը մեռաւ չքաւորութեան մեջ, նրան քաղեցին իր ծանոթ-բարեկամները»²:

1 «Մշակ», 1884, № 41, 31 մարտի, էջ 2-3: **Երեմեան Ա.**, նշվ. աշխ., էջ 23-27: Անվանի նկարչի մասին տես **Ղազարյան Մ.**, Ստեփանոս Ներսիսյան, «Տեղեկագիր Հայկական ՄՍՌ- գիտությունների ակադեմիայի. հասարակական գիտություններ», 1962, № 1, էջ 35-50:

2 «Մշակ», 1884, № 41, 31 մարտի, էջ 2-3:



1885

1885 թ. գերեզմանոցում է ամփոփվում գրող, հրապարակախոս, պատմավիպագիր Ծերենցի (Հովսեփի Շիշմանյան) միակ դուստրը՝ Թագուհի Մելիք-Ազարյանը (մականունը՝ օրիորդ Մենիկ: Ծնվ. 1859 թ.)¹:

1 **Եզեկեան Ա.**, Գերեզմաններից, էջ 1-2:

1886

1886 թ. ապրիլի 10-ին գերեզմանոցում է ամփոփվում Միմոն Մարգարյան Նազարյանցը¹:

1 «Մշակ», 1886, № 41, 10 ապրիլի, էջ 4:

1886 թ. հոկտեմբերի 16-ին գերեզմանոցում է ամփոփվում Շուշանիկ Թևանյան Արասխանյանցը¹:

1 «Մշակ», 1886, № 116, 16 հոկտեմբերի, էջ 4:

1887

1887 թ. փետրվարի 3-ին վախճանվում և գերեզմանոցում է ամփոփվում բանասեր, մանկավարժ Առաքել Աստվածատրյան Արարատյանցը (ծնվ. 13.09.1808): Հայտնի է Ստեփանոս Նազարյանի դեմ մղած խիստ ու անմիտ պայքարով¹:

1 **Երեմեան Ա.**, նշվ. աշխ., էջ 45-46: Ով ով է. հայեր, կենսագրական հանրագիտարան, հ. 1, Երևան, 2005, էջ 153-154:

1887 թ. դեկտեմբերի 15-ին վախճանվում և 19-ին գերեզմանոցում է ամփոփվում իսկական պետական խորհրդական, բժշկապետ Հարություն Հովհաննիսյանցը (հոգեհանգիստը՝ Մուղնու Սբ. Գևորգ եկեղեցում)¹:

1 «Մշակ», 1887, № 143, 17 դեկտեմբերի, էջ 1:

1887 թ. հուլիսի 5-ին վախճանվում և 9-ին գերեզմանոցում է ամփոփվում Արսեն Ասլանյան Բագյանցը¹:

1 «Մշակ», 1887, № 76, 9 յուլիսի, էջ 4:

1888

1888 թ. փետրվարի 17-ին 66 տարեկանում (ծնվ. 16.09.1822, Կ.Պոլիս) վախճանվում և 21-ին գերեզմանոցում՝ Բաֆֆու գերեզմանի սահմանագծում, միակ դուստր՝ Թագուհի Մելիք-Ազարյանի կողքին է ամփոփվում գրող Ծերենցը (Հովսեփի Շիշմանյան)¹: Ի դեպ, 1913 թ. մայիսի 26-ին գերեզմանոցում կատարվում է հոգեհանգիստ հանգուցյալի մահվան 25-ամյակի առիթով²: Տապանաքարին արձանագրված է եղել.





Դօկտոր / Յովսէփ Շիշմանեան, / Ծերենց, / վախ.
17 փետրվարի 1888 ամի, / ի հասակի 56 ամաց³:

1899 թ. տակավին նրա շիրմին մահարձան կանգնեցված չէր⁴:

1 «Մշակ», 1888, № 21, 20 փետրվարի, էջ 1; № 22, 23 փետրվարի, էջ 3: «Արձագանք», 1888, № 6, 21 փետրվարի, էջ 65-66; № 7, 21 փետր., էջ 81: Հանգուցյալի մասին տես **Նանույան Ռ.**, Ծերենց. կյանքը և գործը, Երևան, 1986:

2 «Մշակ», 1913, № 113, 26 մայիսի, էջ 1: «Հորիզոն», 1913, № 113, 25 մայիսի, էջ 3; № 114, 26 մայիսի, էջ 1, 4; № 115, 28 մայիսի, էջ 4:

3 **Երեմեան Ա.**, նշվ. աշխ., էջ 29-30:

4 **Եզեկեան Ա.**, Գերեզմաններից, էջ 1:

1888 թ. ապրիլի 25-ին վախճանվում և 29-ին գերեզմանոցում է ամփոփվում մեծանուն վիպասան, ազգային, կրթական և հասարակական գործիչ 53-ամյա Բաֆֆին (Հակոբ Մելիք-Հակոբյան. ծնվ. 1835 թ., Սալմաստ, գ. Փայաջուկ)¹: Նույն քվականի հունիսի 2-ին գերեզմանոցի եկեղեցում կատարվում է հոգեհանգիստ հանգուցյալի մահվան քառասունօրյակի առիթով²:

1888 թ. հուլիսին գերեզմանի վրա արձան կանգնեցնելու համար հավաքվել էր 155 ռ³:

1889 թ. ապրիլի 30-ին Քանոյանց Սր. Գևորգ եկեղեցում (Դվորցովայա փողոց) կատարվում է հոգեհանգստյան արարողություն մահվան առաջին⁴, 1890 թ. մայիսի 10-ին՝ երկրորդ⁵, 1892 թ. ապրիլի 26-ին՝ չորրորդ տարեկիցի առիթով⁶:

1893 թ. գերեզմանին հուշարձան կանգնեցնելու խնդրով քննարկման են հրավիրվում ճարտարապետներ Շտերնը, Շիմկևիչը, Մելիք-Բեգլարյանցը և նկարիչ Գ. Բաշինջաղյանցը⁷:

1894 թ. ապրիլի 24-ին գերեզմանոցում նշվում է մեծ գրողի մահվան 6-րդ տարին⁸:

1895 թ. 23 ապրիլին մեծանուն վիպասանի մահվան 7-րդ տարեկիցի կապակցությամբ Խոջիվանքի գերեզմանատանը հոգեհանգիստ էր կատարվելու⁹:

Բաֆֆու մահվան 10-ամյակի կապակցությամբ 1898 թ. ապրիլին նշվել է, որ մեծ վիպասանի գերեզմանի վրա կանգնեցվելու է արձան, և կատարվելու է հոգեհանգիստ¹⁰. «Սեպտեմբերի 27-ին, կիրակի օրը, Խոջիվանքի գերեզմանատան եկեղեցում, ժամը 11-ին կը կատարվի պատարագ, որից յետոյ, ժամը 12 1/2-ին կը կայանայ հանգուցեալ Ռաֆֆիի



գերեզմանի վրա հոգեհանգիստ և նրա մահարձանի բացումը»¹¹:

Հոգեհանգստյան և մահարձանի բացման արարողությունը կատարվում է 1898 թ. սեպտեմբերի 20-ին¹²: Հուշարձանը նախագծել է նկարիչ Գ. Բաշինջաղյանը, կերտել՝ քանդակագործ Անդրեոլոտովին¹³:

Վերոհիշյալ իրադարձությունների մասին նշվել է հետևյալը. «1888 թի ապրիլի 24-ին վախճանվեց Բաֆֆին: Յանձնաժողովը, որ ընտրվեց անմիջապես հանգուցեալ վիպասանի մահից յետոյ նրա յարգողների շրջանում, սկսեց իր գործունեությունը՝ ընդհանուր ստորագրություն բանալով, սակայն ստորագրությունը, որ սկզբում բաական աջող գնաց, 1888 թի դեկտեմբերի 21-ին ընդհատվեց ու այնուհետև Յանձնաժողովը ոչ մի կօպէկ չէ ստացել: Ստորագրութեան ամբողջ արդիւնքն էր 1019 ռ. 31 կ., որից մի քանի մանր ծախսեր դուրս եկած (48 ռ. 5 կ.) մնաց առ 1-ն փետրվարի 1889 թի 971 ռ. 26 կօպէկ:

Յանձնաժողովը իրան նպատակ էր դրել Բաֆֆիի գերեզմանի վրա կառուցանել՝ անմահ վիպասանի անուան վայել փառատոր մահարձան. Յանձնաժողովին չէր վիատեցնում հաւաքած աննշան՝ 971 ռ. գումարը, բայց որքան էլ աշխատեցինք, բոլորն ի գուր. շատ տեղեր և շատ անձանց ենք դիմել, բայց ապարդիւն... Այդ անաջողութիւնը մեզ մնում էր բացատրել վերջին տասը տարվայ ընթացքում հայերի մէջ տեղի ունեցած աղէտներով. մի հասարակութեան մէջ, որտեղ անընդհատ տիրում էր իրար ետևից սով, խօլերա, գաղթականութիւնից առաջացած բարդ պահանջներ, ի հարկէ, դժուար էր նոյն

իսկ Բաֆֆիի մահարձանի համար նուերներ սպասել...

Յանձնաժողովը իր ժամանակին նոյնպես յայտարարեց մրցանակաբաշխութիւն՝ մահարձանի նախագծի համար: Նշանակած ժամանակին ստացվեցին պրոեկտներ, որոնցից միմիայն մէկը ճանաչվեց համեմատաբար ամենաաջող, որի հեղինակին՝ Արշակ Սալամբեգեանին ուղարկվեց երկրորդ մրցանակ – 100 ռ. ...սակայն նախ՝ վերջին պրոեկտն ևս չէր համապատասխանում լիովին Յանձնաժողովի ծրագրած պահանջներին և երկրորդ՝ այդ պրոեկտը իրագործելու համար հարկատու էր մի գումար, որ չունէր Յանձնաժողովը: Վերջինիս մնում էր – տարիներով սպասել, որպէս զի իր ձեռքին եղած գումարին՝ 870 ռ. 50 կ. ... աւելանային տոկոսներ և գոյանար գոնէ այնչափ, որ հնարատու լինէր մի համեստ մահարձան կանգնեցնել հայ հասարակութեան պաշտած վիպասանին: Եւ իրաւ՝ այս տարվայ փետրվարի 1-ին այդ 870 ռ. գումարին աւելացնելով ինն տարվայ տոկոսները, ստացած սկզբում Թիֆլիսի Առևտրական բանկից, ապա Թիֆլիսի Կրեդիտային բանկի հազար թուրքիանոց օրիգաւցիայից, այն է՝ 465 ռ. 37 կ., մայր գումարի հետ ի միասին կազմվեց 1335 թուրքի 87 կօպէկ:

Յանձնաժողովը կը շարունակէր սպասել, եթէ ժամանակը ներէր, մահվան տասնեամեակին արդէն ժամանակ էր կառուցանել այն, ինչ հնարատու էր՝ եղած միջոցներով: Մեր ընկերակից անդամ՝ նկարիչ Բաշինջաղեան օգնութեան հասաւ և իր շնորհալի նախագիծն առաջարկելով, Յանձնաժողովին հանեց նեղ դրութիւնից: Յանձնաժողովը միանգամայն հաւանութիւն տվեց յիշեալ նախագծին, շնորհակալութեամբ ընդունելով այդ նուէրը, յանձնարարեց իր անդամներին՝ Գ. Միրզոյեանին և Գ. Բաշինջաղեանին ի կատար ածել այդ նախագիծը:

Այսօր մահարձանն արդէն պատրաստ է. մօտ եօթն արշին բարձրութիւն ունեցող մարմարեայ սիւնը, զարդարված հայկական օրնամենտներով զրատում է իւրաքանչիւրի ուշադրութիւնը: Մահարձանը պատրաստել է յայտնի վարպետ Անդրիօլէտտի, որին վճարված է 1200 ռ. և վանդակապատի տակի քարերի համար վճարված է քարտաշ Գասպար Յարութիւնեանին 135 թուրքի: Հայ հասարակութեանը մնում է աւարտել գործը, շինել տալով գոնէ թեթև վանդակապատ, որի վրա կը ծախսվի մօտաւորապէս 400 թուրքի:

Թէև ժամանակին մենք տպել ենք լրագրներում մեզ հասած բոլոր գումարների հաշիւը, այնուամենայնիւ, աւելորդ չենք համարում այսօր կրկնել նոյնը: 1888 թ. եղբայրք Աբէլեաններից 10 ռ., «Արձագանքի» միջոցով 1) Յարիցիին հայերից՝ 43 ռ. (№ 21), 2) Կուկիայի Թանդոյեան ծխական դպրոցի ուսուցիչներից՝ 12 ռ. (№ 21), 3) Գօրուց՝ 13 ռ. 60 կ. (№ 24), 4) Պետերբուրգից պ. Քր. Բաշինջաղեանի միջոցով՝ 50 ռ. (№ 27), 5) Աստրախանից՝ 30 ռ. (№



50), Նոր-Նախիջևանից պ. Ստ. Տէր-Կարապետեանից՝ 10 ռ., Նոր-Բայազետից պ. Յ. Մամիկոնեանի միջոցով 26 ռ. 33 կ., Մերվից պ. Շիրվանզադէի միջոցով՝ 33 ռ. (նոյն № 27), Մարտէլից պ. Էջուբեանի միջոցով 18 ռ. 88 կ., Աստրախանից սրբազան Գեորգ եպիսկոպոս Սուրենեանի միջոցով՝ 107 թուրքի, «Նոր-Գարի» միջոցով՝ 1) Գօրուց՝ 6 ռ., 2) Նոր-Նախիջևանից՝ 19 ռ. (նաև 19 ռ., գրքերի հրատարակութեան համար), Մոսկվայից պ. Ժամհարեանի միջոցով՝ 563 ռ. 50 կ., Աղդաշից պ. Աղասարեանի միջոցով՝ 12 ռ., Վերին-Ագուլիսից պ. Ս. Հախնազարեանի միջոցով՝ 57 ռ., Պետերբուրգից Արիստակէսեանից՝ 3 ռ., և այրի Բաֆֆիի միջոցով՝ Աղ. Բաղդասարեանից՝ 5 ռ., ընդամենը 1019 ռ. 31 կ.: Ծախս ժամանակատու վանդակապատ 30 ռ., նամակներ տպելու, հեռագիրների, 71 հատ փոստի մարկայի և այլն 18 ռ. 5 կ., Արշակ Սալամբեգեանին մրցանակ փոստային ծախսով 100 ռ., 76 կ., ընդամենը 148 ռ. 81 կ.: Մուտքից ծախսը հանած՝ 1019 ռ. 31 կ. – 148 ռ. 81 կ., = 870 ռ. 50 կ.: Վերջին գումարին աւելացրած % % – 465 ռ. 37 կ., գոյացաւ 1335 ռ. 87 կ., որ լիովին ծախսված է:

Գժուար է հաւատալ, բայց փաստ է, որ Թիֆլիս, Բագու (բացի եղբ. Աբէլեաններից), Երևան, Ալեք-

սանդրապոլ, Ախալցխա, Գանձակ ոչ մի կօպէկ չեն նուիրել Բաֆֆիի մահարձանի համար»¹⁴:

1913 թ. «Հայոց Գրական ընկերությունը Բաֆֆու մահան քսանհինգամեակի օրը հոգեհանգիստ է կատարել տալու Խօջիվանքի գերեզմանատանը հանգ. վիպասանի գերեզմանի վրայ»¹⁵: Այն տեղի է ունենում 1913 թ. մայիսի 5-ին և հոկտեմբերի 20-ին¹⁶:

1915 թ. նոյեմբերին Բաֆֆու համակիրների մի խումբ որոշում է հանգանակություն անցկացնել՝ հանգուցյալի գերեզմանը երկաթյա ցանկապատով շրջափակելու նպատակով¹⁷:

1937-1938 թթ. վանդալիզմի ենթարկված Խոջիվանքի գերեզմանոցից փրկված և իր տեղում առ այսօր խոյացող մահարձանի մասին ուշագրավ տեղեկություն է հաղորդում 1938 թ. օգոստոսի վերջերին տեղն այցելած ականատեսը. «Հեռում, մի խումբ ստուար սօսիների ոլորտում երեսուն էր ճերմակ ու մենատր մի դամբանաքար: «Այդ ո՞ր հսկայի շիրիմն է, որին չեն համարձակուել ձեռք տալ բարբարոսները», մտածեցի՝ քայլերս արագացնելով: Մեւ մարմարեայ պատուանդանի վրայ բարձրանում էր մի ճերմակ շիրմարձան՝ գլխին քնար: Շիրմաքարի ճակատին քանդակուած էր.

*Քար էր քո սիրտը եւ խիղճդ մեռած,
Որքա՛ն արիւններ, որքա՛ն կոտորած
Տեսար, լռեցիր եւ դարձեալ պայծառ –
Հայ երկրի վրայ կապում ես կամար:
Յակոր Մելիք-Յակորեան:*

...Անմահ Բաֆֆիի շիրմարձանն էր այդ...: Բայց թէ ի՞նչ դիպուածով էր նա ազատուել այդ ընդհանուր վանդալականությունից, չգիտեմ»¹⁸:

1 «Մշակ», 1888, № 48, 28 ապրիլի, էջ 1-2; № 49, 30 ապր., էջ 1: «Արձագանք», 1888, № 16, 29 ապրիլի, էջ 213-220; № 17, 8 մայիսի, էջ 226-231; № 18, 15 մայիսի, էջ 241-242: Հուղարկավորությունը տես «Նոր-Գար», 1888, № 64, 28 ապրիլի, էջ 1; № 65, 30 ապրիլի, էջ 1; № 66, 3 մայիսի, էջ 1: **Բելախյանց**, բորակցություն, «Նոր-Գար», 1888, № 67, 4 մայիսի, էջ 1: **Երեմեան Ա.**, նշվ. աշխ., էջ 17-20: **Շիրվանզադե Ա.**, Երկեր, հ. 5, Երևան, 1988, էջ 122:

2 «Մշակ», 1888, № 63, 2 յունիսի, էջ 1: «Արձագանք», 1889, № 20, 29 մայիսի, էջ 274:

3 «Մշակ», 1888, № 81, 19 յունիսի, էջ 2:

4 «Մշակ», 1889, № 48, 29 ապրիլի, էջ 1: «Արձագանք», 1889, № 5, 12 փետրուարի, էջ 75-76; № 16, 30 ապրիլի, էջ 237; № 17, 7 մայիսի, էջ 253:

5 «Մշակ», 1890, № 52, 10 մայիսի, էջ 1:

6 «Մշակ», 1892, № 46, 25 ապրիլի, էջ 1: «Արձագանք», 1892, № 49, 26 ապրիլի, էջ 1:

7 Новое обозрение. № 3202, 20 апреля 1893 г.

8 «Արձագանք», 1894, № 46, 24 ապրիլի, էջ 1: «Նոր-Գար», 1894, № 66, 23 ապրիլի, էջ 1:

9 «Նոր-Գար», 1895, № 69, 22 ապրիլի, էջ 1:

10 «Նոր-Գար», 1898, № 69, 25 ապրիլի, էջ 2:

11 «Մշակ», 1898, № 173, 24 սեպտեմբերի, էջ 1: «Նոր-Գար», 1898, № 173, 25 սեպտ., էջ 1; № 174, 26 սեպտ., էջ 1:

12 «Նոր-Գար», 1898, № 172, 24 սեպտեմբերի, էջ 1: Кавказ. № 254, 27 сентября 1898 г. С. 1; Новое обозрение. № 5046. 13 сентября 1898 г.

13 Новое обозрение. № 4918, 29 апреля 1898 г.

14 **Միրզայան Գ.**, Բաֆֆիի գերեզմանի վրա արձան կանգնեցնելու համար ընտրված յանձնաժողովից, «Մշակ», 1898, № 173, 24 սեպտեմբերի, էջ 1-2:

15 «Հորիզոն», 1913, № 79, 10 ապրիլի, էջ 3:

16 «Մշակ», 1913, № 94, 3 մայիսի, էջ 1; № 96, 5 մայիսի, էջ 1; № 232, 19 հոկտեմբերի, էջ 1; № 233, 20 հոկտ., էջ 1: «Հորիզոն», 1913, № 95, 3 մայիսի, էջ 1:

17 «Հորիզոն», 1914, № 260, 14 նոյեմբերի, էջ 3:

18 **Գերունեան Հ.**, նշվ. հոդվ., «Հայրենիք», 1948, № 12, էջ 25:

1888 թ. մայիսի 18-ին գերեզմանոցում է ամփոփվում մանկավարժ, թարգմանիչ թելավեցի Միքայել Ախապատեյանցը¹:

1 Тифлисский листок. № 110. 15 мая 1890 г. С. 1.

1888 թ. նոյեմբերի 8-ին Թիֆլիսի «Կովկաս» հյուրանոցում անձնասպան է լինում և 13-ին գերեզմանոցում է ամփոփվում ռուսինահայ կոմիսիոներ Էմանուել Մանին¹:

1 «Մշակ», 1888, № 130, 15 նոյեմբերի, էջ 2-3:

1888 թ. նոյեմբերի 23-ին գերեզմանոցում է ամփոփվում Գայանե Կարապետյան Մուրաֆյանցը (հոգեհանգիստը՝ Քամոյանց Սբ. Գևորգ եկեղեցում)¹:

1 «Մշակ», 1888, № 133, 22 նոյեմբերի, էջ 1: «Նոր-Գար», 1888, № 196, 23 նոյեմբերի, էջ 1:

1889

1889 թ. օգոստոսի 8-ին Միքայելյան հիվանդանոցի մատուռից գերեզմանոց է փոխադրվում Ալեքսանդր Գաբրիելյան Տեր-Ասատրյանցի դին¹:

1 Кавказ. № 208, 8 августа 1889 г. С. 4.

1889 թ. գերեզմանոցում է ամփոփվում տիկին Թամարա Աղամյան-Ներսիսյանը. «Խօջիվանքի գերեզմանոցում տեղի ունեցաւ մի ... բացառիկ անձնատուրութեան–տիկին Ներսիսեանի–թաղումն: Հանգուցեալ տիկինը (ծն.՝ օրիորդ Թամարա Աղամեան) Թիֆլիզում գիմնազիական ուսումն արարտելոց յետոյ, ծնողների կամքը յաղթելով, գնում է Պետերբուրգ, այնտեղից Մոսկուա՝ բարձրագոյն ուսում ստանալու: Իւր համակրելի բնատուրութեամբ, ընդարձակ զարգացմամբ հայ օրիորդը իսկոյն գրաւում է իւր բոլոր օտար և համագգի ծանօթների համակրութիւնը: Դեռ ուսանողութեան ժամանակ նա պսակվում է Մուկուայի Պետրովսկի Ակադեմիայի աղքատ ուսանող Դաւիթ Ներսիսեանի հետ, մերժելով շատ հարուստ փեսացուների ձեռքը: ...նորա ամուսինը մեռնում է թոքախտից, և խեղճ կինը զաւիս է Թիֆլիզ վարակուած նոյն ցաւով...»¹:

1 «Արձագանք», 1889, № 1, 15 յունուարի, էջ 4: «Մշակ», 1889, № 3, 10 յունվարի, էջ 2-3:

1890

1890 թ. հուլիսի 15-ին գերեզմանոցում է ամփոփվում Հովհան Գևորգյան Գուլազյանցը¹:

1 «Մշակ», 1890, № 78, 14 հուլիսի, էջ 4:

1890 թ. օգոստոսի 26-ին գերեզմանոցում է ամփոփվում վաճառական Նիկողայոս Գևորգյան Յա-

րալյանցը (հոգեհանգիստը՝ Մուղնու Սբ. Գևորգ եկեղեցում)¹: Ի դեպ, ժառանգ չուներ, և նրա ողջ հարստությունն անցնում է կնոջը՝ Եկատերինա Ստեփանյան Յարալյանցին: Սբ. Գևորգ եկեղեցում առաջնորդի քարոզից հետո տիկին Եկատերինան 2000 ռուբլի է նվիրում Թիֆլիսի ծխական կարիքավոր դպրոցներին, 1000 ռուբլի՝ Մուղնու Սբ. Գևորգ եկեղեցու միաբանությանը, ինչպես նաև պարտավորվում է ուստաբաշիների ընտրությամբ ամուսնացնել չքավոր դասակարգից երկու աղջիկներին²:

1 «Մշակ», 1890, № 96, 25 օգոստոսի, էջ 4:
2 «Մշակ», 1890, № 97, 28 օգոստոսի, էջ 2: Тифлисский листок. № 195. 26 августа 1890 г.; № 207. 11 сентября 1890 г.

1890 թ. փետրվարի 23-ին/մարտի 7-ին գերեզմանոցում «Մշակ»-ի պանթեոնի հարևանությամբ է ամփոփվում երգահան, դաշնակահար, մանկավարժ 32-ամյա (ծնվ. 1858 թ., գ. Ղվարելի) Գեմարիոս Հովսեփյան Ղորղանյանցը (Կորգանյանց):



Տապանաքարին արձանագրված է եղել.
Գեմարիոս Յովսեփեան Ղորղանեանց, 1858-1890 թ.:

Հրատ. **Երեմեան Ա.**, նշվ. աշխ., էջ 13-14:
Այլ տվյալների համաձայն՝ գերեզմանոցում է ամփոփվում մարտի 18-ին¹:

1 «Տարագ», 1890, № 2, փետրար, էջ 48: «Մշակ», 1890, № 32, 20 մարտի, էջ 2:

1891

1891 թ. մայիսի 24-ին վախճանվում և 29-ին գերեզմանոցում է ամփոփվում թիֆլիսեցի Հակոբ Տիգրանյանը: Մուղնու եկեղեցում կատարված հոգեհանգստի պատարագից հետո հայր Մուշեղը մի դամբանական է կարդում, որից հետո «ղագաղը եկեղեցուց դուրս բերելով տարուեց Խօջի Վանքի գե-

րեզմանատուն...»¹: Թաղման հանդեսին ներկա էին նաև նահանգապետ իշխ. Շերվաշիձեն, քաղաքագլուխ Ն. Արղությանը և այլք:

Հակոբ Տիգրանյանը եղել է Թիֆլիսի քաղաքային խորհրդի քարտուղար: Երկար տարիներ Հրատարակչական ընկերության խմբագրական մասնաժողովի անդամ էր, ապա՝ նախագահ²:

1 «Արձագանք», 1891, № 12, 2 յունիսի, էջ 178:
2 «Նոր-Դար», 1891, № 87, 25 մայիսի, էջ 2; № 88, 28 մայ., էջ 1:

1891 թ. հուլիսի 13-ին գերեզմանոցում է ամփոփվում Խաչատուր Խաչատրյանը¹:

1 «Մշակ», 1891, № 78, 13 յուլիսի, էջ 4:

1891 թ. նոյեմբերի 19-ին 72 տարեկանում վախճանվում և 21-ին գերեզմանոցում է ամփոփվում տոհմիկ պատվավոր քաղաքացի Ալեքսանդր Զաքարյան Բաբանասյանցը¹:

1 Тифлисский листок. № 260. 20 ноября 1891 г.

1892

1892 թ. փետրվարի 2-ին գերեզմանոցում է ամփոփվում Սերովբե Գևորգյան Տեր-Ջանյանցը¹:

1 «Մշակ», 1892, № 13, 1 փետրվարի, էջ 1:

1892 թ. մարտի 12-ին գերեզմանոցում է ամփոփվում Ստեփան Կարապետյան Ջանիբեգյանցը¹:

1 «Մշակ», 1892, № 29, 12 մարտի, էջ 1:

1892 թ. 17 հունիսի 17-ին գերեզմանոցում է ամփոփվում բժիշկ Մխիթար Իսաանդարյանի եղբայրը՝ Նիկողայոսը (հոգեհանգիստը՝ Խոջիվանքի եկեղեցում)¹:

1 «Նոր-Դար», 1892, № 102, 16 յունիսի, էջ 1:

1892 թ. օգոստոսի 27-ին վախճանվում և գերեզմանոցում է ամփոփվում Քրիստինե Զաալյան Տեր-Առաքելյանցը: Նրա տապանաքարն այն եզակիներից է, որ «փրկվել էին վանդալիզմից»:

Տապանաքարին 9 տողով արձանագրված է եղել.
Աստ հանգչի ոսկերք / նորահարս տիկնոջ / Քրիստինեի Զաալեան / S(t)ր-Առաքելեանց: / Էի միակ դուստր եւ թողի լալագին / աչոք զծերունի ծնողս, ընթերցողացո / խնդրեն ասել զմի բերան ողորմի, / վախճանեցայ ի 27 օգոստոսի 1892 ա(մի), / ի 20 ամաց հասակի:
Հրատ. առաջին անգամ:

1892 թ հոկտեմբերի 25-ին գերեզմանոցում է ամփոփվում Աննա Թառայանը¹:

1 «Մշակ», 1892, № 122, 24 հոկտեմբերի, էջ 1:

1892 թ. դեկտեմբերի 19-ին վախճանվում և 27-ին գերեզմանոցում է ամփոփվում նախկին քաղաքագլուխ Երեմիա Արծրունու ավագ որդին՝ դարի տաղանդավոր հրապարակախոս, «Մշակ» թերթի հիմնադիր-խմբագիր Գրիգոր Արծրունին (ծնվ. 1845 թ.):

Մահվան տասնամյակին՝ 1902 թ. դեկտեմբերի 22-ին, գերեզմանի վրա կանգնեցվում է նկարիչ Գեվորգ Բաշինջաղյանի գծագրությամբ և քանդակագործ Անդրեոլոտտիի արհեստանոցում կերտված



մահարձանը, որը հանգուցյալի ցանկության մարմնացումն էր. «Ես կուզեի, որ գերեզմանիս վրայ դրած լինէր պարզ ժայռի կտոր եւ նրա վրայ կարդացուէր տակ ազգանունս»¹: Այս առթիվ Գ. Բաշինջաղյանը նշել է, որ հուշարձանը «...ներկայացնում է մի ժայռ, որի վրա յղկված է մի տեղ և այնտեղ փորագրված Արծրունու անուն-ազգանունը իր սեփական ձեռագրի նմանողութեամբ: Մահարձանի պատուանդանը նույն ժայռից է. նա յղկված է և փայլում է իբրև մոյգ մարմարիօն»²:

Ի դեպ, հանգուցյալի մահվան տասնամյակին նվիրված հոգեհանգիստ է կատարվում նաև Կարսի Սբ. Աստվածածին եկեղեցում³:

Տապանաքարին արձանագրված է եղել.

Գրիգոր Արծրունի, | 1845-1892:

1912 թ. մայիսի 27-ին գերեզմանոցում նշվում է հանգուցյալի մահվան 20-ամյակը⁴:

1 «Մշակ», 1892, № 147, 24 դեկտեմբերի; № 148, 29 դեկտ. (գրեթե ողջ համարը նվիրված է հանգուցյալի հիշատակին): **Երեմեան Ա.**, Թիֆլիսի հայկական պանթեոններում, «Հանդես ամսօրեայ», 1937, էջ 361-362: **Նույնի՝** Թիֆլիսի հայկական պանթեոններում, Վիեննա, 1940, էջ 4-6: **Լեօ**, Գրիգոր Արծրունի, հ. 3, Թիֆլիս, 1905, էջ 480: **Շիրվանզադե**, Կյանքի բովից, Երևան, 1930, էջ 233-234: **Ավյան Ս.**, Արհեստ և արվեստ, Թբիլիսի, 1930, էջ 18-20: **Պողոսյան Պ.**, Երկերի ժողովածու, հ. 7, Երևան, 1964, էջ 326:

2 «Մշակ», 1902, № 280, 19 դեկտ., էջ 1; № 281, 20 դեկտ., էջ 1; № 282, 21 դեկտ., էջ 1; № 283, 22 դեկտ., էջ 1: Հանգուցյալի հիշատակին նվիրված նյութեր տես՝ № 280, 19 դեկտ., էջ 1-3; № 283, 22 դեկտ., էջ 1-4; № 284, 24 դեկտ., էջ 1-2:

3 «Մշակ», 1902, № 285, 25 դեկտեմբերի, էջ 2:

4 «Մշակ», 1912, № 113, 27 մայիսի, էջ 1:

1893

1893 թ. մարտի 28-ին վախճանվում և 31-ին գերեզմանոցում է ամփոփվում 1828-1829 թթ. ռուս-թուրքական պատերազմի մասնակից, Տիֆլիսի նահանգային դատախազ Ստեփան Պողոսյան Դամբարյանը (ծնվ. 1806 թ.)¹:

1 Кавказ. № 85, 2 апреля 1893 г. С. 1; № 88, 5 апреля, С. 1.

1893 թ. մայիսի 30-ին գերեզմանոցում է ամփոփվում Հարանց վանքի քահանա Եղիշե Տեր-Գրիգորյանը (հոգեհանգիստը՝ նույն վանքի եկեղեցում)¹:

1 Кавказ. № 139, 29 мая 1893 г. С. 6; № 140, 30 мая, С. 2-3, 6.

1893 թ. օգոստոսի 28-ին գերեզմանոցում է ամփոփվում պետական խորհրդական, բժիշկ, «Ադբյուր» և «Տարագ» հանդեսների ժամանակավոր խմբագիր Դանիել Քրիստափորյան Լիսիցյանը (հոգեհանգիստը՝ Մուղնու Սբ. Գևորգ եկեղեցում)¹:

1 Кавказ. № 227, 27 августа 1893 г. С. 1. Тифлиссский листок. № 197, 27 августа 1893 г. Новое обозрение. № 3325, 27 августа 1893 г.

1893 թ. հոկտեմբերի 24-ին գերեզմանոցում է ամփոփվում Զգրաշենի Ավետյաց Սբ. Աստվածածին եկեղեցու միաբան Սարգիս քահանա Փիրոյանը (հոգեհանգիստը՝ նույն եկեղեցում)¹:

1 «Արձագանք», 1893, № 124, 24 հոկտեմբերի, էջ 4:

1893 թ. դեկտեմբերի 29-ին գերեզմանոցում է ամփոփվում Հովհաննես Մարտիրոսյան Հախնազարյանցը¹:

¹ «Մշակ», 1893, № 27, 30 դեկտեմբերի, էջ 4:

1894

1894 թ. հունվարի 29-ին գերեզմանոցում է ամփոփվում իշխան Նիկողայոս Միքայելյան Բեհրուդյանցը¹:

¹ Тифлиссский листок. 1894. № 22.

1894 թ. փետրվարի 8-ին Կարսում տիֆից վախճանվում է քաղաքային բժիշկ Շահրիար Սարգրսյան Մելիք-Փարսադանյանցը (ծնվ. 1855 թ.): Մասնագիտական ծառայությունը Բելի-Կլուչ և Սալիան ավանների բնակիչներին մատուցելուց հետո 1886 թ. դեկտեմբերի 30-ից նշանակվում է Կարսի քաղաքային բժիշկ: Դին փոխադրվում է Տիֆլիս և ամփոփվում Խոջիվանքի գերեզմանոցում¹. «Ծղալօր Իվանիչ Ղօրղանեան և Սօլսօն Սերգեվիչ Մելիք-Փարսադանեան յայտնում են, որ Կարս քաղաքում վախճանված բժիշկ Շահրիար Մելիք-Փարսադանեանի մարմինը կը հասնի Թիֆլիս հինգշաբթի, փետրվարի 17-ին... յուղարկաորութեանը կայարանից դեպի Խօջիվանքի գերեզմանոցը»²:

¹ Тифлиссский листок. 1894. № 36; № 39.

² «Մշակ», 1894, № 19, 17 փետրվարի, էջ 1:

1894 թ. փետրվարի 26-ին գերեզմանոցում է ամփոփվում Արիստակես Հարությունյան Մխչյանցը¹:

¹ «Մշակ», 1894, № 22, 24 փետրվարի, էջ 1:

1894 թ. մարտի 13-ին գերեզմանոցում է ամփոփվում Եղիսաբեթ Ավետյան Կարալյանցը¹:

¹ «Արձագանք», 1894, № 29, 11 մարտի, էջ 1; № 30, 13 մարտի, էջ 1:

1894 թ. ապրիլի 3-ին գերեզմանոցում է ամփոփվում Եգոր Ալեքսեյան Եղիազարյանցը¹:

¹ Тифлиссский листок. № 72, 3 апреля 1894 г. «Արձագանք», 1894, № 39, 3 ապրիլի, էջ 1:

1894 թ. ապրիլի 22-ին վախճանվում և 27-ին տոհմական դամբարանում է ամփոփվում տիտղոսավոր խորհրդական իշխան Ալեքսանդր Ասլանյան Բեհրուդյանցը (հոգեհանգիստը՝ Մուղնու Սբ. Գևորգ եկեղեցում)¹:

¹ Кавказ. № 108, 25 апреля 1894 г. С. 2. Новое обозрение. № 3549, 26 апреля 1894 г. «Նոր-Դար», 1894, № 67, 26 ապրիլի, էջ 1:

1894 թ. մայիսի 14-ին վախճանվում և գերեզմանոցում է ամփոփվում Թիֆլիսի շրջանային դատարանի անդամ, իշխան Գրիգոր Հովհաննիսյան Բեհրուդյանցը (հոգեհանգիստը՝ Մուղնու Սբ. Գևորգ եկեղեցում)¹:

¹ Тифлиссский листок. № 110, 18 мая 1894 г.

1894 թ. մայիսի 21-ին գերեզմանոցում է ամփոփվում ճարտարագետ-մեխանիկ Հովսեփ Ալեքսանդրյան Թամամյանցը¹:

¹ Тифлиссский листок. 22 мая 1894 г.

1894 թ. մայիսի 25-ին գերեզմանոցում է ամփոփվում Արտեմ Ալեքսեյան Թամամյանցը (հոգեհանգիստը՝ Նորաշենի Սբ. Աստվածածին եկեղեցում)¹:

¹ Тифлиссский листок. 22 мая 1894 г.

1894 թ. մայիսի 30-ին գերեզմանոցում է ամփոփվում «Եսայի Գևորգյան Փիթոյան և ընկերություն» առևտրական տան գլխավոր գրասենյակի աշխատակից Նիկողայոս Ստեփանյան Տեր-Սլրտչյան-Տերյանցը¹:

¹ «Արձագանք», 1894, № 60, 29 մայիսի, էջ 1:

1894 թ. հունիսի 10-ին գերեզմանոցում է ամփոփվում Տիֆլիսի պատվավոր քաղաքացի Արտեմ Յուզբաշյանցի եղբայր՝ Գրիգոր Գաբրիելյան Յուզբաշյանցը¹:

¹ Тифлиссский листок. 1894. № 128.

1894 թ. հուլիսի 10-ին գերեզմանոցում է ամփոփվում Վաղարշակ Պալազատյանցը¹:

¹ «Մշակ», 1894, № 78, 9 յուլիսի, էջ 4:

1894 թ. օգոստոսի 21-ին գերեզմանոցում է ամփոփվում Ալեքսանդր Դավթյան Իսավերոյանը¹:

¹ «Մշակ», 1894, № 95, 20 օգոստոսի, էջ 4:

1894 թ. սեպտեմբերի 15-ին գերեզմանոցում է ամփոփվում Հովհաննես Ավետիքյան Միրվելյանցը¹:

¹ «Արձագանք», 1894, № 106, 14 սեպտեմբերի, էջ 1:

1894 թ. սեպտեմբերի 12-ին հանկարծամահ է լինում և 16-ին գերեզմանոցում է ամփոփվում Հայ դերասանական խմբի անդամ 32-ամյա Գրիգոր Աբրահամյանցը (ծնվ. 1862 թ.)¹: Նա «հանգչում է ...մոռացում, անշուք, անգիր մի շիրմի տակ»²:

¹ «Արձագանք», 1894, № 107, 16 սեպտեմբերի, էջ 1: «Նոր-Դար», 1894, № 152, 15 սեպտ., էջ 2; № 154, 18 սեպտ., էջ 2:

² Երեմեան Ա., նշվ. աշխ., էջ 53-54:

1894 թ. սեպտեմբերի 18-ին գերեզմանոցում՝ Բաֆթու գերեզմանի մոտ է ամփոփվում Քամոյանց Սբ. Գևորգ եկեղեցու քահանա, 25-ամյա ուսուցչական կենսագրություն ունեցող Սարգիս Բեկնազարյանցը¹:

¹ «Մշակ», 1894, № 107, 17 սեպտեմբերի, էջ 1; № 108, 20 սեպտ., էջ 2-3:

1894 թ. հոկտեմբերի 13-ին գերեզմանոցում է ամփոփվում Վառվառե Բայանդուրյանը (հոգեհանգիստը՝ Մուղնու Սբ. Գևորգ եկեղեցում)¹:

¹ «Արձագանք», 1894, № 118, 12 հոկտեմբերի, էջ 1: «Մշակ», 1894, № 118, 13 հոկտ., էջ 1: «Նոր-Դար», 1894, № 168, 11 հոկտ., էջ 1: Հանգուցյալի աղջիկը՝ տ. Բարայանը, մոր հիշատակին Թիֆլիսի կանանց բարեգործականի նվիրել է 100 ռ. (№ 173, 18 հոկտ., էջ 2):

1894 թ. նոյեմբերի 3-ին գերեզմանոցում է ամփոփվում Կատարինե Դիվանյանը¹:

¹ «Մշակ», 1894, № 127, 3 նոյեմբերի, էջ 4:

1894 թ. դեկտեմբերի 20-ին գերեզմանոցում է ամփոփվում Հայրապետ Մելքունյան Հովհաննիսյանը (հոգեհանգիստը՝ Թանդոյանց Սբ. Աստվածածին եկեղեցում)¹:

¹ «Նոր-Գար», 1894, № 217, 20 դեկտեմբերի, էջ 1:

1894 թ. դեկտեմբերի 22-ին գերեզմանոցում է ամփոփվում Հովհաննես Հակոբյան Թադևոսյանը¹:

¹ «Մշակ», 1894, № 148, 22 դեկտեմբերի, էջ 1:

1894 թ. վախճանվում և գերեզմանոցում է ամփոփվում նկարիչ, մանկավարժ, կրթական գործիչ Հովհաննես Բաբայան Բաբանյանը: Շիրմաքարին արձանագրված է եղել.

Յովհաննես | Բաբայան | Բաբանյան, | 1824-1894:

Հրատ. **Երեմեան Ա.**, Թիֆլիսի հայկական պանթեոններում, Վիեննա, 1940, էջ 24-25:



1895

1895 թ. փետրվարի 24-ին վախճանվում և 25-ին գերեզմանոցում է ամփոփվում 30-ամյա Լևոն վարդապետ Խոջայանը: 1888 թ. ավարտել է Մոսկվայի համալսարանի ֆիզմաթ բաժինը և դասավանդել Էջմիածնի իրավասության ներքո գտնվող հոգևոր ուսումնարաններում²:

1900-ականներին մտահոգությամբ նշվել է. «...նոռացուել է Թիֆլիսի հանգստարանում թաղուած Լևոն արեղայ Խօջայեանցը, որի գերեզմանի վերայ արձան դնելու համար դրամական նուէրներ եղան և մինչև ցայսօր անիրագործելի մնաց: Երևի այլևս արձան չի դրուի հանգուցեալ Լևոն արեղայի գերեզմանի վերայ, որովհետև Թիֆլիսի հայ հոգևորականաց ապահովութեան զանձարանի հաշուվ մի հասարակ տապանաքար է դրել հանգուցեալի գերեզմանի վերայ: Ցանկալի էր իմանալ, թէ ո՞ր մնաց ժողոված զումարը»³:

¹ Кавказ. № 52. 25 февраля 1895 г. С. 1.

² Тифлисский листок. № 47. 26 февраля 1895 г.; № 51, 3 марта. Թաղման մասին տես «Մշակ», 1895, № 24, 28 փետրվարի, էջ 1-2:

³ ՀԱԴ, ֆ. 227, ց. 1, գ. 13, ք. 17 և շրջ.:

1895 թ. փետրվարի 28-ին Թիֆլիսի «Լոնդոն» հյուրանոցում անձնասպան է լինում և մարտի 4-ին գերեզմանոցում է ամփոփվում Մեղրակ Նազարեթյան Ալբերտյանը¹:

¹ «Արձագանք», 1895, № 25, 3 մարտի, էջ 1: «Նոր-Գար», 1895, № 36, 1 մարտի, էջ 2; № 39, 4 մարտի, էջ 1: Кавказ. № 59. 14 марта 1895 г. С. 1.

1895 թ. մարտի 4-ին գերեզմանոցում է ամփոփվում Բարսեղ Դավթյան Շաղինյանը¹:

¹ Кавказ. № 127. 16 мая 1895 г. С. 1.

1895 թ. մայիսի 12-ին վախճանվում և 15-ին գերեզմանոցում է ամփոփվում Քաղաքային խորհրդի անդամ, պետական խորհրդական 60-ամյա Լվարսար Շամիլյան Մելիք-Բեգարյանը: Կրթությունը ստանալով Լազարյան ճեմարանում՝ 1852 թ.-ից վարում էր կրտսեր կամ ավագ ոստիկանապետի պաշտոն¹:

¹ Кавказ. № 125. 14 мая 1895 г. С. 1. Тифлисский листок. № 109. 14 мая 1895 г.

1895 թ. մայիսի 12-ին 65 տարեկանում վախճանվում և 16-ին գերեզմանոցում է ամփոփվում Կովկասի Հայոց բարեգործական ընկերության խորհրդի և Կովկասյան գյուղատնտեսական ընկերության անդամ, Ներսիսյան դպրոցի հոգաբարձու, Թիֆլիսի դումայի ձայնավոր, Քամոյանց եկեղեցու երեցփոխ շուշեցի Պողոս Գասպարյան Մելիք-Ղաբազյանը¹:

¹ «Մշակ», 1895, № 54, 13 մայիսի, էջ 1-2; № 55, 16 մայիսի, էջ 1; № 56, 18 մայիսի, էջ 3:

1895 թ. հուլիսի 1-ին թեմի առաջնորդ Գևորգ Սուրենյանցի գլխավորությամբ գերեզմանոցում է ամփոփվում Մարթա Գրիգորյան Թեյմուրազյանը (օրիորդ. ազգանունը՝ Թումայանց)¹: Հանգուցյալի հիշատակին ամուսինը՝ Արշակ Տեր-Գևորգյան Թեյմուրազյանը, բարեգործական նպատակներով (այդ թվում՝ Գորու գավառի Ախալքալաք գյուղի ծխական դպրոցին) նվիրաբերում է 2000 ռուբլի, իսկ եղբայրները՝ 1000 ռուբլի Շուշի օրիորդաց դպրոցին և 200 ռուբ. Լիս գյուղում եկեղեցու շինությունն ամբողջացնելու համար²:

¹ «Մշակ», 1895, № 75, 1 յուլիսի, էջ 1: «Նոր-Գար», 1895, № 114, 29 յուլիսի, էջ 1; № 115, 30 յուլիս., էջ 3; № 116, 1 յուլիսի, էջ 2:

² Тифлисский листок. № 149. 2 июля 1895 г.

1895 թ. հուլիսի 13-ին գերեզմանոցում է ամփոփվում պաշտոնաթող գեներալ-մայոր իշխան Ալեքսանդր Հովհաննիսյան Երկայնաբազուկ-Արդուրյանը (հոգեհանգիստը՝ Մոլոնո Սբ. Գևորգ եկեղեցում)¹:

¹ «Արձագանք», 1895, № 78, 12 հուլիսի, էջ 1: «Մշակ», 1895, № 79, 13 յուլիսի, էջ 1: Кавказ. № 182. 12 июля 1895 г. С. 1; № 183. 13 июля 1895 г. С. 1.

1895 թ. հուլիսի 16-ին վախճանվում և 20-ին գերեզմանոցում՝ հանգուցյալ ամուսնու՝ մանկավարժ, «Մշակ»-ի հրատարակիչ, հիմնադիր-խմբագիր Գրիգոր Արծրունու կողքին է ամփոփվում 45-ամյա Մարիամ Ղահրամանյան Մելիք-Աղանալյանը¹: Նա Երևանի նահանգային դատարանի նախագահ Ղահրաման Մելիք-Աղանալյանցի դուստրն էր: Հայտնի էր հասարակական բուռն գործունեությամբ: «Մշակ»-ի նկատմամբ սեփականության

իրավունքը կտակում է ամուսնու եղբորը՝ Ասխենի պոլիտեխնիկումի պրոֆեսոր Անդրեաս Արծրունու²: 1896 թ. հուլիսի 17-ին նշվում է մահվան տարեկիցը³:

- 1 «Մշակ», 1895, № 81, 18 յուլիսի, էջ 1: Новое обозрение. № 3969. 19 июля 1895 г. С. 1. Кавказ. № 189. 19 июля 1895 г. С. 1.
- 2 Кавказ. № 188. 18 июля 1895 г. С. 1. «Մուրճ», 1895, № 7, յուլիս, էջ 1044:
- 3 «Մշակ», 1896, № 81, 16 յուլիսի, էջ 1:

1895 թ. հուլիսի 16-ին գերեզմանոցում է ամփոփվում Նունե Փրիդոնյանը¹:

- 1 «Արձագանք», 1895, № 80, 16 հուլիսի, էջ 1:

1895 թ. հուլիսի 27-ին վախճանվում և 30-ին գերեզմանոցում է ամփոփվում քաղաքային ճարտարագետ Կարլ Մելիք-Աղանյանը (հոգեհանգիստը՝ Մուղնու Սբ. Գևորգ եկեղեցում)¹:

1896 թ. հուլիսի 28-ին նրա մահվան տարեկիցի առթիվ գերեզմանոցում կատարվում է հոգեհանգիստ²:

- 1 «Արձագանք», 1895, № 85, 28 հուլիսի, էջ 1; № 86, 30 հուլիսի, էջ 1: «Մշակ», 1895, № 85, 29 յուլիսի, էջ 1: Кавказ. № 200. 30 июля 1895 г. С. 1.
- 2 «Մշակ», 1896, № 86, 27 յուլիսի, էջ 1:

1895 թ. օգոստոսի 19-ին գերեզմանոցում է ամփոփվում Արտեմ Նադիրյանցի քույրը՝ Կատարինե Տեր-Հակոբյանը¹:

- 1 «Մշակ», 1895, № 94, 19 օգոստոսի, էջ 1:

1895 թ. սեպտեմբերի 2-ին վախճանվում և 5-ին գերեզմանոցում է ամփոփվում քաղաքագլուխ Գևորգ Եվանգուլյանցի կինը՝ Եկատերինա (Կատարինե) Արտեմյան Եվանգուլյանցի¹: 20 տարի շարունակ մասնակցել է Կովկասի հայոց բարեգործական ընկերության և այլ հիմնադրամների աշխատանքներին: Անչափ հետաքրքրված էր թատերական կյանքով և մինչև անգամ կատարել է որոշ դերեր: Հոկտեմբերի 8-ին Սբ. Նշան եկեղեցում կատարվում է հոգեհանգստյան արարողություն²:



1896 թ. սեպտեմբերի 2-ին մահվան տարեկիցի կապակցությամբ Հավլաբարի Խոջիվանքի գերեզմանատան եկեղեցում հոգեհանգիստ է կատարվում³:

- 1 «Արձագանք», 1895, № 102, 6 սեպտեմբերի, էջ 1; № 103, 8 սեպտեմբերի, էջ 1: «Մշակ», 1895, № 102, 7 սեպտ., էջ 1: Кавказ. № 234. 4 сентября 1895 г. С. 1. Եղել է Հայոսիյաց բարեգործական ընկերության փոխնախագահը («Նոր-Գար», 1895, № 160, 5 սեպտեմբերի, էջ 1; № 162, 7 սեպտ., էջ 1; № 163, 8 սեպտ., էջ 1-2):
- 2 «Արձագանք», 1895, № 115, 6 հոկտեմբերի, էջ 1; № 116, 8 հոկտ., էջ 1:
- 3 «Նոր-Գար», 1896, № 154, 31 օգոստոսի, էջ 1:

1895 թ. նոյեմբերի 10-ին վախճանվում և գերեզմանոցում է ամփոփվում Մարիամ Աղեքսանդրյան Բաբյանը¹:

- 1 «Արձագանք», 1895, № 131, 12 նոյեմբերի, էջ 1: «Նոր-Գար», 1895, № 200, 11 նոյեմբերի, էջ 1:

1895 թ. նոյեմբերի 19-ին գերեզմանոցում է ամփոփվում Մոսկվայում վախճանված Գաբրիել Հովհաննիսյան (Իվանովիչ) Ալիբեկյանը (հոգեհանգիստը՝ Մուղնու Սբ. Գևորգ եկեղեցում)¹:

- 1 «Արձագանք», 1895, № 134, 19 նոյեմբերի, էջ 1: «Մշակ», 1895, № 133, 18 նոյ., էջ 1: «Նոր-Գար», 1895, № 204, 18 նոյ., էջ 1:

1895 թ. նոյեմբերի 23-ին գերեզմանոցում է ամփոփվում Նիկոլայ Բոգդանյան Վերմիշյանը¹:

- 1 «Մշակ», 1895, № 135, 23 նոյեմբերի, էջ 1:

1895 թ. նոյեմբերի 25-ին գերեզմանոցում է ամփոփվում Թեկոն Նազարյան Ավագյանը¹:

- 1 «Մշակ», 1895, № 135, 23 նոյեմբերի, էջ 1:

1895 թ. 81 տարեկանում վախճանվում և նոյեմբերի 30-ին գերեզմանոցում է ամփոփվում Գաբրիել Պատկանյանի եղբայրը՝ դրամատուրգ, թարգմանիչ, ուսուցիչ, հասարակական գործիչ Միքայել Մերովբեի Պատկանյանը (հոգեհանգիստը՝ Վանքի ավագ եկեղեցում)¹:

- 1 «Արձագանք», 1895, № 139, 1 դեկտեմբերի, էջ 3-4: «Մշակ», 1895, № 139, 2 դեկտեմբերի, էջ 3 («...նոյեմբերի 30-ին... թաղեցին մեր հին գործողներից մեկին՝ Միքայել Պատկանյանցին: Հանգուցեալը պատկանում էր այն տաղանդաւոր տոհմին, որը տուեց Մերովբե վարժապետ, տէր Գաբրիել, Գամառ-Քաթիպայ, պրոֆեսոր Քերովբե Պատկանյան»): 1840-ական թթ. Թիֆլիսում հայերենով լույս տեսնող առաջին լրագրի՝ «Կովկաս»-ի խմբագիրն էր: Այնուհետ աշխատակցել է «Արարատ», «Մեղու Հայաստանի» և ռուսաց «Կուկլազ» թերթերին, դասավանդել Ներսիսյան դպրոցում: Գամբանական խոսք է ասել Պ. Պոռոյանը («Նոր-Գար», 1895, № 213, 2 դեկտ., էջ 2: **Պոռոյան Պ.**, Միքայել Պատկանյանց, «Նոր-Գար», 1895, № 214, 5 դեկտ., էջ 3):

1895 թ. դեկտեմբերի 10-ին գերեզմանոցում է ամփոփվում Հարություն Գևորգյան Էմինյանը¹:

- 1 «Արձագանք», 1895, № 143, 10 դեկտեմբերի, էջ 1: «Մշակ», 1895, № 142, 9 դեկտ., էջ 1:

1895 թ. դեկտեմբերի 21-ին գերեզմանոցում է ամփոփվում Կարապետ Արտեմյան Ներսիսյանը¹:

- 1 «Մշակ», 1895, № 146, 19 դեկտեմբերի, էջ 1:

1896

1896 թ. հունվարի 21-ին գերեզմանոցում է ամփոփվում Գրիգոր Սարգսյան Ղարազյոզյանը¹:

- 1 «Մշակ», 1896, № 8, 20 յունվարի, էջ 1:

1896 թ. հունվարի 27-ին սպանվում և փետրվարի 1-ին գերեզմանոցում է ամփոփվում առաջին կարգի վաճառական վերինագուլիսցի Ստեփան Բաղդասարյան Գևորգյանը (հոգեհանգիստը՝ Մուղնու Սբ. Գևորգ եկեղեցում): Հանգուցյալի հիշատակին ժա-

ռանգները բարեգործական նպատակների համար նվիրում են 10.000 ռուբլի¹:

1 «Արձագանք», 1896, № 12, 29 հունվարի, էջ 1: «Մշակ», 1896, № 12, 30 յունվարի, էջ 1:

1896 թ. մարտի 16-ին Լագոդաղից Սղնախ մեկնելու ճանապարհին օտարության մեջ վախճանվում և 21-ին գերեզմանոցում է ամփոփվում ազգային գործիչ, հրատարակիչ («Կռունկ», «Մեղու Հայաստանի»), Տփղիսի քաղաքային վարչության անդամ (1865 թ.) տպարանատեր կարնեցի (ծնվ. 1824 թ.) Համբարձում Էնֆիաճյանցը (հոգեհանգիստը՝ Վանքի ավազ եկեղեցում)¹:

1 «Տարագ», 1896, № 14, 14 ապրիլի, էջ 1: «Նոր-Գար», 1896, № 50, 19 մարտի, էջ 1-2:

1896 թ. մարտի 20-ին վախճանվում և 23-ին գերեզմանոցում է ամփոփվում Կովկասյան հայոց բարեգործական ընկերության մատենադարանի գրապահ Գաբրիել Ուրեկլյանը¹:

1 «Մշակ», 1896, № 34, 21 մարտի, էջ 1; № 35, 23 մարտի, էջ 1:

1896 թ. ապրիլին վախճանվում և 7-ին գերեզմանոցում է ամփոփվում Իսահակ Մարտիրոսյան Ծովյանյանցը (հոգեհանգիստը՝ Մուղնու Սբ. Գևորգ եկեղեցում)¹: Ի դեպ, մայիսի 12-ին նույն եկեղեցում կատարվում է հանգուցյալի մահվան քառասունօրյակին նվիրված արարողություն²:

1 «Մշակ», 1896, № 39, 6 ապրիլի, էջ 1: Тифлиссский листок, 1896, № 82, 6 апреля.

2 «Մշակ», 1896, № 54, 11 մայիսի, էջ 1:

1896 թ. ապրիլի 9-ին վախճանվում և 14-ին գերեզմանոցում է ամփոփվում Էփեմիա Դավթյան Պարոնջանիբեկյանցը¹:

1 «Մշակ», 1896, № 42, 13 ապրիլի, էջ 1: «Նոր-Գար», 1896, № 64, 12 ապրիլի, էջ 1:

1896 թ. ապրիլի 15-ին գերեզմանոցում է ամփոփվում տիտղոսակիր խորհրդական, Հայ դերասանական ընկերության խմբի հուշարար Կարապետ Մատինյանցը (հոգեհանգիստը՝ Վանքի ավազ եկեղեցում)¹:

1 «Մշակ», 1896, № 42, 13 ապրիլի, էջ 1: Кавказ. № 99. 15 апреля 1896 г. С. 1. Երկար տարիներ եղել է Թիֆլիսի կոնսիստորիայի ղեկավարակազմի (Նոր-Գար), 1896, № 64, 12 ապրիլի, էջ 1; № 65, 13 ապրիլի, էջ 2):

1896 թ. ապրիլի 21-ին գերեզմանոցում է ամփոփվում Կոնստանտին Գրիգորյան Գուլասայանցը¹:

1 «Մշակ», 1896, № 45, 20 ապրիլի, էջ 1:

1896 թ. մայիսի 1-ին վախճանվում և 4-ին գերեզմանոցում է ամփոփվում Վարդան Բաբանյան Կյուրեղյանցը¹:

1 «Մշակ», 1896, № 50, 2 մայիսի, էջ 1: Тифлиссский листок. № 101. 2 мая 1896 г.

1896 թ. մայիսի 11-ին վախճանվում և 13-ին գերեզմանոցում է ամփոփվում պետական խորհրդական

Գասպար Նահապետյանը (հոգեհանգիստը՝ Ջգրաշենի Ավետյաց Սբ. Աստվածածին եկեղեցում)¹:

1 «Արձագանք», 1896, № 52, 12 մայիսի, էջ 1:

1896 թ. մայիսին վախճանվում և 17-ին գերեզմանոցում է ամփոփվում Կարսի վաճառական Գրիգոր Սբորչիկյանցի վաղամեռիկ որդին՝ Արամը¹:

1 «Մշակ», 1896, № 56, 16 մայիսի, էջ 1:

1896 թ. հուլիսի 16-ին գերեզմանոցում է ամփոփվում Սկրտիչ Կոլմանյանը¹:

1 «Մշակ», 1896, № 81, 16 յուլիսի, էջ 1:

1896 թ. հուլիսի 24-ին գերեզմանոցում է ամփոփվում Մեղրակ Ռոմանյան Շահղինարյանցը¹:

1 Тифлиссский листок. № 170. 23 июля 1896 г.

1896 թ. օգոստոսի 25-ին գերեզմանոցում է ամփոփվում Սոֆյա Տեր-Ղևոնդյանը (հոգեհանգիստը՝ Մուղնու Սբ. Գևորգ եկեղեցում)¹:

1 «Արձագանք», 1896, № 98, 25 օգոստոսի, էջ 1:

1896 թ. օգոստոսի 27-ին գերեզմանոցում է ամփոփվում Ավազ Հարությունյան Ասրիյանցը¹:

1 «Մշակ», 1896, № 99, 27 օգոստոսի, էջ 1:

1896 թ. սեպտեմբերի 14-ին վախճանվում և 19-ին գերեզմանոցում է ամփոփվում Մուղնու Սբ. Գևորգ եկեղեցու միաբան քահանա Մուշեղ Տեր-Ղևոնդյանցը (հոգեհանգիստը՝ Մուղնու Սբ. Գևորգ եկեղեցում): Ի դեպ, մահվանից մեկ տարի առաջ նշվում է քահանայության 25-ամյակը: Եղել է Ներսիսյան դպրոցի հոգաբարձության, Էջմիածնի կոնսիստորիայի անդամ, Տփղիսի եկեղեցիների բարեկարգիչ: Հնուտ էր հոգևոր երգեցողության մեջ¹:

1 «Արձագանք», 1896, № 120, 16 հոկտեմբերի, էջ 1:

1896 թ. սեպտեմբերի 29-ին գերեզմանոցում է ամփոփվում անասնաբույժ Մխիթար Հովհաննիսյան Սպանդարյանցը (հոգեհանգիստը՝ Միքայելյան հիվանդանոցի մատուռում)¹:

1 «Արձագանք», 1896, № 113, 29 սեպտեմբերի, էջ 1:

1896 թ. սեպտեմբերի 27-ին վախճանվում և 30-ին գերեզմանոցում է ամփոփվում ռմբաձիգ (հրետանի) զորքերի գեներալ-մայոր 68-ամյա Նիկողայոս Թեոդորյան Հախվերդյանցը (հոգեհանգիստը՝ Վանքի եկեղեցում)՝ հայտնի գրական գործիչ Գևորգ Հախվերդյանցի եղբայրը: 1849 թ. մասնակցել է հունգարական, 1852 թ.-ից՝ կովկասյան լեռնականների դեմ մղված պատերազմներին: 1877-1878 թթ.՝ ռուս-թուրքական պատերազմի ժամանակ, Կարսը պաշարած ռմբաձիգ ուժերի հրամանատարն էր: Վերջին հրաժեշտին ներկա էր Մինգրեթյան զորագնդի մեկ բաժնի ղեկավար թնդանոթով¹:

1 «Արձագանք», 1896, № 113, 29 սեպտեմբերի, էջ 1: Кавказ. № 258. 29 сентября 1896 г. С. 1; Тифлиссский листок. № 227. 29 сентября 1896 г.

1896 թ. հոկտեմբերի 1-ին գերեզմանոցում է ամփոփվում Գյուտ քահանա Աղանյանցի որդին՝ Պետերբուրգի Նիկողայոսյան արհեստագիտական դպրոցի ուսանող Երվանդ Աղանյանը (հոգեհանգիստը՝ Վանքի ավագ եկեղեցում)¹:

¹ «Մշակ», 1896, № 114, 1 հոկտեմբերի, էջ 4: «Նոր-Դար», 1896, № 173, 1 հոկտեմբերի, էջ 1:

1896 թ. հոկտեմբերի 17-ին գերեզմանոցում է ամփոփվում ճարտարագետ Գրիգոր Հովհաննիսյան Վահրամյանը (հոգեհանգիստը՝ Մուղնու Սբ. Գեվորգ եկեղեցում)¹:

¹ «Արձագանք», 1896, № 120, 16 հոկտեմբերի, էջ 1: Кавказ. № 274. 16 октября 1896 г. С. 4.

1896 թ. նոյեմբերի 9-ին 47 տարեկանում հանկարծամահ է լինում Հարանց վանքի ծխատեր քահանաներից ավագ քահանա Գևորգ Գալստյանը, որը, կանխազգալով մահը, երեք շաբաթ առաջ Խոջիվանքի գերեզմանոցում իր համար տեղ է պատրաստում¹: Հանգուցյալը նույն վանքին է կտակում 10.000 ռուբլի գնահատվող երկհարկանի սեփական մի առանձնատուն: Այն ի կատար պետք է անվեր իր և կնոջ մահից հետո²:

¹ «Արձագանք», 1896, № 133, 15 նոյեմբերի, էջ 1: Кавказ. № 300. 11 ноября 1896 г. С. 1. ცნობის ფურცელი, 1896, № 24.
² Кавказ. № 300. 11 ноября 1896 г. С. 1. ცნობის ფურცელი, 1896, № 24.

1896 թ. դեկտեմբերի 27-ին վախճանվում և 29-ին գերեզմանոցում է ամփոփվում վաղամեռիկ օրիորդ Վառվառե Սիրզյանը¹:

¹ «Մշակ», 1896, № 152, 28 դեկտեմբերի, էջ 1:

1897

1897 թ. հունվարի 19-ին գերեզմանոցում է ամփոփվում Տիրուհի Ոսկանյան Ավագյանը¹:

¹ «Մշակ», 1897, № 6, 16 յունվարի, էջ 1:

1897 թ. հունվարի 21-ին գերեզմանոցում է ամփոփվում Մարգար Նազարեթյանը¹:

¹ «Մշակ», 1897, № 8, 21 յունվարի, էջ 1:

1897 թ. փետրվարի 10-ին վախճանվում և 12-ին գերեզմանոցում է ամփոփվում Կեկել Կարապետյան Սաֆարյանը¹:

¹ «Մշակ», 1897, № 17, 11 փետրվարի, էջ 1:

1897 թ. փետրվարի 13-ին վախճանվում և 16-ին գերեզմանոցում է ամփոփվում Սարգիս Դավթյան Թումանյանը¹:

¹ «Մշակ», 1897, № 19, 15 փետրվարի, էջ 1:

1897 թ. փետրվարի 25-ին գերեզմանոցում է ամփոփվում Եկատերինա Լուարսաբեյան Ահարոնյանը¹:

¹ «Մշակ», 1897, № 23, 25 փետրվարի, էջ 1:

1897 թ. մարտի 1-ին գերեզմանոցում է ամփոփվում Վարվարե Մարդանյանը¹:

¹ «Մշակ», 1897, № 25, 1 մարտի, էջ 1:

1897 թ. մարտի 7-ին վախճանվում և 12-ին գերեզմանոցում է ամփոփվում Կարապետ Հարութունյան Մութաֆյանը¹:

¹ «Մշակ», 1897, № 29, 11 մարտի, էջ 1:

1897 թ. ապրիլի 27-ին գերեզմանոցում է ամփոփվում Գևորգ Սկրտունյան Գուլագյանը (հոգեհանգիստը՝ Կաթողիկե Սբ. Գևորգ եկեղեցում)¹:

¹ Тифлисский листок, 1897, № 96, 24 апреля.

1897 թ. մայիսի 15-ին գերեզմանոցում է ամփոփվում Եկատերինե Շահբագյանը¹:

¹ «Մշակ», 1897, № 56, 15 մայիսի, էջ 1:

1897 թ. մայիսի 29-ին գերեզմանոցում է ամփոփվում Արտեմ Պետրոսյան Մելիքյանը¹:

¹ «Մշակ», 1897, № 62, 29 մայիսի, էջ 1:

1897 թ. հունիսի 9-ին գերեզմանոցում է ամփոփվում Կաբարդիյան գնդի պողպորուչիկ Վլադիմիր Տեր-Ասատրյանը¹:

¹ Тифлисский листок. 1897. № 145.

1897 թ. հունիսի 10-ին գերեզմանոցում է ամփոփվում Աբրահամ Աբրահամյան Աստվածատրյանը¹:

¹ «Մշակ», 1897, № 67, 10 յունիսի, էջ 1:

1897 թ. հունիսի 28-ին գերեզմանոցում է ամփոփվում Եղիաբեթ Թալիբյանը¹:

¹ «Մշակ», 1897, № 75, 28 յունիսի, էջ 1:

1897 թ. օգոստոսի 3-ին գերեզմանոցում է ամփոփվում Հովհաննես Պետրոսյան Սարյանը¹:

¹ «Մշակ», 1897, № 89, 2 օգոստոսի, էջ 1:

1897 թ. սեպտեմբերի 27-ին գերեզմանոցում է ամփոփվում Թադեոս Բարխուդարյանը¹:

¹ «Մշակ», 1897, № 113, 27 սեպտեմբերի, էջ 1:

1897 թ. սեպտեմբերի 29-ին վախճանվում և հոկտեմբերի 4-ին գերեզմանոցում է ամփոփվում Թիֆլիսի ծխախոտի գործարանատեր Սիքայել Բալասյան Սաֆարյանը¹:

¹ «Մշակ», 1897, № 115, 3 հոկտեմբերի, էջ 1; № 116, 4 հոկտ., էջ 1:

1897 թ. նոյեմբերի 8-ին գերեզմանոցում է ամփոփվում Հերիքնազ Հայրապետյան Գևորգյանը¹:

¹ «Մշակ», 1897, № 131, 8 նոյեմբերի, էջ 1:

1897 թ. նոյեմբերի 9-ին գերեզմանոցում է ամփոփվում Մողմուն Մովսիսյան Բարխուդարյանը¹:

¹ «Մշակ», 1897, № 131, 8 նոյեմբերի, էջ 1:

1897 թ. նոյեմբերի 23-ին գերեզմանոցում է ամփոփվում Մարիամ Կարապետյան Հովհաննիսյանը¹:

¹ «Մշակ», 1897, № 137, 22 նոյեմբերի, էջ 1:

1897 թ. նոյեմբերի 28-ին Ջաքաթալայում վախճանվում և դեկտեմբերի 9-ին գերեզմանոցում է ամփոփվում Ջաքաթալա գավառի Ծարո-Մուխախյան տեղամասի պետ, ռուսմիսոր Հովսեփ Հովհաննիսյան Միրինանյանը¹:

¹ Кавказ. № 325. 8 декабря 1897 г. С. 1.

1897 թ. նոյեմբերի 29-ին գերեզմանոցում է ամփոփվում Սարգիս Գրիգորյան Առաքելյանը¹:

¹ «Մշակ», 1897, № 140, 29 նոյեմբերի, էջ 1:

1897 թ. օգոստոսին վախճանվում և գերեզմանոցում է ամփոփվում Նինա Սարաջյանը: Նրա հիշատակին կանգնեցված հուշարձանի բացումը տեղի է ունենում 1898 թ. օգոստոսի 25-ին¹:

¹ Кавказ. № 222. 24 августа 1898 г. С. 1.

1898

1898 թ. փետրվարի 4-ին վախճանվում և 8-ին գերեզմանոցում է ամփոփվում Գրիգոր Գրիգորյանը¹:

¹ «Մշակ», 1898, № 16, 7 փետրվարի, էջ 4:

1898 թ. մարտի 7-ին գերեզմանոցում է ամփոփվում Հովհաննես Սիմեոնյան Ստեփանյանը (հոգեհանգիստը՝ Վանքի ավագ եկեղեցում)¹:

¹ «Մշակ», 1898, № 35, 6 մարտի, էջ 1: «Նոր-Դար», 1898, № 40, 6 մարտի, էջ 1:

1898 թ. մարտի 10-ին գերեզմանոցում է ամփոփվում Բաղդասար Մալումյանը¹:

¹ «Մշակ», 1898, № 37, 10 մարտի, էջ 1:

1898 թ. մայիսի 3-ին գերեզմանոցում է ամփոփվում Սառա Հարությունյան Բաբյանը (հոգեհանգիստը՝ Վանքի ավագ եկեղեցում)¹:

¹ «Մշակ», 1898, № 73, 2 մայիսի, էջ 1: Այլ աղբյուրում անձնանունը նշված է Մոֆյա («Նոր-Դար», 1898, № 73, 1 մայ., էջ 1):

1898 թ. մայիսի 17-ին գերեզմանոցում է ամփոփվում Համազասպ Տեր-Բարսեղյան Աբովյանը (հոգեհանգիստը՝ Քամոյենց եկեղեցում)¹:

¹ «Նոր-Դար», 1898, № 83, 16 մայիսի, էջ 1:

1898 թ. մայիսի 19-ին գերեզմանոցում է ամփոփվում պետական խորհրդական, բժիշկ Եգոր Սարգրայան Ամբարդանյանը¹:

¹ Кавказ. № 130. 18 мая 1898 г. С. 1.

1898 թ. մայիսի 31-ին գերեզմանոցում է ամփոփվում Նատալյա Իսահակյան Վարդանբաբյանը¹:

¹ «Մշակ», 1898, № 92, 30 մայիսի, էջ 1:

1898 թ. հունիսի 11-ին գերեզմանոցում է ամփոփվում Գաբրիել Գասպարյան Ավանյանը (հոգեհանգիստը՝ Կուկիայի Սբ. Աստվածածին եկեղեցում)¹:

¹ «Նոր-Դար», 1898, № 100, 10 յունիսի, էջ 1:

1898 թ. օգոստոսի 2-ին գերեզմանոցում է ամփոփվում Ալեքսանդր Միքայելյան Մունթոյանը¹:

¹ Кавказ. № 201. 1 августа 1898 г. С. 1.

1898 թ. օգոստոսի 9-ին վախճանվում և 12-ին գերեզմանոցում է ամփոփվում Եղիսաբեթ Գևորգյան Ալավերդյանը¹:

¹ «Մշակ», 1898, № 142, 11 օգոստոսի, էջ 1:

1898 թ. օգոստոսի 18-ին գերեզմանոցում է ամփոփվում Դավիթ Կարապետյան Սարաջյանը (Սարաջև)¹, որի մահվան 7-օրյակի կապակցությամբ Սբ. Նշան եկեղեցում մատուցվում է պատարագ²:

¹ Кавказ. № 215. 17 августа 1898 г. С. 1.

² Кавказ. № 222. 24 августа 1898 г. С. 1.

1898 թ. օգոստոսի 20-ին գերեզմանոցում է ամփոփվում 58-ամյա կոմիկ դերասան պոլսահայ Դավիթ Կարապետյան Թուրյանը (հոգեհանգիստը՝ Վանքի Մայր եկեղեցում)¹:

¹ «Նոր-Դար», 1898, № 150, 21 օգոստոսի, էջ 1-2: **Հայկազն Վ.**, Դավիթ Թուրեան, «Նոր-Դար», 1898, № 153, 26 օգոստոսի, էջ 3: **Թուրեան Փ.**, Նամակ խմբագրության, «Նոր-Դար», 1898, № 158, 2 սեպտեմբերի, էջ 3 (հանգուցյալի կնոջ՝ Փեփրոնյա Թուրյանի շնորհակալական խոսքն է՝ ուղղված բժիշկներ Կարապետյանին և Տեր-Ջանյանին):

1898 թ. սեպտեմբերի 17-ին գերեզմանոցում՝ Բեթրուղյան մայրապետների կողքին է ամփոփվում Կուսանաց Սբ. Ստեփանոս եկեղեցու մայրապետ Եկատերինա (Կատարինե) Փարսադանյան Երկայնաբազուկ-Արղությանը (հոգեհանգիստը՝ Կուսանաց Սբ. Ստեփանոս եկեղեցում)¹:

¹ «Նոր-Դար», 1898, № 166, 16 սեպտեմբերի, էջ 1: «Մշակ», 1898, № 167, 16 սեպտ., էջ 1: Кавказ. № 243. 16 сентября 1898 г. С. 1.



1898 թ. հոկտեմբերի 1-ին գերեզմանոցում՝ եղբոր՝ «Մշակ» լրագրի հիմնադիր-խմբագիր Գրիգոր Արծրունու գերեզմանին կից է ամփոփվում երկրաբան-հանքագետ պրոֆեսոր Անդրեաս Երեմյան Արծրունին (Թիֆլիսի քաղաքագլուխ Երեմիա Արծրունու որդին էր)¹: Հանգուցյալը երկար տարիներ հանքաբանություն է դասավանդել Գերմանիայի Բրեսլավ



և Աախեն քաղաքների համալսարաններում: Թիֆլիսի թանգարանում առաջին անգամ հիմնադրում է հանքաերկրաբանական բաժանմունք, կազմում Ուրալի երկրաբանական առաջին քարտեզը, հայտնագործում հանքանյութերի ֆիզիկական և քիմիական բաղադրության փոխկապակցվածությունը: Հուշարձանը «...սե փայլուն մարմարից կերտուած ...: Քառակուսի ստիլով եւ ֆորմաներով քանդակուած մի գեղեցիկ կոթող է դա, որ վերջանում է սե փայլուն եւ քառակուսի մարմարի բարձր մի սիւնով: Պատուանդանի հարաւային ճակատին փորագրուած է»².

Պրոֆեսոր | Անդրէաս | Արծրունի, | Professeur / Andreas | Artzrouni, | 1847-1898:

- 1 Кавказ. № 258. 10 октября 1898 г. С. 1. «Նոր-Դար», 1898, № 178, 3 հոկտեմբերի, էջ 1:
- 2 **Երեմեան Ա.**, Թիֆլիսի հայկական պանթեոններում, «Հանդես ամսօրեայ», 1937, էջ 363: **Նույնի՝** Թիֆլիսի հայկական պանթեոններում, Վիեննա, 1940, էջ 6-7:

1898 թ. հոկտեմբերի 8-ին վախճանվում և 10-ին գերեզմանոցում է ամփոփվում Միքայել Մովսեսյան Նալբանդյանը¹:

- 1 «Մշակ», 1898, № 183, 9 հոկտեմբերի, էջ 1:

1898 թ. հոկտեմբերի 11-ին գերեզմանոցում է ամփոփվում Մարիամ Սինասյան Մելիքյանը¹:

- 1 «Մշակ», 1898, № 184, 10 հոկտեմբերի, էջ 1:

1898 թ. նոյեմբերի 5-ին գերեզմանոցում է ամփոփվում Մինաս Հակոբյանը¹:

- 1 «Մշակ», 1898, № 200, 4 նոյեմբերի, էջ 1:

1898 թ. նոյեմբերի 29-ին գերեզմանոցում է ամփոփվում Բուլանըխ գավառի Մեջիթլու գյուղից «...Եղան անունով պանդուխտ հայ մը, գոր մէկ օր առաջ խեղդեր եւ դաշոյնի տասն հարուած տուեր էին աջ կողին...: Ինքն հարուստ «օճախ»ի գաւակ եւ լաւ դիրք ունէր ամբողջ Պուլանըխի մէջ...: Տփղիս եկած էր գործի համար, գաղթող Պուլանըխցիներէ իր առնելիքները գանձելու»¹:

- 1 «Բիւզանդիոն», 1898, № 636, 20 նոյ./2 դեկտ., էջ 3: «Նոր-Դար», 1898, № 201, 5 նոյեմբերի, էջ 1-2:

1898 թ. դեկտեմբերի 8-ին վախճանվում և 12-ին գերեզմանոցում է ամփոփվում մահտեսի Հակոբ Հովակիմյան Չիլիկլիդյանը¹:

- 1 «Մշակ», 1898, № 227, 11 դեկտեմբերի, էջ 1:

1898 թ. դեկտեմբերի 13-ին գերեզմանոցում է ամփոփվում Գալուստ Գրիգորյան Ղարիբյանը (հոգեհանգիստը՝ Մուղնու Սբ. Գևորգ եկեղեցում)¹:

- 1 «Նոր-Դար», 1898, № 227, 11 դեկտեմբերի, էջ 1: Кавказ. № 326. 11 декабря 1898 г. С. 1.

1899

1898 թ. դեկտեմբերի 31-ին վախճանվում և 1899 թ. հունվարի 3-ին գերեզմանոցում է ամփոփվում բժշկապետ, պետական խորհրդական 69-ամյա Մարկիանոս Դավթյան Բոտինյանը¹. «Հանգուցեալը երկար ժամանակ վարում էր զինուորական բժշկի պաշտօն և մասնակցում էր Թիֆլիսի հայ հասարակութեան գործերին. եղել է Ներսիսեան դպրոցի հոգաբարձու: Երկար տարիներից ի վեր հանգուցեալը պահում էր Թիֆլիսի առաջին հայ տպարանը, որ մի ժամանակ Ներսիսեան դպրոցին էր պատկանում, ապա անցել էր Համբարձում Էնֆիանեանցին»²: Որդին՝ Տիգրան Բոտինյանը, հոր հիշատակին ստանձնում է տպագրել Թիֆլիսի հայոց հրատարակչական ընկերության հրատարակության պատրաստ գրքերից մեկը³: 1899 թ. փետրվարի 7-ին Վանքի Մայր եկեղեցում կատարվում է հանգուցյալի մահվան քառասնօրյակին նվիրված հոգեհանգրստյան արարողություն⁴:

- 1 «Մշակ», 1899, № 1, 1 յունվարի, էջ 1:
- 2 «Մշակ», 1899, № 2, 5 յունվարի, էջ 3:
- 3 «Մշակ», 1899, № 13, 23 յունվարի, էջ 3:
- 4 «Մշակ», 1899, № 23, 6 փետրվարի, էջ 1:

1899 թ. հունվարի 21-ին վախճանվում և 23-ին գերեզմանոցում է ամփոփվում ուսուցիչ, հրապարակախոս, թարգմանիչ Երվանդ Ղազարյանը (հոգեհանգիստը՝ Միքայելյան հիվանդանոցի մատուռում)¹:

- 1 «Մշակ», 1899, № 12, 22 յունվարի, էջ 4; № 13, 23 յուն., էջ 1, 3:

1899 թ. փետրվարի 28-ին գերեզմանոցում է ամփոփվում Մարիամ Ավետիսյան Ջոհրաբյանը (հոգեհանգիստը՝ Մուղնու Սբ. Գևորգ եկեղեցում)¹:

- 1 «Նոր-Դար», 1899, № 36, 27 փետրուարի, էջ 1:

1899 թ. մարտի 7-ին գերեզմանոցում է ամփոփվում Տիգրան Գևորգյան Չմշկյանը¹: 1900 թ. ապրիլի 10-ին գերեզմանոցում կատարվում է հանգուցյալի մահվան առաջին տարելիցին նվիրված հոգեհանգստի արարողություն²:

- 1 «Մշակ», 1899, № 38, 2 մարտի, էջ 1: «Նոր-Դար», 1899, № 37, 2 մարտի, էջ 1:
- 2 «Նոր-Դար», 1900, № 66, 8 ապրիլի, էջ 1:

1899 թ. մայիսի 6-ին գերեզմանոցում է ամփոփվում Կարապետ Հարությունյան Խաչատրյանը (հոգեհանգիստը՝ Մուղնու Սբ. Գևորգ եկեղեցում)¹:

- 1 «Մշակ», 1899, № 80, 5 մայիսի, էջ 1:

1899 թ. մայիսի 14-ին վախճանվում և 20-ին գերեզմանոցում է ամփոփվում վաճառական Մովսես Քրիստափորյան Հարությունյանը, որն իր ողջ ունեցվածքը կտակել էր մորը՝ Թագուհուն: Վերջինս, ի հիշատակ որդու, կատարել էր մի շարք նվիրատվություններ (թիֆլիսեցի չքավոր կանանց առանց հավատքի տարբերության՝ 1500 ռ., Բոլնիսի վանք տաճող ճանապարհաշինության համար՝ 500 ռ., Թիֆ-

լիսի Կուսանաց վանքին՝ 300 ռ., «Եղբայրական օգնություն» խմբագրությանը, Էջմիածնեցոց եկեղեցու նորոգությանը, Սոլուլակի Էժանագին ճաշարանին և Հավլաբարում կառուցվող Կույրերի դպրոցին՝ 100-ական ռուբլի¹:

¹ Тифлиссский листок. № 115. 20 мая 1899 г. С. 2.

1899 թ. հունիսի 19-ին գերեզմանոցում է ամփոփվում Սարգիս քահանա Երիցյանը (հոգեհանգիստը՝ Էջմիածնեցոց Սբ. Գևորգ եկեղեցում): Տեր Սարգիս ջանքերով եկեղեցիներ են կառուցվում Ծղնեթ և Նախշիրգորա գյուղերում, ուսումնարան է բացվում Ծղնեթ գյուղում (փակվել էր 1885 թ.): Դուշեթի գործակալ նշանակվելուց հետո վերաբացում է տեղի ծխական դպրոցը: Հակառակ տեղի հոգևորականության դիմադրության՝ ուսումնարաններ է բացում նաև Մուխրան, Ախալգոր և Անանուր գյուղերում: Ի նպաստ Դուշեթի եկեղեցու՝ կարողանում է հարթել տարիներ ի վեր ձգձգված եկեղեցապատկան անտառին վերաբերող կալվածական վեճը, և վերջապես քահանայի հորդորներով է Ալեքսանդր Զալինյանը կազմում այն կտակը, որով նյութապես աջակցում են Դուշեթի գավառի հայոց դպրոցներին¹:

¹ «Մշակ», 1899, № 111, 19 հունիսի, էջ 1, 3:

1899 թ. հուլիսի 17-ին գերեզմանոցում է ամփոփվում Նիկողայոս Զուրաբյան Միրզոյանցը¹:

¹ Кавказ. № 184. 16 июля 1899 г. С. 1.

1899 թ. օգոստոսի 10-ին Բորժոմում վախճանվում է տեղի հայոց գերեզմանոցում է ամփոփվում առաջին կարգի վաճառական Խոսրով Բաղալյան Արզումանյանցի դուստրը՝ 10-ամյա Աշխենը, սակայն նույն թվականի հոկտեմբերի 18-ին շարադրված խնդրագրում Խ. Արզումանյանցը ցանկություն է հայտնում դասեր աճյունը փոխադրելու Խոջիվանքի գերեզմանոց¹:

¹ ՎԱԴ, ֆ. 12, ց. 8, գ. 2301, ք. 120:

1899 թ. օգոստոսի 22-ին վախճանվում և 26-ին գերեզմանոցում է ամփոփվում իշխանուհի Սոփիա Մոլունոյան Խոջամինասյանցը¹: Ի դեպ, հանգուց-



յալի տապանաքարը, որը որպես շինանյութ էր օգտագործվել, հայտնաբերվում է Մարքսիզմ-լենինիզմի ինստիտուտի շենքի քանդման ժամանակ՝ 2009 թ., և պահպանության նպատակով փոխադրվում պանթեոնի տարածք:

¹ «Մշակ», 1899, № 154, 24 օգոստոսի, էջ 1: Кавказ. № 221. 24 августа 1899 г. С. 1.

1899 թ. օգոստոսի 22-ին վախճանվում և 26-ին գերեզմանոցում է ամփոփվում Սոփիա Բալայան Ստեփանյանցը (հոգեհանգիստը՝ Վանքի Մայր եկեղեցում)¹:

¹ «Մշակ», 1899, № 154, 24 օգոստոսի, էջ 1: «Նոր-Դար», 1899, № 142, 24 օգոստ., էջ 1:

1899 թ. օգոստոսի 29-ին գերեզմանոցում է ամփոփվում Դորպատի համալսարանի շրջանավարտ, Ներսիսյան դպրոցի ուսուցիչ, բանաստեղծությունների ժողովածուի հեղինակ, ազգային աշխարհիկ երգերի առաջին ուսուցանող Միքայել Փրիդոնյանցը: Հանգուցյալը 10.000 ռուբլի է կտակում եկեղեցիներում երգեցիկ խմբեր պահելու նպատակով¹:

¹ «Մշակ», 1899, № 159, 31 օգոստոսի, էջ 2:

1899 թ. սեպտեմբերի 7-ին վախճանվում և 11-ին գերեզմանոցում՝ տոհմական դամբարանում է ամփոփվում իշխան Պետրոս Արխողունոյան Բեհբուդյանցը (հոգեհանգիստը՝ Մուղնու Սբ. Գևորգ եկեղեցում)¹:

¹ «Մշակ», 1899, № 168, 11 սեպտեմբերի, էջ 1:

1899 թ. հոկտեմբերի 7-ին գերեզմանոցում է ամփոփվում Արտաշես Մելիքյան Արտեմյանցը¹:

¹ Кавказ. № 261. 6 октября 1899 г. С. 1.

1899 թ. հոկտեմբերի 8-ին վախճանվում և 12-ին գերեզմանոցում է ամփոփվում Աղասի Կարապետյան Տեր-Աստվածատրյանցը¹:

¹ «Նոր-Դար», 1899, № 174, 9 հոկտեմբերի, էջ 1:

1899 թ. հոկտեմբերի 19-ին վախճանվում և 24-ին գերեզմանոցում է ամփոփվում Հովհաննես Գրիգորյան Մարգարյանցը (հոգեհանգիստը՝ Մուղնու Սբ. Գևորգ եկեղեցում)¹:

¹ Кавказ. № 278. 23 октября 1899 г. С. 1.

1899 թ. նոյեմբերի 13-ին վախճանվում և 16-ին գերեզմանոցում է ամփոփվում իշխան Ղուկաս Նիկողոսյան Բեհբուդյանցը¹:

¹ Кавказ. № 302. 16 ноября 1899 г. С. 1.

1899 թ. դեկտեմբերի 2-ին գերեզմանոցում է ամփոփվում Բեռլինում վախճանված Սալովմե Ստեփանյան Էլիմիրյանցը (հոգեհանգիստը՝ Քամոյանց Սբ. Գևորգ եկեղեցում)¹:

¹ «Նոր-Դար», 1899, № 211, 1 դեկտ., էջ 1, № 212, 2 դեկտ., էջ 1:

1899 թ. դեկտեմբերի 4-ին վախճանվում և 7-ին գերեզմանոցում է ամփոփվում Գևորգ քահանայի որդին՝ ավագ սարկավագ Աստվածատուր Աբուլյանցը (հոգեհանգիստը՝ Ջգրաշենի Սբ. Ավետյաց եկեղեցում)¹:

1 «Նոր-Դար», 1899, № 215, 7 դեկտեմբերի, էջ 1:

1899 թ. դեկտեմբերի 18-ին գերեզմանոցում է ամփոփվում Մինաս Ջաքարյան Աբաղյանցը (հոգեհանգիստը՝ Էջմիածնեցոց Սբ. Գևորգ եկեղեցում)¹:

1 «Նոր-Դար», 1899, № 223, 17 դեկտեմբերի, էջ 1:

1899 թ. դեկտեմբերի 26-ին գերեզմանոցում է ամփոփվում Նիկողայոս Ալեքսեյան Շաղինյանցը (հոգեհանգիստը՝ Խոջիվանքի Սբ. Աստվածածին եկեղեցում)¹:

1 Кавказ. № 339. 25 декабря 1899 г. С. 1.

1900

1900 թ. հունվարի 11-ին վախճանվում և 13-ին գերեզմանոցում է ամփոփվում Էփենիա Ռոստոմյան Տեր-Խաչատրյանցը¹:

1 «Մշակ», 1900, № 6, 13 յունվարի, էջ 1:

1900 թ. հունվարի 29-ին գերեզմանոցում է ամփոփվում Հովհաննես Արտեմյան Հովհաննիսյանցը (հոգեհանգիստը՝ Հավլաբարի Սբ. Կարապետ եկեղեցում)¹:

1 «Նոր-Դար», 1900, № 17, 28 յունուարի, էջ 4; № 18, 29 յունուարի, էջ 4:

1900 թ. փետրվարի 6-ին գերեզմանոցում է ամփոփվում Կալիպետ Մինենևա Մուլխանյանցը¹:

1 «Մշակ», 1900, № 23, 5 փետրվարի, էջ 1:

1900 թ. փետրվարի 15-ին գերեզմանոցում է ամփոփվում Յազոր Չայգեշտյանցը: Այս կապակցությամբ փետրվարի 23-ին Հովհաննես Մելիքյանցը գրում է. «Մօտատրապետ 5 տարի կը լինի, ինչ ես դիմում եմ Խոջիվանքի գերեզմանատան կառավարութեանը, խնդրելով, որ ինձ թոյլ տան մօրս գերեզմանի վրա քար դնել, բայց ինձ պատասխանում են, որ մօրս գերեզմանը ծախված է Եազոր Չայգեշտեանցի վրա 10 թուրլով. ինձ մինչեւ անգամ թոյլ չէին տալիս մօտենալ մօրս գերեզմանին: Ես դիմել եմ գանազան քահանաներին եւ այս վերջին անգամը նոր նշանակած գլխաւոր վերակացու Գրիգոր քահանայ Մատինեանցին, որ թոյլ տայ վարպետին աղիւսով բարձրացնելու ննջեցեալի գերեզմանը, բայց նա ինձ մերժեց, ասելով, որ ես պետք է Եազոր Չայգեշտեանցին դիմեմ, որ նա թոյլ տայ: Իսկ երբ ես պահանջեցի, որ 10 թուրլին վերադարձնեն, նա ինձ պատասխանեց, որ ես ինքս պիտի 10 թուրլի տամ Չայգեշտեանցին, եւ նրանից թոյլտուութիւն ստանամ: Փետրվարի 15-ին Եազոր Չայգեշտեանցին թաղեցին Խոջիվանքի գերեզմանատանը՝ այն տեղում, որ նա գնել էր 10 թուրլով, այսինքն՝ այն տե-

ղում, ուր մայրս է թաղված, առանց ինձ իմաց տալու»¹:

1 Մելիքեանց Հ., Նամակ խմբագրութեան, «Մշակ», 1900, № 36, 25 փետրվարի, էջ 3:

1900 թ. մարտի 18-ին գերեզմանոցում է ամփոփվում Գարեգին Մելիքսեղեկյան Տեր-Ավետիսյանցը¹:

1 «Նոր-Դար», 1900, № 52, 18 մարտի, էջ 1:

1900 թ. մարտի 25-ին գերեզմանոցում է ամփոփվում Նինա Բեգլարյան Գարեցեկյանցը¹:

1 Тифлисский листок. № 69. 23 марта 1900 г.

1900 թ. մարտի 30-ին վախճանվում և ապրիլի 2-ին գերեզմանոցում է ամփոփվում Հարություն Փաշայանցը¹:

1 «Մշակ», 1900, № 62, 1 ապրիլի, էջ 1:

1900 թ. ապրիլին վախճանվում և գերեզմանոցում է ամփոփվում Լևոն Լուսինյանը, որի մահվան տարեիցին՝ 1901 թ. ապրիլի 27-ին, կատարվում է հոգեհանգիստ Խոջիվանքի Սբ. Աստվածածին եկեղեցում¹:

1902 թ. ապրիլի 27-ին Ջգրաշենի Ավետյաց Սբ. Աստվածածին եկեղեցում նշվում է հանգուցյալի մահվան երկրորդ², իսկ 1904 թ. ապրիլի 25-ին՝ չորրորդ տարեիցը³:

1 «Մշակ», 1901, № 88, 26 ապրիլի, էջ 1:

2 «Մշակ», 1902, № 88, 27 ապրիլի, էջ 1:

3 «Մշակ», 1904, № 85, 27 ապրիլի, էջ 1:

1900 թ. ապրիլի 27-ին վախճանվում և 30-ին գերեզմանոցում է ամփոփվում Գևորգ Նիկողոսյան Աղամյանցը¹:

1 «Մշակ», 1900, № 78, 29 ապրիլի, էջ 1:

1900 թ. մայիսի 25-ին գերեզմանոցում է ամփոփվում Հովսեփ Փրիդոնյան Մելիք-Շահնազարյանցը¹:

1 «Նոր-Դար», 1900, № 94, 24 մայիսի, էջ 1:

1900 թ. հունիսի 15-ին գերեզմանոցում է ամփոփվում արքունի խորհրդական Ռոսթևան Փարեմուզյան Մանդեկյանցը (հոգեհանգիստը՝ Մուղնու Սբ. Գևորգ եկեղեցում)¹:

1 Тифлисский листок. № 138. 13 июня 1900 г.; Кавказ. № 154. 14 июня 1900 г. С. 1.

1900 թ. հունիսի 16-ին վախճանվում և 20-ին գերեզմանոցում է ամփոփվում երդվյալ հավատարմատար, փաստաբան գործիցի Գաբրիել Մուլխանյան Տեր-Ստեփանյանցը¹:

Գ. Տեր-Ստեփանյանցի մասին նշվել է. «Հանգուցեալը մեր երկրի տաղանդաւոր եւ առաջնակարգ փաստաբաններից մէկն էր: Օժտված լինելով ճաշախօսութեան ընդունակութեամբ, առողջ դատողութեամբ եւ գործերի էութեան արագ ըմբռնողութեամբ, Տեր-Ստեփանեան շատ շուտ գրաւեց պատուաւոր դիրք մեր Կովկասի իրաւաբանների շրջանում: Մա-

հը նրան խլեց համեմատաբար երիտասարդ հասակում, երբ նա գտնվում էր իր ոյժերի զարգացման ամենաաջող շրջանում: Նա մեռաւ 49 տարեկան հասակում, այլեվրիտ հիւանդութիւնից: Հանգուցեալ Տէր-Ստեփանեան ծնվել է 1851 թիւն: Աւարտելով իր ուսման ընթացքը Թիֆլիսի 1-ին կլասիքական գիմնազիալում 1871 թիւն, նա մտաւ Պետերբուրգի համալսարանի իրաւաբանական ֆակուլտետը, ուր եւ աւարտեց իր ուսման ընթացքը 1875 թիւն: Բարձրագոյն ուսումն աւարտելուց յետոյ, հանգուցեալը մտաւ պետական ծառայութիւն, այն է Կովկասեան զինուորական նահանգական դատարանը որպէս դատաստանական պաշտօնների կանդիդատ: Շուտով նա ստացաւ զինուորական պրօկուրօրի օգնական պաշտօն: Նա պետական ծառայութիւնը թողեց 1889 թիւն եւ այդ թիւց արդէն մտաւ մեր քաղաքի երդուեալ հաւատարմատարների շարքը»²:

1 «Մշակ», 1900, № 111, 17 յունիսի, էջ 1; № 112, 20 յունիսի, էջ 1: Тифлисский листок. № 145. 19 июня 1900 г.; № 150, 27 июня 1900 г.; Кавказ. № 157. 17 июня 1900 г. С. 1-2; № 158. 18 июня 1900 г. С. 1; № 159. 19 июня 1900 г. С. 1; № 160. 20 июня 1900 г. С. 1.

2 «Մշակ», 1900, № 111, 17 յունիսի, էջ 2: Кавказ. № 161. 21 июня 1900 г. С. 2-3.

1900 թ. հուլիսի 6-ին գերեզմանոցում է ամփոփվում ստատսկի սովետնիկ Եփրեմ Ներսիսյան Դեյկարխանյանը¹:

1 «Մշակ», 1900, № 123, 5 յուլիսի, էջ 1:

1900 թ. հուլիսի 8-ին գերեզմանոցում է ամփոփվում Հեղինե Շահնագարյանը¹:

1 «Մշակ», 1900, № 125, 7 յուլիսի, էջ 1:

1900 թ. օգոստոսի սկզբին Սուրամուն վախճանվում և 10-ին գերեզմանոցում է ամփոփվում Օզսենտ Պողոսյան Վահանյանը¹:

1 «Մշակ», 1900, № 148, 10 օգոստոսի, էջ 1:

1900 թ. հոկտեմբերի 5-ին վախճանվում և 7-ին գերեզմանոցում է ամփոփվում Ներսիսյան դպրոցի ուսուցիչ Հարություն Գևորգյան Ալխագյանը¹. «...հոկտեմբերի 4-ին, սրտի պայթումից յանկարծամահ եղաւ Թիֆլիսի Ներսիսեան դպրոցի ուսուցիչ Յարութիւն Ալխագեան: Հանգուցեալը երկար տարիներ ուսուցչութիւն է արել ոչ միայն Ներսիսեան դպրոցում, այլև զանազան զուտական քաղաքների հայոց եկեղեցական-ծխական ուսումնարաններում: Ալխագեան 48 տարեկան էր. նա թողել է մի փոքրահասակ որդի: Լսում ենք, որ Ներսիսեան դպրոցը որոշել է որդեգրել հանգուցեալի որդուն»²: Նոյեմբերի 21-ին մահվան քառասունորակի առիթով Խոջիվանքի գերեզմանատան եկեղեցում կատարվում է հոգեհանգստի արարողություն³:

1 «Մշակ», 1900, № 189, 7 հոկտեմբերի, էջ 1: «Նոր-Գար», 1900, № 180, 7 հոկտեմբերի, էջ 1:

2 «Մշակ», 1900, № 188, 6 հոկտեմբերի, էջ 3:

3 «Մշակ», 1900, № 220, 21 նոյեմբերի, էջ 1: «Նոր-Գար», 1900, № 211, 21 նոյեմբերի, էջ 1:

1900 թ. նոյեմբերի 12-ին գերեզմանոցում է ամփոփվում բժիշկ Միքայել Արտեմյան Միրաքյանը¹:

1 Тифлисский листок. № 265. 11 ноября 1900 г.

1900 թ. նոյեմբերի 21-ին վախճանվում և 23-ին գերեզմանոցում է ամփոփվում Հովհաննես Օհանյանը¹:

1 «Մշակ», 1900, № 221, 22 նոյեմբերի, էջ 1:

1900 թ. դեկտեմբերի 5-ին գերեզմանոցում է ամփոփվում պալատական խորհրդական Սերգեյ Ռոլխանյան Ալիխանյանը¹:

1 «Մշակ», 1900, № 230, 5 դեկտեմբերի, էջ 1:

1901

1901 թ. հունվարի 21-ին գերեզմանոցում է ամփոփվում Հուսիսյան Մելիք-Գրիգորյանը¹:

1 «Մշակ», 1901, № 14, 21 յունվարի, էջ 1:

1901 թ. հունվարի 28-ին գերեզմանոցում է ամփոփվում Թագուհի Գաբրիելյան Փանոսյանը¹:

1 «Մշակ», 1901, № 16, 24 յունվարի, էջ 1; № 19, 27 յունվ., էջ 1; № 20, 28 յունվ., էջ 1:

1901 թ. փետրվարի 4-ին գերեզմանոցում է ամփոփվում Հովհաննես քահանայի կողակից Օլգա Գազարյան Ամիրխանյանը¹: Ի դեպ, մարտի 17-ին Մեյդանի Սբ. Գևորգ եկեղեցում կատարվում է հոգեհանգստյան արարողություն մահվան քառասունորակի², իսկ 1902 թ. փետրվարի 3-ին նույն եկեղեցում՝ առաջին տարելիցի առիթով³:

1 «Մշակ», 1901, № 25, 3 փետրվարի, էջ 1:

2 «Մշակ», 1901, № 59, 16 մարտի, էջ 1:

3 «Մշակ», 1902, № 25, 3 փետրվարի, էջ 1:

1901 թ. փետրվարի 13-ին վախճանվում և 17-ին գերեզմանոցում է ամփոփվում Եղիաբեթ Պապաջանյանը¹:

1 «Մշակ», 1901, № 35, 16 փետրվարի, էջ 1; № 36, 17 փետր., էջ 1:

1901 թ. փետրվարի 24-ին գերեզմանոցում է ամփոփվում Գայանե Խաչատրյան Հովսեփյանը¹:

1 «Մշակ», 1901, № 41, 23 փետրվարի, էջ 1; № 42, 24 փետր., էջ 1:

1901 թ. ապրիլի 29-ին գերեզմանոցում է ամփոփվում Ալեքսանդր Մեղվինյանը¹:

1 «Մշակ», 1901, № 90, 28 ապրիլի, էջ 1; № 91, 29 ապրիլի, էջ 1:

1901 թ. հունիսի 9-ին 10-ամյա հիվանդությունից հետո հոգեբուժարանում վախճանվում և 13-ին գերեզմանոցում է ամփոփվում Թիֆլիսի հայոց ծխական դպրոցների նախկին ուսուցիչ Արտաշես Դավթյան Մատինյանը (հոգեհանգիստը՝ Սբ. Մինաս եկեղեցում)¹:

1 «Մշակ», 1901, № 126, 13 յունիսի, էջ 1: «Նոր-Գար», 1901, № 97, 13 յունիսի, էջ 1: Тифлисский листок. № 136. 12 июня 1901 г.

1901 թ. հունիսի 13-ին գերեզմանոցում է ամփոփվում Նատալյա Գրիգորյան Դովլաթյանցը (հոգեհանգիստը՝ Ջգրաշենի Սբ. Ավետյաց եկեղեցում)¹:

1 «Մշակ», 1901, № 125, 12 յունիսի, էջ 1; № 126, 13 յուն., էջ 1: «Նոր-Դար», 1901, № 97, 13 յունիսի, էջ 1:

1901 թ. հունիսի 29-ին վախճանվում և հուլիսի 1-ին գերեզմանոցում է ամփոփվում Մելքոն Թադեոսյանը¹:

1 «Մշակ», 1901, № 140, 29 յունիսի, էջ 1; № 142, 1 յուլիսի, էջ 1:

1901 թ. հուլիսի 27-ին վախճանվում և 28-ին գերեզմանոցում է ամփոփվում Արթուր Եսայան Տեր-Ղուկասյանցը¹:

1 «Մշակ», 1901, № 164, 28 յուլիսի, էջ 1:

1901 թ. սեպտեմբերի 12-ին վախճանվում և 16-ին գերեզմանոցում է ամփոփվում Նախշուն Սարգսյան Խունուցը¹:

1 «Մշակ», 1901, № 203, 14 սեպտեմբերի, էջ 1; № 204, 15 սեպտ., էջ 1:

1901 թ. սեպտեմբերի 13-ին գերեզմանոցում է ամփոփվում Աննա Եգորյան Մելիք-Բեգլարյանցը¹: Հոկտեմբերի 20-ին Ջգրաշենի Սբ. Ավետյաց եկեղեցում հոգեհանգիստ է կատարվում հանգուցյալի մահվան քառասուրյակի², իսկ 1902 թ. սեպտեմբերի 10-ին Մուղնու Սբ. Գևորգ եկեղեցում՝ առաջին տարեկիցի առիթով³:

1 «Մշակ», 1901, № 200, 11 սեպտեմբերի, էջ 1:

2 «Մշակ», 1901, № 233, 20 հոկտեմբերի, էջ 1:

3 «Մշակ», 1902, № 199, 10 սեպտեմբերի, էջ 1:

1901 թ. սեպտեմբերի 16-ին վախճանվում և 20-ին գերեզմանոցում է ամփոփվում 1897 թ.-ից Տփղիսի քաղաքագլուխ 57-ամյա Գևորգ Գրիգորյան Եվանգուլյանցը (1843/44-1901)¹: 1902 թ. սեպտեմբերի 16-ին Վանքի Մայր եկեղեցում հոգեհանգիստ է կատարվում է՝ ի հիշատակ հանգուցյալի մահվան առաջին տարեկիցի²:



1 «Մշակ», 1901, № 206, 19 սեպտեմբերի, էջ 1; № 207, 20 սեպտ., էջ 1: Кавказ. № 245. 18 сентября 1901 г. С. 1; № 246. 19 сентября 1901 г. С. 1; № 248. 21 сентября 1901 г. С. 2. Հանգուցյալի կենսագրականը տես՝ № 206, 19 սեպտ., էջ 1-2: «Նոր-Դար», 1901, № 144, 19 սեպտ., էջ 1; № 146, 22 սեպտ., էջ 2: **Կարապետյան Ս.**, Թիֆլիսի քաղաքագլուխները, Բեյրութ, 2003, էջ 88-91:

2 «Մշակ», 1902, № 204, 15 սեպտեմբերի, էջ 1:

1901 թ. սեպտեմբերի 30-ին գերեզմանոցում է ամփոփվում Ներսես Գրիգորյան Գանջունցյանցը¹:

1 «Մշակ», 1901, № 215, 29 սեպտեմբերի, էջ 1; № 216, 30 սեպտ., էջ 1:

1901 թ. հոկտեմբերի 14-ին գերեզմանոցում է ամփոփվում Բագրատ Գևորգյան Գարեթեյանցը¹:

1 «Մշակ», 1901, № 227, 13 հոկտեմբերի, էջ 1; № 228, 14 հոկտ., էջ 1:

1901 թ. նոյեմբերի 17-ին վախճանվում և 21-ին գերեզմանոցում է ամփոփվում 1897 թ.-ից Ներսիսյան դպրոցի վերակացու 30-ամյա Դավիթ Պողոսյան Տեր-Դավթյանցը¹:

1 «Մշակ», 1901, № 258, 20 նոյեմբերի, էջ 1; № 259, 21 նոյ., էջ 1:

1901 թ. նոյեմբերի 22-ին հանկարծամահ է լինում և 25-ին գերեզմանոցում է ամփոփվում Գևորգ (Գիորգի) Սիբայեյան Թամանջյանցը (հոգեհանգիստը՝ Մուղնու Սբ. Գևորգ եկեղեցում)¹:

1 «Մշակ», 1901, № 261, 24 նոյեմբերի, էջ 1: «Նոր-Դար», 1901, № 175, 23 նոյ., էջ 1: Кавказ. № 309. 24 ноября 1901 г. С. 1.

1901 թ. նոյեմբերի 29-ին վախճանվում և դեկտեմբերի 2-ին գերեզմանոցում է ամփոփվում Վարդուհի Կարապետյանը¹:

1 Кавказ. № 317. 1 декабря 1901 г. С. 1.

1901 թ. դեկտեմբերի 3-ին վախճանվում և 6-ին գերեզմանոցում է ամփոփվում Հերիքնազ Սարիբեգյան Մատինյանցը¹:

1 «Մշակ», 1901, № 270, 5 դեկտեմբերի, էջ 1:

1901 թ. դեկտեմբերի 4-ին գերեզմանոցում է ամփոփվում պալատական խորհրդական Քրիստափոր Ալեքսանդրյան Թալիբյանցը (հոգեհանգիստը՝ Շամքորեցոց Սբ. Աստվածածին եկեղեցում)¹:

1 «Մշակ», 1901, № 269, 4 դեկտեմբերի, էջ 1: «Նոր-Դար», 1901, № 183, 4 դեկտեմբերի, էջ 1: Кавказ. № 320. 4 декабря 1901 г. С. 1.

1901 թ. դեկտեմբերի 1-ին վախճանվում և 4-ին գերեզմանոցում է ամփոփվում Քաղաքային կրեդիտային ընկերության վարչության տնօրեն Բարսեղ (Վասիլի) Հովհաննիսյան (Իվանյան) Դորդանյանցը (Կորգանյանց): Հոգեհանգիստը՝ Մուղնու Սբ. Գևորգ եկեղեցում¹:

1 «Մշակ», 1901, № 269, 4 դեկտեմբերի, էջ 1: «Նոր-Դար», 1901, № 183, 4 դեկտ., էջ 1: Кавказ. № 319. 3 декабря 1901 г. С. 1; № 320. 4 декабря 1901 г. С. 1.

1901 թ. դեկտեմբերի 6-ին վախճանվում և 9-ին գերեզմանոցում է ամփոփվում Տփղիսի վերահսկիչ պալատի աշխատակից Բարսեղ Հովհաննիսյան Նազարբեկյանցը (հոգեհանգիստը՝ Ջրկինյանց Սբ. Կարապետ եկեղեցում)¹:

1 Кавказ. № 323. 8 декабря 1901 г. С. 1.

1901 թ. դեկտեմբերի 18-ին գերեզմանոցում է ամփոփվում Իսահակ Սկրտչյան Բզումունի¹:

1 «Մշակ», 1901, № 280, 18 դեկտեմբերի, էջ 1:

1901 թ. դեկտեմբերի 20-ին գերեզմանոցում է ամփոփվում Զմրուխտ Զարգարյանը¹: 1902 թ. հուն-

վարի 27-ին Մուղնու Սր. Գևորգ եկեղեցում հոգեհանգիստ է կատարվում հանգուցյալի մահվան քառասնօրյակի², իսկ դեկտեմբերի 22-ին՝ առաջին տարեկիցի առիթով³:

- 1 «Մշակ», 1901, № 281, 19 դեկտեմբերի, էջ 1; № 282, 20 դեկտեմբերի, էջ 1:
- 2 «Մշակ», 1902, № 18, 26 յունվարի, էջ 1:
- 3 «Մշակ», 1902, № 282, 21 դեկտեմբերի, էջ 1:

1902

1902 թ. հունվարի 2-ին գերեզմանոցում է ամփոփվում Հարություն Գրիգորյանը¹:

- 1 «Մշակ», 1902, № 1, 1 յունվարի, էջ 1:

1902 թ. հունվարի 8-ին գերեզմանոցում է ամփոփվում Ավետիս Խոջամիրյանը¹: Փետրվարի 17-ին Մուղնու Սր. Գևորգ եկեղեցում տեղի է ունենում մահվան քառասնօրյակին նվիրված հոգեհանգստի արարողություն²: Նրա հիշատակին դուստրը՝ Եվգենյա Քալանթարը, կատարում է մի շարք նվիրատվություններ (Էրզրումի երկրաշարժից տուժածներին և 2 աղքատ ընտանիքի՝ 200-ական, Բաթումի եկեղեցու, Բաթումի և Վերին Ագուլիսի չքավորներին, Թիֆլիսի հայոց բարեգործական ընկերությանը, գիշերային ապաստարանին, Հավլաբարի էժանագին գրադարանին՝ 100-ական, Գրիգոր Արծրունու և Մ. Նալբանդյանի մահարձանների պատրաստման համար՝ 75-ական ռուբլի և այլն)³:

- 1 «Մշակ», 1902, № 2, 5 յունվարի, էջ 1:
- 2 «Մշակ», 1902, № 35, 16 փետրվարի, էջ 1; № 36, 17 փետր., էջ 1:
- 3 «Մշակ», 1902, № 3, 9 յունվարի, էջ 2: Новое обозрение. № 5930. 10 января. 1902 г. Շոտոս օրհրճյլո, 1902, № 2021.

1902 թ. հունվարի 18-ին Խոջիվանքի գերեզմանոցում ինքնասպան է լինում և 22-ին տեղում ամփոփվում Սաղի հրապարակում կտորեղենի խանութի տեր Գրիգոր Գևորգյան Սառաջյանը¹:

- 1 «Նոր-Դար», 1902, № 12, 22 յունուարի, էջ 2: «Մշակ», 1902, № 13, 20 յունվարի, էջ 1:

1902 թ. հունվարի 24-ին վախճանվում և փետրվարի 10-ին գերեզմանոցում է ամփոփվում Պետրոս Մարտիրոսյան Բերինյանը¹:

- 1 «Մշակ», 1902, № 29, 8 փետրվարի, էջ 1; № 30, 9 փետրվ., էջ 1:

1902 թ. փետրվարի 8-ին վախճանվում և 10-ին գերեզմանոցում է ամփոփվում շուշեցի Միքայել Սարգսյան Գուկասյանը¹: Ի դեպ, նա «...ջրաղացներ և կարուածներ ունի և Սամարղանդում, իր կարողութիւնը 120 բաժին անելով, կտակով նուիրել է Շուշու Հայոց թեմական դպրանոցին՝ 15 բաժին, ճեմարանին՝ 5 բաժին, Ներսիսեան հոգևոր դպրանոցին՝ 5 բաժին, Յովնանեան աղջկանց դպրոցին՝ 3 բաժին, Շուշու Ագուլեաց և Ղազանչեցոց եկեղեցիներին՝ մէկ-մէկ բաժին»²:

- 1 «Մշակ», 1902, № 30, 9 փետրվարի, էջ 1; № 31, 10 փետր., էջ 1:
- 2 «Նոր-Դար», 1902, № 26, 12 փետրուարի, էջ 2:

1902 թ. փետրվարի 21-ին 61 տարեկանում վախճանվում և 24-ին գերեզմանոցում՝ Բաֆֆու, Ծերենցի շիրիմների հարևանությամբ է ամփոփվում անվանի պատմաբան, հնագետ, ազգագրագետ, հայագիտական բազմաթիվ աշխատությունների հեղինակ Ալեքսանդր Դավթյան Երիցյանը¹:

Տապանաքարին արձանագրված է եղել.

Աղէքսանդր Դավթեան / Երիցեանց, / 1841-1902:

1903 թ. հոկտեմբերի 26-ին «Խօջիվանքի գերեզմանատան եկեղեցում կը մատուցանվի պատարագ և ապա հոգեհանգիստ կը կատարվի հանգուցեալ Ալէքսանդր Երիցեանի գերեզմանի վրա, որից յետոյ տեղի կունենայ արձանի բացումը»³:

- 1 «Մշակ», 1902, № 40, 23 փետրվարի, էջ 1; № 41, 24 փետր., էջ 1; № 42, 26 փետր., էջ 2: «Նոր-Դար», 1902, № 33, 23 փետրուարի, էջ 1: Հանգուցյալի մասին նյութեր տես «Մշակ», 1902, № 40, 23 փետր., էջ 1; № 41, 24 փետր., էջ 1-2; № 43, 27 փետր., էջ 1; № 44, 28 փետր., էջ 1-2: Кавказ. № 50. 22 февраля 1902 г. С. 1-2; № 53. 26 февраля 1902 г. С. 3.

2 **Երենեան Ա.**, Թիֆլիսի հայկական պանթեոններում, էջ 32-33 (Երենյանի մոտ մահվան տարեթիվը, ի դեպ, վրիպակով նշված է 1908):

- 3 «Մշակ», 1903, № 234, 25 հոկտեմբերի, էջ 1:



1902 թ. մարտի 3-ին գերեզմանոցում է ամփոփվում Սոֆյա Գաբրիելյան Շաղինյանցը¹։

¹ Кавказ. № 57. 2 марта 1902 г. С. 1.

1902 թ. մարտի 3-ին գերեզմանոցում է ամփոփվում Սալոմե Եգորյան Հովնաթանյանցը¹։

¹ Кавказ. № 57. 2 марта 1902 г. С. 1.

1902 թ. մարտի 5-ին գերեզմանոցում է ամփոփվում բարեգործ, հասարակական գործիչ, իշխանուհի Մագթադինե Պողոսյան (Պողոս-Բեյեան) Բեհբուդյանցը՝ Բարսեղ Հովսեփյան Բեհբուդյանցի որդու՝ իշխան Նիկողայոս Բարսեղյան Բեհբուդյանցի կինը, որը սերում էր Կ. Պոլսի հայոց Տատյան ընտանիքից (հոգեհանգիստը՝ Վանքի մայր եկեղեցում)¹։

¹ «Մշակ», 1902, № 46, 2 մարտի, էջ 1; № 47, 3 մարտի, էջ 1: «Նոր-Դար», 1902, № 38, 2 մարտի, էջ 1: Кавказ. № 57. 2 марта 1902 г. С. 1; № 59. 4 марта 1902 г. С. 1. «Արատ», 1902, Գ-Գ, էջ 209:

1902 թ. մարտի 9-ին վախճանվում և 16-ին գերեզմանոցում է ամփոփվում Օվսաննա Հարությունյան Չիգիանյանցը (հոգեհանգիստը՝ Վանքի Մայր եկեղեցում)¹։

¹ «Մշակ», 1902, № 56, 14 մարտի, էջ 1: “Тифлисский листок”, 1902, № 62, 14 марта, С. 1.

1902 թ. մարտի 12-ին վախճանվում և 14-ին գերեզմանոցում է ամփոփվում Աննա Անդրեևնա Քալանթարյանցը (հոգեհանգիստը՝ Ջգրաշենի Սբ. Աստվածածին եկեղեցում)¹։

¹ Тифлисский листок. № 62. 14 марта 1902 г. С. 1.

1902 թ. մարտի 12-ին վախճանվում և 16-ին գերեզմանոցում է ամփոփվում Մարիա Բեժանյան Տեր-Խաչատրյանցը (հոգեհանգիստը՝ Խոջիվանքի Սբ. Աստվածածին եկեղեցում)¹։

¹ Тифлисский листок. № 62. 14 марта 1902 г. С. 1.

1902 թ. մարտի 17-ին գերեզմանոցում է ամփոփվում պալատական խորհրդական Հարություն Բեկ Յուզբաշյանցը¹։

¹ «Մշակ», 1902, № 57, 15 մարտի, էջ 1; № 58, 16 մարտի, էջ 1:

1902 թ. ապրիլի 5-ին գերեզմանոցում է ամփոփվում Գրիգոր Զալիբեգյան Խարազյանցը¹։

¹ «Մշակ», 1902, № 75, 6 ապրիլի, էջ 1:

1902 թ. ապրիլի 5-ին գերեզմանոցում է ամփոփվում կոլեգիական խորհրդական Իվան Նիկիտյան Սարգսյանցը¹։

¹ «Մշակ», 1902, № 83, 21 ապրիլի, էջ 1:

1902 թ. ապրիլի 14-ին վախճանվում և գերեզմանոցում է ամփոփվում Տիգրան Ալեքսեյան Ծատուրյանցը¹։

¹ Кавказ. № 99. 14 апреля 1902 г. С. 1.

1902 թ. մայիսի 21-ին վախճանվում և 26-ին գերեզմանոցում է ամփոփվում Տիգրիսի քաղաքային վարչության նախկին անդամ Եվգրաֆ Եգորյան Խոսրովյանցը (Խոսրոն): Հոգեհանգիստը՝ Մուղնու Սբ. Գևորգ եկեղեցում¹։ Մոսկվայի համալսարանի իրավաբանության ճյուղն ավարտելուց հետո՝ սկսած 1868 թ.-ից, դատական պաշտոններ է վարել Երևանում, Նոր Բայազետում, Ծաղկաձորում (Դարաչիչակ) և Դարալագյազում: 1879-1901 թթ. Թիֆլիսի քաղաքային վարչության անդամներից էր²։

¹ «Մշակ», 1902, № 108, 22 մայիսի, էջ 1; № 109, 23 մայիսի, էջ 1; № 110, 25 մայիսի, էջ 1: «Նոր-Դար», 1902, № 79, 22 մայիսի, էջ 1: Кавказ. № 134. 22 мая 1902 г. С. 1.
² «Նոր-Դար», 1902, № 80, 23 մայիսի, էջ 2:

1902 թ. հունիսի 1-ին վախճանվում և 5-ին գերեզմանոցում է ամփոփվում Տիգրիսի Սբ. Հրեշտակապետաց եկեղեցու միաբան քահանա Անտոն Տեր-Խաչատրյանցը (հոգեհանգիստը՝ Հավլաբարի Էջմիածնեցոց Սբ. Գևորգ եկեղեցում)¹։

¹ «Մշակ», 1902, № 117, 4 յունիսի, էջ 1: «Նոր-Դար», 1902, № 87, 5 յունիսի, էջ 1:

1902 թ. հուլիսի 1-ին գերեզմանոցում է ամփոփվում Սիմեոն Աբուլյանցը¹։

¹ «Մշակ», 1902, № 140, 30 յունիսի, էջ 1:

1902 թ. սեպտեմբերի 1-ին վախճանվում և 8-ին գերեզմանոցում է ամփոփվում առաջին կարգի վաճառական Եգոր (Գևորգ) Մարտինյան Հակոբյանցը (հոգեհանգիստը՝ Մուղնու Սբ. Գևորգ եկեղեցում)¹։ Հոկտեմբերի 13-ին նույն եկեղեցում հոգեհանգիստ է կատարվում հանգուցյալի մահվան քառասուրջյակի առիթով²։ Երկար տարիներ եղել է Հավլաբարի Էջմիածնեցոց Մարիամյան օրհորդաց դպրոցի խնամակալ, Արքունական բանկի Թիֆլիսի բաժանմունքի մուրհակներ գեղյող կոմիտեի անդամ, 1893 թ.-ից մինչև կյանքի վերջը վարել է Քաղաքային խորհրդի իրավասուի պաշտոնը: Արժանացել է 2 ոսկե մեծ մեդալների և այլ շքանշանների³։

¹ «Մշակ», 1902, № 195, 5 սեպտեմբերի, էջ 1; № 196, 6 սեպտ., էջ 1; № 197, 7 սեպտ., էջ 1: «Նոր-Դար», 1902, № 120, 5 սեպտ., էջ 1: Кавказ. № 237. 7 сентября 1902 г. С. 1.
² «Մշակ», 1902, № 226, 12 հոկտեմբերի, էջ 1; № 227, 13 հոկտ., էջ 1:
³ «Նոր-Դար», 1902, № 121, 6 սեպտեմբերի, էջ 1; № 122, 7 սեպտ., էջ 2; № 157, 29 հոկտեմբերի, էջ 2:

1902 թ. սեպտեմբերի 28-ին գերեզմանոցում է ամփոփվում Զարվարդ Պետրոսյան Շուկովիկյանցը¹։

¹ «Մշակ», 1902, № 214, 23 սեպտեմբերի, էջ 1:

1902 թ. հոկտեմբերի 3-ին վախճանվում և 6-ին գերեզմանոցում է ամփոփվում ծնունդով Գողթան գավառի Հանդամեջ գյուղից Գևորգ Սարգսյան Թումանյանցը¹։

¹ «Մշակ», 1902, № 220, 5 հոկտեմբերի, էջ 4; № 221, 6 հոկտ., էջ 4:

1902 թ. հոկտեմբերի 20-ին Բաքվում վախճանվում և 26-ին գերեզմանոցում է ամփոփվում Թովմաս Սահակյան Թովմասյանցը¹:

1 «Մշակ», 1902, № 235, 24 հոկտեմբերի, էջ 1:

1902 թ. հոկտեմբերի 29-ին գերեզմանոցում է ամփոփվում Գևորգ Հովսեփյան Տեր-Աբրահամյանցը¹: Խոջիվանքի Սր. Աստվածածին եկեղեցում կատարվում է հոգեհանգիստ հանգուցյալի մահվան քառասնորյակի առիթով²:

1 «Մշակ», 1902, № 238, 27 հոկտեմբերի, էջ 1; № 239, 29 հոկտ., էջ 1:

2 «Մշակ», 1902, № 282, 21 դեկտեմբերի, էջ 1:

1902 թ. հոկտեմբերի 28-ին վախճանվում և նոյեմբերի 3-ին գերեզմանոցում է ամփոփվում Սարգիս Գրիգորյան Ղափալյանցը¹:

1 «Մշակ», 1902, № 241, 31 հոկտեմբերի, էջ 1; № 243, 2 նոյեմբերի, էջ 1:

1902 թ. նոյեմբերի 20-ին վախճանվում և 24-ին գերեզմանոցում է ամփոփվում իշխանուհի Մարիամ Հովհաննիսյան Բեկթաբեկյանցը (ծն.՝ Չիթախյանց): Հոգեհանգիստը՝ Վանքի Մայր եկեղեցում¹: Հանգուցյալը հոր՝ Ի. Ա. Չիթախյանցի նման ուժերն առանձնապես ներդրել է կրթական ոլորտի զարգացման գործի մեջ:

1 «Մշակ», 1902, № 258, 21 նոյեմբերի, էջ 1; № 259, 22 նոյ., էջ 1; № 260, 24 նոյ., էջ 1: «Նոր-Ղար», 1902, № 174, 21 նոյ., էջ 1: Кавказ. № 311. 24 ноября 1902 г. С. 1. ცნობის ფურცელი, 1902, № 1994:

1902 թ. նոյեմբերի 30-ին 22 տարեկանում վախճանվում և դեկտեմբերի 5-ին գերեզմանոցում է ամփոփվում Ստեփանոս Պետրոսյան Մարգարյանցը¹:

1 «Մշակ», 1902, № 268, 4 դեկտեմբերի, էջ 1:

1903

1903 թ. հունվարի 6-ին վախճանվում և 9-ին գերեզմանոցում է ամփոփվում Կարապետ Բարսեղյան Բարսամյանցը¹:

1 «Մշակ», 1903, № 3, 9 յունվարի, էջ 1:

1903 թ. հունվարի 12-ին գերեզմանոցում է ամփոփվում Հովհաննես Մինասյան Մալախյանցը¹:

1 Тифлисский листок. № 8. 11 января 1903 г.

1903 թ. հունվարի 14-ին վախճանվում և 19-ին գերեզմանոցում է ամփոփվում Մարտիրոս Մարգրսյան Նունուփարյանցը¹:

1 «Մշակ», 1903, № 9, 16 յունվարի, էջ 1:

1903 թ. հունվարի 23-ին գերեզմանոցում է ամփոփվում Կոստանդ Մարգարյան Խուրթարյանցը¹:

1 «Մշակ», 1903, № 14, 22 յունվարի, էջ 1:

1903 թ. հունվարի 29-ին գերեզմանոցում է ամփոփվում Հովհաննես Թաղևոսյան Մուսինյանցը¹:

1 «Մշակ», 1903, № 19, 28 յունվարի, էջ 1:

1903 թ. փետրվարի 3-ին վախճանվում և 6-ին գերեզմանոցում է ամփոփվում Գրիգոր բեկ Եսայան Գանիթրեկյանցը¹:

1 «Մշակ», 1903, № 26, 5 փետրվարի, էջ 1: Тифлисский листок. № 29. 5 февраля 1903 г.

1903 թ. փետրվարի 4-ին գերեզմանոցում է ամփոփվում Գրիգոր Ջորյանցը¹:

1 «Մշակ», 1903, № 25, 4 փետրվարի, էջ 1:

1903 թ. փետրվարի 10-ին վախճանվում և գերեզմանոցում է ամփոփվում Տիգրիսի դատարանի քարտուղար Ալեքսանդր Գրիգորյան Արեշյանցը (հոգեհանգիստը՝ Մուղնու Սր. Գևորգ եկեղեցում)¹:

1 Тифлисский листок. № 50. 1 марта 1903 г.

1903 թ. մարտի 16-ին գերեզմանոցում է ամփոփվում Եզր Գրիգորյան Խոջափարուխյանցը (հոգեհանգիստը՝ Նորաշենի Սր. Աստվածածին եկեղեցում)¹:

1 Тифлисский листок. № 62. 15 марта 1903 г.

1903 թ. մարտի 16-ին գերեզմանոցում է ամփոփվում ազնվական Պետրոս Գևորգյան Մանդենյանցը (հոգեհանգիստը՝ Մուղնու Սր. Գևորգ եկեղեցում)¹:

1 Тифлисский листок. № 62. 15 марта 1903 г.

1903 թ. ապրիլի 1-ին վախճանվում և 3-ին գերեզմանոցում է ամփոփվում Նատալյա Եսայան Մադաթյանցը (հոգեհանգիստը՝ Մուղնու Սր. Գևորգ եկեղեցում)¹: Ի դեպ, 1904 թ. ապրիլի 3-ին նշվում է մահվան առաջին տարեկիցը²:

1 «Մշակ», 1903, № 71, 2 ապրիլի, էջ 1: Тифлисский листок. № 76. 2 апреля 1903 г.; Новое обозрение. № 6355. 2 апреля 1903 г.

2 «Մշակ», 1904, № 65, 3 ապրիլի, էջ 1:

1903 թ. ապրիլի 17-ին գերեզմանոցում է ամփոփվում Թագուհի Առուշանյան Հարությունյանցը¹:

1 «Մշակ», 1903, № 79, 16 ապրիլի, էջ 1:

1903 թ. մայիսի 19-ին վախճանվում և 25-ին գերեզմանոցում է ամփոփվում Նիկողայոս Գերասիմյան Փուղինյանցը (հոգեհանգիստը՝ Մուղնու Սր. Գևորգ եկեղեցում)¹:

1 Тифлисский листок. № 118. 23 мая 1903 г. С. 1.

1903 թ. գերեզմանոցում է ամփոփվում Հովհաննես Մարգարյան Հարությունյանցը¹:

1 Тифлисский листок. № 125. 31 мая 1903 г.

1903 թ. հունիսի 5-ին գերեզմանոցում է ամփոփվում Հայկական սեմինարիայի աշակերտ Լևոն Իսրայելյան Սիրգոյանցը¹:

1 Тифлисский листок. № 129. 5 июня 1903 г. С. 1. «Մշակ», 1903, № 118, 4 յունիսի, էջ 1:

1903 թ. հունիսի 26-ին վախճանվում և 29-ին գերեզմանոցում է ամփոփվում Արշակ Հովսեփյան Մամուլյանը¹:

1 «Նոր-Դար», 1903, № 112, 27 յունիսի, էջ 1; № 113, 28 յուն., էջ 1: «Մշակ», 1903, № 138, 28 յունիսի, էջ 1:

1903 թ. հուլիսի 13-ին գերեզմանոցում է ամփոփվում Օվսաննա Հովհաննիսյանը (հոգեհանգիստը՝ Էջմիածնեցոց Սբ. Գևորգ եկեղեցում)¹:

1 «Նոր-Դար», 1903, № 121, 10 յուլիսի, էջ 1; № 122, 11 յուլիսի, էջ 1; № 123, 12 յուլիսի, էջ 1:

1903 թ. հուլիսի 29-ին գերեզմանոցում է ամփոփվում Մողոմոն Եգորյան Սահաթսագյանը¹:

1 Тифлиссский листок. № 149. 27 июля 1903 г.

1903 թ. հուլիսի 29-ին Բաթումում եղերական մահով վախճանվում և օգոստոսի 3-ին գերեզմանոցում է ամփոփվում «Թատրոն» գրական-գեղարվեստական ժողովածուի հրատարակիչ, Բաթումում «Եղբայր Խաչատրյաններ» առևտրական տան հաշվապահ (նախկինում նույն պաշտոնը վարել է Տփղիսի «Եղբայր Ծովյանյաններ» դրամատան գրասենյակում) Ալեքսանդր Թարխանյանը¹: Սեպտեմբերի 15-ին մահվան քառասունօրյակի կապակցությամբ հոգեհանգիստը կատարվում է Վանքի Մայր եկեղեցում²:

1904 թ. օգոստոսի 1-ին նշվում է մահվան առաջին տարելիցը³:

1 «Նոր-Դար», 1903, № 134, 1 օգոստոսի, էջ 1; № 135, 2 օգոստ., էջ 1: Սպանության մասին տես Кавказ. № 204. 2 августа 1903 г. С. 3.

2 «Նոր-Դար», 1903, № 162, 12 սեպտեմբերի, էջ 1; № 163, 13 սեպտ., էջ 1:

3 «Մշակ», 1904, № 162, 31 յուլիսի, էջ 1; № 163, 1 օգոստոսի, էջ 1:

1903 թ. օգոստոսի 31-ին գերեզմանոցում է ամփոփվում Մարթա Մուրադյանը¹:

1 «Մշակ», 1903, № 139, 29 յունիսի, էջ 1:

1903 թ. օգոստոսի 16-ին Բեռլինում վախճանվում և 24-ին գերեզմանոցում է ամփոփվում Եփրեմ Աղաֆոնյան Բեգիջանյանը (հոգեհանգիստը՝ Թանդոյան Սբ. Աստվածածին եկեղեցում)¹:

1 Тифлиссский листок. № 191. 23 августа 1903 г.

1903 թ. սեպտեմբերի 9-ին վախճանվում և գերեզմանոցում է ամփոփվում փոխգնդապետ Բարսեղ Նիկողոսյան Կորգանյանը (Կորգանով): Հոգեհանգիստը՝ Մուղնու Սբ. Գևորգ եկեղեցում¹:

1 Тифлиссский листок. № 206. 10 сентября 1903 г.

1903 թ. սեպտեմբերի 16-ին գերեզմանոցում է ամփոփվում Վասիլ Առաքելյան Մելիք-Այվազյանը¹:

1 «Մշակ», 1903, № 201, 14 սեպտեմբերի, էջ 1:

1903 թ. սեպտեմբերի 27-ին վախճանվում և 30-ին գերեզմանոցում է ամփոփվում Սրբուհի Կարապետյանը¹:

1 Кавказ. № 257. 2 сентября 1903 г. С. 1.

1903 թ. հոկտեմբերի 9-ին գերեզմանոցում է ամփոփվում Աննա Ստեփանյան Ավետիսյանը (հոգեհանգիստը՝ Սբ. Սարգիս եկեղեցում)¹:

1 “Тифлиссский листок”, 1903, № 228, 3 октября. Кавказ № 266. 8 октября 1903 г. С. 1. «Մշակ», 1903, № 220, 8 հոկտ., էջ 1:

1903 թ. հոկտեմբերի 11-ին վախճանվում և 14-ին գերեզմանոցում է ամփոփվում ավագ քահանա Եգնիկ Երզնկյանցի որդին՝ Օղեսայի բժշկական համալսարանի ուսանող Հովսեփ Երզնկյանը (հոգեհանգիստը՝ Վանքի եկեղեցում)¹:

1 «Նոր-Դար», 1903, № 183, 14 հոկտեմբերի, էջ 1: «Մշակ», 1903, № 225, 14 հոկտ., էջ 1: Тифлиссский листок. № 233. 13 октября 1903 г.

1903 թ. հոկտեմբերի 12-ին գերեզմանոցում է ամփոփվում Հարություն Հովհաննիսյան Ծամխարյանը¹:

1 «Մշակ», 1903, № 225, 14 հոկտ., էջ 1:

1903 թ. նոյեմբերի 2-ին գերեզմանոցում է ամփոփվում Բաքվում «Մշակ»-ի թղթակից Ներսես Դավթյանը (հոգեհանգիստը՝ Վանքի մայր եկեղեցում)¹:

1 Լեռ, Էլի մի գերեզման, «Մշակ», 1903, № 242, 4 նոյեմբերի, էջ 1-2: «Մշակ», 1903, № 239, 31 հոկտեմբերի, էջ 1:

1903 թ. նոյեմբերի 2-ին գերեզմանոցում է ամփոփվում Նատալյա Դավթյան Չարչարյանը¹:

1 «Մշակ», 1903, № 240, 1 նոյեմբերի, էջ 1:

1903 թ. նոյեմբերի 10-ին վախճանվում և 12-ին գերեզմանոցում է ամփոփվում Թիֆլիսի Նորաշենի եկեղեցու միաբան Սահակ ավագ քահանայի այրին՝ Մարիամ Տեր-Հարությունյանը¹:

1 «Նոր-Դար», 1903, № 202, 11 նոյեմբերի, էջ 1; № 203, 12 նոյ., էջ 1:

1903 թ. նոյեմբերի 15-ին վախճանվում և 19-ին գերեզմանոցում է ամփոփվում Մարիամ Ստեփանյան Ծովյանյանը¹:

1 «Նոր-Դար», 1903, № 207, 18 նոյեմբերի, էջ 1:

1903 թ. նոյեմբերի 27-ին գերեզմանոցում է ամփոփվում Մարթա Խոսրովյան Փարեմուզյանը¹:

1 «Նոր-Դար», 1903, № 212, 25 նոյ., էջ 1; № 213, 26 նոյ., էջ 1:

1903 թ. նոյեմբերի 30-ին գերեզմանոցում է ամփոփվում Խարկովի համալսարանի իրավաբանական բաժնի ուսանող Արշակ Գրիգորյան Աբուլյանը (հոգեհանգիստը՝ Ջգրաշենի Ավետյաց Սբ. Աստվածածին եկեղեցում)¹: 1904 թ. նոյեմբերի 28-ին նշվում է հանգուցյալի մահվան առաջին տարելիցը²:

1 «Նոր-Դար», 1903, № 216, 29 նոյեմբերի, էջ 1:

2 «Մշակ», 1904, № 261, 27 նոյեմբերի, էջ 1:

1903 թ. վախճանվում և գերեզմանոցում է ամփոփվում Եղիսաբեթ Սունդուկյանը, որի հիշատակին 1904 թ. հոկտեմբերի 3-ին կանգնեցվում է մահարձան¹:

1 «Մշակ», 1904, № 214, 2 հոկտեմբերի, էջ 1:

1903 թ. գերեզմանոցում է ամփոփվում Ներսիսյան դպրոցի վերջին դասարանի ուսանող ջալալօղլեցի (այժմ՝ Ստեփանավան) Արմեն Հարությունյանը, որը զոհվում է Հարանց վանքի բակում մի հարբած ռուս զինվորի սրի հարվածից¹:

¹ Մալխաս, Ջարթօնք, հ. Ա, Պոստոն, 1933, էջ 202-203; հ. Բ, Պոստոն, 1933, էջ 17, 31, 34-35:

1904

1904 թ. հունվարի 24-ին գերեզմանոցում է ամփոփվում Կուսանաց վանքի մայրապետ, ավագ սարկավագուհի Փեփրոնյա Խուրյանը¹:

¹ «Մշակ», 1904, № 5, 20 յունվարի, էջ 1:

1904 թ. հունվարի 27-ին վախճանվում և 31-ին գերեզմանոցում է ամփոփվում Բաքվի գիմնազիայի 6-րդ դասարանի աշակերտ Հովհաննես Մասյանը¹:

¹ «Մշակ», 1904, № 14, 30 յունվարի, էջ 1:

1904 թ. հունվարի 31-ին հանկարծամահ է լինում և փետրվարի 1-ին գերեզմանոցում ամփոփվում Ներսիսյան դպրոցի նախկին ուսուցիչ Գրիգոր Վարձեյանը¹:

¹ «Մշակ», 1904, № 15, 31 յունվարի, էջ 2:

1904 թ. փետրվարի 1-ին գերեզմանոցում է ամփոփվում գեներալ-մայոր Հովսեփ Ռորդանյանցի (Կորգանյանցի) այրին Աննա Արեսալոնյանը¹:

¹ Кавказ. № 28. 30 января 1904 г. С. 1.

1904 թ. փետրվարի 2-ին գերեզմանոցում է ամփոփվում Աստվածատուր (Բոզդան) Ավետիքյան Սվեչնիկյանը (Սվեչնիկով, Սվեչնիկով): Հոգեհանգիստը՝ Ջգրաշենի Մր. Ավետյաց եկեղեցում¹: Հանգուցյալը հավանաբար որդին էր Տփղիսի 1853-1856 թթ. քաղաքագլուխ Ավետիք Աստվածատրյան Սվեչնիկովի²:

¹ Тифлисский листок. № 26. 30 января 1904 г.

² Կարապետյան Ս., Թիֆլիսի քաղաքագլուխները, էջ 48-49:

1904 թ. փետրվարի 3-ին վախճանվում և 7-ին գերեզմանոցում է ամփոփվում Թիֆլիսի արական 3-րդ դասական գիմնազիայի 6-րդ դասարանի աշակերտ Սաշա Մելիք-Փարսադանյանը¹: Մարտի 14-ին Վանքի Մայր եկեղեցում նշվում է մահվան քառասնօրյակը²:

¹ «Մշակ», 1904, № 19, 5 փետրվարի, էջ 1; № 20, 6 փետր., էջ 1; № 21, 7 փետր., էջ 1:

² «Մշակ», 1904, № 51, 13 մարտի, էջ 1:

1904 թ. փետրվարի 7-ին գերեզմանոցում է ամփոփվում Լևոն Հարությունյան Մանուկյանը¹:

¹ «Մշակ», 1904, № 20, 6 փետրվարի, էջ 1:

1904 թ. փետրվարի 8-ին վախճանվում և 12-ին գերեզմանոցում է ամփոփվում Մարգարիտ Դուրդարյանը¹:

¹ «Մշակ», 1904, № 24, 11 փետրվարի, էջ 1:

1904 թ. փետրվարի 8-ին վախճանվում և 14-ին գերեզմանոցում է ամփոփվում Միքայել Հովհաննիսյան Մելքունյանը¹:

¹ «Մշակ», 1904, № 26, 13 փետրվարի, էջ 1:

1904 թ. փետրվարի 9-ին վախճանվում և 14-ին գերեզմանոցում է ամփոփվում գեներալ-մայոր, իշխան 65-ամյա Նիկողայոս Բարսեղյան Բեհրուդյանցը (հոգեհանգիստը՝ Վանքի եկեղեցում)¹: Վերջին հրաժեշտին ներկա էին Թիֆլիսի նահանգապետ Ի. Ն. Սվեչինը, գեներալ-ադյուտանտ Ջ. Գ. Ծավճավաճեն, գեներալ-լեյտենանտ Ի. Ն. Ռեյտերը, բարձրաստիճան զինվորականներ և պաշտոնատար այլ անձինք². «Թաղումը կատարուեր է հանգուցելոյն զինուորական աստիճանին համապատասխան շքով մը...»³:

¹ Кавказ. № 38. 11 февраля 1904 г. С. 1; № 40. 13 февраля 1904 г. С. 1.

² Кавказ. № 41. 14 февраля 1904 г. С. 2. ՎԱԳ, ֆ. 12, ց. 8, գ. 1828, ք. 3:

³ «Կոչնակ», 1904, № 173, 2 ապրիլի, էջ 1379:

1904 թ. փետրվարի 9-ին վախճանվում և 14-ին գերեզմանոցում է ամփոփվում Սանամ Գասպարյան Գյուլմսեթյանը¹:

¹ «Մշակ», 1904, № 25, 12 փետրվարի, էջ 1:

1904 թ. փետրվարի 14-ին գերեզմանոցում է ամփոփվում Երվանդ Ստեփանյան Ջալալյանը¹:

¹ «Մշակ», 1904, № 25, 12 փետրվարի, էջ 1; № 26, 13 փետրվ., էջ 1:

1904 թ. փետրվարի 12-ին վախճանվում և 15-ին գերեզմանոցում է ամփոփվում Եղիսաբեթ Ալեքսանդրյան Դուլուխանյանը¹:

¹ «Մշակ», 1904, № 27, 14 փետրվարի, էջ 1; № 28, 15 փետրվ., էջ 1: Кавказ. № 42. 15 февраля 1904 г. С. 1.

1904 թ. փետրվարի 17-ին վախճանվում և 19-ին գերեզմանոցում է ամփոփվում Ալեքսանդր Վարդանյան Չորյանը¹:

¹ «Մշակ», 1904, № 31, 19 փետրվարի, էջ 1:

1904 թ. մարտի 21-ին գերեզմանոցում է ամփոփվում Ստեփան Հակոբյանը¹:

¹ «Մշակ», 1904, № 57, 20 մարտի, էջ 1:

1904 թ. մարտի 21-ին վախճանվում և 25-ին գերեզմանոցում է ամփոփվում Եգոր Պետրոսյան Մելիքյանը¹:

¹ «Մշակ», 1904, № 59, 23 մարտի, էջ 1; № 60, 24 մարտի, էջ 1:

1904 թ. մարտի 23-ին վախճանվում և 25-ին գերեզմանոցում է ամփոփվում Մելիք Սաղաթեյան Սարյանը¹:

¹ «Մշակ», 1904, № 60, 24 մարտի, էջ 1:

1904 թ. ապրիլի 1-ին վախճանվում և ապրիլի 4-ին գերեզմանոցում է ամփոփվում Պավել Ավագյան Դավիդովը¹:

¹ «Մշակ», 1904, № 65, 3 ապրիլի, էջ 1; № 66, 4 ապրիլի, էջ 1:

1904 թ. ապրիլի 1-ին վաղաժամ վախճանվում և 4-ին գերեզմանոցում է ամփոփվում Աստղիկ Շահնազարյան Հովհաննիսյանցը¹:

¹ «Մշակ», 1904, № 65, 3 ապրիլի, էջ 1:

1904 թ. ապրիլի 6-ին գերեզմանոցում է ամփոփվում Մեղրակ (Արշակ) Սարգսյան Իգիթյանցը¹:

¹ «Մշակ», 1904, № 66, 4 ապրիլի, էջ 1:

1904 թ. ապրիլի 2-ին վախճանվում և 7-ին գերեզմանոցում է ամփոփվում Առաքել բեկ Գրիգորյան Արքեպիսկոպոսյանցը (հոգեհանգիստը՝ Մուղու Սբ. Գևորգ եկեղեցում)¹:

¹ «Մշակ», 1904, № 66, 4 ապրիլի, էջ 1; № 67, 6 ապրիլի, էջ 1: Тифлисский листок. № 80. 6 апреля 1904 г.

1904 թ. ապրիլի 5-ին կաթողիկոսը հեռագրով տալիս է իր համաձայնությունը իշխան Բարսեղ Բեհրուդյանցի դատերը՝ Սոֆյա Գուրիել Բեհրուդյանցին Խոջիվանքի տոհմական գերեզմանոցում ամփոփելու մասին¹:

¹ ՎԱԳ, ֆ. 12, g. 8, q. 1828, p. 14, 19:

1904 թ. վաղաժամ վախճանվում և ապրիլի 11-ին գերեզմանոցում է ամփոփվում Սիմոն Հարությունյան Օտարյանցը¹:

¹ «Մշակ», 1904, № 71, 10 ապրիլի, էջ 1:

1904 թ. ապրիլի 20-ին գերեզմանոցում է ամփոփվում Արգար Հարությունյան Հովհաննիսյանցը¹:

¹ «Մշակ», 1904, № 78, 18 ապրիլի, էջ 1:

1904 թ. ապրիլի 22-ին վախճանվում և 25-ին գերեզմանոցում է ամփոփվում «Իսայ Եզրովիչ Փիթոն և ընկ.» առևտրական տան նախագահ, Հայոց դրամատիկական ընկերության հիմնադիր և վարչության անդամ, «Արտիստիկ» ընկերության և երաժշտական ուսումնարանի (այժմ՝ Վ. Սարաջիշվիլու ան-



Եսայի Փիթոյանի կառուցած «Արտիստիկ» ընկերության շենքը, այժմ՝ Ռուսթավելու անվան քաղաքի

վան կոնսերվատորիա) փառահեղ շենքերի մեկենաս Եսայի (Իսայ) Եզրովիչ Փիթոյանը¹: Նույն թվականի մայիսի 31-ին նշվում է հանգուցյալի մահվան քառասուրյակը²:

¹ «Մշակ», 1904, № 82, 23 ապրիլի, էջ 1; № 83, 24 ապր., էջ 1; № 84, 25 ապր., էջ 1: Кавказ. № 106. 23 апреля 1904 г. С. 1; № 107. 24 апреля 1904 г. С. 1; № 108. 25 апреля 1904 г. С. 1.

² «Մշակ», 1904, № 111, 31 մայիսի, էջ 1:

1904 թ. ապրիլի 23-ին վաղաժամ վախճանվում և 25-ին գերեզմանոցում է ամփոփվում Համասփյուռ Խաչատուրյան Բասենցյանցը¹:

¹ «Մշակ», 1904, № 83, 24 ապրիլի, էջ 1; № 84, 25 ապրիլի, էջ 1:

1904 թ. ապրիլի 30-ին վաղաժամ վախճանվում և մայիսի 2-ին գերեզմանոցում է ամփոփվում Գրիգոր Կարապետյան Բարսամյանցը¹:

¹ «Մշակ», 1904, № 89, 1 մայիսի, էջ 1; № 90, 2 մայիսի, էջ 1:

1904 թ. մայիսի 16-ին վախճանվում և 23-ին գերեզմանոցում է ամփոփվում Դարչո Թանդիլյան Մանուչարյանցը¹:

¹ «Մշակ», 1904, № 102, 19 մայիսի, էջ 1; № 105, 22 մայ., էջ 1:

1904 թ. մայիսի 19-ին վախճանվում և 23-ին գերեզմանոցում է ամփոփվում շուրվերցի Գրիգոր Մելիք-Սարգսյանցը¹:

¹ «Մշակ», 1904, № 105, 22 մայիսի, էջ 1:

1904 թ. մայիսի 24-ին վախճանվում և 28-ին գերեզմանոցում է ամփոփվում Քերովբե Պատկանյանցի եղբայրը՝ երդվյալ հավատարմատար Սերովբե Պետրոսյան Պատկանյանցը (հոգեհանգիստը՝ Թանդոյան Սբ. Աստվածածին եկեղեցում)¹:

¹ «Մշակ», 1904, № 110, 29 մայիսի, էջ 1-2: Тифлисский листок. № 122. 25 мая 1904 г.

1904 թ. հունիսի 1-ին վախճանվում և 5-ին գերեզմանոցում է ամփոփվում Աննա Գրիգորյան Բալասանյանցը¹:

¹ «Մշակ», 1904, № 115, 4 յունիսի, էջ 1; № 116, 5 յունիսի, էջ 1:

1904 թ. հունիսի 7-ին գերեզմանոցում է ամփոփվում Կովկասյան հրաձգային օդային հրետանային շարժապահեստի հրամանատար, փոխգնդապետ Արել Ստեփանյան Արեսալոյանցը¹:

¹ Тифлисский листок. № 133. 6 июня 1904 г. Кавказ. № 148. 6 июня 1904 г. С. 1.

1904 թ. հունիսի 10-ին վախճանվում և 13-ին գերեզմանոցում է ամփոփվում Եվա Գևորգյան Տեր-Հարությունյանցը¹:

¹ «Մշակ», 1904, № 122, 12 յունիսի, էջ 1:

1904 թ. հունիսի 10-ին վախճանվում և 13-ին գերեզմանոցում է ամփոփվում Նիկողայոս Աբրահամյան Աստվածատրյանցը¹:

¹ «Մշակ», 1904, № 122, 12 յունիսի, էջ 1:

1904 թ. հունիսի 14-ին վախճանվում և 17-ին գերեզմանոցում է ամփոփվում Գևորգ Հովհաննիսյան Խանգանեղյանը¹:

¹ «Մշակ», 1904, № 125, 16 յուլիսի, էջ 1:

1904 թ. հունիսի 17-ին վախճանվում և 20-ին գերեզմանոցում է ամփոփվում Գրիգոր Ավետյան Դեմուրյանը (հոգեհանգիստը՝ Ջգրաշենի Ավետյաց Սբ. Աստվածածին եկեղեցում)¹:

¹ Тифлиссский листок. № 144. 19 июня 1904 г.

1904 թ. հուլիսի 4-ին գերեզմանոցում է ամփոփվում Աղբուլաղ-Թիֆլիս ճանապարհին վախճանված Երվանդ Աղամիրյանը¹:

¹ «Մշակ», 1904, № 139, 3 յուլիսի, էջ 4:

1904 թ. հուլիսի 4-ին գերեզմանոցում է ամփոփվում Գրիգոր Տեր-Մատթեոսյանը¹:

¹ «Մշակ», 1904, № 140, 4 յուլիսի, էջ 1:

1904 թ. հուլիսի 18-ին գերեզմանոցում է ամփոփվում մոզրկցի ուսուցիչ 69-ամյա Անդրեաս Մակարյան Ջաշիայանը¹:

¹ «Մշակ», 1904, № 149, 16 յուլիսի, էջ 1; № 150, 17 յուլ., էջ 1; № 151, 18 յուլ., էջ 1: Հայտնի է, որ հանգուցյալը նախնական կրթությունը ստացել է Մոզրկում, հետո ավարտել Ստավրոպոլի գիմնազիան: 1855 թ. դասավանդում էր Տփղիսի Ներսիսյան դպրոցում, ապա հաջորդաբար Ֆավրի և Դեմիսենկոյի պանսիոններում, զինվորական պրոգիմնազիայում: 1877-1883 թթ. եղել է ուսուցիչ և տեսուչ Մարիամյան օրիորդաց դպրոցում: Նրա հիշատակին ժառանգները բարեգործական նպատակներով նվիրում են 5150 ռուբլի («Մշակ», № 151, 18 յուլ., էջ 2):

1904 թ. հուլիսի 25-ին գերեզմանոցում է ամփոփվում Անտոն Չոհրաբյանը¹:

¹ «Մշակ», 1904, № 155, 23 յուլիսի, էջ 1; № 156, 24 յուլիսի, էջ 1:

1904 թ. օգոստոսի 23-ին Աբասթումանում վախճանվում և 28-ին գերեզմանոցում է ամփոփվում Հարություն (Արտեմ) Ալեքսանդրյան Խախտոյանը¹:

¹ «Մշակ», 1904, № 182, 25 օգոստոսի, էջ 1; № 184, 27 օգոստ., էջ 1: Новое обозрение. № 6782. 26 августа 1904 г.

1904 թ. օգոստոսի 28-ին գերեզմանոցում է ամփոփվում Նինա Գարրիելյան Մեղվինյանը¹:

¹ «Մշակ», 1904, № 184, 27 օգոստ., էջ 1; № 185, 28 օգոստ., էջ 1:

1904 թ. հոկտեմբերի 18-ին վախճանվում և 24-ին գերեզմանոցում է ամփոփվում երդվյալ հավատարմատար Հակոբ Գրիգորյան Տեր-Հովհաննիսյանը¹:

¹ «Մշակ», 1904, № 230, 21 հոկտ., էջ 1; № 231, 23 հոկտ., էջ 1:

1904 թ. հոկտեմբերի 27-ին վախճանվում և 30-ին գերեզմանոցում է ամփոփվում Շուշանիկ Մարգարյանը¹:

¹ «Մշակ», 1904, № 236, 29 հոկտեմբերի, էջ 1:

1904 թ. նոյեմբերի 6-ին վախճանվում և 11-ին գերեզմանոցում է ամփոփվում Օգուրգեթի քաղաքային ուսումնարանի տեսուչ, արքունի խորհրդական Հովսեփ Ստեփանյան Ստեփանյանը (հոգեհանգիստը՝ Թանդոյան Սբ. Աստվածածին եկեղեցում)¹:

¹ Кавказ. № 300. 10 ноября 1904 г. С. 1.

1904 թ. նոյեմբերի 7-ին գերեզմանոցում է ամփոփվում Մարիա Սավելևնա Խանջալածեն (օրիորդական ազգանունը՝ Մանվելյան)¹: Նույն թվականի դեկտեմբերի 12-ին նշվում է հանգուցյալի մահվան քառասունօրյակը²:

¹ «Մշակ», 1904, № 243, 6 նոյեմբերի, էջ 1; № 244, 7 նոյ., էջ 1:

² «Մշակ», 1904, № 273, 11 դեկտ., էջ 1; № 274, 12 դեկտ., էջ 1:

1904 թ. նոյեմբերի 14-ին գերեզմանոցում է ամփոփվում Վահան Գարրիելյան Հարությունյանը¹:

¹ «Մշակ», 1904, № 249, 13 նոյեմբերի, էջ 1:

1904 թ. նոյեմբերի 19-ին վախճանվում և 21-ին գերեզմանոցում է ամփոփվում Հարություն վարժապետի կինը՝ Եղիսաբեթ Լազարյան Շահնազարյանը¹:

¹ «Մշակ», 1904, № 255, 20 նոյեմբերի, էջ 1:

1904 թ. դեկտեմբերի 5-ին գերեզմանոցում է ամփոփվում Ստեփան Նիկիտյան Տեր-Սլրոշյանը (Տերյան)¹:

¹ «Մշակ», 1904, № 267, 4 դեկտ., էջ 1; № 268, 5 դեկտ., էջ 1:

1904 թ. դեկտեմբերի 17-ին վախճանվում և 19-ին գերեզմանոցում է ամփոփվում Գևորգ Գասպարյան Մնացականյանը¹:

¹ «Մշակ», 1904, № 279, 18 դեկտեմբերի, էջ 1; № 280, 19 դեկտ., էջ 1:

1904 թ. դեկտեմբերի 20-ին վախճանվում և 23-ին գերեզմանոցում է ամփոփվում 76-ամյա Եղիսաբեթ Հովհաննիսյան Թեմուրազյանը¹:

¹ «Մշակ», 1904, № 282, 22 դեկտեմբերի, էջ 1:

1904 թ. դեկտեմբերի 23-ին վախճանվում և 27-ին գերեզմանոցում է ամփոփվում պաշտոնաթող գնդապետ Գերասիմ Ավետյան Արարատյանը¹:

¹ «Մշակ», 1904, № 285, 25 դեկտեմբերի, էջ 1:

1904 թ. դեկտեմբերի 28-ին վախճանվում և 29-ին գերեզմանոցում է ամփոփվում Իսկուհի Քրիստափորյանը¹:

¹ «Մշակ», 1904, № 288, 29 դեկտեմբերի, էջ 1:

1904 թ. Հովսեփ Խունունցը թույլտվություն է ստանում գերեզմանոցում կառուցելու 14,5 արշին բարձրությամբ և 7,5-ական լայնությամբ և երկարությամբ մի դամբարան¹:

¹ ՀԱԳ, ֆ. 53, ց. 1, գ. 3429, ք. 2, 5:

1905

1905 թ. հունվարի 1-ին գերեզմանոցում է ամփոփվում Արիստակես Տեր-Մովսիսյան Տեր-Խաչատրյանը¹:

¹ «Մշակ», 1905, № 1, 1 յունվարի, էջ 1:

1905 թ. հունվարի 26-ին վախճանվում և 30-ին գերեզմանոցում է ամփոփվում ճարտարագետ Հովսեփ Սողոմոնյան Սիրիմանյանը¹:

¹ Кавказ. № 27. 29 января 1905 г. С. 1.

1905 թ. հունվարի 26-ին վախճանվում և 30-ին գերեզմանոցում է ամփոփվում Պետրոս Հովհաննիսյան Ալիբեկյանցը¹:

¹ Кавказ. № 27. 29 января 1905 г. С. 1.

1905 թ. հունվարի 29-ին վախճանվում և գերեզմանոցում է ամփոփվում Նազար Ալեքսեյյան Չիքախյանցը¹:

¹ Кавказ. № 30. 1 февраля 1905 г. С. 1.

1905 թ. հունվարի 31-ին վախճանվում և փետրվարի 2-ին գերեզմանոցում է ամփոփվում Թիֆլիսի III զիննագիսայի 6-րդ դասարանի աշակերտ Մատթեոս Ստեփանյան Ոսկանյանցը¹:

¹ «Մշակ», 1905, № 12, 2 փետրվարի, էջ 1: Кавказ. № 30. 1 февраля 1905 г. С. 1.

1905 թ. փետրվարի 8-ին գերեզմանոցում է ամփոփվում Սարգիս Պետրոսյան Սարյանցը (հոգեհանգիստը՝ Մուղնու Սբ. Գևորգ եկեղեցում)¹:

¹ «Արշարյս», 1905, № 31, 6 հոկտեմբերի, էջ 1:

1905 թ. փետրվարի 18-ին գերեզմանոցում է ամփոփվում Միքայել Թովմայան Փրիդոնյանցը¹:

¹ Тифлисский листок. № 28. 17 февраля 1905 г.

1905 թ. փետրվարի 3-ին վախճանվում և 5-ին գերեզմանոցում է ամփոփվում շուշեցի Ավետիս Կարապետյան Խաչատրյանցը¹:

¹ «Մշակ», 1905, № 14, 4 փետրվարի, էջ 1:

1905 թ. փետրվարի 11-ին վախճանվում և 14-ին գերեզմանոցում է ամփոփվում Ավետիք Սկրտումյան Իշխանյանցը¹:

¹ «Մշակ», 1905, № 22, 13 փետրվարի, էջ 1:

1905 թ. փետրվարի 11-ին վախճանվում և 14-ին գերեզմանոցում է ամփոփվում Սբ. Ստեփանոս Կուսանաց վանքի սարկավագուհի, կույս Նունե Գևորգյան Ծովյանյանցը¹:

¹ «Մշակ», 1905, № 22, 13 փետրվարի, էջ 1:

1905 թ. փետրվարի 12-ին վախճանվում և 15-ին գերեզմանոցում է ամփոփվում բանաստեղծ Արտաշես Գարիբյանցը¹:

¹ «Մշակ», 1905, № 23, 15 փետրվարի, էջ 1:

1905 թ. փետրվարի 14-ին վախճանվում և 16-ին գերեզմանոցում է ամփոփվում կոստանդնուպոլսեցի Թագվոր Արսենյանցը¹:

¹ «Մշակ», 1905, № 24, 16 փետրվարի, էջ 1:

1905 թ. փետրվարի 19-ին Մոսկվայում վախճանվում և 25-ին գերեզմանոցում է ամփոփվում վաղամեռիկ Մարիամ Հարությունյանցը¹:

¹ «Մշակ», 1905, № 31, 24 փետրվարի, էջ 1:

1905 թ. փետրվարի 21-ին վախճանվում և 26-ին գերեզմանոցում է ամփոփվում Նունե Աստվածատրյան Կոխտյանցը¹:

¹ «Մշակ», 1905, № 32, 26 փետրվարի, էջ 1:

1905 թ. փետրվարի 27-ին վախճանվում և մարտի 3-ին գերեզմանոցում է ամփոփվում Մինաս Մինասյան Արիյանցը¹:

¹ «Մշակ», 1905, № 34, 1 մարտի, էջ 1:

Հավանաբար 1905 թ. մարտի սկզբին վախճանվում է անվանի արձակագիր, թատերագետ, ազգագրագետ Պերճ Պռոշյանցի կինը՝ Աննա Պռոշյանցը¹:

¹ «Մշակ», 1905, № 43, 12 մարտի, էջ 1:

Տապանաքարին արձանագրված է եղել.

Աննա Պռոշեանց, / ամուսին / վիպասան Պերճ Պռոշեանցի, / ծն. 1853, մահ. 1905¹:

¹ **Երեմեան Ա.**, Թիֆլիսի հայկական պանթեոններում, էջ 49:



1905 թ. մարտի 6-ին 52 տարեկանում վախճանվում (ծնվ. 02.02.1857, Վաղարշապատ. սերում է Բագրևանդի Եկմալ գյուղից) և մարտի 13-ին Գ. Արծրունու գերեզմանի մոտ է ամփոփվում անվանի երգահան Մակար Գրիգորյան Եկմալյանցը¹:



Մահարձանին արձանագրված է եղել.

Ու չերգեցիմք ողբոց երգեր. / Երաժշտագետ / Մ. Եկմալեան, 1905: / Композитор / М. Экмальян².

1911 թ. նշվում է մահվան 6-րդ տարեկիցը³:

1912 թ. նշվել է. «Մակարյան Եկմալեանի գերեզմանը անխնամ և անուշադիր դրուքեան մէջ գտնուելու պատճառով վերջերս նրա գերեզմանի մէջ թաղել են մի այլ դիակ: Իրօք որ զարմանալի ազգ ենք մենք: Նրա տաղանդի յարգողները ամեն անգամ թմբուկ են հարկանում և նրա յիշատակին դատարկ խօսքեր շռայլում, սակայն հենց այդ մարդիկ ցարդ չը կարողացան Մ. Եկմալեանի գերեզմանի վրա ոչ միայն մի համեստ արձան կանգնեցնել, այլ և գէթ մի ցանկապատով շրջապատել նրա գերեզմանը, որպէսզի գոնէ հետքը պահպանվէր»⁴:

1915 թ. մարտի 8-ին գերեզմանատանը կատարվում է մահվան 10-րդ տարելիցի հոգեհանգստյան արարողություն⁵:

1 «Մշակ», 1905, № 43, 12 մարտի, էջ 1:

2 **Երեմեան Ա.**, Թիֆլիսի հայկական պանթեոններում, Վիեննա, 1940, էջ 11-13: Հանգուցյալի մասին տես **Թահմիզյան Ն.**, Մակար Եկմայան, Երևան, 1981:

3 «Հորիզոն», 1911, № 48, 6 մարտի, էջ 1:

4 «Մշակ», 1912, № 56, 15 մարտի, էջ 3:

5 «Հորիզոն», 1915, № 53, 8 մարտի, էջ 1, 3: Հոգեհանգստյան արարողությունը կազմակերպել է Հայոց երաժշտական ընկերությունը (№ 54, 10 մարտի, էջ 3):

1905 թ. մարտի 12-ին գերեզմանոցում է ամփոփվում Մեշանսկի Ուպրավայի նախկին ստարշինա Իսահակ Սողոմոնյան Բուրդանյանը¹:

1 «Մշակ», 1905, № 42, 10 մարտի, էջ 1; № 43, 12 մարտի, էջ 1:

1905 թ. մարտի 25-ին գերեզմանոցում է ամփոփվում Հովհաննես Հարությունյան Հովհանջանյանը¹:

1 «Մշակ», 1905, № 53, 24 մարտի, էջ 1:

1905 թ. մարտի 27-ին գերեզմանոցում է ամփոփվում Հայկ Սարգսյան Կովալյանցը¹:

1 «Մշակ», 1905, № 54, 25 մարտի, էջ 1:

1905 թ. մարտի 22-ին վախճանվում և 27-ին գերեզմանոցում է ամփոփվում Հռիփսիմն Խարազյանը¹:

1 «Մշակ», 1905, № 55, 26 մարտի, էջ 1:

1905 թ. մարտի 27-ին գերեզմանոցում է ամփոփվում մասնավոր հավատարմատար Գրիգոր Առաքելյան Գողոշյանցը¹:

1 «Մշակ», 1905, № 55, 26 մարտի, էջ 1:

1905 թ. մարտի 29-ին վախճանվում և ապրիլի 2-ին գերեզմանոցում է ամփոփվում Տիդիսի 2-րդ կարգի վաճառական Պետրոս Ստեփանյան Ստեփանբեգյանցը (հոգեհանգիստը՝ Բեթղեհեմի Սբ. Աստվածածին եկեղեցում)¹:

1 «Մշակ», 1905, № 60, 1 ապրիլի, էջ 1: Тифлисский листок. № 65. 2 апреля 1905 г.

1905 թ. մարտի 28-ին վախճանվում և ապրիլի 2-ին գերեզմանոցում է ամփոփվում Մարիամ Շաքարյան Սկրտումյանցը¹:

1 «Մշակ», 1905, № 60, 1 ապրիլի, էջ 1:

1905 թ. ապրիլի 2-ին գերեզմանոցում է ամփոփվում երդվյալ հավատարմատար Հովհաննես Մըկրտչյան Ավագյանցը¹:

1 «Մշակ», 1905, № 59, 31 մարտի, էջ 1; № 61, 2 ապրիլի, էջ 1:

1905 թ. ապրիլի 2-ին վախճանվում և 7-ին գերեզմանոցում է ամփոփվում Ռուբեն Ղազարյան Հակոբյանցը¹:

1 «Մշակ», 1905, № 63, 6 ապրիլի, էջ 1:

1905 թ. ապրիլի 14-ին գերեզմանոցում է ամփոփվում Սկրտիչ քահանա Գուլամիրյանցը¹:

1 «Մշակ», 1905, № 70, 14 ապրիլի, էջ 1:

1905 թ. ապրիլի 11-ին վախճանվում և 21-ին գերեզմանոցում է ամփոփվում Յազոր Խաչատրյան Նավթիկյանցը¹:

1 «Մշակ», 1905, № 70, 14 ապրիլի, էջ 1:

1905 թ. ապրիլի 24-ին վախճանվում և 26-ին գերեզմանոցում է ամփոփվում Թիֆլիսի արական 3-րդ գիմնազիայի աշակերտ Ամատունի Մեսրոպյան Արզումանյանցը (հոգեհանգիստը՝ Թանդյան Սբ. Աստվածածին եկեղեցում)¹:

1 «Մշակ», 1905, № 76, 26 ապրիլի, էջ 1: Кавказ. № 104. 26 апреля 1905 г. С. 1.

1905 թ. ապրիլի 28-ին վախճանվում և գերեզմանոցում է ամփոփվում Նիկողայոս Գաբրիելյան Մեդվիյանցը (հոգեհանգիստը՝ Ջգրաշենի Ավետյաց Սբ. Աստվածածին եկեղեցում)¹:

1 Тифлисский листок. № 87. 30 апреля 1905 г.

1905 թ. մայիսի 2-ին վախճանվում և 7-ին գերեզմանոցում է ամփոփվում բժիշկ Ավետիք Մովսեսյան Ահարոնյանցը¹:

1 «Մշակ», 1905, № 83, 4 մայիսի, էջ 1:

1905 թ. մայիսի 6-ին վախճանվում և 10-ին գերեզմանոցում է ամփոփվում գնդապետի այրի Կատարինե Տեր-Բարսեղյանը¹:

1 «Մշակ», 1905, № 87, 8 մայիսի, էջ 1:

1905 թ. մայիսի 15-ին գերեզմանոցում է ամփոփվում Ղազար Միմոնյան Հարությունյանը¹:

1 «Մշակ», 1905, № 91, 13 մայիսի, էջ 1:

1905 թ. հունիսի 27-ին վախճանվում և գերեզմանոցում է ամփոփվում Թիֆլիսի Քաղաքային վարչության դիվանապահ Նիկիտա Իսայան Զեփինովը¹:

1 «Մշակ», 1905, № 123, 29 յունիսի, էջ 1:

1905 թ. հունիսի 30-ին գերեզմանոցում է ամփոփվում օրիորդ Իշխանյանը: Քաղաքը պատերազմական դրության մեջ հայտարարված լինելու պատճառով հանգուցյալի դագաղը տնից եկեղեցի, ապա գերեզմանատուն փոխադրվել է զորքով շրջապատված, և բացի հարազատներից՝ ոչ մեկին չի թույլատրվել մասնակցել հուղարկավորմանը¹:

1 «Նոր-Դար», 1905, № 1, 3 յուլիսի, էջ 2:

1905 թ. հուլիսի 3-ին վախճանվում և 7-ին գերեզմանոցում է ամփոփվում Հաղորդակցության ճանապարհների ինժեներ Սեդրակ Հովհաննիսյան Արարտյանցը¹:

1 «Մշակ», 1905, № 129, 6 յուլիսի, էջ 1:

1905 թ. հուլիսի 8-ին վախճանվում և 10-ին գերեզմանոցում է ամփոփվում երդվյալ հավատարմատար Ստեփան Գրիգորյան Մելիք-Նուբարյանցը¹:

1 Кавказ. № 170. 9 июля 1905 г. С. 1.

1905 թ. հուլիսի 30-ին գերեզմանոցում է ամփոփվում Գրիգոր Խոջամիրյանը¹:

¹ «Մշակ», 1905, № 148, 29 յուլիսի, էջ 1:

1905 թ. հուլիսի 28-ին վախճանվում և 31-ին գերեզմանոցում է ամփոփվում Հովսեփ Տեր-Մովսիսյան Տեր-Աբրահամյանը¹:

¹ «Մշակ», 1905, № 149, 30 յուլիսի, էջ 1:

1905 թ. օգոստոսի 6-ին գերեզմանոցի Կուսանաց դամբարանում է ամփոփվում Թիֆլիսի Սբ. Ստեփանոս Կուսանաց վանքի դպրոցի Նեկտարինե Շահվերդյանը¹:

¹ «Մշակ», 1905, № 154, 5 օգոստոսի, էջ 1:

1905 թ. օգոստոսի 6-ին Պյատիգորսկում վախճանվում և 13-ին գերեզմանոցում է ամփոփվում Վարդան Խուդավերդյան Խուդավերդյանը¹:

¹ «Մշակ», 1905, № 160, 12 օգոստոսի, էջ 1:

1905 թ. օգոստոսի 19-ին վախճանվում և 23-ին գերեզմանոցում է ամփոփվում պաշտոնաթող գեներալ-լեյտենանտ Նիկիտա Գրիգորյան Շահնազարյանը¹:

¹ «Մշակ», 1905, № 166, 20 օգոս., էջ 1; № 168, 23 օգոս., էջ 1:

1905 թ. օգոստոսի 28-ին վախճանվում և սեպտեմբերի 1-ին գերեզմանոցում է ամփոփվում Տըփղիսի Կուսանաց վանքի միաբան և ավագ սարկավագուհի, կրթական և բարեգործական աշխատանքների նվիրյալ 80-ամյա Գայանե Հախնազարյանը¹: Հանգուցյալի ջանքերով Տփղիսում բացվում է օրիորդաց դպրոց: Հանգանակություններով աստարում է Էջմիածնի Մայր Աթոռին, իրականացնում դեպի Սբ. Կարապետ եկեղեցի բարձրացող աստիճանների շինարարությունը: Նրա հորդորներով մի տիկին ստանձնում է Բեթղեհեմի Սբ. Աստվածածին եկեղեցու բակում բխող աղբյուրի շինարարությունը և այլն²:

¹ «Մշակ», 1905, № 174, 30 օգոստոսի, էջ 1:

² Тифлиский листок. № 178. 1 сентября 1905 г.

1905 թ. սեպտեմբերի 1-ին վախճանվում և 4-ին գերեզմանոցում է ամփոփվում վաճառական Հովհաննես Նիկողոսյանցի հայրը՝ Ստեփան Խաչատրյան Նիկողոսյանը¹:

¹ «Մշակ», 1905, № 176, 3 սեպտեմբերի, էջ 1:

1905 թ. սեպտեմբերի 28-ին վախճանվում և հոկտեմբերի 1-ին գերեզմանոցում է ամփոփվում Ջավահիր Բաղչեցյանը¹:

¹ «Մշակ», 1905, № 198, 30 սեպտեմբերի, էջ 1:

1905 թ. հոկտեմբերի 4-ին վախճանվում և 9-ին գերեզմանոցում է ամփոփվում Իվան Գավիդյան Ռոստևանովը¹:

¹ «Մշակ», 1905, № 204, 7 հոկտեմբերի, էջ 1:

1905 թ. հոկտեմբերի 7-ին Լաստիսցիխե վրացաբնակ գյուղում՝ իր ազարակում, 5 զինված չարագործների ձեռքով սպանվում է և 9-ին գերեզմանոցում ամփոփվում Թիֆլիսի նախկին վաճառական Նուգարյանը (չարագործները նրա գրպանից հանել են 7 ռ. և դանակ, իսկ կնոջը պարտադրել Թիֆլիսում պատրաստել 2000 ռ., հակառակ դեպքում իրեն էլ կսպանեն: Տիկինը թեթև վիրավորվել էր ձեռքից: Սպանությունը կատարել է ազարակից արձակված ծառան)¹:

¹ «Նոր-Դար», 1905, № 29, 11 հոկտեմբերի, էջ 3:

1905 թ. հոկտեմբերի 7-ին վախճանվում և 11-ին գերեզմանոցում է ամփոփվում վաղամեռիկ Հայկ Ավետիքյան Թառայանը¹:

¹ «Մշակ», 1905, № 206, 9 հոկտեմբերի, էջ 1:

1905 թ. հոկտեմբերի 22-ին վախճանվում և 26-ին գերեզմանոցում է ամփոփվում Թիֆլիսի փոխադարձ վարկի ընկերության թղթակից Հովհաննես Կարապետյան Շահմուրադյանը (հոգեհանգիստը՝ Թանդոյան Սբ. Աստվածածին եկեղեցում)¹:

¹ «Մշակ», 1905, № 211, 26 հոկտեմբերի, էջ 1: «Արշալոյս», 1905, № 40, 26 հոկտեմբերի, էջ 1: Новое обозрение. № 221. 26 октября 1905 г.

1905 թ. հոկտեմբերի 28-ին վախճանվում և 31-ին գերեզմանոցում է ամփոփվում նույն ամսի 22-ին տեղի ունեցած աղետից ծանր վիրավորված Բաքվի գիմնազիայի 8-րդ դասարանի աշակերտ, թավրիզեցի Հովակիմ Արշակյան Նազարբեգյանը¹:

¹ «Մշակ», 1905, № 214, 30 հոկտեմբերի, էջ 1:

1905 թ. նոյեմբերի 2-ին վախճանվում և 5-ին գերեզմանոցում է ամփոփվում Եղիսաբեթ Բաբախանյանը¹:

¹ «Մշակ», 1905, № 219, 5 նոյեմբերի, էջ 1:

1905 թ. նոյեմբերի 15-ին վախճանվում և 20-ին գերեզմանոցում է ամփոփվում Բագրատ Ավետիսյան Խանդուրյանը¹:

¹ «Մշակ», 1905, № 230, 18 նոյեմբերի, էջ 1:

1905 թ. դեկտեմբերի 1-ին վախճանվում և 3-ին գերեզմանոցում է ամփոփվում Հռիփսիմե Հայրապետյան Տեր-Գասպարյանը¹:

¹ «Մշակ», 1905, № 239, 3 դեկտեմբերի, էջ 1:

1905 թ. դեկտեմբերի 9-ին վախճանվում և 11-ին գերեզմանոցում է ամփոփվում Աննա Մակարյանը¹:

¹ «Մշակ», 1905, № 246, 11 դեկտեմբերի, էջ 1:

1906

1906 թ. հունվարի 1-ին վախճանվում և 4-ին գերեզմանոցում է ամփոփվում Մովսես Բաղդանյան Բարսեղյանը¹:

¹ «Մշակ», 1906, № 2, 4 յունվարի, էջ 1:

1906 թ. հունվարի 16-ին վախճանվում և 22-ին գերեզմանոցում է ամփոփվում ուսուցիչ Հարություն Ղարազյոզյանը¹: Հանգուցյալն իր անվամբ գործող ուսումնարան-պանսիոնի հիմնադիրն էր¹:

¹ «Արշալոյս», 1906, № 15, 22 հունվարի, էջ 1:

1906 թ. հունվարի 17-ին վախճանվում և 21-ին գերեզմանոցում է ամփոփվում Կարապետ Հարությունյան Չոխրաբյանցը¹:

¹ «Մշակ», 1906, № 13, 20 յունվարի, էջ 1:

1906 թ. հունվարի 28-ին վախճանվում և 31-ին գերեզմանոցում է ամփոփվում Հովհաննես Զիրաբյանցը¹:

¹ «Մշակ», 1906, № 22, 31 յունվարի, էջ 1:

1906 թ. փետրվարի սկզբին վախճանվում և գերեզմանոցում է ամփոփվում Լևոն Գրիգորյան Տեր-Ղևոնդյանցը: Սարտի 12-ին կատարվում է հոգեհանգիստ մահվան քառասորյակի առիթով¹:

¹ «Մշակ», 1906, № 54, 11 մարտի, էջ 1:

1906 թ. փետրվարի 2-ին գերեզմանոցում է ամփոփվում Սարգիս Մամաջանյանը¹:

¹ «Մշակ», 1906, № 23, 1 փետրվարի, էջ 1:

1906 թ. փետրվարի 7-ին գերեզմանոցում է ամփոփվում Նուխու բնակչուհի Բալախանում Հովսեփյան Աբրահամյանցը¹:

¹ «Մշակ», 1906, № 28, 7 փետրվարի, էջ 1:

1906 թ. փետրվարի 8-ին վախճանվում և 10-ին գերեզմանոցում է ամփոփվում Դավիթ Սկրաչյան Տեր-Մարկոսյանցը¹:

¹ «Մշակ», 1906, № 30, 9 փետրվարի, էջ 1:

1906 թ. փետրվարի 21-ին վախճանվում և 26-ին գերեզմանոցում է ամփոփվում Միհրան Սահակյան Բաղդասարյանցը¹:

¹ «Մշակ», 1906, № 42, 25 փետրվարի, էջ 1:

1906 թ. փետրվարի 25-ին վախճանվում և 28-ին գերեզմանոցում է ամփոփվում Միքայել Հարությունյան Քոչարյանցը¹:

¹ «Մշակ», 1906, № 44, 28 փետրվարի, էջ 1:

1906 թ. փետրվարի 25-ին վախճանվում և գերեզմանոցում է ամփոփվում Մարթա Գևորգյան Տեր-Բարսեղյանցը՝ Գրիգոր ավագ քահանայի կողակիցը¹:

¹ «Արշալոյս», 1906, № 46, 2 մարտի, էջ 1; № 47, 3 մարտի, էջ 1:

1906 թ. փետրվարի 26-ին վախճանվում և 28-ին գերեզմանոցում է ամփոփվում Մինաս Մահտեսի-Գրիգորյան Խունունցը¹:

¹ «Մշակ», 1906, № 44, 28 փետրվարի, էջ 1:

1906 թ. փետրվարի 27-ին վախճանվում և մարտի 2-ին գերեզմանոցում է ամփոփվում Եղիսաբեթ Հովհաննիսյան Խոջամիրյանցը¹:

¹ «Մշակ», 1906, № 45, 1 մարտի, էջ 1:

1906 թ. մարտի 1-ին գերեզմանոցում է ամփոփվում դեռևս 1905 թ. հայ-թուրքական ընդհարումների ժամանակ Թիֆլիսի Հրեշտակապետաց եկեղեցու բակում վիրավորված նույն եկեղեցու տիրացու ավճավագի Սողոմոն Տեր-Սկրաչյանը¹:

¹ Յ. Մ., Նամակ խմբագրութեան, «Մշակ», 1906, № 44, 28 փետրվարի, էջ 3:

1906 թ. փետրվարի 27-ին վախճանվում և մարտի 5-ին գերեզմանոցում է ամփոփվում Շուշի քաղաքի Ազուլյաց եկեղեցու քահանա Հովհաննես Թառումյանցը¹:

¹ «Մշակ», 1906, № 47, 3 մարտի, էջ 1:

1906 թ. մարտի 5-ին գերեզմանոցում է ամփոփվում Մարիամ Ասլանյանցը¹:

¹ «Մշակ», 1906, № 47, 3 մարտի, էջ 1:

1906 թ. մարտի 3-ին վախճանվում և 5-ին գերեզմանոցում է ամփոփվում Սուլթան Հայրապետյան Գասպարյանցը¹:

¹ «Մշակ», 1906, № 48, 4 մարտի, էջ 1:

1906 թ. մարտի 5-ին գերեզմանոցում է ամփոփվում Ալեքսանդր Սարգսյան Պետրոսյանցը¹:

¹ «Մշակ», 1906, № 48, 4 մարտի, էջ 1:

1906 թ. մարտի 7-ին վախճանվում և 11-ին գերեզմանոցում է ամփոփվում Սարգիս Թաղևոսյան Գասպարյանցը¹:

¹ «Մշակ», 1906, № 53, 10 մարտի, էջ 1:

1906 թ. մարտի 8-ին վախճանվում և գերեզմանոցում է ամփոփվում ծնունդով Սալմաստի Հաֆթվան գյուղից Կարապետ Հարությունյան Մարտիրոսյանցը, որի տապանաքարին արձանագրված է եղել.

Սալմաստ գա/վառի Հա(ֆթվան) / զիղացի / Կարապետ / Յարութիւնեան / Մարտիրոսեանց / 1 ա. վախճ. 8 / մարտի 1906 ամի:

Հրատ. **Муральян П.** Тбилиси... С. 98.

1906 թ. մարտի 11-ին վախճանվում և 14-ին գերեզմանոցում է ամփոփվում «Բ.ս. Եգ. Փիթոյել և ընկ.» առևտրական տան ղեկավար Ալեքսանդր Եգորյան Փիթոնը¹:

¹ «Մշակ», 1906, № 55, 12 մարտի, էջ 1:

1906 թ. մարտի 15-ին գերեզմանոցում է ամփոփվում Նունե Տեր-Գևորգյան Տեր-Ստեփանյանցը¹:

¹ «Մշակ», 1906, № 56, 14 մարտի, էջ 1:



Գրիգոր Տեր-Ղևոնդյանցը որդու՝ Լևոնի գերեզմանաքարի մոտ

1906 թ. մարտի 19-ին գերեզմանոցում է ամփոփվում Հռիփսիմեն Հովհաննիսյան Ծատուրյանցը¹։
 1 «Մշակ», 1906, № 59, 17 մարտի, էջ 1: 1907, № 58, 17 մարտի, էջ 1:

1906 թ. մարտի 23-ին գերեզմանոցում է ամփոփվում Լևոն Առաքելյան Գևորգյանցը¹։
 1 «Մշակ», 1906, № 63, 23 մարտի, էջ 1:

1906 թ. մարտի 26-ին գերեզմանոցում է ամփոփվում Բաքվի Ալեքսանդր III արական գիմնազիայի 6-րդ դասարանի աշակերտ Գասպար Ավետիսյան Գասպարյանցը¹։
 1 «Մշակ», 1906, № 66, 26 մարտի, էջ 1:

1906 թ. մարտի 26-ին գերեզմանոցում է ամփոփվում Նիկողայոս Հովսեփյան Ստեփանյանցը¹։
 1 «Մշակ», 1906, № 66, 26 մարտի, էջ 1:

1906 թ. ապրիլի 8-ին վախճանվում և 13-ին գերեզմանոցում է ամփոփվում Գևորգ Սարգսյան Մուրադյանցը¹։
 1 «Մշակ», 1906, № 75, 11 ապրիլի, էջ 1:

1906 թ. ապրիլի 15-ին Մոսկվայում վախճանվում և 23-ին գերեզմանոցում է ամփոփվում երդվյալ հավատարմատար Սոկրատ Ստեփանյան Մելիք-Աղանյանցը¹։

1907 թ. ապրիլի 15-ին՝ մահվան առաջին տարելիցի օրը, տեղի է ունենում մահարձանի օծումը²։
 1 «Մշակ», 1906, № 81, 18 ապրիլի, էջ 1; № 86, 23 ապրիլի, էջ 1:
 2 «Մշակ», 1907, № 79, 14 ապրիլի, էջ 1; № 80, 15 ապրիլի, էջ 1:

1906 թ. ապրիլի 20-ին վախճանվում և 23-ին գերեզմանոցում է ամփոփվում Ջավահիր Մելիք-Բախտանյանցը¹։
 1 «Մշակ», 1906, № 85, 22 ապրիլի, էջ 1:

1906 թ. ապրիլի 20-ին եղերական մահով վախճանվում և 25-ին գերեզմանոցում է ամփոփվում Եզր Ավագյան Դավթյանցը¹։
 1 «Մշակ», 1906, № 86, 23 ապրիլի, էջ 1:

1906 թ. մայիսի 7-ին գերեզմանոցում է ամփոփվում Կոնստանդին Մկրտչյան Իսրայելյանցը¹։
 1 «Ալիք» (Թիֆլիս), 1906, № 9, 7 մայիսի, էջ 1:

1906 թ. մայիսի 12-ին եղերական մահով վախճանվում և 21-ին գերեզմանոցում է ամփոփվում «Եղբ. Ս. Խ. և Ա. Գեորգեանց» առևտրական տան գլխավոր անդամ Խաչատուր Բաղդասարյան Գեվորգյանցը¹։
 1 «Մշակ», 1906, № 106, 19 մայիսի, էջ 1:

1906 թ. մայիսի 20-ին եղերական մահով վախճանվում և 27-ին գերեզմանոցում է ամփոփվում Գրիգոր Օհաննեսյան Ապրիանյանցը¹։
 1 «Մշակ», 1906, № 111, 25 մայիսի, էջ 1:

1906 թ. մայիսի 22-ին վախճանվում և 28-ին գերեզմանոցում է ամփոփվում Նատալյա Ռևազյանը¹։
 1 «Մշակ», 1906, № 112, 26 մայիսի, էջ 1:

1906 թ. մայիսի 24-ին վախճանվում և 27-ին գերեզմանոցում է ամփոփվում Թալալ Պետրոսյան Դավիթխանյանցը¹։
 1 «Ալիք», 1906, № 24, 26 մայիսի, էջ 1; № 25, 27 մայիսի, էջ 1:

1906 թ. մայիսի 27-ին վախճանվում և 28-ին գերեզմանոցում է ամփոփվում Թիֆլիսի II գիմնազիայի 1-ին դասարանի աշակերտ Թագուշ Հակոբյան Առվանյանցը¹։
 1 «Մշակ», 1906, № 114, 28 մայիսի, էջ 1:

1906 թ. հունիսի 10-ին վախճանվում և 15-ին գերեզմանոցում է ամփոփվում Իսահակ Արտեմյան Մելիք-Բաբախանյանցը¹։
 1 «Մշակ», 1906, № 127, 13 յունիսի, էջ 1:

1906 թ. հունիսի 12-ին Պետերբուրգում վախճանվում և 17-ին գերեզմանոցում է ամփոփվում Գրիգոր Եվանգոլյանցի կինը՝ Սիրանուշ Մինասյան Եվանգոլյանցը¹։
 1 «Մշակ», 1906, № 131, 17 յունիսի, էջ 1: «Ալիք», 1906, № 43, 17 յունիսի, էջ 1:

1906 թ. հունիսի 20-ին վախճանվում և 22-ին գերեզմանոցում է ամփոփվում Երվանդ Տիգրանյան Աշճյանցը¹։
 1 «Մշակ», 1906, № 134, 22 յունիսի, էջ 1: «Ալիք», 1906, № 46, 22 յունիսի, էջ 1:

1906 թ. հունիսի 24-ին վախճանվում և 27-ին գերեզմանոցում է ամփոփվում Հարություն Հակոբյան Բեզգաղյանցը¹։
 1 «Մշակ», 1906, № 137, 27 յունիսի, էջ 1: «Ալիք», 1906, № 49, 27 յունիսի, էջ 1:

1906 թ. հուլիսի 2-ին գերեզմանոցում է ամփոփվում «Բոսսիյսկօե փոխադրական եւ ապահովագրական» ընկերության Թիֆլիսի գործակալության պաշտոնակից Գրիգոր Իսայան Վարդանյանցը¹։
 1 «Մշակ», 1906, № 142, 2 յուլիսի, էջ 1:

1906 թ. հուլիսի 19-ին վախճանվում և 22-ին գերեզմանոցում է ամփոփվում Նիկողայոս Մարգարյան Գրիգորյանցը¹։
 1 «Ալիք», 1906, № 68, 21 յուլիսի, էջ 1:

1906 թ. հուլիսի 20-ին վախճանվում և 22-ին գերեզմանոցում է ամփոփվում III գիմնազիայի 5-րդ դասարանի աշակերտուհի Անահիտ Խաչատրյան Բասենցյանը¹։
 1 «Մշակ», 1906, № 156, 22 յուլիսի, էջ 1:

1906 թ. հուլիսի 27-ին վախճանվում և 30-ին գերեզմանոցում է ամփոփվում Նատալյա Մինեոնյան Տեր-Հովհաննիսյանցը¹։
 1 «Ալիք», 1906, № 75, 29 յուլիսի, էջ 1:

1906 թ. օգոստոսի 2-ին վախճանվում և 6-ին գերեզմանոցում է ամփոփվում Վարվառե Բեգիջանյանը¹:

1 «Մշակ», 1906, № 168, 5 օգոստոսի, էջ 1:

1906 թ. օգոստոսի 12-ին վախճանվում և 17-ին գերեզմանոցում է ամփոփվում փոխգնդապետ Պետրոս Արեշյանի կինը՝ Եղիսարեթ Յագորյան Արեշյանը¹: 1907 թ. օգոստոսի 12-ին հանգուցյալի մահվան տարելիցի առնչությամբ Խոջիվանքի եկեղեցում կատարվում է հոգեհանգիստ²:

1 «Մշակ», 1906, № 177, 17 օգոստոսի, էջ 1:

2 «Խարիսխ», 1907, № 33, 11 օգոստոսի, էջ 1:

1906 թ. օգոստոսի 19-ին Հավաբարում՝ իր բնակարանի առջև, սպանվում և 22-ին գերեզմանոցում է ամփոփվում Հաջի Սկրտիչ Կարապետյան Այդինյանը¹:

1 «Զանգ», 1906, № 9, 22 օգոստոսի, էջ 1: «Մշակ», 1906, № 181, 22 օգոստոսի, էջ 1:

1906 թ. օգոստոսի 27-ին գերեզմանոցում է ամփոփվում բժիշկ Ավետիք Ահարոնյանցի հայրը՝ Մովսես Ահարոնյան Ահարոնյանը¹:

1 «Զանգ», 1906, № 14, 27 օգոստոսի, էջ 1: «Մշակ», 1906, № 185, 26 օգոստոսի, էջ 1:

1906 թ. օգոստոսի 23-ին վախճանվում և 27-ին գերեզմանոցում է ամփոփվում շտաբս-կապիտան Ալեքսանդր Հարությունյան Ասրիյանը¹:

1 «Մշակ», 1906, № 185, 26 օգոստոսի, էջ 1:

1906 թ. սեպտեմբերի 15-ին վախճանվում և 19-ին գերեզմանոցում է ամփոփվում Խաչատուր Սարգսյան Շախյանը¹:

1 «Մշակ», 1906, № 202, 17 սեպտեմբերի, էջ 1:

1906 թ. սեպտեմբերի 15-ին վախճանվում և 19-ին գերեզմանոցում է ամփոփվում Սաթենիկ Ստեփանյան Հակոբջանյանը¹:

1 «Մշակ», 1906, № 202, 17 սեպտեմբերի, էջ 1:

1906 թ. սեպտեմբերի 27-ին վախճանվում և հոկտեմբերի 1-ին գերեզմանոցում է ամփոփվում Սիքայել-Խան Հովսեփյանը¹:

1 «Մշակ», 1906, № 212, 30 սեպտեմբերի, էջ 1:

1906 թ. հոկտեմբերի 3-ին վախճանվում և 4-ին գերեզմանոցում է ամփոփվում Մոֆյա Գրիգորյան Բարսամյանը¹:

1 «Մշակ», 1906, № 214, 3 հոկտեմբերի, էջ 1:

1906 թ. հոկտեմբերի 5-ին վախճանվում և 8-ին գերեզմանոցում է ամփոփվում Շխալի-Ստեփան Սելիք-Սկրտչյանը¹. «Ներկայ էր երկսեռ խուռն բազմութիւն, որի միջով անհնար էր անցնելը»²:

1908 թ. նոյեմբերի 9-ին նրա գերեզմանին տապանաքար է տեղադրվում³:

1 «Մշակ», 1906, № 218, 7 հոկտեմբերի, էջ 1:

2 «Երկիր» (Թիֆլիս), 1906, № 8, 10 հոկտեմբերի, էջ 3:

3 «Մշակ», 1908, № 246, 6 նոյեմբերի, էջ 1: «Գործ» (Թիֆլիս), 1908, № 52, 11 նոյեմբերի, էջ 3:

1906 թ. հոկտեմբերի 9-ին վախճանվում և 11-ին գերեզմանոցում է ամփոփվում 82-ամյա Մարիամ Խաչատրյան Զարդադյանը¹:

1 «Մշակ», 1906, № 221, 11 հոկտեմբերի, էջ 1:

1906 թ. հոկտեմբերի 17-ին գերեզմանոցում է ամփոփվում Եղիսարեթ Սինասյան Մուրեմյանը¹:

1 «Երկիր», 1906, № 13, 15 հոկտեմբերի, էջ 1:

1906 թ. հոկտեմբերի 14-ին Գյոկչա ավանում վախճանվում և 23-ին գերեզմանոցում է ամփոփվում Քրիստափոր Նազարյանը¹:

1 «Երկիր», 1906, № 19, 22 հոկտեմբերի, էջ 1:

1906 թ. հոկտեմբերի 22-ին գերեզմանոցում է ամփոփվում Հովհաննես Դավթյան Պոպովյանը¹:

1 «Մշակ», 1906, № 229, 20 հոկտեմբերի, էջ 1:

1906 թ. հոկտեմբերի 23-ին վախճանվում և 24-ին գերեզմանոցում է ամփոփվում Սիմոն Հովհաննիսյան Պարսամյանը¹:

1 «Մշակ», 1906, № 232, 24 հոկտեմբերի, էջ 1:

1906 թ. հոկտեմբերի 29-ին գերեզմանոցում է ամփոփվում ինժեներ-տեխնոլոգ Եզոր Եզորյան Արտազյանը¹:

1 Кавказ. № 241. 29 октября 1906 г. С. 1.

1906 թ. հոկտեմբերի 28-ին Նախիջևանում վախճանվում և նոյեմբերի 2-ին կտակի համաձայն՝ գերեզմանոցում է ամփոփվում դերասան օրդուբադցի Գևորգ (Եզոր) Հովսեփյան (Օսիպովիչ) Պետրոսյանը¹: 1913 թ. նոյեմբերի 2-ին մահվան 7-րդ տարելիցի առիթով կատարվում է հոգեհանգիստ, ինչպես նաև՝ նրա հիշատակին կերտված մահարձանի բացման արարողություն²:

1 «Երկիր», 1906, № 26, 31 հոկտեմբերի, էջ 1: «Մշակ», 1906, № 238, 31 հոկտ., էջ 1: «Յուշարար», 1907, № 2, 22 փետրարի: **Մրննան Ա.**, Թիֆլիսի հայկական պանթեոններում, էջ 54-55:

2 «Հորիզոն», 1913, № 246, 1 նոյեմբերի, էջ 1: «Մշակ», 1913, № 238, 26 հոկտ., էջ 2; № 243, 1 նոյ., էջ 1; № 248, 7 նոյ., էջ 3: «Հովիտ», 1913, № 43, 3 նոյեմբերի, էջ 687: Тифлисский листок. № 242. 25 октября 1913 г.

1906 թ. նոյեմբերի 3-ին վախճանվում և 5-ին գերեզմանոցում է ամփոփվում հեքիմ Նիկողայոս Գևորգյան Փիրումյանը¹:

1 «Երկիր», 1906, № 30, 4 նոյեմբերի, էջ 1:

1906 թ. նոյեմբերի 16-ին գերեզմանոցում է ամփոփվում Աննա Գևորգյան Տեր-Նիկողայոսյանը¹:

1 «Մշակ», 1906, № 251, 15 նոյեմբերի, էջ 1:

1906 թ. նոյեմբերի 16-ին գերեզմանոցում է ամփոփվում Մխիթար Ավետյան Հասան-Ջալալյանը¹:

1 «Մշակ», 1906, № 251, 15 նոյեմբերի, էջ 1:

1906 թ. նոյեմբերի 15-ին վախճանվում և 19-ին գերեզմանոցում է ամփոփվում դերձակ Գրիգոր Սարգսյան ճեպեյանցը¹:

¹ «Մշակ», 1906, № 254, 18 նոյեմբերի, էջ 1:

1906 թ. նոյեմբերի 18-ին վախճանվում և 21-ին գերեզմանոցում է ամփոփվում Սոֆյա Ջալալյանցը¹:

¹ «Երկիր», 1906, № 44, 21 նոյեմբերի, էջ 1:

1906 թ. նոյեմբերի 19-ին վախճանվում և 21-ին գերեզմանոցում է ամփոփվում Ավետիս Խանդուլյանցը¹:

¹ «Երկիր», 1906, № 44, 21 նոյեմբերի, էջ 1: «Մշակ», 1906, № 256, 21 նոյեմբերի, էջ 1:

1906 թ. նոյեմբերի 17-ին վախճանվում և 25-ին գերեզմանոցում է ամփոփվում Կատարինե Հովսեփյան Մեհրաբյանցը¹:

¹ «Մշակ», 1906, № 257, 23 նոյեմբերի, էջ 1:

1906 թ. նոյեմբերի 22-ին վախճանվում և 26-ին գերեզմանոցում է ամփոփվում Կատարինե Հակոբյան Առաքելյանցը¹:

¹ «Մշակ», 1906, № 260, 26 նոյեմբերի, էջ 1:

1906 թ. դեկտեմբերի 1-ին վախճանվում և 6-ին գերեզմանոցում է ամփոփվում պետական խորհրդրականի այրի Մարիամ Լիսիցյանցը¹:

¹ «Երկիր», 1906, № 54, 5 դեկտեմբերի, էջ 1: «Մշակ», 1906, № 266, 5 դեկտեմբերի, էջ 1:

1906 թ. դեկտեմբերի 10-ին վախճանվում և 13-ին գերեզմանոցում է ամփոփվում Մոնա Մելիք-Գուլամբարյան Խոջամիրյանցը¹:

¹ «Մշակ», 1906, № 271, 12 դեկտեմբերի, էջ 1:

1906 թ. դեկտեմբերի 17-ին գերեզմանոցում է ամփոփվում Դվորցովի նոմերների պահող Գևորգ Սահակյան Սաղաթելյանցը¹:

¹ «Երկիր», 1906, № 63, 16 դեկտեմբերի, էջ 1:

1906 թ. դեկտեմբերի 20-ին վախճանվում և 24-ին գերեզմանոցում է ամփոփվում Հակոբ Արտեմյան Ջառայանցը¹:

¹ «Մշակ», 1906, № 280, 22 դեկտեմբերի, էջ 1:

1906 թ. դեկտեմբերի 20-ին վախճանվում և 23-ին գերեզմանոցում է ամփոփվում Դշխունի Մովսիսյան Սիլահտարյանցը¹:

¹ «Մշակ», 1906, № 281, 23 դեկտեմբերի, էջ 1:

1906 թ. դեկտեմբերի 30-ին գերեզմանոցում է ամփոփվում Էփեմիա Խատյան Ղափալյանցը¹:

¹ «Մշակ», 1906, № 286, 30 դեկտեմբերի, էջ 1:

1907

1907 թ. հունվարի 8-ին գերեզմանոցում է ամփոփվում պետական խորհրդական Նիկողայոս Հով-

հաննիսյան Արեշյանցը (հոգեհանգիստը՝ Ջորաշենի Ավետյաց Սբ. Աստվածածին եկեղեցում)¹:

¹ Тифлисский листок. № 4. 6 января 1907 г.

1907 թ. հունվարի 6-ին վախճանվում և 11-ին գերեզմանոցում է ամփոփվում քահանա Գրիգոր Տեր-Հակոբյանցը (հոգեհանգիստը՝ Վանքի եկեղեցում)¹:

¹ «Մշակ», 1907, № 4, 9 յունվարի, էջ 1: Тифлисский листок. № 6. 10 января 1907 г.

1907 թ. հունվարի 17-ին վախճանվում և 20-ին գերեզմանոցում է ամփոփվում Ալեքսանդր Դավթյան Մաղաթյանցը¹:

¹ «Մշակ», 1907, № 12, 19 յունվարի, էջ 1:

1907 թ. հունվարի 21-ին գերեզմանոցում է ամփոփվում այրի Սալոմե Աղալոյան Լազարյանցը¹:

¹ «Մշակ», 1907, № 11, 18 յունվարի, էջ 1:

1907 թ. հունվարի 21-ին վախճանվում և 24-ին գերեզմանոցում է ամփոփվում Մարտիրոս Եղիազարյան Քերեստեճյանցը¹:

¹ «Մշակ», 1907, № 16, 24 յունվարի, էջ 1:

1907 թ. հունվարի 28-ին գերեզմանոցում է ամփոփվում Ստեփան Կարապետյան Անիյանցը¹:

¹ «Մշակ», 1907, № 18, 26 յունվարի, էջ 1:

1907 թ. հունվարի 27-ին վախճանվում և 30-ին գերեզմանոցում է ամփոփվում Անիչկա Իվանյան Աղաջանյանցը¹:

¹ «Մշակ», 1907, № 21, 30 յունվարի, էջ 1:

1907 թ. հունվարի 27-ին վախճանվում և 31-ին գերեզմանոցում է ամփոփվում Գրիգոր Եզորյան Գոգալյանցը (հոգեհանգիստը՝ Ջորաշենի Ավետյաց Սբ. Աստվածածին եկեղեցում)¹:

¹ Тифлисский листок. № 23. 28 января 1907 г.

1907 թ. հունվարի 29-ին վախճանվում և փետրվարի 3-ին գերեզմանոցում է ամփոփվում Ղազարոս Սարգսյան Ափյանցը¹:

¹ «Մշակ», 1907, № 24, 2 փետրվարի, էջ 1:

1907 թ. փետրվարի 1-ին վախճանվում և 4-ին գերեզմանոցում է ամփոփվում Շուշանիկ Հախնազարյանցը¹:

¹ «Մշակ», 1907, № 24, 2 փետրվարի, էջ 1:

1907 թ. փետրվարի 1-ին վախճանվում և 6-ին գերեզմանոցում է ամփոփվում Գիորգի Անտոնյան Բասինյանցը¹:

¹ «Մշակ», 1907, № 26, 4 փետրվարի, էջ 1:

1907 թ. փետրվարի 25-ին սպանվում և մարտի 1-ին գերեզմանոցում է ամփոփվում չարդախլուեցի, ՀՅԳ-անդամ Սարգիս Պետրոսյանցը¹:

¹ «Մշակ», 1907, № 44, 27 փետրվարի, էջ 1, 3:

1907 թ. փետրվարի 27-ին վախճանվում և մարտի 3-ին գերեզմանոցում է ամփոփվում Գարյա Միքայելյան Թամամշյանցը¹:

¹ «Մշակ», 1907, № 47, 3 մարտի, էջ 1:

1907 թ. ծննդաբերության ժամանակ վախճանվում և մարտի 4-ին գերեզմանոցում է ամփոփվում Հայոց թեմական կոնսիստորիայի աշխատակից Պետոյի մայրը՝ Մարիամ Միրզայանցը¹:

¹ «Մշակ», 1907, № 47, 3 մարտի, էջ 1:

1907 թ. մարտի 6-ին վախճանվում (ծնվ. 1875 թ.)¹ և 7-ին գերեզմանոցում է ամփոփվում Հայոց դրամատիկական խմբի անդամ, դերասան Պողոս Ալեքսանդրյան Մելիք-Փաշայանցը (Ռշտունի): Հոգեհանգիստը՝ Թանդոյան Սր. Աստվածածին եկեղեցում²:

¹ Ռշտունու մասին տե՛ս «Յուշարար», 1907, № 3, 18 մարտի, էջ 36-37:

² Тифлиссский листок. № 52. 7 марта 1907 г.

1907 թ. մարտի 8-ին վախճանվում և գերեզմանոցում է ամփոփվում Դարեջան Մարտիրոսյան Դուլյանը¹:

¹ Тифлиссский листок. № 54. 9 марта 1907 г.

1907 թ. մարտի 13-ին վախճանվում և 16-ին գերեզմանոցում է ամփոփվում Կարինե Խոջամիրյանցը¹:

¹ «Մշակ», 1907, № 56, 15 մարտի, էջ 1:

1907 թ. մարտի 13-ին վախճանվում և 18-ին գերեզմանոցում է ամփոփվում Վարինկան՝ Արշակ Մամուլյանի կինը¹:

¹ «Ապագայ» (Թիֆլիս), 1907, № 11, 16 մարտի, էջ 1; № 12, 17 մարտի, էջ 1; № 13, 18 մարտի, էջ 1: «Մշակ», 1907, № 58, 17 մարտի, էջ 1:

1907 թ. մարտի 19-ին վախճանվում և 22-ին գերեզմանոցում է ամփոփվում Քալյա Ալեքսենևա Ադամյանցը¹:

¹ «Մշակ», 1907, № 61, 21 մարտի, էջ 1; № 62, 22 մարտի, էջ 1:

1907 թ. մարտի 24-ին գերեզմանոցում է ամփոփվում Մարգի Շաթիրյանը¹:

¹ «Մշակ», 1907, № 63, 23 մարտի, էջ 1:

1907 թ. մարտի 31-ին վախճանվում և ապրիլի 3-ին գերեզմանոցում է ամփոփվում իշխան Մովսես Պողոսյան Արղության-Երկայնաբազուկը (Դուլգորուկի): Հոգեհանգիստը՝ Կաթողիկե Սր. Գևորգ եկեղեցում¹:

¹ Тифлиссский листок. № 75. 3 апреля 1907 г.

1907 թ. ապրիլի 10-ին վախճանվում և 13-ին գերեզմանոցում է ամփոփվում Վառվառե Սկանդարյանը¹:

¹ Тифлиссский листок. № 112. 10 апреля 1907 г.

1907 թ. ապրիլի 15-ին գերեզմանոցում է ամփոփվում Սոֆյա Տեր-Ներսիսյանը¹:

¹ «Ապագայ», 1907, № 34, 14 ապրիլի, էջ 1; № 35, 15 ապր., էջ 1:

1907 թ. ապրիլի 19-ին գերեզմանոցում է ամփոփվում Թագուհի Աղամալյան Դուլիյանցը¹:

¹ «Մշակ», 1907, № 82, 18 ապրիլի, էջ 1:

1907 թ. ապրիլի 18-ին վախճանվում և 21-ին գերեզմանոցում է ամփոփվում վաղամեռիկ Վարսենիկ Անտոնյան Քազարյանցը¹:

¹ «Մշակ», 1907, № 83, 19 ապրիլի, էջ 1:

1907 թ. ապրիլի 21-ին գերեզմանոցում է ամփոփվում Մովսես Հովհաննիսյան Տեր-Առաքելյանցը¹:

¹ «Մշակ», 1907, № 83, 19 ապրիլի, էջ 1:

1907 թ. ապրիլի 23-ին սպանվում և 28-ին գերեզմանոցում է ամփոփվում խնուցի Տիգրան Տեր-Բարթուղիմեոսյանը¹:

¹ «Ապագայ», 1907, № 41, 27 ապրիլի, էջ 1; № 42, 28 ապր., էջ 1:

1907 թ. ապրիլի 25-ին վախճանվում և 29-ին գերեզմանոցում է ամփոփվում Կատարինե Ավետիքյան Արելյանցը¹:

¹ «Փայլակ» (Թիֆլիս), 1907, № 13, 27 ապրիլի, էջ 1:

1907 թ. ապրիլի 26-ին վախճանվում և 29-ին գերեզմանոցում է ամփոփվում Արտաշես Աղեքսանդրյան Լալայանցը¹:

¹ «Մշակ», 1907, № 88, 29 ապրիլի, էջ 1:

1907 թ. մայիսի 4-ին վախճանվում և 6-ին գերեզմանոցում է ամփոփվում «Հերմես» տպարանի գրաշար Սիխայի Սգեբրյանը¹:

¹ «Ապագայ», 1907, № 48, 6 մայիսի, էջ 1: «Մշակ», 1907, № 93, 6 մայիսի, էջ 1: «Փայլակ», 1907, № 20, 6 մայիսի, էջ 1:

1907 թ. մայիսի 7-ին վախճանվում և 10-ին գերեզմանոցում է ամփոփվում Կարապետ Մխիթարյանը¹:

¹ «Փայլակ», 1907, № 23, 10 մայիսի, էջ 1:

1907 թ. մայիսի 10-ին եղերական մահով վախճանվում և 13-ին գերեզմանոցում է ամփոփվում մշեցի Մուշեղ Առաքելյանցը¹:

¹ «Մշակ», 1907, № 99, 13 մայիսի, էջ 1:

1907 թ. մայիսի 13-ին գերեզմանոցում է ամփոփվում Գրիգոր քահանա Խոջա-Էյնաթյանի հորեղբոր որդին՝ Արտեմ Իսահակյան Խոջա-Էյնաթյանը¹:

¹ «Մշակ», 1907, № 98, 12 մայիսի, էջ 1:

1907 թ. հունիսի 1-ին վախճանվում և 5-ին գերեզմանոցում է ամփոփվում Գրիգոր Երամյան Երամյանցը (հոգեհանգիստը՝ Մուղնու Սր. Գևորգ եկեղեցում)¹:

¹ «Ժայռ» (Թիֆլիս), 1907, № 6, 3 յունիսի, էջ 1:

1907 թ. հունիսի 1-ին (այլ տեղեկությամբ՝ հունիսի 2-ին) Թիֆլիսում զոհվում և 5-ին գերեզմանոցում

է ամփոփվում ազգային հերոս, Հնչակյան կուսակցության անդամ, ծնունդով Ալաշկերտի Համատգյուղից, հայրենի գավառի պաշտպանության կռիվների մասնակից Սարգիս Տեր-Կարապետյան Հակոբյանը՝ «Քեռսե Սարգիսը»¹: Հոգեհանգիստը՝ Վանքի եկեղեցում²: Հատկանշելի է, որ հայ-թաթարական կռիվների ժամանակ անցնում է Արցախ և հռչակվում «Շուշվա պաշտպան» մականունով:

1 Հ. Ա., Նամակ Թիֆլիզից. Քեռսե Սարգիս, «Հնչակ», 1907, № 7, յուլիս, էջ 84-85:
2 «Ժայռ», 1907, № 7, 5 յունիսի, էջ 1:

1907 թ. հունիսի 11-ին վախճանվում և 14-ին գերեզմանոցում է ամփոփվում Մախմուր Գևորգյան Ատոմյանը¹:

1 «Ժայռ», 1907, № 14, 13 յունիսի, էջ 1:

1907 թ. հունիսի 16-ին վախճանվում և 19-ին գերեզմանոցում է ամփոփվում Պետրոս Հ. Հարությունյանը¹:

1 «Ժայռ», 1907, № 18, 17 յունիսի, էջ 1:

1907 թ. հունիսի 24-ին գերեզմանոցում է ամփոփվում Իվան Ասլանյան Կուկուջանյանը (հոգեհանգիստը՝ Ջգրաշենի Ավետյաց Սբ. Աստվածածին եկեղեցում)¹:

1 Тифлиссский листок. № 121. 10 июня 1907 г.

1907 թ. հուլիսի 8-ին գերեզմանոցում է ամփոփվում Մարիամ Հարությունյանի որդին՝ Գարեգինը¹:

1 «Խարիսխ», 1907, № 5, 6 յուլիսի, էջ 1:

1907 թ. հուլիսի 9-ին վախճանվում և 12-ին գերեզմանոցում է ամփոփվում Ստեփաննոս Գևորգյան Սնազականյանը¹:

1 «Խարիսխ», 1907, № 8, 11 յուլիսի, էջ 1:

1907 թ. հուլիսի 10-ին վախճանվում և 12-ին գերեզմանոցում է ամփոփվում Ավետիս Աստոնյան Սաֆարյանը¹:

1 «Խարիսխ», 1907, № 8, 11 յուլիսի, էջ 1:

1907 թ. օգոստոսի 1-ին Մանգլիսում վախճանվում և 5-ին գերեզմանոցում է ամփոփվում Գրիգոր քահանա Շահնագարյանցի որդին՝ Թիֆլիսի III զիմնագիայի 8-րդ դասարանի աշակերտ Արտաշեսը¹:

1 «Խարիսխ», 1907, № 27, 4 օգոստոսի, էջ 1:

1907 թ. օգոստոսի 5-ին վախճանվում և 8-ին գերեզմանոցում է ամփոփվում Մարիամ Հարությունյան Մանուելյանը¹:

1 «Խարիսխ», 1907, № 29, 7 օգոստոսի, էջ 1:

1907 թ. օգոստոսի 7-ին վախճանվում և 11-ին գերեզմանոցում է ամփոփվում Դաշնակցական դերձակների միության վարչության անդամ Սեդրակ Քյուրքճյանը¹:

1 «Խարիսխ», 1907, № 33, 11 օգոստոսի, էջ 1:

1907 թ. օգոստոսի 8-ին վախճանվում և 10-ին գերեզմանոցում է ամփոփվում Գրիգոր Պետրովիչ Գալենքարյանը¹:

1 «Խարիսխ», 1907, № 34, 12 օգոստոսի, էջ 1:

1907 թ. սեպտեմբերի 23-ին վախճանվում և 26-ին գերեզմանոցում է ամփոփվում երոզյալ հավատարմատար, տոհմիկ ազնվական Գևորգ Մաթեոսյան Դանիելյանը (հոգեհանգիստը՝ Թանդոյան Սբ. Աստվածածին եկեղեցում)¹:

1 Тифлиссский листок. № 206. 1907 г.

1907 թ. սեպտեմբերի 23-ին վախճանվում և 30-ին գերեզմանոցում է ամփոփվում վաղամեռիկ Գևորգ Կարապետյանը¹:

1 «Կովկասի առաւօտ», 1907, № 8, 29 սեպտ., էջ 1:

1907 թ. հոկտեմբերի 11-ին գերեզմանոցում է ամփոփվում փոխգնդապետ Կոնստանդին Շանշյան Շանշյանը (հոգեհանգիստը՝ Սբ. Նշան եկեղեցում)¹:

1 Тифлиссский листок. № 217. 10 октября 1907 г.

1907 թ. հոկտեմբերի 14-ին վախճանվում և 17-ին գերեզմանոցում է ամփոփվում պաշտոնաթող փոխգնդապետ Միքայել Դիմիտրյան Ասլամազյանը (հոգեհանգիստը՝ Թանդոյան Սբ. Աստվածածին եկեղեցում)¹:

1 Тифлиссский листок. № 223. 1907 г.

1907 թ. հոկտեմբերի 18-ին գերեզմանոցում է ամփոփվում 22-ամյա դերասան Սլյուտիչ Ադելխանյանը (հոգեհանգիստը՝ Բերդեհենի Սբ. Աստվածածին եկեղեցում)¹:

1 «Մշակ», 1907, № 133, 17 հոկտեմբերի, էջ 1: «Կովկասի առաւօտ» (Թիֆլիս), 1907, № 23, 17 հոկտ., էջ 1: «Յուշարար», 1907, № 9, 28 հոկտեմբերի, էջ 139:

1907 թ. նոյեմբերի 10-ին գերեզմանոցում է ամփոփվում Առաքել Բաբայանը¹:

1 «Կովկասի առաւօտ», 1907, № 37, 10 նոյեմբերի, էջ 1:

1907 թ. նոյեմբերի 11-ին գերեզմանոցում է ամփոփվում Մարիամ Նազարյանը¹:

1 «Մշակ», 1907, № 154, 10 նոյեմբերի, էջ 1:

1907 թ. նոյեմբերի 11-ին գերեզմանոցում է ամփոփվում Ներսիսյան դպրոցի 4-րդ դասարանի աշակերտ Գրիգոր Միքայելյան Խանոյանը¹:

1 «Մշակ», 1907, № 155, 11 նոյեմբերի, էջ 1: «Կովկասի առաւօտ», 1907, № 38, 11 նոյեմբերի, էջ 1:

1907 թ. նոյեմբերի 11-ին վախճանվում և 15-ին գերեզմանոցում է ամփոփվում վաղամեռիկ Վահան Կարապետյան Միրզայանը¹:

1 «Մշակ», 1907, № 156, 13 նոյեմբերի, էջ 1:

1907 թ. նոյեմբերի 21-ին վախճանվում և 25-ին գերեզմանոցում է ամփոփվում II զիմնագիայի աշակերտ Միրանուշ Շահվերդյանը¹:

1 «Մշակ», 1907, № 165, 24 նոյեմբերի, էջ 1; № 166, 25 նոյ., էջ 1:

1907 թ. նոյեմբերի 23-ին Բաքվում վախճանվում և Տիֆլիս փոխադրվելով՝ դեկտեմբերի 2-ին դեռևս 2 տարի առաջ մահացած կնոջ կողքին է ամփոփվում գրող, ազգագրագետ-վիպասան, քատերագետ, ուսուցիչ Պերճ Պռոշյանը¹ (Հովհաննես Տեր-Առաքելյան, ծնվ. 1837 թ., Աշտարակ²):



Ի դեպ, նախապես որոշված էր թաղումը կատարել նոյեմբերի 25-ին, սակայն, «երբ մարմինը Բագուից բերվեց Թիֆլիսի կայարանը, մի խումբ գրական անձանց մեջ միտք յղացաւ յետաձգել թաղումը մինչև առաջիկայ կիրակի՝ դեկտ. 2-ը, որպէսզի հայարանակ զանազան վայրերից և կենտրոններից ևս՝ հանգուցեալի յիշատակը յարգողները կարողանան մասնակցել կամ պատգամաւորութեամբ, կամ հեռագրով, հանգուցեալի թաղման³։

Տապանաքարին արձանագրված է եղել.

Վիպասան | Պերճ Պռոշեան, | 1837-1907, | Հ. Գ. Վարչ. 1924⁴։



- 1 «Մշակ», 1907, № 166, 25 նոյեմբերի, էջ 1-2; № 167, 27 նոյ., էջ 1; № 170, 30 նոյ., էջ 1; № 171, 1 դեկտեմբերի, էջ 1; № 172, 2 դեկտ., էջ 1: «Անկախ մամուլ» (Թիֆլիս), 1907, № 1, 1 դեկտ., էջ 1; № 2, 2 դեկտ., էջ 1: «Յուշարար», 1907, № 11, 9 դեկտ., էջ 1:
- 2 **Պռոշյան Պ.**, Երկերի ժողովածու, հ. 7, էջ 192-194:
- 3 «Մշակ», 1907, № 167, 27 նոյեմբերի, էջ 1:
- 4 **Երեմեան Ա.**, Թիֆլիսի հայկական պանթեոններում, էջ 47:

1907 թ. նոյեմբերի 29-ին գերեզմանոցում է ամփոփվում Դավիթ Գերասիմյան Ղասումյանը¹:

- 1 «Վտակ», 1907, № 8, 29 նոյեմբերի, էջ 1:

1907 թ. դեկտեմբերի 12-ին գերեզմանոցում է ամփոփվում Սամսոն Մալախյանը¹:

- 1 «Մշակ», 1907, № 180, 12 դեկտեմբերի, էջ 1:

1907 թ. դեկտեմբերի 7-ին Պետերբուրգում վախճանվում և 23-ին գերեզմանոցում է ամփոփվում վաղամեռիկ Լյուսի Գերասիմյան Յակուբյանը¹:

- 1 «Մշակ», 1907, № 187, 20 դեկտ., էջ 1; № 190, 23 դեկտ., էջ 1:

1907 թ. դեկտեմբերի 24-ին վախճանվում և 30-ին գերեզմանոցում է ամփոփվում դերասանուհի 56-ամյա Սաթենիկ (Եղիսաբեթ) Չմշկյանը¹:

- 1 «Յուշարար», 1908, № 13, 6 յունվարի, էջ 1: Տես նաև «Վտակ», 1907, № 32, 27 դեկտեմբերի, էջ 1: «Անկախ մամուլ», 1907, № 26, 30 դեկտեմբերի, էջ 1:

1908

1908 թ. հունվարի 13-ին գերեզմանոցում է ամփոփվում Վահրամ Կարապետյան Մուրաֆյանցը¹:

- 1 «Մշակ», 1908, № 7, 11 յունվարի, էջ 1:

1908 թ. հունվարի 19-ին գերեզմանոցում է ամփոփվում Աշոտ եպիսկոպոսի և Հարություն քահանայի մայրը՝ Փեփեղ Շախյանը¹:

- 1 «Մշակ», 1908, № 13, 18 յունվարի, էջ 1:

1908 թ. հունվարի 19-ին գերեզմանոցում է ամփոփվում Վաճառականների փոխադարձ օգնության ընկերության վարչության անդամ Նիկողայոս Շահբազյանցը (հոգեհանգիստը՝ Նորաշենի Սբ. Աստվածածին եկեղեցում)¹:

- 1 «Մշակ», 1908, № 14, 19 յունվարի, էջ 1:

1908 թ. հունվարի 20-ին գերեզմանոցում է ամփոփվում Յազոն Եսայան Ամիրյանցը¹:

- 1 «Մշակ», 1908, № 15, 20 յունվարի, էջ 1:

1908 թ. հունվարի 24-ին վախճանվում և 27-ին գերեզմանոցում է ամփոփվում Շուշան Ավետիսյան Տեր-Հակոբյանցը (Տեր-Մարկոսյանց)¹:

- 1 «Մշակ», 1908, № 19, 25 յունվարի, էջ 1:

1908 թ. հունվարի 27-ին վախճանվում և 29-ին գերեզմանոցում է ամփոփվում Ջառի Կարապետյան Սեյբումյանը¹:

- 1 «Մշակ», 1908, № 22, 29 յունվարի, էջ 1:

1908 թ. հունվարի 27-ին վախճանվում և 30-ին գերեզմանոցում է ամփոփվում Թիֆլիսի էլեկտրաքարշ ֆունիկուլյորի աշխատակից Գաբրիել Ջաքարյան Միրիմանյանցը (հոգեհանգիստը՝ Թամուրյան Սբ. Աստվածածին եկեղեցում)¹:

- 1 «Վտակ», 1908, № 23:

1908 թ. փետրվարի 9-ին վախճանվում և գերեզմանոցում է ամփոփվում զանձակեցի 70-ամյա Սարգիս Օհանջանյան Քոչարյանցը: Հանգուցյալը Ներսիսյան դպրոցին է թողնում 15.000 ռուբլի արժուրությանը մի տուն¹: Տապանաքարը՝ հայերեն և ռուսերեն արձանագրություններով, կերտված է եղել սև մարմարից (գերեզմանոցի ոչնչացման ժամանակ հրաշքով փրկված հուշաքարի մի բեկորն այժմ պահվում է Խոջիվանքի պանթեոնում): Քարի երկու կողմերին ընթերցվում է.

Սարգիս Օհանջանեան | Քոչարեանցին, | վախչ. է 9 փետր. 1908 ամի, 70 տար. հաս. | անմոռանալի հորեղբայրին | ...երախտագետ թա...:



Ելիսավետուլեզ... | Տարկիս օգանձա... | Կոչարյան... | սկոնչ...:

Հրատ. առաջին անգամ:
1 «Վտակ», 1908, № 34:

1908 թ. փետրվարի 17-ին վախճանվում և 19-ին գերեզմանոցում է ամփոփվում Սիրանուշ Փանյանցը¹:

1 «Մշակ», 1908, № 39, 19 փետրվարի, էջ 1:

1908 թ. փետրվարի 17-ին Մախաթի սարի վրա սպանվում և 24-ին գերեզմանոցում է ամփոփվում Սիբայել Ոսկանյանցը¹:

1 «Մշակ», 1908, № 42, 23 փետրվարի, էջ 1: Սպանության մանրամասների մասին ժամանակի մամուլում գրվել է. «Չանգեզուրի գաւառի բնակիչ Պատուական Ոսկանեանը, որը բնակուում է Կրասնօգորսկի փողոցում, Մետրեվելիի տանը, յայտնեց ոստիկանութեանը, որ իր գործակատար Ալեքսանդր Ջիլավդարեանցը փետրվարի 17-ին, ցերեկվայ ժամը 4-ին, տնից դուրս է կանչել նրա եղբայր Սիբայելին փողոց, և Վազախի գաւառի բնակիչ Մովսէս Վարշամօվի և մի անյայտ մարդու հետ միասին գնացել են դէպի Խօջիվանքի գերեզմանատունը: Այնուհետև նրա եղբայր Սիբայել Ոսկանեանը տուն չէ վերադարձել: Շնորհիւ խուզարկու ոստիկանութեան ձեռք առած միջոցների, Ոսկանեանի դիակը գտնվել է քաղաքից 8 վերստ հեռավորութեան վրա՝ ժայռերի միջև: Քննութիւնից պարզվել է, որ մարդասպանութիւնը գործել են Մովսէս Վարշամօվը և Ալեքսանդր Ջիլավդարեանը, որոնք ձերբակալված են, իսկ 3-րդ անձը անյայտացել է: Դիակի արտաքինը քննելով՝ երևան են համված մօտ 15 գնդակի վերքեր, բացի դրանից դէմքը այլանդակված է, որպէսզի անկարելի լինի ճանաչել, և չարագործները դիակը դիտմամբ այնպիսի տեղ են բողել, որպէսզի գազանները յափըշտակեն մնացորդները» («Մշակ», 1908, № 41, 21 փետրվարի, էջ 3):

1908 թ. փետրվարի 23-ին Նավթիսաճալա նավթահանքում սպանվում և 28-ին գերեզմանոցում է ամփոփվում «Արամազդ» ընկերության բանվոր Հովհաննես Տեր-Մինասյանցը¹:

1 «Մշակ», 1908, № 44, 27 փետրվարի, էջ 1, 3:

1908 թ. մարտի 12-ին վախճանվում և 15-ին գերեզմանոցում է ամփոփվում Քրիստափոր Ստեփանյան Հակոբյանցը¹:

1 «Մշակ», 1908, № 57, 13 մարտի, էջ 1:

1908 թ. մարտի 29-ին գերեզմանոցում է ամփոփվում Հովհաննես Ավետյան Շալամյանցը¹:

1 «Մշակ», 1908, № 69, 27 մարտի, էջ 1:

1908 թ. մարտի 25-ին սպանվում և 30-ին գերեզմանոցում է ամփոփվում Թիֆլիսի առևտրական դպրոցի 4-րդ դասարանի աշակերտ Անդրանիկ Հակոբյան Մանուելյանցը. «...երեկ, ժամը 8-ին, Մողնու փողոցում, № 18 տանը, Թիֆլիսի վաճառական Ստեփան Եարգուլեանի բնակարանում, Թիֆլիսի առևտրական դպրոցի սան՝ Նախիջևանի գավ. գիւղացի Անդրանիկ Մանուելեանը, 18 տարեկան, նստած Գալիք Անանօվի հետ, զննելիս է լինում «Սմիտ և Վիսօն» սիստեմի ատրճանակը, բայց անզուշուքիւնից կրակում է, որից նա վայրկեանաբար մեռնում է»¹:

1 «Մշակ», 1908, № 69, 27 մարտի, էջ 2; № 70, 28 մարտի, էջ 1:

1908 թ. մարտի 30-ին գերեզմանոցում է ամփոփվում Բեթղեհեմի Սք. Աստվածածին եկեղեցու միաբան Գրիգոր ավագ քահանա Տեր-Բարսեղյանցը¹:

1 «Մշակ», 1908, № 71, 29 մարտի, էջ 1: Тифлисский листок. № 76. 29 марта 1908 г.

1908 թ. մարտի 29-ին վախճանվում և ապրիլի 1-ին գերեզմանոցում է ամփոփվում Ներսիսյան և Միքայելյան Արիեստավորաց դպրոցի նախկին ուսուցիչ Ալեքսանդր Գերասիմյան Մելիք-Ալլահվերդյանը¹:

1 «Մշակ», 1908, № 72, 1 ապրիլի, էջ 1, 2:

1908 թ. ապրիլի 7-ին վախճանվում և 10-ին գերեզմանոցում է ամփոփվում Թագուտի Անդրեասյան Բարխուդարյանցը¹:

1 «Մշակ», 1908, № 78, 9 ապրիլի, էջ 1:

1908 թ. ապրիլի 17-ին Մետեխի բանտում վախճանվում և 20-ին գերեզմանոցում է ամփոփվում Գևորգ Վարդանյան Ավանյանցը¹:

1 «Մշակ», 1908, № 84, 20 ապրիլի, էջ 1:

1908 թ. ապրիլի 21-ին վախճանվում և 24-ին գերեզմանոցում է ամփոփվում Համասպիյուտ Սանթրուրյանը (հոգեհանգիստը՝ Վանքի եկեղեցում)¹:

1 «Մշակ», 1908, № 86, 23 ապրիլի, էջ 1:

1908 թ. ապրիլի 23-ին վախճանվում և 27-ին գերեզմանոցում է ամփոփվում Արիեստավորաց դպրոցի նորավարտ աշակերտ Հովհաննես Գրիգորյանը¹:

1 «Մշակ», 1908, № 89, 26 ապրիլի, էջ 1:

1908 թ. ապրիլի 29-ին գերեզմանոցում է ամփոփվում Հովակիմ Թադեոսյան Քոչարյան-Տասալյանը¹։

1908 թ. մայիսի 5-ի զիշերը ինքնասպանություն է գործում և 8-ին գերեզմանոցում է ամփոփվում Ներսիսյան դպրոցն ավարտելուց հետո 4 տարի Գերմանիայում ուսանած, ապա Թիֆլիսի Առևտրական դպրոցում ուսուցչի պաշտոն ստանձնած լեզվաբան, գրաքննադատ Գրիգոր Խաչատուրյան Վանցյանցը (ծնվ.՝ 1870 թ., Ախալքալաքի շրջան, գ. Բեժանո)։ Հեղինակ է մի շարք գրքերի («Հայ հեղինակներ», «Համառոտ հայոց պատմություն», «Պատմական քերականություն», «Գրքագրական քերականություն», «Գրականի ուղղագրություն»), նաև թղթակցում էր հայկական պարբերականներին։ Հոգեհանգիստը՝ Մուղնու Սրբ. Գևորգ եկեղեցում¹։

1 «Մշակ», 1908, № 97, 6 մայիսի, էջ 1; № 98, 7 մայիսի, էջ 1, 4: Գր. Վանցյանցի մասին տե՛ս **Չրաքեան Հ.**, Գրիգոր Վանցյան. 1870-1908, «Բազմավեպ», 1910, № 1, էջ 35-38: **Մարգարյան Վ.**, Գրիգոր Վանցյան. կյանքն ու ստեղծագործական ուղին, «Պատմա-բանասիրական հանդես», 2015, № 1, էջ 164-182: Գրիգոր Վանցյան: Ուսումնասիրություններ և հրապարակումներ, առաջաբանի հեղինակ, խմբագիր և կազմող՝ Վ. Սարգսյան, Երևան, 2016:

1908 թ. մայիսի 9-ին ինքնասպանություն են գործում և 17-ին գերեզմանոցում ամփոփվում հայր և որդի Գրիգոր Նիկողոսյան (Վրաստանի և Իմերեթի կոնսիստորիայի ատենադպիր) և Ալեքսանդր Գրիգորյան Բեժանյանցները (հոգեհանգիստը՝ Վանքի եկեղեցում)¹։

Հայտնի է, որ մայիսի 9-ին «...երեկոյեան ժամը 8-ին, Թիֆլիսի կոնսիստորիայի ատենադպիր Գրիգոր Բեժանեանը ինքնասպանութիւն գործեց, ընդունելով կարբօլեան թթուտ: Պատճառն այն է, որ նրա ուսանող որդին՝ Ալեքսանդրը, ստանալով հոգեկան հիւանդութիւն, տարւելու էր հիւանդանոց: Իսկ նա, չը հաշտվելով այդ մտքի հետ, թոյն ընդունեց և ստիպեց հիւանդ որդուն էլ խմել»²։

1 «Մշակ», 1908, № 106, 16 մայիսի, էջ 1: 2 «Մշակ», 1908, № 102, 11 մայիսի, էջ 2:

1908 թ. մայիսի 31-ին գերեզմանոցում է ամփոփվում գնդապետ Ստեփան Տեր-Հարությունյան Գևամազյանցը¹։

1 «Մշակ», 1908, № 117, 30 մայիսի, էջ 1:

1908 թ. հունիսի 1-ին գերեզմանոցում է ամփոփվում Նատալյա Միրիմանյանը¹։

1 «Մշակ», 1908, № 118, 31 մայիսի, էջ 1:

1908 թ. հունիսի 12-ին գերեզմանոցում է ամփոփվում Նորաշենի Սրբ. Աստվածածին եկեղեցու միաբան քահանա Գավիթ Գիրգիդյանցը¹։

1 «Վտակ», 1908, № 122: Тифлисский листок, № 132. 11 июня 1908 г.

1908 թ. հուլիսի 14-ին գերեզմանոցում է ամփոփվում Սոֆյա Իսահակյան Միրզոյանցը¹։

1 «Մշակ», 1908, № 151, 13 յուլիսի, էջ 1:

1908 թ. հուլիսի 26-ին վախճանվում և 31-ին գերեզմանոցում է ամփոփվում Հարություն Զաքարյան Հովհաննիսյանցը՝ անվանի գրող Նար-Դոսի եղբայրը։ Հոգեհանգիստը՝ Էջմիածնեցոց Սրբ. Գևորգ եկեղեցում¹։

1 «Մշակ», 1908, № 164, 30 յուլիսի, էջ 1:

1908 թ. օգոստոսի 19-ին վախճանվում և 21-ին գերեզմանոցում է ամփոփվում Վասպուրականի Բերկրի գյուղից գաղթած և 30 տարի Իմնածեղի ջրաղացի աշխատակից Մուրադ Ասատուրյան Պետրոսյանը¹։

1 «Մշակ», 1908, № 182, 21 օգոստոսի, էջ 1:

1908 թ. օգոստոսի 23-ին գերեզմանոցում է ամփոփվում Մելքոն Հարությունյան Վարդանյանցը։ 1909 թ. օգոստոսի 23-ին Խոջիվանքի եկեղեցում հոգեհանգիստ է կատարվում է նրա հիշատակին¹։

1 «Հորիզոն», 1909, № 18, 23 օգոստոսի, էջ 1:

1908 թ. օգոստոսի 30-ին Միքայելյան հիվանդանոցի հոգեկան հիվանդների բաժնում վախճանվում և սեպտեմբերի 7-ին գերեզմանոցում է ամփոփվում անվանի պատմափիլիսոփան, դրամատուրգ Մուրացանը (Գրիգոր Տեր-Հովհաննիսյան, ծնվ.՝ 01.12.1854, Շուշի)¹։



1909 թ. օգոստոսի 30-ին նշվում է մահվան տարելիցը²։

1 «Մշակ», 1908, № 192, 2 սեպտեմբերի, էջ 1; № 194, 4 սեպտ., էջ 1; № 196, 6 սեպտ., էջ 1: **Էմմանուել**, Կովկաս, «Ժայռ», 1908, № 69, 12 սեպտ., էջ 3: **Երեմեան Ա.**, Թիֆլիսի հայկական պանթեոններում, էջ 20-21:

2 «Հորիզոն», 1909, № 23, 29 օգոստոսի, էջ 1:

1908 թ. սեպտեմբերի 7-ին գերեզմանոցում է ամփոփվում իշխանուհի Նատալյա Ստեփանյան Խոջամիմասյանցը (հոգեհանգիստը՝ Մուղնու Սրբ. Գեվորգ եկեղեցում)¹։

1 Тифлисский листок. № 181. 5 сентября 1908 г.

1908 թ. սեպտեմբերի 12-ին վախճանվում և 14-ին գերեզմանոցում է ամփոփվում այրի Ելիզավետա Իվանյան Շամխարյանը¹:

1 «Մշակ», 1908, № 201, 13 սեպտեմբերի, էջ 1:

1908 թ. սեպտեմբերի 20-ին վախճանվում և 27-ին գերեզմանոցում է ամփոփվում Մարիամ Բեժանյան Խրիմյանը¹:

1 «Մշակ», 1908, № 211, 26 սեպտեմբերի, էջ 1:

1908 թ. սեպտեմբերի 25-ին վախճանվում և 28-ին գերեզմանոցում է ամփոփվում III իգական գիմնազիայի 8-րդ դասարանի աշակերտուհի Փառանձեն Իշխանյանը¹:

1 «Մշակ», 1908, № 211, 26 սեպտեմբերի, էջ 1:

1908 թ. սեպտեմբերի վերջին վախճանվում և գերեզմանոցում է ամփոփվում բժշկապետ Եզոր Սարգրսյան Բաբյանը: 1909 թ. սեպտեմբերի 27-ին Վանքի Մայր եկեղեցում հանգուցյալի մահվան տարեդարձի կապակցությամբ տեղի էր ունենալու հոգեհանգիստ¹:

1910 թ. ապրիլի 4-ին Խոջիվանքի Սբ. Աստվածածին եկեղեցում, ի հիշատակ հանգուցյալի, տըրվում է պատարագ և կատարվում արձան-մատուռի օրհնության (թերևս բացման)², իսկ սեպտեմբերի 26-ին մահվան երկրորդ տարելիցի կապակցությամբ՝ հոգեհանգստյան արարողություն³:

1911 թ. սեպտեմբերի 25-ին Խոջիվանքի գերեզմանատան մատուռում՝ հանգուցյալի դամբարանին կից, հոգեհանգիստ է կատարվում բժշկապետի մահվան 3-րդ տարելիցի առիթով⁴:

1912 թ. սեպտեմբերի 26-ին նշվում է մահվան 4-րդ տարելիցը⁵:

1 «Մշակ», 1909, № 211, 26 սեպտեմբերի, էջ 1: Նշելի է, որ 1909 թ. հունվարի 27-ին Մարիա Կազիմիրովնա Բաբյանը Գարեգին արքեպիսկոպոս Սաթուրյանցին խնդրում է թույլատրել իրեն մահից հետո ամփոփելու Խոջիվանքի գերեզմանոցում՝ ամուսնու՝ Եզոր Բաբյանցի գերեզմանին կից՝ հավելելով, որ 120 ռ. գնել է 4 քառ. սաժեն հողատարածք այդ տեղում (ՀԱԳ, ֆ. 637, ց. 1, գ. 355, ք. 8): Թույլտվությունը տրվում է (ք. 9):

2 «Մշակ», 1910, № 73, 3 ապրիլի, էջ 1:

3 «Մշակ», 1910, № 211, 25 սեպտ., էջ 1: № 212, 26 սեպտ., էջ 1:

4 «Մշակ», 1911, № 209, 25 սեպտեմբերի, էջ 1:

5 «Մշակ», 1912, № 212, 26 սեպտեմբերի, էջ 1:

1908 թ. հոկտեմբերի 4-ին գերեզմանոցում է ամփոփվում Գարեգին Վարդանյան Պողոսյանը¹:

1 «Մշակ», 1908, № 218, 4 հոկտեմբերի, էջ 1:

1908 թ. հոկտեմբերի 16-ին վախճանվում և 21-ին գերեզմանոցում է ամփոփվում Ջարվարդ Հովհաննիսյան Բեգ-Մարմաշյանը¹:

1 «Մշակ», 1908, № 231, 19 հոկտեմբերի, էջ 1:

1908 թ. հոկտեմբերի 22-ին վախճանվում և 26-ին գերեզմանոցում է ամփոփվում «Գ. Հ. Բայանդուրյան և ընկ.» առևտրական տան նախագահ, պատվավոր քաղաքացի Գրիգոր Հակոբյան Բայանդուրյանը¹:

1 «Մշակ», 1908, № 236, 25 հոկտեմբերի, էջ 1, 3:

1908 թ. նոյեմբերի 13-ին վախճանվում և 18-ին գերեզմանոցում է ամփոփվում Աշոտ Սողոմոնյանցը¹:

1 Тифлиссский листок. № 238. 14 ноября 1908 г.

1908 թ. դեկտեմբերի սկզբին եղերական մահով վախճանվում և 5-ին գերեզմանոցում է ամփոփվում Եկատերինա Գևորգյան Տեր-Հակոբյանը¹: 1909 թ. հունվարի 4-ին Խոջիվանքի գերեզմանոցում կատարվելու էր հոգեհանգիստ՝ ի հիշատակ մահվան քառասունյակի²:

1 «Մշակ», 1908, № 268, 4 դեկտեմբերի, էջ 1:

2 «Մշակ», 1909, № 2, 3 յունվարի, էջ 1:

1908 թ. դեկտեմբերի 9-ին վախճանվում և 14-ին գերեզմանոցում է ամփոփվում Աղաջան Օսեփյան Ահարոնյանը¹:

1 «Մշակ», 1908, № 275, 13 դեկտեմբերի, էջ 1:

1908 թ. դեկտեմբերի 22-ին վախճանվում և 28-ին գերեզմանոցում է ամփոփվում Միրզաջան Կարապետյան Խաչատրյանը¹: 1909 թ. դեկտեմբերի 27-ին Մուղնու Սբ. Գևորգ եկեղեցում կատարվում է հոգեհանգիստ՝ ի հիշատակ մահվան առաջին տարելիցի¹:

1 «Մշակ», 1908, № 284, 24 դեկտեմբերի, էջ 1:

2 «Մշակ», 1909, № 287, 26 դեկտ., էջ 1; № 288, 27 դեկտ., էջ 1:

1908 թ. դեկտեմբերի 24-ին վախճանվում և 27-ին գերեզմանոցում է ամփոփվում Նինա Արտեմյան Խանդամիրյանը¹:

1 «Մշակ», 1908, № 285, 25 դեկտեմբերի, էջ 1:

1909

1909 թ. հունվարի 18-ին գերեզմանոցում է ամփոփվում Ռոման Գերասիմյան Վարդանեսյանը¹: Ի հիշատակ հանգուցյալի՝ դազադի վրա պսակ դնելու փոխարեն Տեր-Մարգարյանները 25 ռուբլի են փոխանցում Արևմտահայաստանի սովյալներին², իսկ նուխեցիների շրջանում Մարգիս Տեր-Հարությունյանի միջոցով հանգանակված 20 ռ. 50 կոպեկն էլ հատկացվում է Նուխու ծխական դպրոցներին³:

1 «Մշակ», 1909, № 10, 17 յունվարի, էջ 1:

2 «Մշակ», 1909, № 11, 18 յունվարի, էջ 3:

3 «Մշակ», 1909, № 13, 21 յունվարի, էջ 4:

1909 թ. հունվարի 18-ին վախճանվում և 24-ին գերեզմանոցում է ամփոփվում Նատալյա Իվանյան Ասլամազյանը¹:

1 «Մշակ», 1909, № 14, 22 յունվարի, էջ 1:

1909 թ. հունվարի 24-ին վախճանվում և 30-ին գերեզմանոցում է ամփոփվում պաշտոնաթող գեներալ-լեյտենանտ, ճարտարագետ, իշխան 84-ամյա Թարխան Աղամալովյան Խոջամինասյանը (ծնվ. 1825 թ.)¹: 1879-1882 թթ. Տփղիսի քաղաքային դումայի անդամ էր²: Հանգուցյալի կտակի համաձայն՝ 1000 ռ. փոխանցվելու էր Ջուբալովի ժողովրդական

տանը, իսկ 15.000 ռ. էլ՝ միջնակարգ դպրոցներում առանց ազգի խտրության 6 սան պահելու համար³:

Նրա թաղման մասին գրվել է. «Թաղումը կատարվեց գեներալին վայել զինուորական պատիմներով: Սգահանդեսին հետևում էին երկու վաշտ զորամաս, վեց թնդանօթ և երկու երաժշտախումբ»⁴: Հայտնի է, որ հանգուցյալ գեներալը Թիֆլիսի ժող-թատրոնին էր կտակել 1000 ռ.: 1910 թ. հոկտեմբերին Քաղաքային վարչությունը որոշում է թատրոնի համար այդ գումարով ձեռք բերել էֆեկտային լուսավորության համար գործիք⁵:

1910 թ. հունվարի 24-ին հանգուցյալի մահվան տարելիցի կապակցությամբ Ջրկինյանց եկեղեցում (Գրիբոյեդովի փող.) պատարագ են մատուցում⁶:

Ի դեպ, նրա հիշատակին կերտված տապանաքարի մի բեկորը 2009 թ. հայտնաբերվում է Մարքսիզմ-լենինիզմի ինստիտուտի շենքը քանդելու ժամանակ և պահպանության նպատակով փոխադրվում պանթեոնի տարածք: Պահպանված բեկորին ընթերցվում է.

Այս է տապան / ... (ին)ժեներ գեներ(ալ) ...իշ-խ(ան)...

Հրատ. առաջին անգամ:



- 1 «Մշակ», 1909, № 17, 25 յունվարի, էջ 1; № 18, 27 յունվարի, էջ 1; № 20, 29 յունվարի, էջ 1; № 22, 31 յունվարի, էջ 1: Кавказ. № 22. 28 января 1909 г. С. 1.
- 2 Кавказ. № 22. 28 января 1909 г.
- 3 «Մշակ», 1909, № 24, 3 փետրվարի, էջ 3: «Հորիզոն», 1910, № 278, 14 դեկտեմբերի, էջ 3: «Կայծեր» (Թիֆլիս), 1910, № 21, 15 դեկտ., էջ 2: «Հովիտ» (Թիֆլիս), 1909, № 10, 22 մարտի, էջ 155:
- 4 «Մշակ», 1909, № 21, 30 յունվարի, էջ 3:
- 5 «Մշակ», 1910, № 225, 12 հոկտեմբերի, էջ 3:
- 6 «Մշակ», 1910, № 15, 23 յունվարի, էջ 1:

1909 թ. հունվարի 23-ին վախճանվում և 28-ին գերեզմանոցում է ամփոփվում Նորաշենի Սբ. Աստվածածին եկեղեցու միաբան Գևորգ ավագ քահանա Տերտերյանցը¹:

- 1 «Մշակ», 1909, № 18, 27 յունվարի, էջ 1:

1909 թ. փետրվարի 2-ին վախճանվում և 6-ին գերեզմանոցում է ամփոփվում Եֆենյա Գրիգորյան Ղարաջյանցը¹:

- 1 «Մշակ», 1909, № 26, 5 փետրվարի, էջ 1:

1909 թ. փետրվարի 14-ին վախճանվում և 17-ին գերեզմանոցում է ամփոփվում Գրիգոր Դավթյան Մասունյանցը¹:

- 1 «Մշակ», 1909, № 33, 17 փետրվարի, էջ 1:

1909 թ. փետրվարի 14-ին սպանվում և 18-ին գերեզմանոցում է ամփոփվում Արամ Միքայելյան Սաֆարյանցը. «Շաբաթ, փետրվարի 14-ին, ցերեկվայ մօտ 2 ժ. 45 րօպէին 3 անյայտներ յարձակվեցին Գանձովսկայա փողոցով անցնող ծխախոտի գործարանատիրոջ որդի Ա. Սաֆարեանցի վրա և սկսեցին «մատուցելներին» կրակել: Դժբախտը, գլխից և կրծքից վիրատրվելով մի քանի գնդակներով, տեղնուտեղը սպանւած ընկաւ մայթի վրայ»¹:

- 1 «Մշակ», 1909, № 33, 17 փետրվարի, էջ 1, 4:

1909 թ. փետրվարի 24-ին վախճանվում և մարտի 1-ին գերեզմանոցի վերին մասում՝ Բաֆու, Ծերենցի, Մուրացանի, Ալ. Երիցյանի գերեզմաններին կից, ամփոփվում է Գարեգին Լևոնյանի հայրը՝ կարգախցի աշուղ Ջիվանին (Սերոբ Ստեփանյան Լևոնյան)¹:



Հոգեհանգիստը՝ Վանքի եկեղեցում: Տապանաքարին արձանագրված է եղել.

Աշուղ Ջիվանի, / 1846-1909²:

Աշուղ Ջիվանու ժառանգները ցանկություն են հայտնել հոր գերեզմանին «հայկական ոճով քանդակազարդված խաչքար» կանգնեցնել: Ի պատասխան Ջիվանու որդու՝ Գարեգին Լևոնյանի նամակի՝ 1912 թ. հուլիսի 15-ին անվանի ճարտարապետ Թորոս Թորամանյանը ողջունում է այդ քայլը³:

- 1 «Մշակ», 1909, № 40, 25 փետրվարի, էջ 1: № 42, 27 փետր., էջ 1; № 45, 3 մարտի, էջ 2: Тифлиссский листок. № 45. 26 февраля 1909 г.; № 48, 1 марта 1909 г. «Յուշարար», 1909, № 13, 12 յուլիսի, էջ 187-188:
- 2 **Երենեան Ա.**, Թիֆլիսի հայկական պանթեոններում, էջ 30-32:
- 3 **Թորամանյան Թ.**, Նամակներ, Երևան, 1968, էջ 201, 418:

1909 թ. մարտի 1-ին գերեզմանոցում է ամփոփվում Աֆթանդիլ Ալեքսանդրյան Կորգանյանցը¹:

- 1 «Մշակ», 1909, № 43, 28 փետրվարի, էջ 1:

1909 թ. մարտի 10-ին վախճանվում և 15-ին գերեզմանոցում է ամփոփվում Շահեն Սահակյան Շահնազարյանցը¹:

- 1 «Մշակ», 1909, № 54, 13 մարտի, էջ 1:

1909 թ. մարտի 15-ին գերեզմանոցում է ամփոփվում «Մշակ» թերթի և օր. Նվարդ Աղանյանի տպարանի գրաշար Վանո Բասինյանցը¹:

- 1 «Մշակ», 1909, № 55, 14 մարտի, էջ 1:

1909 թ. մարտի 15-ին Խոջիվանքի մատուռում տեղի ունեցած հոգեհանգստի արարողությունից հետո կատարվում է մոզոլոցի մանկավարժ Անդրեաս Մակարյան Ջաշիտյանցի որդու՝ ուսուցիչ Մակար Ջա-

շիտյանցի հիշատակը հավերժացնող արձանի բացումը¹:

¹ «Մշակ», 1909, № 55, 14 մարտի, էջ 1:

1909 թ. մարտի 29-ին վախճանվում և ապրիլի 2-ին գերեզմանոցում է ամփոփվում Հավլաբարի Սբ. Կարապետ եկեղեցու ծխական դպրոցի ուսուցչուհի Աննա Գևորգյան Մառանջյանը (հոգեհանգիստը՝ Սբ. Կարապետ եկեղեցում)¹:

¹ «Մշակ», 1909, № 66, 2 ապրիլի, էջ 1:

1909 թ. ապրիլի 7-ին գերեզմանոցում է ամփոփվում Ավետիք Մկրտչյան Էնֆիաճյանը¹:

¹ «Մշակ», 1909, № 70, 7 ապրիլի, էջ 1:

1909 թ. ապրիլի 13-ին վախճանվում և գերեզմանոցում է ամփոփվում տոհմական պատվավոր քաղաքացի, ուսումնարանի և գիշերօթիկ դպրոցի տնօրեն Գեորգի Լվարսաբյան Կուզանյանը (Կուզանով): Հոգեհանգիստը՝ Վանքի եկեղեցում¹:

¹ Тифлиссский листок. № 91. 24 апреля 1909 г.

1909 թ. մայիսի 2-ին վախճանվում և 6-ին գերեզմանոցում է ամփոփվում փայաջուկցի Սեդրակ Պողոսյան Գևորգյանը¹:

¹ «Մշակ», 1909, № 94, 6 մայիսի, էջ 1:

1909 թ. մայիսի 9-ին վախճանվում և 13-ին գերեզմանոցում է ամփոփվում Շողակաթ Փիլիմյան Պալյանը¹:

¹ «Մշակ», 1909, № 98, 12 մայիսի, էջ 1:

1909 թ. մայիսի 26-ին Բալախանում սպանված Միրզոյանների նավթի գործարանների կառավարիչ ինժեներ-տեխնոլոգ Հովհաննես Միքայելյան Բորիսյանցն ամփոփվել էր Խոջիվանքի գերեզմանոցում: Նրա մահվան տարելիցին Խոջիվանքի եկեղեցում կատարվում է հոգեհանգստյան արարողություն, նաև՝ արձանի բացում¹:

¹ «Մշակ», 1910, № 114, 29 մայիսի, էջ 1: № 115, 30 մայ., էջ 1:

1909 թ. մայիսի 30-ին վախճանվում և հունիսի 1-ին գերեզմանոցում է ամփոփվում Եղիսաբեթ Գաբրիելյան Կաչարովսկայան¹:

¹ «Մշակ», 1909, № 115, 2 յունիսի, էջ 1:

1909 թ. հունիսի 1-ին վախճանվում և 4-ին գերեզմանոցում է ամփոփվում Դավիթ Գրիգորյան Նարիմանյանը (հոգեհանգիստը՝ Մուղնու Սբ. Գևորգ եկեղեցում)¹:

¹ Тифлиссский листок. № 124. 4 июня 1909 г.

1909 թ. հունիսի 22-ին վախճանվում և 27-ին գերեզմանոցում է ամփոփվում Կատարինե Եփրեմյան Խոսրովյանը¹:

¹ «Մշակ», 1909, № 137, 27 յունիսի, էջ 1:

1909 թ. հունիսի 23-ին տանը սպանվում և 27-ին գերեզմանոցում է ամփոփվում Չիթախ Ստեփանյան

Չիթախյանը (հոգեհանգիստը՝ Թանդոյան Սբ. Աստվածածին եկեղեցում)¹:

Սպանության մասին նշվել է, որ «...թիրքահայատակ, արհեստով խոհարար Միհրան Մովսիսյանը դաշոյնի 7 հարուածներով սպանել է իր բնակարանի պատշգամբում քնած՝ ինժեներ Էնֆիաճյանցի կառավարիչ՝ Թիֆլիսի ժառանգական պատուտոր քաղաքացի Չիթախ Չիթախեանին: Ոճրագործուքինը կատարելուց յետոյ Մովսիսեանը փորձում է փախչել, սակայն օգնութեան շտապող ոստիկանները բռնում են նրան: Սպանութեան շարժառիթը վրեժ-խնդրութիւնն է նրա համար, որ հանգուցեալ Չիթախեանը արձակել էր Մովսիսեանին իր կոպիտ վարմունքի համար»²:

¹ Тифлиссский листок. № 142. 25 июня 1909 г.; № 143. 26 июня 1909 г.

² «Մշակ», 1909, № 135, 25 յունիսի, էջ 3:

1909 թ. հուլիսի 1-ին վախճանվում և 5-ին գերեզմանոցում է ամփոփվում Յազոն Ջաքարյան Սիմեոնյանը¹:

¹ «Մշակ», 1909, № 144, 5 յուլիսի, էջ 1:

1909 թ. հուլիսի 5-ին գերեզմանոցում է ամփոփվում Ալեքսեյ Գրիգորյան Երամյանը (հոգեհանգիստը՝ Ջգրաշենի Ավետյաց Սբ. Աստվածածին եկեղեցում)¹:

¹ «Մշակ», 1909, № 143, 4 յուլիսի, էջ 1:

1909 թ. հուլիսի 5-ին գերեզմանոցում է ամփոփվում Արաքսի Վարոսյան Ծաղիկյանը¹:

¹ «Մշակ», 1909, № 143, 4 յուլիսի, էջ 1:

1909 թ. հուլիսի 21-ին վախճանվում և 23-ին գերեզմանոցում է ամփոփվում Ալեքսանդր Նիկողոսյան Շաղիմյանը (հոգեհանգիստը՝ Վանքի եկեղեցում)¹:

¹ Тифлиссский листок. № 164. 22 июля 1909 г.

1909 թ. հուլիսի 22-ին գերեզմանոցում է ամփոփվում Նատալյա Սահակյանը¹:

¹ «Մշակ», 1909, № 156, 21 յուլիսի, էջ 1:

1909 թ. օգոստոսի 6-ին վախճանվում և 9-ին գերեզմանոցում է ամփոփվում Տատո Դավթյան Դավիթխանյանը (հոգեհանգիստը՝ Վանքի եկեղեցում)¹:

¹ «Հորիզոն», 1909, № 7, 9 օգոստոսի, էջ 1:

1909 թ. օգոստոսի 9-ին գերեզմանոցում է ամփոփվում Աբրահամ Սիմեոնյան Հովսեփյանը¹: Սեպտեմբերի 20-ին Ջգրաշենի Սբ. Ավետյաց եկեղեցում հանգուցյալի մահվան քառասունօրյակի կապակցությամբ կատարվելու էր հոգեհանգստյան արարողություն¹:

¹ «Մշակ», 1909, № 172, 8 օգոստոսի, էջ 1:

² «Մշակ», 1909, № 205, 19 սեպտեմբերի, էջ 1:

1909 թ. օգոստոսի 16-ին գերեզմանոցում է ամփոփվում շուշեցի Ասատուր Դ-անիելյանը (հոգեհանգիստը՝ Վանքի եկեղեցում)¹:

1 «Հորիզոն», 1909, № 13, 16 օգոստոսի, էջ 1:

1909 թ. օգոստոսի 20-ին գերեզմանոցում է ամփոփվում Գևորգ Ստեփանյան Գլխախառնը (հոգեհանգիստը՝ Կաթողիկե Սբ. Գևորգ եկեղեցում)¹:

1 Тифлиссский листок. № 186. 19 августа 1909 г.

1909 թ. օգոստոսի 19-ին վախճանվում և 22-ին գերեզմանոցում է ամփոփվում Ստեփան Սինասյան Հակոբյանը¹: Սեպտեմբերի 27-ին Թանդոյան եկեղեցում կատարվելու էր հոգեհանգստյան արարողություն՝ ի հիշատակ հանգուցյալի մահվան 40-օրյակի²:

1 «Մշակ», 1909, № 181, 20 օգոստոսի, էջ 1:

2 «Մշակ», 1909, № 211, 26 սեպտեմբերի, էջ 1:

1909 թ. օգոստոսի 27-ին վախճանվում և 30-ին գերեզմանոցում է ամփոփվում 3-րդ գիմնազիայի 6-րդ դասարանի աշակերտուհի Արաքսյա Արշակյան Ստեփանյանը¹: Հոկտեմբերի 4-ին Ջգրաշենի Սբ. Ավետյաց եկեղեցում տեղի էր ունենալու հոգեհանգիստ՝ ի հիշատակ հանգուցյալի մահվան քառասունօրյակի²: 1910 թ. սեպտեմբերի 26-ին նույն եկեղեցում կատարվում է պատարագ՝ ի հիշատակ մահվան առաջին տարեկիցի³:

1 «Մշակ», 1909, № 189, 29 օգոստոսի, էջ 1:

2 «Մշակ», 1909, № 217, 3 հոկտեմբերի, էջ 1:

3 «Մշակ», 1910, № 212, 26 սեպտեմբերի, էջ 1:

1909 թ. օգոստոսի 28-ին վախճանվում և 30-ին գերեզմանոցում է ամփոփվում Ներսիսյան դպրոցի շրջանավարտ, Ջգրաշենի և Կուկիայի դպրոցների ուսուցիչ 25-ամյա Սարգիս Աբելյան Եսայբեգյանը (հոգեհանգիստը՝ Կուկիայի Սբ. Աստվածածին եկեղեցում)¹: 1910 թ. հոկտեմբերի 10-ին Խոջիվանքի գերեզմանոցի եկեղեցում պատարագ է մատուցվում ի հիշատակ հանգուցյալի մահվան առաջին տարեկիցի²:

1 «Մշակ», 1909, № 190, 30 օգոստոսի, էջ 1, 2: «Հորիզոն», 1909, № 24, 30 օգոստոսի, էջ 1:

2 «Մշակ», 1910, № 223, 9 հոկտեմբերի, էջ 1:

1909 թ. սեպտեմբերի 5-ին գերեզմանոցում է ամփոփվում Աբասթումանում վախճանված Հովհաննես Դավթյանը (հոգեհանգիստը՝ Թանդոյան Սբ. Աստվածածին եկեղեցում)¹:

1 «Հորիզոն», 1909, № 29, 5 սեպտեմբերի, էջ 1:

1909 թ. սեպտեմբերի 6-ին վախճանվում և 9-ին գերեզմանոցում է ամփոփվում Թիֆլիսի դումայի ձայնավոր, բժշկապետ Արտեմ Հովհաննիսյան Վարդանյանը¹: Նոյեմբերի 22-ին հանգուցյալի գերեզմանին տեղի է ունենում հուշարձանի բացման և հոգեհանգստի արարողություն²:

1 Քաղաքային ինքնավարության մեջ, թղթակցություն, «Մշակ», 1909, № 198, 10 սեպտեմբերի, էջ 2: Тифлиссский листок. № 203. 9 сентября 1909 г.

2 Тифлиссский листок. № 267. 21 ноября 1909 г.

1909 թ. սեպտեմբերի 12-ին գերեզմանոցում է ամփոփվում Մարիամ Մարտիրոսյան Ստեփանյանը (հոգեհանգիստը՝ Ջգրաշենի Ավետյաց Սբ. Աստվածածին եկեղեցում)¹:

1 «Հորիզոն», 1909, № 34, 12 սեպտեմբերի, էջ 1; № 35, 13 սեպտեմբերի, էջ 1: «Մշակ», 1909, № 200, 12 սեպտեմբերի, էջ 1:

1909 թ. սեպտեմբերի 6-ին Աբասթումանում վախճանվում և 13-ին գերեզմանոցում է ամփոփվում Էլիշկա Խոսրովյան Բաբայանը (հոգեհանգիստը՝ Մուղնու Սբ. Գևորգ եկեղեցում)¹: Հոկտեմբերի 18-ին Նորաշենի Սբ. Աստվածածին եկեղեցում կատարվելու էր հոգեհանգստյան արարողություն՝ ի հիշատակ մահվան քառասունօրյակի²:

1 «Մշակ», 1909, № 197, 8 սեպտեմբերի, էջ 1; № 200, 12 սեպտեմբերի, էջ 1; № 201, 13 սեպտեմբերի, էջ 1:

2 «Մշակ», 1909, № 229, 17 հոկտեմբերի, էջ 1:

1909 թ. սեպտեմբերի 18-ին սպանվում և 20-ին գերեզմանոցում է ամփոփվում 20-ամյա Աբգար Մնացականյան Սարգսյանը. «Ցերեկվայ ժամը 2^{1/2} մօտերը, Արմենակի Բազար կոչված և Կատոլիչեսկայա փողոցների անկյունում ատրճանակի մի քանի հարուածներով տեղն ու տեղը սպանվեց փողոցով անցնող գինավաճառ Սարգսեանի տղան»¹:

1 «Մշակ», 1909, № 206, 20 սեպտեմբերի, էջ 1, 3:

1909 թ. սեպտեմբերի 27-ին գերեզմանոցում է ամփոփվում Աբրահամ Էքսյուզյանը¹:

1 «Մշակ», 1909, № 211, 26 սեպտեմբերի, էջ 1:

1909 թ. սեպտեմբերի 28-ին վախճանվում և հոկտեմբերի 1-ին գերեզմանոցում է ամփոփվում Էջմիածնեցոց Սբ. Գևորգ եկեղեցու ավագ քահանա Ներսես Աբովյանը (հոգեհանգիստը՝ վերոնշյալ եկեղեցում)¹:

1 «Մշակ», 1909, № 214, 30 սեպտեմբերի, էջ 1: Тифлиссский листок. № 222. 30 сентября 1909 г.

1909 թ. հոկտեմբերի 1-ին Կավազաչ գյուղում վախճանվում և 5-ին գերեզմանոցում է ամփոփվում Հովհաննես Սարգսյան Տեր-Սարգսյանը (հոգեհանգիստը՝ Թանդոյան եկեղեցում)¹:

1 «Մշակ», 1909, № 218, 4 հոկտեմբերի, էջ 1:

1909 թ. հոկտեմբերի 11-ին գերեզմանոցում է ամփոփվում Գայանե Գրիգորյան Պողոսյանը¹:

1 «Մշակ», 1909, № 223, 10 հոկտեմբերի, էջ 1:

1909 թ. հոկտեմբերի 24-ին գերեզմանոցում է ամփոփվում Ղևոնդ քահանա Մամիկոնյանի դուստրը՝ Թիֆլիսի իգական 3-րդ գիմնազիայի 4-րդ դասարանի աշակերտուհի Լուսիկ Տեր-Ղևոնդյան Մամիկոնյանը (հոգեհանգիստը՝ Էջմիածնեցոց Սբ. Գևորգ եկեղեցում)¹: Հանգուցյալի հիշատակին պատկանում էր Գ. քահանա Գորգյանը մկրտում է 5 ռ.՝ ի նպաստ Աղանայի որբերին օգնող զանձարանի²:

1 «Մշակ», 1909, № 234, 23 հոկտեմբերի, էջ 1: ՀԱԳ, ֆ. 227, ց. 1, գ. 160, ք. 117-118:

2 «Մշակ», 1909, № 238, 28 հոկտեմբերի, էջ 4:

1909 թ. հոկտեմբերի 25-ին վախճանվում և 29-ին գերեզմանոցում է ամփոփվում Եղիաբեթ Գրիգորյանը¹:

1 «Մշակ», 1909, № 238, 28 հոկտեմբերի, էջ 1:

1909 թ. հոկտեմբերի 27-ին գերեզմանոցում է ամփոփվում Թիֆլիսի I իզական գիմնազիայի 7-րդ դասարանի աշակերտուհի Մարգարիտա Ռոստոմյան Մարտիրոսյանը¹: Պսակ դնելու փոխարեն Գևորգ Մովսիսյան Չիլինգարյանը, ի նպաստ Հայ գյուղատնտեսական և տնայնագործական ընկերության, նվիրում է 100 ռ., Հռիփսիմեն և Գ. Մուրադյանները՝ 20 ռ.՝ հոգուտ Ներսիսյան դպրոցի չքավոր աշակերտների, Վարդուհի և Եփրեմ Ծատուրյանները՝ 25 ռ.՝ ի նպաստ չքավոր ուսանողների և Հակոբ Տեր-Հակոբյանը՝ 30 ռ.՝ հոգուտ աղանացիների²: Նույնպես և պսակի փոխարեն Գևորգ Չիլինգարյանը նվիրում է ևս 100 ռ. Հայոց Ազգագրական ընկերությանը, Կարապետ Քրիստափորյանը և Սյր. Նշանյանը՝ 10 ռ.՝ հոգուտ Արանայի որբերի, իսկ Բագրատ Պապիսյանը 10 ռ. է փոխանցում «Մշակ»-ի խմբագրությանը³:

Նույն նպատակով հոգուտ աղանացիների Կ. Բարսեղյանը նվիրում է 3 ռ., Հ. Կյունցիանը՝ 2 ռ., Ա. Հովսեփյանը՝ 1 ռ. 50 կոպ., Ն. Սողոմոնյանը, Հ. Տեր-Հարությունյանը՝ 50-ական կոպ., իսկ Մնացական Խոնունցը, ի նպաստ Հայոց ազգագրական ընկերության, 20 ռ.⁴: Ի հիշատակ հանգուցյալի՝ Ա. Սարուխանյանը 25 ռ. է նվիրում նրա չքավոր դասընկերուհու ուսման վարձի, իսկ Վ. Մեհրաբյանը՝ 15 ռ.՝ Արանայի որբերի համար⁵:

1910 թ. հոկտեմբերի 24-ին Վանքի մայր եկեղեցում տեղի է ունենում հոգեհանգիստ՝ ի հիշատակ հանգուցյալի մահվան տարելիցի⁶:

1 «Մշակ», 1909, № 236, 25 հոկտեմբերի, էջ 1:

2 «Մշակ», 1909, № 237, 27 հոկտեմբերի, էջ 3:

3 «Մշակ», 1909, № 238, 28 հոկտեմբերի, էջ 3:

4 «Մշակ», 1909, № 239, 29 հոկտեմբերի, էջ 3:

5 «Մշակ», 1909, № 240, 30 հոկտեմբերի, էջ 2, 3:

6 «Մշակ», 1910, № 235, 23 հոկտ., էջ 1; № 236, 24 հոկտ., էջ 1:

1909 թ. նոյեմբերի 25-ին վախճանվում և գերեզմանոցում է ամփոփվում Սալոմե Հովհաննիսյան Սարաջյանը (հոգեհանգիստը՝ Ջգրաշենի Սբ. Ավետյաց եկեղեցում)¹:

1 Тифлисский листок. № 265. 26 ноября 1909 г.

1909 թ. դեկտեմբերի 8-ին վախճանվում և 12-ին գերեզմանոցում է ամփոփվում Գասպար Կարապետյան (Գերասիմյան) Լիանոզյանը (հոգեհանգիստը՝ Մուղնու Սբ. Գևորգ եկեղեցում)¹:

1910 թ. դեկտեմբերի 6-ին Խոջիվանքի գերեզմանոցում տեղի էր ունենալու մահարձանի օրհնության և բացման արարողությունը²:

1 Тифлисский листок. № 282. 10 декабря 1909 г.

2 «Մշակ», 1910, № 272, 5 դեկտեմբերի, էջ 1:

1909 թ. դեկտեմբերի 11-ին վախճանվում և գերեզմանոցում է ամփոփվում Բարսեղ Սողոմոնյան

Բուդղանյանը (հոգեհանգիստը՝ Վանքի եկեղեցում)¹:

1 Тифлисский листок. № 289. 18 декабря 1909 г.

1909 թ. դեկտեմբերի 17-ին վախճանվում և 18-ին գերեզմանոցում է ամփոփվում Արիս Ջորյանը (հոգեհանգիստը՝ Կուկիայի Սբ. Աստվածածին եկեղեցում)¹:

1 «Հորիզոն», 1909, № 47, 18 դեկտեմբերի, էջ 1:

1909 թ. դեկտեմբերի 20-ին գերեզմանոցում է ամփոփվում Սոֆյա Հովակիմյան Աթաբեգյանը (հուղարկավորությունը՝ Նորաշենի Սբ. Աստվածածին եկեղեցում)¹:

1 «Մշակ», 1909, № 281, 19 դեկտեմբերի, էջ 1:

1910

1909 թ. դեկտեմբերի 29-ին վախճանվում և 1910 թ. հունվարի 3-ին գերեզմանոցում է ամփոփվում Կատարինե Ալեքսանյան Փարենուզյանը¹: Մահվան քառասուրջակին պատարագ է մատուցվում²:

1 «Մշակ», 1910, № 1, 1 յունվարի, էջ 1:

2 «Մշակ», 1910, № 28, 7 փետրվարի, էջ 1:

1910 թ. հունվարի 8-ին գերեզմանոցում է ամփոփվում նույն անսվա 5-ին Վերա թաղամասում տրամվայի վթարից զոհված Տիդիսի 2-րդ մասի պրիստավի օգնական, կոլեգիական քարտուղար Սաղաթել Միրզոյան Դուկասյանը¹:

1 Кавказ. № 5. 8 января 1910 г. С. 1. Тифлисский листок.

№ 5. 8 января 1910 г.

1910 թ. հունվարի 11-ին վախճանվում և 13-ին գերեզմանոցում է ամփոփվում Հովհաննյան դպրոցի 6-րդ դասարանի աշակերտուհի Լիզա Մասեհյանը¹:

1 «Հորիզոն», 1910, № 6, 12 յունվարի, էջ 1:

1910 թ. հունվարի 16-ին վախճանվում և 19-ին գերեզմանոցում է ամփոփվում Աղասի Բասեցյանը¹:

1 «Մշակ», 1910, № 10, 17 յունվարի, էջ 1; № 11, 19 յունվ., էջ 1:

1910 թ. հունվարի 16-ին գերեզմանոցում է ամփոփվում Ալեքսանդր Գևորգյան Անանյանը¹:

1 «Հորիզոն», 1910, № 11, 17 յունվարի, էջ 1:

1910 թ. հունվարի 17-ին վախճանվում և 21-ին գերեզմանոցում է ամփոփվում կոլեգիական խորհրդական Միխայիլ Եգորովիչ Սաղաթելյանը¹:

1 «Մշակ», 1910, № 11, 19 յունվարի, էջ 1; № 12, 20 յունվ., էջ 1;

№ 13, 21 յունվարի, էջ 1:

1910 թ. հունվարի 21-ին վախճանվում և 24-ին գերեզմանոցում է ամփոփվում վանեցի Մարգար Տեր-Հովհաննիսյանը¹:

1 «Հորիզոն», 1910, № 17, 24 յունվարի, էջ 1:

1910 թ. հունվարի 23-ին վախճանվում և 26-ին գերեզմանոցում է ամփոփվում Արգար Իսահակյան Թովմասյանը¹:

1 «Մշակ», 1910, № 16, 24 յունվարի, էջ 1; № 17, 26 յունվ., էջ 1:

1910 թ. հունվարի 24-ին գերեզմանոցում է ամփոփվում Եղիսաբեթ Գրիգորյան Տեր-Բարսեղյանցը¹:

¹ Тифлиссский листок. № 18. 23 января 1910 г.

1910 թ. հունվարի 28-ին վախճանվում և 31-ին գերեզմանոցում է ամփոփվում Հռիփսիմե Սինասյան Սամուելյանցը¹:

¹ «Մշակ», 1910, № 21, 30 յունվարի, էջ 1; № 22, 31 յունվարի, էջ 1; № 24, 3 փետրվարի, էջ 1:

1910 թ. փետրվարի 3-ին վախճանվում և 7-ին գերեզմանոցում է ամփոփվում Տիգրան Ստեփանյան Ստեփանյանցը¹:

¹ «Մշակ», 1910, № 27, 6 փետրվարի, էջ 1:

1910 թ. փետրվարի 10-ին վախճանվում և 14-ին գերեզմանոցում է ամփոփվում տիտղոսակիր խորհրդական Արտեմ Գրիգորյան Եղիազարյանցը¹:

¹ «Մշակ», 1910, № 33, 13 փետրվարի, էջ 1:

1910 թ. փետրվարի 14-ին վախճանվում և 17-ին գերեզմանոցում է ամփոփվում մշեցի Մեսրոպ Վարդանյանը (Պրսեյանը)¹:

¹ «Մշակ», 1910, № 35, 16 փետրվ., էջ 1: № 36, 17 փետրվ., էջ 1:

1910 թ. փետրվարի 20-ին վախճանվում և 23-ին ամփոփվում է Սոֆյա Սարգսյան Թումանյանցը¹:

¹ «Մշակ», 1910, № 40, 21 փետրվ., էջ 1: № 41, 23 փետրվ., էջ 1:

1910 թ. փետրվարի 21-ին վախճանվում և 24-ին ամփոփվում է Լուսիկ Տեր Միքայելյանը¹:

¹ «Մշակ», 1910, № 41, 23 փետրվարի, էջ 1:

1910 թ. փետրվարի 24-ին վախճանվում և 28-ին ամփոփվում է Դավիթ Եսայան Առաքելյանցը¹:

¹ «Մշակ», 1910, № 44, 27 փետրվարի, էջ 1:

1910 թ. մարտի 6-ին վախճանվում և 9-ին գերեզմանոցում է ամփոփվում Հայրապետ Ռուստամյան Զարգարյանցը¹:

¹ «Մշակ», 1910, № 50, 7 մարտի, էջ 1; № 55, 13 մարտի, էջ 1: «Հորիզոն», 1910, № 52, 9 մարտի, էջ 1:

1910 թ. մարտի 7-ին գերեզմանոցում է ամփոփվում Թելավի քաղաքացի Եզր Դուլիջանյան Դուլի-

ջանյանը (հոգեհանգիստը՝ Թանդոյան Սբ. Աստվածածին եկեղեցում)¹:

Նրա տապանաքարին, որը հայտնաբերվել է քաղաքի կենտրոնում հրշեջ խմբի շինությունը քանդելիս (Պ. Յաշվիլու փ., 1), հայերենով և ռուսերենով արձանագրված է եղել.

Թելավի քաղաքացի / Եզր Դուլիջանյան / Դուլիջանյանց, / 3-ն յունվարի 1857 ամի, / 2-ն մարտի 1910 ամի: / Телавский гражданин / Езрб Кулиджановичъ / Кулиджановъ.

¹ Тифлиссский листок. № 53. 6 марта 1910 г.

1910 թ. մարտի 18-ին սպանվում և 28-ին գերեզմանոցում է ամփոփվում նուխեցի Աղասի Մելիք-Այվազյանցը¹:

¹ «Մշակ», 1910, № 67, 27 մարտի, էջ 1: «Հորիզոն», 1910, № 68, 27 մարտի, էջ 1-2:

1910 թ. մարտի 23-ին վախճանվում և 28-ին գերեզմանոցում է ամփոփվում Եփենյա Սարգսյան Զորյանցը¹:

¹ «Մշակ», 1910, № 67, 27 մարտի, էջ 1: «Հորիզոն», 1910, № 67, 26 մարտի, էջ 1:

1910 թ. ապրիլի 3-ին գերեզմանոցում է ամփոփվում Արշակ Աստվածատրյան Շարոյանցը¹:

¹ Тифлиссский листок. № 74. 1 апреля 1910 г.

1910 թ. ապրիլի 3-ին վախճանվում և ապրիլի 7-ին գերեզմանոցում է ամփոփվում Սաշա Ղոնդաղ-սազյանը¹:

¹ «Մշակ», 1910, № 74, 6 ապրիլի, էջ 1:

1913 թ. օգոստոսի 22-ին վախճանվում և 27-ին գերեզմանոցում՝ Գրիգոր Արծրունու շիրմի հարեվանությանը է ամփոփվում «Մշակ»-ի խմբագրակազմի անդամ, հրատարակիչ 55-ամյա Հովհաննես Սարգսյան Տեր-Մարկոսյանցը (հոգեհանգիստը՝ Մուղնու Սբ. Գևորգ եկեղեցում)¹: Հոկտեմբերի 6-ին գերեզմանոցում մահվան քառասնօրյակի առիթով կատարվում է հոգեհանգիստ², իսկ տարելիցին



բացվում է հանգուցյալի հիշատակը հավերժացնող հուշարձան. «...մահարձանը ներկայացնում է մի մեծ սեւ մարմարեայ քար, վրան փորագրված...»:

Յովհաննէս Տէր-Մարկոսեան, 1855-1913³:

1 «Մշակ», 1913, № 186, 24 օգոստոսի, էջ 1 (հանգուցյալի մասին տես նույն տեղում, էջ 1-3); № 187, 25 օգոս., էջ 1; № 188, 27 օգոս., էջ 1-3: «Հորիզոն», 1913, № 188, 24 օգոս., էջ 3; № 189, 25 օգոս., էջ 1, № 190, 27 օգոս., էջ 1-2; № 192, 29 օգոս., էջ 3: Тифлисский листок. № 192. 25 августа 1913 г.
2 «Մշակ», 1913, № 220, 5 հոկտեմբերի, էջ 1; № 221, 6 հոկտ., էջ 1:
3 «Մշակ», 1914, № 243, 28 հոկտեմբերի, էջ 3: «Հորիզոն», 1914, № 235, 23 հոկտ., էջ 1; № 238, 26 հոկտ., էջ 1: «Մշակ», 1914, № 239, 23 հոկտ., էջ 1; № 241, 25 հոկտ., էջ 1; № 242, 26 հոկտ., էջ 1: Кавказское слово. № 27. 17 октября 1914 г.; № 37. 28 октября 1914 г.

1913 թ. օգոստոսի 23-ին վախճանվում և 25-ին գերեզմանոցում է ամփոփվում Շուշիկ Լևոնյան Աֆրիկյանցը (հոգեհանգիստը՝ Ջրաշենի Ավետյաց Սբ. Աստվածածին եկեղեցում)¹:

1 «Հորիզոն», 1913, № 189, 25 օգոստոսի, էջ 1:

1913 թ. օգոստոսի 29-ին վախճանվում և սեպտեմբերի 1-ին գերեզմանոցում է ամփոփվում Կարապետ Մարխանյանը¹:

1 «Մշակ», 1913, № 191, 31 օգոստոսի, էջ 1:

1913 թ. սեպտեմբերի 7-ին մոտ 80 տարեկանում վախճանվում և 10-ին գերեզմանոցում է ամփոփվում Ներսիսյան դպրոցի բազմամյա վաստակավոր ուսուցիչ և վերակացու պարոն Գրիգորը՝ Գրիգոր Տեր-Հարությունյանը (հոգեհանգիստը՝ Վանքի եկեղեցում)¹: 1914 թ. սեպտեմբերի 7-ին՝ տարելիցի օրը, կատարվում է մահարձանի բացումը²:

1 «Մշակ», 1913, № 198, 8 սեպտեմբերի, էջ 1; № 199, 10 սեպտ., էջ 1: «Հորիզոն», 1913, № 201, 8 սեպտ., էջ 1-3; № 202, 10 սեպտ., էջ 1:
2 «Մշակ», 1914, № 197, 6 սեպտեմբերի, էջ 1; № 198, 7 սեպտ., էջ 1: «Հորիզոն», 1914, № 196, 6 սեպտ., էջ 1; № 197, 7 սեպտ., էջ 1:

1913 թ. հոկտեմբերի 2-ին վախճանվում և 6-ին գերեզմանոցում է ամփոփվում Ստեփանոս Հարությունյան Հովհանջանյանցը (հոգեհանգիստը՝ Ջրաշենի Ավետյաց Սբ. Աստվածածին եկեղեցում)¹: Հայտնի է, որ հանգուցյալի զավակները հոգեհացի փոխարեն, ի հիշատակ հոր, Ախալքալաքի նոր դպրոցի շենքի կառուցման համար նվիրում են 100 ռուբլի²:

1 «Մշակ», 1913, № 220, 5 հոկտեմբերի, էջ 1; № 221, 6 հոկտ., էջ 1: «Հորիզոն», 1913, № 223, 5 հոկտ., էջ 1, № 224, 6 հոկտ., էջ 1:
2 «Մշակ», 1913, № 222, 8 հոկտեմբերի, էջ 3:

1913 թ. հոկտեմբերի 4-ին վախճանվում և 6-ին գերեզմանոցում է ամփոփվում Շուշիի նախկին քաղաքագլուխ, պաշտոնաթող փոխգնդապետ Իվան Անդրեյան Քալանթարյանցը¹:

1 «Մշակ», 1913, № 220, 5 հոկտեմբերի, էջ 1:

1913 թ. հոկտեմբերի 9-ին վախճանվում և 20-ին գերեզմանոցում է ամփոփվում Ալեքսանդր Գրիգորյան Խոջափարուխյանը (հոգեհանգիստը՝ Նորաշենի Սբ. Աստվածածին եկեղեցում)¹:

1 «Մշակ», 1913, № 232, 19 հոկտեմբերի, էջ 1: Тифлисский листок. № 237. 19 октября 1913 г.

1913 թ. հոկտեմբերի 14-ին Պոլսում վախճանվում է «Գաշնակցության խիղճն ու բարոյականությունը» խորհրդանշող Սիմոն Զավարյանը (ծնվ. 1867 թ.)¹: Նոյեմբերի 2-ին նրա մարմինը Թիֆլիսի կայարանից փոխադրվում է Վանքի եկեղեցի², իսկ 3-ին ամփոփվում գերեզմանոցում՝ ազգային-հասարակական գործիչների շիրիմների մոտ³: Նոյեմբերի 24-ին կատարվում է հոգեհանգիստ՝ ի հիշատակ հանգուցյալի մահվան քառասնորյակի⁴, մեկ տարի անց՝ տարելիցի⁵, իսկ 1917 թ. հոկտեմբերի 15-ին՝ հիշատակի արարողություն⁶:



1998 թ. Զավարյանի աճյունը ՀՅԳ ԳՄ որոշմամբ փոխադրվում է ծննդավայր Այգեհատ գյուղ (Լոռու մարզ) և նոյեմբերի 15-ին վերահուղարկավորվում գերեզմանատանը⁷:

1 «Մշակ», 1913, № 237, 25 հոկտեմբերի, էջ 1: «Հորիզոն», 1913, № 232, 16 հոկտ., էջ 1; № 233, 17 հոկտ., էջ 1, № 234, 18 հոկտ., էջ 3; № 240, 25 հոկտ., էջ 1; № 241, 26 հոկտ., էջ 1; № 242, 27 հոկտ., էջ 1; № 245, 31 հոկտ., էջ 1, № 246, 1 նոյեմբերի, էջ 1; № 247, 2 նոյ., էջ 1; № 248, 3 նոյ., էջ 1:

2 «Մշակ», 1913, № 244, 2 նոյեմբերի, էջ 1: «Հովիտ», 1913, № 43, 3 նոյեմբերի, էջ 687:

3 «Մշակ», 1913, № 245, 3 նոյեմբերի, էջ 1-3; № 246, 5 նոյ., էջ 3: Գաշնակցական պատանիին գիրքը, հ. Ա, Պէյրոս, 2003, էջ 72-75: Ի դեպ, 1913 թ. դեկտեմբերի 8-ին հանգուցյալի թաղման քառասնորյակին նվիրված սգահանդես է տեղի ունենում Էրզրումի Սանասարյան վարժարանի սրահում («Հորիզոն», 1913, № 285, 20 դեկտ., էջ 3):

4 «Մշակ», 1913, № 261, 23 նոյեմբերի, էջ 1; № 262, 24 նոյ., էջ 1: «Հորիզոն», 1913, № 265, 24 նոյ., էջ 3; № 266, 26 նոյ., էջ 3:

5 «Մշակ», 1914, № 247, 1 նոյեմբերի, էջ 1; № 248, 2 նոյ., էջ 1: Кавказское слово. № 26. 16 октября 1914 г. Մ., Ջոյգ հերոսների գերեզմանի վրայ, «Գաւառի ձայն», 1914, № 105, 12 նոյեմբերի, էջ 2:

6 «Հորիզոն», 1917, № 222, 15 հոկտ., էջ 1-3; № 223, 18 հոկտ., էջ 3:

7 «Լրատան», № 95-96, 28 նոյ.: «Երկիր», 1998, № 152, 17 նոյ.:

1913 թ. հոկտեմբերի 15-ին վախճանվում և 17-ին գերեզմանոցում է ամփոփվում Սոֆյա Հակոբյան Սողոմոնյանը¹:

1 «Մշակ», 1913, № 229, 16 հոկտեմբերի, էջ 1:

1913 թ. հոկտեմբերի 15-ին վախճանվում և 20-ին գերեզմանոցում է ամփոփվում Հայկանուշ Ավետիսյան Փանյանը¹:

1 «Մշակ», 1913, № 230, 17 հոկտեմբերի, էջ 1; № 232, 19 հոկտ., էջ 1; № 233, 20 հոկտ., էջ 1:

1913 թ. հոկտեմբերի 15-ին Բաքվում վախճանվում և 19-ին գերեզմանոցում՝ տոհմական դամբարանում է ամփոփվում «Ի. Ե. Փիթոն և ընկ.» նավթարդյունաբերական և առևտրական ընկերության վարչության նախագահ Կոնստանդին Եգորյան Փիթոնյանը (հոգեհանգիստը՝ Մուղնու Սբ. Գևորգ եկեղեցում)¹:

1 «Մշակ», 1913, № 229, 16 հոկտեմբերի, էջ 1; № 231, 18 հոկտ., էջ 1; № 232, 19 հոկտ., էջ 1: «Հորիզոն», 1913, № 234, 18 հոկտ., էջ 1, № 235, 19 հոկտ., էջ 1: Кавказ. № 237. 18 октября 1913 г. С. 1.

1913 թ. հոկտեմբերի 20-ին՝ գերեզմանոցում Բաֆ-Ֆու մահարձանի բացման օրը, ճառ արտասանելուն պատրաստվելիս հանկարծամահ է լինում և 27-ին Անդրեաս Արծրունու գերեզմանի հարևանությամբ ամփոփվում «Մշակ»-ի խմբագրի պաշտոնում Գրիգոր Արծրունու գործը շարունակած գրաքննադատ և հրապարակախոս, Թիֆլիսի հայ գյուղատնտեսական և տնայնագործական ընկերության հիմնադիր-նախագահ, հասարակական գործիչ վերինագույնիցի 58-ամյա Ալեքսանդր Հայրապետյան Քալանթարը (հոգեհանգիստը՝ Վանքի եկեղեցում): Գեկտեմբերի 1-ին գերեզմանոցում կատարվում է հոգեհանգիստ՝ ի հիշատակ մահվան քառասնորյակի¹:



Մեկ տարի անց՝ 1914 թ. հոկտեմբերի 26-ին, տեղի է ունենում նկարիչ Գևորգ Բաշինջաղյանի նախագծով կերտված հուշարձանի բացումը. «Երկնագոյն մարմարից կերտուած քառակուսի մի պատուանդան բազմել է հողի կրծքին: Վրան իշխում է ծաղկահիւս, սինազարդ քառակուսի մի երկրորդ պատուանդան, որի վրայ քանդակուած խաղողի ողկոյգների, ցորենի հասկի եւ մանգաղի մեջ կարդում ենք»².

Ալեքսանթր / Քալանթար, / 1855-1913:

Ժամանակի մամուլում տեղ են գտել բազմաթիվ նյութեր՝ նվիրված հանգուցյալի հիշատակին³:

1 «Մշակ», 1913, № 267, 30 նոյեմբերի, էջ 1; № 268, 1 դեկտ., էջ 1: «Հորիզոն», 1913, № 270, 30 նոյ., էջ 1; № 271, 3 դեկտ., էջ 3:

2 **Երեմեան Ա.**, Թիֆլիսի հայկական պանթեոններում, «Հանդես ամսօրեայ», 1937, էջ 363-364: Նշվել է նաև. «Պատուանդանի վրայ յաղթական իշխում է մարմարից կերտուած կլոր եւ բարձր գեղեցիկ մի սիւն» (էջ 364): **Նույնի**՝ Թիֆլիսի հայկական պանթեոններում, Վիեննա, 1940, էջ 7-8: «Մշակ», 1914, № 231, 14 հոկտեմբերի, էջ 4; № 239, 23 հոկտ., էջ 1; № 241, 25 հոկտ., էջ 1; № 242, 26 հոկտ., էջ 1; № 243, 28 հոկտ., էջ 3: «Հորիզոն», 1913, № 235, 23 հոկտ., էջ 1; № 237, 22 հոկտ., էջ 1; № 238, 23 հոկտ., էջ 1; № 239, 24 հոկտ., էջ 1; № 240, 25 հոկտ., էջ 1, № 241, 26 հոկտ., էջ 1; № 242, 27 հոկտ., էջ 1: Кавказское слово. № 37. 28 октября 1914 г.

3 «Մշակ», 1913, № 234, 22 հոկտ., էջ 1-3; № 235, 23 հոկտ., էջ 1-3; № 236, 24 հոկտ., էջ 1-3; № 237, 25 հոկտ., էջ 1-3; № 238, 26 հոկտ., էջ 1-3; № 239, 27 հոկտ., էջ 1-5; № 240, 29 հոկտ., էջ 1-2; № 241, 30 հոկտ., էջ 1-3; № 242, 31 հոկտ., էջ 1-2; № 243, 1 նոյեմբերի, էջ 1-3; № 244, 2 նոյ., էջ 2-3; № 245, 3 նոյ., էջ 2-3; № 246, 5 նոյ., էջ 1-3; № 247, 6 նոյ., էջ 3; № 251, 10 նոյ., էջ 2; № 254, 14 նոյ., էջ 1-2; № 255, 15 նոյ., էջ 1-2; № 256, 16 նոյ., էջ 2; № 257, 17 նոյ., էջ 2-3; № 258, 19 նոյ., էջ 1-2; № 260, 21 նոյ., էջ 2; № 261, 23 նոյ., էջ 2-3; № 262, 24 նոյ., էջ 2-3; № 266, 29 նոյ., էջ 2; № 268, 1 դեկտ., էջ 2-4:

1913 թ. հոկտեմբերի 22-ին վախճանվում և 25-ին գերեզմանոցում է ամփոփվում Ստեփանոս Վարդանյանը (հոգեհանգիստը՝ Ջզրաշենի Ավետյաց Սբ. Աստվածածին եկեղեցում)¹:

1 «Մշակ», 1913, № 237, 25 հոկտեմբերի, էջ 2: «Հորիզոն», 1913, № 239, 24 հոկտ., էջ 1, № 240, 25 հոկտ., էջ 1:

1913 թ. հոկտեմբերի 27-ին գերեզմանոցում է ամփոփվում Գրիգոր Մելքոնյան Աբուլյանցը¹: 1914 թ. նոյեմբերի 2-ին տեղի է ունենում հանգուցյալի մահարձանի բացման արարողությունը²:

1 «Մշակ», 1913, № 238, 26 հոկտեմբերի, էջ 2:

2 «Մշակ», 1914, № 247, 1 նոյեմբերի, էջ 1:

1913 թ. նոյեմբերի 7-ին գերեզմանոցում է ամփոփվում Ներսիսյան դպրոցի մախկին ուսուցիչ Գրիգոր Խարիտոնյան Շահբուդադյանը (հոգեհանգիստը՝ Կուկիայի Սբ. Աստվածածին եկեղեցում)¹:

1 «Մշակ», 1913, № 246, 5 նոյեմբերի, էջ 1; № 248, 7 նոյ., էջ 1:

1913 թ. նոյեմբերի 2-ին վախճանվում և 10-ին գերեզմանոցում է ամփոփվում արքունի խորհրդական Պողոս Սինասյան Քաթանյանցը¹:

1 Тифлисский листок. № 254. 9 ноября 1913 г.

1913 թ. նոյեմբերի 6-ին վախճանվում և 10-ին գերեզմանոցում է ամփոփվում Հովնանյան դպրոցի III դասարանի աշակերտուհի Աշխեն Նալբանդյանը (հոգեհանգիստը՝ Թանդոյան Սբ. Աստվածածին եկեղեցում)¹:

1 «Հորիզոն», 1913, № 254, 10 նոյեմբերի, էջ 1:

1913 թ. նոյեմբերի 11-ին վախճանվում և 17-ին գերեզմանոցում է ամփոփվում Սկրտիչ Հարությունյան Սեհրաբյանցը¹:

1 «Մշակ», 1913, № 256, 16 նոյեմբերի, էջ 1:

1913 թ. նոյեմբերի 15-ին վախճանվում և 17-ին գերեզմանոցում է ամփոփվում Խաչատուր Դանիելյան Քոչարյանցը¹:

1 «Մշակ», 1913, № 257, 17 նոյեմբերի, էջ 1:

1913 թ. նոյեմբերի 23-ին վախճանվում և 26-ին գերեզմանոցում է ամփոփվում Պողոս Իզմայիլյանցի (Տիֆլիսի քաղաքագլուխ 1893-1895 թթ.) հարազատ քույրը՝ Կոստանդին Միքայելյան Ալիխանյանցի կինը՝ Հայուհյաց բարեգործական ընկերության մախկին մախագահ, հասարակական գործիչ և բարեգործ Նադեժդա Ալեքսանդրյան Ալիխանյան-

ցը (հոգեհանգիստը՝ Մուղնու Սբ. Գևորգ եկեղեցում)¹: 1914 թ. հունվարի 2-ին նշվում է մահվան քառասունօրյակը²:

1 «Մշակ», 1913, № 263, 26 նոյեմբերի, էջ 1: Тифлисский листок. № 268. 26 ноября 1913 г. **Ն. Յարոյ**, Նադեժդա Ալեքսանդրովնա Ալիխանյան, «Հովիտ», 1914, № 1, էջ 6-7:

2 «Մշակ», 1914, № 1, 1 յունվարի, էջ 1:

1913 թ. նոյեմբերի 23-ին վախճանվում և 26-ին գերեզմանոցում է ամփոփվում Մարիամ Հովհաննիսյան Ամբարդանյանցը (հոգեհանգիստը՝ Թանդոյան Սբ. Աստվածածին եկեղեցում)¹:

1 «Մշակ», 1913, № 263, 26 նոյեմբերի, էջ 1: «Հորիզոն», 1913, № 265, 24 նոյ., էջ 1, № 266, 26 նոյ., էջ 1:

1913 թ. նոյեմբերի 22-ին վախճանվում և 28-ին գերեզմանոցում է ամփոփվում Բագրատ Նիկողայոսյան Շախյանցը¹:

1 «Մշակ», 1913, № 265, 28 նոյեմբերի, էջ 1:

1913 թ. նոյեմբերի 26-ին վախճանվում և 30-ին գերեզմանոցում է ամփոփվում Համազասպ Մարտիրոսյան Տեր-Միքայելյանցը (հոգեհանգիստը՝ Մուղնու Սբ. Գևորգ եկեղեցում)¹:

1 «Հորիզոն», 1913, № 269, 29 նոյեմբերի, էջ 1; № 270, 30 նոյ., էջ 1:

1913 թ. նոյեմբերի 28-ին վախճանվում և 1-ին գերեզմանոցում է ամփոփվում Վաղարշակ Տեր-Մինասյան Տեր-Խաչատրյանցը¹:

1 «Մշակ», 1913, № 268, 1 դեկտեմբերի, էջ 1:

1913 թ. նոյեմբերի 30-ին վախճանվում և գերեզմանոցում է ամփոփվում 1878 թ. Սալմաստ գավառի Ղզլջա գյուղում ծնված Հռիփսիմե Դավթյան Հակոբյանցը¹:

1 Ըստ մի լուսանկարի մակագրության:

1913 թ. դեկտեմբերի 11-ին վախճանվում և 15-ին գերեզմանոցում է ամփոփվում Նիկողայոս Դավթյան Իսավերդյանցը¹:

1 «Մշակ», 1913, № 278, 14 դեկտեմբերի, էջ 1:

1913 թ. դեկտեմբերի 12-ին վախճանվում և 15-ին գերեզմանոցում է ամփոփվում Աննա Ջաքարյան Մելիք-Սարգսյանցը¹:

1 «Մշակ», 1913, № 278, 14 դեկտ., էջ 1; № 279, 15 դեկտ., էջ 1:

1913 թ. դեկտեմբերի 17-ին վախճանվում և 22-ին գերեզմանոցում է ամփոփվում Հայոց դրամատիկական ընկերության աշխատակից և հուշարար Հովհաննես Սարգսյանցը՝ Հուշիկ-Ժամը (հոգեհանգիստը՝ Հավարարի Սբ. Մինաս եկեղեցում)¹: 1914 թ. փետրվարի 9-ին գերեզմանոցում տեղի է ունենում հանգուցյալի արձանի բացումը²:

1 «Մշակ», 1913, № 282, 19 դեկտեմբերի, էջ 1; № 284, 21 դեկտ., էջ 1: «Հորիզոն», 1913, № 284, 19 դեկտ., էջ 1; № 286, 21 դեկտ., էջ 1, 3; № 288, 24 դեկտ., էջ 2:

2 «Մշակ», 1914, № 29, 8 փետրվարի, էջ 1; № 30, 9 փետր., էջ 1: «Հորիզոն», 1914, № 30, 8 փետր., էջ 1:

1913 թ. դեկտեմբերի 22-ին գերեզմանոցում է ամփոփվում Թիֆլիսի իգական I գիմնազիայի 5-րդ դասարանի աշակերտուհի Հեղինե (Էլիզկա) Պետրոսյանը¹:

¹ «Մշակ», 1913, № 282, 19 դեկտեմբերի, № 284, 21 դեկտ., էջ 1; № 285, 22 դեկտ., էջ 1:

1913 թ. դեկտեմբերի 27-ին վախճանվում և 29-ին գերեզմանոցում է ամփոփվում Կատարինե Սիրունյանը (հոգեհանգիստը՝ Թամրոյան Սբ. Աստվածածին եկեղեցում)¹:

¹ «Հորիզոն», 1913, № 293, 29 դեկտեմբերի, էջ 1:

1914

1914 թ. հունվարի 2-ին վախճանվում և գերեզմանոցում է ամփոփվում թավրիզեցի Ղազար Մանուկյանը: Որպես շինանյութ՝ հնգատող արձանագրությամբ տապանաքարն ագուցվել է № 98 դպրոցի բակի շրջապարսպի մեջ:



Եմ՝ Ղազար Մանուկեանց, / թավրիզեցի, / 60 ամաց, վախ. 1914 թ. 1/2:

Հրատ. **Мурадян П.**, Армянская эпиграфика Грузии: Тбилиси, Ереван, 1988, С. 98.

Ծանոթ. վերձանությունն ըստ Ս. Գարշինյանի լուսանկարի (տե՛ս սույն աշխ., էջ 32): Ի դեպ, հրատարակիչը «Եմ»-ը սխալմամբ լրացրել է «(Այս է տա)պան»:

1914 թ. հունվարի 5-ին վախճանվում և 9-ին գերեզմանոցում է ամփոփվում ուսուցչուհի Մարիամ Ղազարոսյանը (հոգեհանգիստը՝ Նորաշենի Սբ. Աստվածածին եկեղեցում)¹:

¹ «Հորիզոն», 1914, № 5, 9 յունարի, էջ 1:

1914 թ. հունվարի սկզբին Գլխան գյուղում վախճանվում և 9-ին գերեզմանոցում է ամփոփվում Մարգարիտ Բյանդարյանը¹:

¹ «Մշակ», 1914, № 4, 9 յունվարի, էջ 1:

1914 թ. հունվարի 7-ին վախճանվում և 14-ին գերեզմանոցում է ամփոփվում Թամարա Մխիթարյան Օթարյանը (հոգեհանգիստը՝ Քամոյանց Սբ. Գևորգ եկեղեցում)¹:

¹ «Հորիզոն», 1914, № 8, 12 յունարի, էջ 1:

1914 թ. հունվարի 29-ին վախճանվում և փետրվարի 2-ին գերեզմանոցում է ամփոփվում ուսուցիչ, հասարակական գործիչ, Տիֆլիսի քաղաքային վար-

չության նախկին ծառայող Արիստոտ Հովհաննիսյանը (հոգեհանգիստը՝ Մուղնու Սբ. Գևորգ եկեղեցում): Հանգուցյալը Գերմանիայում ուսանելուց հետո՝ 1880-ական թթ. սկզբներին, վերադառնում է Տիֆլիս և Ներսիսյան դպրոցում դասավանդում բնագիտություն և մաթեմատիկա, ինչպես նաև անվճար դասեր տալիս Գայանյան դպրոցում՝ պաշտոնավարելով նաև որպես տեսուչ: 1882 թ. հատկապես նրա ջանքերով գումարվում է Հայոց ընդհանուր ուսուցչական առաջին ժողովը: Երևանի թեմական և Ալեքսանդրապոլի Արղության դպրոցներում հանդես է գալիս տեսչի պաշտոնով, դասավանդում է Էջմիածնի ճեմարանում: Շուրջ 15 տարի կրթության բնագավառում աշխատելուց հետո ստանձնում է Տիֆլիսի առևտրային դրամատան Բաթումի ճյուղի կառավարչի պաշտոնը և մինչև 1905 թ. աշխատելուց հետո փոխադրվում է Տիֆլիս և գործունեություն ծավալում քաղաքային ինքնավարության բնագավառում: Կազմում է ռուս-հայերեն բառարան, որը գերազանցում է Գ. Երեցփոխյանի՝ մինչ այդ գործող եզակի աշխատությունը և անգերազանցելի մնում մինչև Հար. Դադբաշյանի բառարանի լույսընծայումը: Նաև «Փոթորկից հետո» վեպի հեղինակն է: Կյանքի վերջին տարիներն անց է կացնում Զուրաբովի անկեղանոցում, որտեղ և կնքում է մահկանացուն¹:

¹ «Մշակ», 1914, № 22, 31 յունվարի, էջ 1; № 23, 1 փետրվարի, էջ 1; № 24, 2 փետր., էջ 1: «Հորիզոն», 1914, № 23, 31 յունարի, էջ 3; № 24, 1 փետրարի, էջ 1; № 25, 2 փետր., էջ 1, 4; № 26, 4 փետր., էջ 2:



1914 թ. փետրվարի 3-ին վախճանվում և 7-ին գերեզմանոցում է ամփոփվում Ներսիսյան դպրոցի նախկին ուսուցիչ, նկարիչ Հարություն Իսահակյան Շամշինյանը (09.02. 1856 թ.): Հոգեհանգիստը՝ Նորաշենի Սբ. Աստվածածին եկեղեցում¹:



Ի դեպ, 1913 թ. դպրոցը տոնում է նրա ուսուցչական գործունեության 25-ամյակը:

Շամշինյանը բարձրագույն կրթություն ստացած նկարիչ գեղարվեստագետ էր: Ավարտել է Գեղարվեստի ակադեմիան և նկարչություն դասավանդել Ներսիսյան դպրոցում, ինչպես նաև Թիֆլիսի արական գիմնազիայում: Ուներ 4 զավակ²:

1954 թ. մահվան 40-րդ տարելիցի կապակցությամբ կազմակերպվում է նկարչի աշխատանքների ցուցահանդես³:

1 «Մշակ», 1914, № 28, 6 փետրվարի, էջ 1; № 29, 7 փետր., էջ 1: «Հորիզոն», 1914, № 28, 6 փետր., էջ 1-3; № 29, 7 փետր., էջ 1; № 30, 8 փետր., էջ 3: **Երեմեան Ա.**, Թիֆլիսի հայկական պանթեոններում, էջ 27-28:

2 **Ուսուցիչ**, Յարութին Շամշինեան, «Հորիզոն», 1914, № 29, 7 փետրարի, էջ 2:

3 ՀՍՀ, հ. 8, Երևան, 1982, էջ 446-447:

1914 թ. փետրվարի 8-ին վախճանվում և 11-ին գերեզմանոցում է ամփոփվում քաղաքային դպրոցներում 28 տարի պաշտոնավարած, Սր. Սարգիս եկեղեցական-ծխական դպրոցի հոգաբարձության նախագահ Նիկողայոս Հովհաննիսյան Փիրումյանցը (հոգեհանգիստը՝ Մուղնու Սր. Գևորգ եկեղեցում)¹:

1 «Մշակ», 1914, № 31, 11 փետրվարի, էջ 1: «Հորիզոն», 1914, № 32, 11 փետր., էջ 1; № 33, 13 փետր., էջ 3:

1914 թ. փետրվարի 14-ին վախճանվում և 18-ին գերեզմանոցում է ամփոփվում «Ա. Փրիդոնյան և ընկ.» դրամատան գրասենյակի տնօրեն Ալեքսանդր Թովմայան Փրիդոնյանցը (հոգեհանգիստը՝ Մուղնու Սր. Գևորգ եկեղեցում)¹:

1 «Մշակ», 1914, № 34, 16 փետրվարի, էջ 1; № 35, 16 փետր., էջ 1: «Հորիզոն», 1914, № 32, 11 փետր., էջ 1; № 33, 13 փետր., էջ 3: *Кавказ*. № 38. 16 февраля 1914 г. С. 1.

1914 թ. փետրվարի 21-ին Բաքվում վախճանվում (դին Տփղիս է բերվում փետրվարի 23-ին)¹ և մարտի 2-ին գերեզմանոցում է ամփոփվում Նորաշենի Սր. Մարիամյան ծխական դպրոցի հոգաբարձության նախագահ, Կովկասի հայուհյաց բարեգործական ընկերության պատվավոր անդամ և վարչության նախկին քարտուղար, գրող Ալեքսանդր Հովսեփյան Քիշմիշյանցը (ծնվ. 1842 թ.): Հոգեհանգիստը՝ Նորաշենի Սր. Աստվածածին եկեղեցում²: Մարտի 30-ին հանգուցյալի մահվան քառասնօրյակի կապակցությամբ նույն եկեղեցում կատարվում է հոգեհանգըստի³, իսկ 1915 թ. մարտի 1-ին՝ մահարձանի օրհնության արարողություն⁴:

Շիրմաքարին արձանագրված է եղել.

Աղէքսանդր Յովսէփեան Քիշմիշեանց, | 1842-1914⁵:

1 «Հորիզոն», 1914, № 40, 23 փետր., էջ 1; № 46, 2 մարտի, էջ 1: 2 «Մշակ», 1914, № 40, 23 փետրվարի, էջ 1; № 43, 27 փետր., էջ 1; № 45, 1 մարտի, էջ 1; № 46, 2 մարտի, էջ 1: «Հորիզոն», 1914, № 46, 2 մարտի, էջ 1:

3 «Մշակ», 1914, № 69, 30 մարտի, էջ 1:

4 «Մշակ», 1915, № 45, 1 մարտի, էջ 1:

5 **Երեմեան Ա.**, Թիֆլիսի հայկական պանթեոններում, էջ 37:

1914 թ. մարտի 1-ին գերեզմանոցում է ամփոփվում երկրաչափ Աբգար Տեր-Գևորգյան Թեմուրազյանցը (հոգեհանգիստը՝ Կաթողիկե Սր. Աստվածածին (Սր. Գևորգ) եկեղեցում)¹:

1 «Մշակ», 1914, № 44, 28 փետրվարի, էջ 1: «Հորիզոն», 1914, № 44, 28 փետրարի, էջ 1:

1914 թ. մարտի 6-ին վախճանվում և 11-ին գերեզմանոցում է ամփոփվում Ղազարոս Հարությունյան Սահաբջյանցը¹:

1 «Մշակ», 1914, № 52, 9 մարտի, էջ 1; № 53, 11 մարտի, էջ 1:

1914 թ. մարտի 7-ին վախճանվում և 11-ին գերեզմանոցում է ամփոփվում Թիֆլիսի տոհմական պատվավոր քաղաքացի Սեդրակ Մովսեսյան Տեր-Առաքելյանցը¹:

1 «Մշակ», 1914, № 52, 9 մարտի, էջ 1; № 53, 11 մարտի, էջ 1:

1914 թ. մարտի 18-ին վախճանվում և 22-ին գերեզմանոցում է ամփոփվում Արամ Իվանյան Նալբանդյանցը (հոգեհանգիստը՝ Թանդոյան Սր. Աստվածածին եկեղեցում)¹:

1 «Հորիզոն», 1914, № 63, 22 մարտի, էջ 1:

1914 թ. մարտի 18-ին վախճանվում և 23-ին գերեզմանոցում է ամփոփվում Աղեքսանդր Խորենյան Խիզանյանցը (հոգեհանգիստը՝ Ջգրաշենի Ավետյաց Սր. Աստվածածին եկեղեցում)¹:

1 «Հորիզոն», 1914, № 61, 20 մարտի, էջ 1:

1914 թ. ապրիլի 8-ին վախճանվում և 10-ին գերեզմանոցում է ամփոփվում Գրիգոր Խանդամիրյանի քույրը՝ Մարիամ Աստվածատրյան Հովհաննիսյանցը (հոգեհանգիստը՝ Ջգրաշենի Ավետյաց Սր. Աստվածածին եկեղեցում)¹:

1 «Մշակ», 1914, № 74, 10 ապրիլի, էջ 1: «Հորիզոն», 1914, № 74, 10 ապրիլի, էջ 1:

1914 թ. ապրիլի 29-ին վախճանվում և մայիսի 3-ին գերեզմանոցում է ամփոփվում Եկատերինա Գևորգյան Մանուելյանցը¹:

1 «Մշակ», 1914, № 93, 2 մայիսի, էջ 1:

1914 թ. մայիսի 2-ին գերեզմանոցում է ամփոփվում Մուսամբար Ստեփանյան Խաչիկյանցը (հոգեհանգիստը՝ Կուկիայի Սր. Աստվածածին եկեղեցում)¹:

1 «Հորիզոն», 1914, № 92, 1 մայիսի, էջ 1:

1914 թ. մայիսի 9-ին գերեզմանոցում է ամփոփվում իշխանուհի Վառվառա Միրոնյան Արղության-Երկայնաբազուկը (հոգեհանգիստը՝ Թանդոյան Սր. Աստվածածին եկեղեցում)¹: 1915 թ. մայիսի 9-ին տեղի է ունենում մահարձանի բացումը²:

1 «Մշակ», 1914, № 97, 7 մայիսի, էջ 1; № 99, 9 մայ., էջ 1; № 101, 11 մայ., էջ 1: «Հորիզոն», 1914, № 96, 7 մայ., էջ 1; № 97, 8 մայ., էջ 1:

2 «Մշակ», 1915, № 96, 8 մայիսի, էջ 1:

1914 թ. մայիսի 11-ին գերեզմանոցում է ամփոփվում Արարիչ Շիրինյանը (հոգեհանգիստը՝ Սր. Կարապետ եկեղեցում)¹:

¹ «Մշակ», 1914, № 99, 9 մայիսի, էջ 1; № 100, 10 մայիսի, էջ 1: «Հորիզոն», 1914, № 98, 9 մայիսի, էջ 1:

1914 թ. մայիսի 30-ին վախճանվում և հունիսի 1-ին գերեզմանոցում է ամփոփվում Վառվառա Մինթոյան Սերեբրյակյանը (հոգեհանգիստը՝ Թանդոյան Սր. Աստվածածին եկեղեցում)¹:

¹ «Հորիզոն», 1914, № 116, 31 մայիսի, էջ 1; № 117, 1 յունիսի, էջ 1:

1914 թ. հունիսի 15-ին գերեզմանոցում է ամփոփվում Սոֆյա Շիրինյանը (հոգեհանգիստը՝ Սր. Կարապետ եկեղեցում)¹:

¹ «Մշակ», 1914, № 129, 15 յունիսի, էջ 1: «Հորիզոն», 1914, № 128, 15 յունիսի, էջ 1; № 129, 17 յունիսի, էջ 1:

1914 թ. հունիսի 13-ին վախճանվում և 17-ին գերեզմանոցում է ամփոփվում Օլգա Ջախարյան Առյուծյանը (հոգեհանգիստը՝ Մուղնու Սր. Գևորգ եկեղեցում)¹:

¹ «Մշակ», 1914, № 129, 15 յունիսի, էջ 1; № 130, 17 յունիսի, էջ 1: «Հորիզոն», 1914, № 128, 15 յունիսի, էջ 1:

1914 թ. մայիսի 29-ին Կարլսբադում վախճանվում և հունիսի 18-ին գերեզմանոցում է ամփոփվում երդվյալ հավատարամատար, Սանկտ Պետերբուրգի թիֆլիսյան բաժանմունքի հեռագրային ընկերության կառավարիչ Քալանթար Հովհաննիսյան Քալանթարյանը (հոգեհանգիստը՝ Քանոյանց Սր. Գևորգ եկեղեցում)¹:

¹ «Մշակ», 1914, № 117, 31 մայիսի, էջ 1; № 118, 1 յունիսի, էջ 1; № 130, 17 յունիսի, էջ 1; № 131, 18 յունիսի, էջ 1: Кавказ. № 122, 1 июня 1914 г. С. 1; № 136. 18 июня 1914 г. С. 1.

1914 թ. հունիսի 16-ին վախճանվում և 19-ին գերեզմանոցում է ամփոփվում Լյուդիա Կարլյան Մուրաֆյանը¹:

¹ «Մշակ», 1914, № 131, 18 յունիսի, էջ 1; № 132, 19 յունիսի, էջ 1; № 134, 21 յունիսի, էջ 1:

1914 թ. հունիսի 24-ին վախճանվում և 26-ին գերեզմանոցում է ամփոփվում Վարդանուշ Հովունյանը¹:

¹ «Մշակ», 1914, № 138, 26 յունիսի, էջ 1:

1914 թ. հուլիսի 6-ին գերեզմանոցում է ամփոփվում Լուսիկ Միքայելյան Մելիք-Հայկազյանը (հոգեհանգիստը՝ Խոջիվանքի եկեղեցում)¹:

¹ «Հորիզոն», 1914, № 145, 6 յուլիսի, էջ 1:

1914 թ. հուլիսի 9-ին գերեզմանոցում է ամփոփվում Վուրկ Ավետիքյան Եգեկյանը (հոգեհանգիստը՝ Խոջիվանքի եկեղեցում)¹:

¹ «Մշակ», 1914, № 148, 9 յուլիսի, էջ 1: «Հորիզոն», 1914, № 147, 9 յուլիսի, էջ 1:

1914 թ. հուլիսի 10-ին վաղաժամ վախճանվում և գերեզմանոցում է ամփոփվում ավագ քահանա

Գյուտ Աղանյանցի որդին՝ Կայսերական համալսարանի ուսանող, բնագետ Վարդգես Գյուտյան Աղանյանը¹: Հանգուցյալն օր. Ն. Աղանյանի տպարանի երկրորդ հիմնադիր սնօրենն էր²:

¹ «Հորիզոն», 1914, № 149, 11 յուլիսի, էջ 1; № 150, 12 յուլիսի, էջ 1:
² «Հորիզոն», 1914, № 150, 12 յուլիսի, էջ 1:

1914 թ. հուլիսի 22-ին վախճանվում և 27-ին գերեզմանոցում է ամփոփվում «Էպոխա» տպարանի և «Հորիզոն» թերթի գրաշար Սահակ Պետրոսյանը (հոգեհանգիստը՝ Հրեշտակապետաց եկեղեցում)¹:

¹ «Մշակ», 1914, № 160, 24 յուլիսի, էջ 1; № 162, 26 յուլիսի, էջ 1; № 163, 27 յուլիսի, էջ 1: «Հորիզոն», 1914, № 162, 27 յուլիսի, էջ 1:

1914 թ. հուլիսի 28-ին գերեզմանոցում է ամփոփվում Եղիսարեթ Տեր-Գավթյանը (հոգեհանգիստը՝ Թանդոյան Սր. Աստվածածին եկեղեցում)¹:

¹ «Հորիզոն», 1914, № 162, 27 յուլիսի, էջ 1:

1914 թ. օգոստոսի 9-ին գերեզմանոցում է ամփոփվում Գրիգոր Հովհաննիսյան Եսայանցը (Իսայանց)¹:

¹ «Մշակ», 1914, № 174, 9 օգոստոսի, էջ 1:

1914 թ. սեպտեմբերի 6-ին գերեզմանոցում է ամփոփվում Սոֆյա Միմեռնյան Հարությունյանը¹:

¹ «Մշակ», 1914, № 197, 6 սեպտեմբերի, էջ 1:

1914 թ. սեպտեմբերի 6-ին վախճանվում և 11-ին գերեզմանոցում է ամփոփվում Հեղինե Շեկոյանը (հոգեհանգիստը՝ Ջգրաշենի Ավետյաց Սր. Աստվածածին եկեղեցում)¹:

¹ «Հորիզոն», 1914, № 199, 10 սեպտեմբերի, էջ 1:

1914 թ. սեպտեմբերի 24-ին Կիսլովոդսկում վախճանվում է Նիկոլ Դումանը (Նիկոլայոս Տեր-Հովհաննիսյան): Մարմինը Տիֆլիս է հասնում սեպտեմբերի 27-ին և 28-ին ամփոփվում գերեզմանոցում. «Այսօր հողին է հանձնում Կովկասեան հանքային ջրերում վախճանուած դաշնակցական յայտնի գործիչ Նիկոլայոս Տեր-Յովհաննիսեան, որ յայտնի էր կուսակցութեան մէջ Դուման անունով: Հանգուցեալը թաղում է Խօջիվանքի գերեզմանատանը, հանգ. Ս. Ջաւարեանի կողքին»¹ (հոգեհանգիստը՝ Վանքի եկեղեցում)². «Պատարագից յետոյ սկսեց յուղարկաւորութիւնը դէպի Խոջիվանքի գերեզմանատունը: Սովորական թափոր չէր այդ թաղումը... Կարգը պահպանելու համար դազաղի շուրջը շղթայ էր կազմուած:

Յուղարկաւորութիւնը անցնելով Ռուսկայա փողոցով, Մուխրանեան կամուրջով, Յիցիանովի վերելքով, Հալաբարի հրապարակով՝ հասաւ Խոջիվանքի գերեզմանատուն, որտեղ Նիկոլ-Դումանի մարմինը թաղեց Ս. Ջաւարեանի գերեզմանի կողքին»³:

Դումանը Հայ ազատամարտի պատմության խոշորագույն դեմքերից է. «Սալմաստը կազմում է այնուհետև, նրա փառաւոր գործունէութեան գլխատր



վայրը: ...անցնում է Ջուլումի երկիրը, դեկավարում է Դերիկի կռիւր, քրդերի հետ ունեցած բազմաթիւ ընդհարումներով սարսափ տարածում նրանց մէջ, մեծ չափով աջակցում Խանասորի արշաւանքի յաջողութեան: Սասունի ապստամբութեան ժամանակ խմբեր է անց կացնում և վերջապէս այն տեղ է, որ իր լայն ժողովրդականութեան շնորհիւ փրկում է կազմակերպութեան նիւթական և այլ պակասութիւններից ու ձեռնարկած գործերի յաջողութիւնն ապահովում»⁴:

1914 թ. նոյեմբերի 2-ին գերեզմանոցում նշվում է Նիկոլ Դումանի թաղման քառասնօրյակը⁵:

- 1 «Հովիտ», 1914, № 38, 28 սեպտեմբերի, էջ 607: «Հորիզոն», 1914, № 211, 25 սեպտեմբերի, էջ 1-2:
- 2 «Հորիզոն», 1914, № 213, 27 սեպտեմբերի, էջ 1; № 214, 28 սեպտ., էջ 1; № 215, 30 սեպտ., էջ 1:
- 3 «Հորիզոն», 1914, № 215, 30 սեպտեմբերի, էջ 1:
- 4 **Ֆ.**, Դումանը Պարսկաստանում, «Հորիզոն», 1914, № 214, 28 սեպտեմբերի, էջ 2: Թերթի այդ համարի 2-րդ, 3-րդ և 4-րդ էջերն ամբողջությամբ նվիրված են Դումանին (**Անդրանիկ**, Ընկերոջ յիշատակին (էջ 2), **Դրօ, Խէչօ**, Չկայ Դումանը (էջ 2), **Յ. Գեղամակ**, Դումանը (էջ 2), **Արեղեան Ա.**, Մի նահատակ եւս (էջ 2-3), **Ֆ.**, Դումանը Պարսկաստանում (էջ 3), **Ռէն**, Նիկոլը գալիս է (էջ 3), **Յ. Ա.**, Նիկոլ-Դուման (էջ 3), **Թորոսեան Ս.**, Ինչո՞ւ են մեռնում քաջերը (էջ 3-4), **Վրացեան Ս.**, Նիկոլը (էջ 3), **Գարա-Սելիք**, Դումանի յիշատակին (էջ 4), **Գրիսթալ**, Նրան էլ ընդունիր (էջ 4), **Քամալեան Ս.**, Դումանի յիշատակին (էջ 4), ցավակցական բազմաթիվ հեռագրեր): Տես նաև **Գևորգյան Հ.**, Նիկոլ Դուման, Երևան, 2002:
- 5 «Մշակ», 1914, № 247, 1 նոյեմբերի, էջ 1; № 248, 2 նոյ., էջ 1: **Մ.**, Ջոյգ հերոսների գերեզմանի վրայ, «Գաւառի ծայն», 1914, № 105, 12 նոյեմբերի, էջ 2:

1914 թ. սեպտեմբերի 24-ին վախճանվում և 27-ին գերեզմանոցում է ամփոփվում Ղազարոս Նահապետյան Բոստանջյանցը¹:

1 «Մշակ», 1914, № 213, 25 սեպտ., էջ 1; № 214, 26 սեպտ., էջ 1:

1914 թ. սեպտեմբերի 26-ին վախճանվում և 28-ին գերեզմանոցում է ամփոփվում Սեդրակ Հարությունյան Շախկույանցը (հոգեհանգիստը՝ Ջգրաշենի Ավետյաց Սբ. Աստվածածին եկեղեցում)¹:

1 «Հորիզոն», 1914, № 214, 28 սեպտեմբերի, էջ 1:

1914 թ. հոկտեմբերի 12-ին վախճանվում և 18-ին գերեզմանոցում է ամփոփվում Եղիսաբեթ Աղեքսանդրյան Դարչինյանցը (հոգեհանգիստը՝ Էջմիածնեցոց Սբ. Գևորգ եկեղեցում)¹: Ի դեպ, Սկրտիչ Դարչինյանը ծաղկեպսակի փոխարեն, ի հիշատակ հանգուցյալ հորեղբոր կնոջ՝ Եղիսաբեթի, 10 ռ. է նվիրում Էջմիածնեցոց Մարիամյան ծխական օրիորդաց դպրոցին²:

1 «Մշակ», 1914, № 235, 18 հոկտեմբերի, էջ 1: «Հորիզոն», 1914, № 231, 18 հոկտ., էջ 1:

2 «Հորիզոն», 1914, № 265, 27 նոյեմբերի, էջ 4:

1914 թ. հոկտեմբերի 15-ին վախճանվում և 19-ին գերեզմանոցում է ամփոփվում Նունե Քամոյան Բաժբենուկ-Մելիքյանցը¹:

1 «Մշակ», 1914, № 235, 18 հոկտեմբերի, էջ 1:

1914 թ. հոկտեմբերի 19-ին վախճանվում և 23-ին գերեզմանոցում է ամփոփվում Խաչատուր Օհանեսյան Վիլվիլյանցը¹:

1 «Մշակ», 1914, № 238, 22 հոկտեմբերի, էջ 1:

1914 թ. նոյեմբերի 2-ին գերեզմանոցում տեղի է ունենում ազատամարտիկ Ազիզ Սիմեոնի (Նիկոլ Դումանի ընկերն էր) թաղման տարելիցը¹:

1 «Մշակ», 1914, № 247, 1 նոյեմբերի, էջ 1; № 248, 2 նոյեմբերի, էջ 1: **Մ.**, Ջոյգ հերոսների գերեզմանի վրայ, «Գաւառի ծայն», 1914, № 105, 12 նոյեմբերի, էջ 2:

1914 թ. նոյեմբերի 13-ին վախճանվում և 16-ին գերեզմանոցում է ամփոփվում Եգոր Արտեմյան Մուշալանցը (հոգեհանգիստը՝ Վանքի եկեղեցում)¹: Հանգուցյալի որդին՝ Միքայելը, հոր հիշատակին ԿՀԲԸ ճաշարանին նվիրում է 25 ռուբլի²:

1 «Հորիզոն», 1914, № 255, 15 նոյեմբերի, էջ 1:

2 «Հորիզոն», 1914, № 257, 18 նոյեմբերի, էջ 4:

1914 թ. նոյեմբերի 15-ին վախճանվում և 18-ին գերեզմանոցում է ամփոփվում Հարություն Շեքերջյանը (հոգեհանգիստը՝ Հավլաբարի Սբ. Գրիգոր եկեղեցում)¹:

1 «Մշակ», 1914, № 261, 18 նոյեմբերի, էջ 1: «Հորիզոն», 1914, № 257, 18 նոյ., էջ 1:

1914 թ. նոյեմբերի 18-ին գերեզմանոցում է ամփոփվում Նոյեմզար Հովհաննիսյան Սբորչիկյանցը (հոգեհանգիստը՝ Թանդոյան Սբ. Աստվածածին եկեղեցում)¹:

1 «Հորիզոն», 1914, № 249, 8 նոյեմբերի, էջ 1:

1914 թ. նոյեմբերի 21-ին վախճանվում և 23-ին գերեզմանոցում է ամփոփվում կարճևանցի Հովակիմ Անդրեասյան Կարապետյանը (հոգեհանգիստը՝ Թանդոյան Սբ. Աստվածածին եկեղեցում)¹:

¹ «Հորիզոն», 1914, № 262, 23 նոյեմբերի, էջ 1:

1914 թ. նոյեմբերի 23-ին վախճանվում և 25-ին գերեզմանոցում է ամփոփվում Աննա Սկրտչյան Վարդանյանը¹:

¹ «Մշակ», 1914, № 266, 25 նոյեմբերի, էջ 1:

1914 թ. նոյեմբերի 23-ին վախճանվում և 27-ին գերեզմանոցում է ամփոփվում Ռուբեն Մելիք-Հովհաննիսյանը (հոգեհանգիստը՝ Խոջիվանքի եկեղեցում)¹:

¹ «Հորիզոն», 1914, № 264, 26 նոյեմբերի, էջ 1; № 265, 27 նոյ., էջ 1:

1914 թ. դեկտեմբերի 7-ին գերեզմանոցում է ամփոփվում Հովհաննես Պոյաճյանը (հոգեհանգիստը՝ Մուղնու Սբ. Գևորգ եկեղեցում)¹:

¹ «Մշակ», 1914, № 276, 6 դեկտ., էջ 1; № 277, 7 դեկտ., էջ 1: «Հորիզոն», 1914, № 273, 6 դեկտ., էջ 1; № 274, 7 դեկտ., էջ 1:

1914 թ. դեկտեմբերի 9-ին գերեզմանոցում է ամփոփվում պատերազմի դաշտում զոհված պորուչիկ Ա. Բ. Ջուրաբյանը¹:

¹ Кавказское слово. № 75. 12 декабря 1914 г.

1914 թ. դեկտեմբերի 28-ին գերեզմանոցում է ամփոփվում 11-րդ հրացանաձիգ գնդի՝ հերոսաբար զոհված շտաբս-կապիտան Գրիգոր Միքայելյան Ասլամազյանը¹:

¹ «Մշակ», 1914, № 295, 28 դեկտեմբերի, էջ 1: «Հորիզոն», 1914, № 291, 27 դեկտ., էջ 1; № 292, 28 դեկտ., էջ 1:

1915

1915 թ. հունվարի 2-ին գերեզմանոցում է ամփոփվում վաղամեռիկ Մարիամ Հարությունյան Տատոյանը¹:

¹ «Մշակ», 1915, № 1, 1 յունվարի, էջ 1:

1915 թ. հունվարի 8-ին զինվորական նվազածուքյանք գերեզմանոցում է ամփոփվում Սարիղամիշի կռիվներին մասնակցած և Թիֆլիսում վախճանված սպա Նիկողայոս Մելիք-Շահնազարյանը (հոգեհանգիստը՝ Քամոյանց Սբ. Գևորգ եկեղեցում)¹:

¹ «Հորիզոն», 1915, № 5, 9 յունվարի, էջ 3:

1915 թ. հունվարի 8-ին վախճանվում և 11-ին գերեզմանոցում է ամփոփվում երկրորդ կարգի վաճառական, Թամանշյանի քարվանսարայի «Լիոն» խանութի տեր նորբայազետցի Սարգիս Սկրտչի Ավետիսյանը (հոգեհանգիստը՝ Կարմիր Ավետարան եկեղեցում)¹:

¹ «Հորիզոն», 1915, № 6, 10 յունվարի, էջ 1:

1915 թ. հունվարի 20-ին գերեզմանոցում է ամփոփվում Բազրատ Աղայան Ծատուրյանը¹:

¹ «Մշակ», 1915, № 12, 20 յունվարի, էջ 1:

1915 թ. հունվարի 22-ին վախճանվում և 24-ին գերեզմանոցում է ամփոփվում հաֆթվանցի Խաչատուր Հախվերդյան Սարգսյանը (հոգեհանգիստը՝ Ջգրաշենի Ավետյաց Սբ. Աստվածածին եկեղեցում)¹:

¹ «Հորիզոն», 1915, № 17, 23 յունվարի, էջ 1:

1915 թ. հունվարի 22-ին վախճանվում և 26-ին գերեզմանոցում է ամփոփվում Հակոբ Չուլչիյանը (հոգեհանգիստը՝ Կարմիր ավետարան եկեղեցում)¹:

¹ «Հորիզոն», 1915, № 19, 25 յունվարի, էջ 1:

1915 թ. հունվարի վերջին գերեզմանոցում է ամփոփվում բժիշկ Կոնստանդին Մակեդոնյանը, որի մահվան տարելիցը նշվում է 1916 թ. հունվարի 31-ին¹:

¹ «Հորիզոն», 1916, № 23, 31 յունվարի, էջ 1:

1915 թ. փետրվարի 4-ին գերեզմանոցում է ամփոփվում Ալեքսանդր Հովհաննիսյան Ջուհանյանը (հոգեհանգիստը՝ Թանդոյան Սբ. Աստվածածին եկեղեցում)¹:

¹ «Հորիզոն», 1915, № 26, 4 փետրվարի, էջ 1:

1915 թ. փետրվարի 2-ին վախճանվում և 8-ին գերեզմանոցում է ամփոփվում Հովհաննես Կարապետյան Մուքաֆյանը (հոգեհանգիստը՝ Քամոյանց Սբ. Գևորգ եկեղեցում)¹:

¹ «Մշակ», 1915, № 26, 6 փետրվարի, էջ 1: «Հորիզոն», 1915, № 29, 7 փետր., էջ 1; № 30, 8 փետր., էջ 1:

1915 թ. փետրվարի 2-ին բժավոր տիֆից Կարսի բերդի հիվանդանոցի սուր վարակիչ հիվանդությունների բաժնում վախճանվում և 8-ին գերեզմանոցում է ամփոփվում տեղի օրդինատոր բժիշկ Վահան Միքայելյան Տերտերյանը (հոգեհանգիստը՝ Խոջիվանքի գերեզմանատան եկեղեցում)¹: Ի դեպ, մահվան առաջին տարելիցին՝ 1916 թ. փետրվարի 6-ին, կատարվում է հանգուցյալի հիշատակին կերտված մահարձանի օրհնություն²:

¹ «Մշակ», 1915, № 27, 7 փետրվարի, էջ 1: «Հորիզոն», 1915, № 30, 8 փետրվարի, էջ 1:

² «Հորիզոն», 1916, № 28, 6 փետրվարի, էջ 1:

1915 թ. փետրվարի 8-ին գերեզմանոցում է ամփոփվում Մովսես Հարությունյան Դաբաղյանը¹:

¹ «Մշակ», 1915, № 27, 7 փետրվարի, էջ 1:

1915 թ. փետրվարի 7-ին վախճանվում և 11-ին գերեզմանոցում է ամփոփվում Եղիա Պողոսյան Հասրաթյանը (հոգեհանգիստը՝ Ջգրաշենի Սբ. Ավետյաց եկեղեցում)¹: Մարտի 29-ին Խոջիվանքի եկեղեցում նշվելու էր հանգուցյալի մահվան քառասնօրյակը¹:

¹ «Մշակ», 1915, № 29, 10 փետրվարի, էջ 1: «Հորիզոն», 1915, № 31, 10 փետրվարի, էջ 1:

² «Հորիզոն», 1915, № 66, 28 մարտի, էջ 1:

1915 թ. փետրվարի 24-ին գերեզմանոցում է ամփոփվում Աննա Սկրտչյան Սարգսյանը (հոգեհանգիստը՝ Մուղնու եկեղեցում)¹:

¹ «Հորիզոն», 1915, № 42, 24 փետրվարի, էջ 1:

1915 թ. փետրվարի 27-ին վախճանվում և մարտի 7-ին գերեզմանոցում է ամփոփվում Արշակ Միքայելյան Սիմոնյանցը¹: 1916 թ. մարտի 6-ին՝ մահվան առաջին տարեկիցի օրը, կատարվում է գերեզմանին կանգնեցված մահարձանի օրհնության արարողություն²:

1 «Մշակ», 1915, № 50, 7 մարտի, էջ 1:

2 «Մշակ», 1916, № 50, 5 մարտի, էջ 1:

1915 թ. մարտի 1-ին գերեզմանոցում է ամփոփվում դերասան Գևորգ Հարությունյան Պարուն-Սարգրսյանցը (հոգեհանգիստը՝ Թանդոյան Սր. Աստվածածին եկեղեցում)¹:

1 «Մշակ», 1915, № 45, 1 մարտի, էջ 1: «Հորիզոն», 1915, № 47,

1 մարտի, էջ 1:

1915 թ. մարտի 7-ին վախճանվում և 11-ին գերեզմանոցում է ամփոփվում Լևոն Հովհաննիսյան Նալբանդյանցը (հոգեհանգիստը՝ Թանդոյան Սր. Աստվածածին եկեղեցում)¹:

1 «Հորիզոն», 1915, № 54, 10 մարտի, էջ 3:

1915 թ. մարտի 10-ին վախճանվում և 15-ին գերեզմանոցում է ամփոփվում Թիֆլիսի ուսուցչական միության կենտրոնական վարչության նախկին անդամ Հակոբ (Արտաշես) Ալիխանյանցը (հոգեհանգիստը՝ Շամբորեցոց Կարմիր Ավետարան եկեղեցում)¹: Ներսիսյան դպրոցի հոգաբարձու էր, Շամբորեցոց ծխական դպրոցի ավագ ուսուցիչ²: 1916 թ. մարտի 20-ին գերեզմանատանը կատարվելու էր հանգուցյալի տարեկիցը³:

1 «Մշակ», 1915, № 56, 15 մարտի, էջ 1: «Հորիզոն», 1915, № 58, 14 մարտի, էջ 1, 3:

2 «Հորիզոն», 1915, № 58, 14 մարտի, էջ 1, 3; № 59, 15 մարտի, էջ 1: Մահախոսականները տե՛ս № 59, 15 մարտի, էջ 2; «Մշակ», 1915, № 54, 13 մարտի, էջ 4 (եղել է նաև Նոր Բայազետի բանկի կառավարիչ):

3 «Հորիզոն», 1916, № 63, 19 մարտի, էջ 1; № 64, 20 մարտի, էջ 1:

1915 թ. մարտի 15-ին վախճանվում և մարտի 19-ին գերեզմանոցում է ամփոփվում բժիշկ Գերասիմ Գևորգյան Գուլույանցը¹:

1 «Մշակ», 1915, № 58, 18 մարտի, էջ 1:

1915 թ. մարտի 25-ին վախճանվում և 26-ին գերեզմանոցում է ամփոփվում Փառանձեմ Գ. Հայրապետյանցը (հոգեհանգիստը՝ Ջգրաշենի Ավետյաց Սր. Աստվածածին եկեղեցում)¹:

1 «Հորիզոն», 1915, № 64, 26 մարտի, էջ 1:

1915 թ. մարտի 23-ին վախճանվում և 29-ին գերեզմանոցում է ամփոփվում Նատալյա Մարտիրոսյան Սաղոյանցը (հոգեհանգիստը՝ Սր. Կարապետ եկեղեցում)¹: 1916 թ. հունիսի 5-ին գերեզմանատան մատուռում մահվան տարեկիցի առիթով պատարագ է մատուցվում, իսկ դամբարանին՝ հոգեհանգստյան արարողություն²:

1 «Հորիզոն», 1915, № 67, 29 մարտի, էջ 1: «Մշակ», 1915, № 64, 29 մարտի, էջ 1:

2 «Մշակ», 1916, № 122, 4 յունիսի, էջ 1:

1915 թ. մարտի 25-ին վախճանվում և 29-ին գերեզմանոցում է ամփոփվում Ներսիսյան դպրոցի նախկին և Թիֆլիսի արական 2-րդ գիմնազիոնի ուսուցիչ Հարություն Ջոհրաբյանը (հոգեհանգիստը՝ Վանքի եկեղեցում)¹:

1 «Հորիզոն», 1915, № 65, 27 մարտի, էջ 3; № 66, 28 մարտի, էջ 1; № 67, 29 մարտի, էջ 1: «Մշակ», 1915, № 64, 29 մարտի, էջ 1:

1915 թ. մարտի 26-ին վախճանվում և 29-ին գերեզմանոցում է ամփոփվում մահլանցի Սարգիս Մահտեսի-Բաղդասարյանը (հոգեհանգիստը՝ Սր. Գրիգոր Լուսավորիչ եկեղեցում)¹:

1 «Հորիզոն», 1915, № 66, 28 մարտի, էջ 1:

1915 թ. մարտի 28-ին վախճանվում և ապրիլի 5-ին գերեզմանոցում է ամփոփվում Հովնանյան դպրոցի 7-րդ դասարանի աշակերտուհի Աստղիկ (Նինա) Տեր-Պողոսյանը (հոգեհանգիստը՝ Մուղնու Սր. Գևորգ եկեղեցում)¹:

1 «Հորիզոն», 1915, № 72, 4 ապրիլի, էջ 1:

1915 թ. մարտի 31-ին վախճանվում և ապրիլի 5-ին գերեզմանոցում է ամփոփվում Երվանդ Գալլատյան Հարությունյանցը (հոգեհանգիստը՝ Ջգրաշենի Ավետյաց Սր. Աստվածածին եկեղեցում)¹:

1 «Հորիզոն», 1915, № 72, 4 ապրիլի, էջ 1: «Մշակ», 1915, № 69, 4 ապրիլի, էջ 1:

1915 թ. ապրիլի 14-ին գերեզմանոցում է ամփոփվում Կարպատյան ճակատում զոհված պորուչիկ Արտաշես Մովսիսյան Վարդանյանցը¹:

1 Кавказское слово. № 84. 15 апреля 1915 г.

1915 թ. ապրիլի 15-ին վախճանվում և 19-ին գերեզմանոցում է ամփոփվում Մարիամ Սարգսյանցը¹:

1 «Մշակ», 1915, № 80, 18 ապրիլի, էջ 1:

1915 թ. ապրիլի 18-ին վախճանվում և 22-ին գերեզմանոցում է ամփոփվում Եզոր Իվանյան Տեր-Պետրոսյանցը¹:

1 «Մշակ», 1915, № 82, 21 ապրիլի, էջ 1:

1915 թ. ապրիլի 20-ին վախճանվում և 23-ին գերեզմանոցում է ամփոփվում Ալեքսան Թևանյանցը (հոգեհանգիստը՝ Սր. Մինաս եկեղեցում)¹:

1 «Հորիզոն», 1915, № 87, 23 ապրիլի, էջ 1:

1915 թ. ապրիլի 18-ին վախճանվում և 26-ին գերեզմանոցում է ամփոփվում Պետրոզբաղի կանանց բարձրագույն կուրսերի ուսանողուհի Աստղիկ Ալեքսանդրյան Ղազազյանցը¹:

1 «Մշակ», 1915, № 86, 25 ապրիլի, էջ 1:

1915 թ. ապրիլի 27-ին վախճանվում և 30-ին գերեզմանոցում է ամփոփվում Տիգրան Սուքիասյան Բեգլարյանցը (հոգեհանգիստը՝ Քամոյանց Սր. Գևորգ եկեղեցում)¹:

1 «Հորիզոն», 1915, № 92, 29 ապրիլի, էջ 1:

1915 թ. մայիսի 3-ին վախճանվում և 6-ին գերեզմանոցում է ամփոփվում Եղիսաբեթ Ավետիսյան Խոջափարությանը¹:

1 «Մշակ», 1915, № 94, 6 մայիսի, էջ 1:


1915 թ. մայիսի 3-ին վախճանվում և 7-ին գերեզմանոցում է ամփոփվում Արտեմ Գրիգորյան Երամյանը (հոգեհանգիստը՝ Մուղնու Սր. Գևորգ եկեղեցում)¹:

1 «Մշակ», 1915, № 93, 5 մայիսի, էջ 1:

1915 թ. մայիսի 7-ին գերեզմանոցում է ամփոփվում Սիրան Մանկալյանը (հոգեհանգիստը՝ Նորաշենի Սր. Աստվածածին եկեղեցում)¹:

1 «Հորիզոն», 1915, № 97, 6 մայիսի, էջ 1:

1915 թ. մայիսի 6-ին վախճանվում և 10-ին գերեզմանոցում է ամփոփվում Կովկասի Հայ բարեգործական ընկերության բարերար Սմբատ Ստեփանյան Տեր-Առաքելյանը (հոգեհանգիստը՝ Ջգրաշենի Ավետյաց Սր. Աստվածածին եկեղեցում)¹: Ի դեպ, դեռևս 1914 թ. նա գերեզմանատան վարչությունից 133 ռուբլով մի հողակտոր է գնել և գմբեթավոր դամբարան-մահարձան կառուցելու թույլտվություն ձեռք բերել՝ իրեն և տիկնոջն ամփոփելու համար²: Կինը՝ Գայանե Տեր-Առաքելյանը, հանգուցյալի հիշատակին հոգեհացի փոխարեն նվիրատվություններ էր



Ս. Տեր-Առաքելյանի դամբարան-մահարձանի նախագիծը (ԳԱԳ, ֆ. 53, ց. 1, գ. 3461, թ. 1)

կատարել Հայ նպաստամատույց ընկերությանը՝ փախստականների համար, ԿՀԲ ընկերությանը կից գործող Կենտրոնական կոմիտեին, Հայ որբախնամ ընկերությանը, իսկ թաղման օրը ճաշ էր բաժանվելու աղքատներին³: 1916 թ. մայիսի 29-ին կատարվում է մատուռի օրհնությունը⁴:

1 «Հորիզոն», 1915, № 100, 9 մայիսի, էջ 1: «Մշակ», 1915, № 97, 9 մայիսի, էջ 1:

2 ՀԱԳ, ֆ. 53, ց. 1, գ. 3461, թ. 1:

3 «Մշակ», 1915, № 97, 9 մայիսի, էջ 4:

4 «Հորիզոն», 1916, № 118, 29 մայիսի, էջ 1: «Մշակ», 1916, № 116, 28 մայիսի, էջ 1; № 117, 29 մայիսի, էջ 1, 3:

1915 թ. մայիսի 6-ին վախճանվում և 15-ին գերեզմանոցում է ամփոփվում Բարսեղ Հարությունյան Մելիք-Գրիգորյանը (Կարա-Մելիք)¹:

Նրա մահախոսականում գրվել է. «Ո՞վ չէր ճանաչում Բիճային-Կարա-Մելիքին, որ իր ժամանակին բառական աչքի ընկնող դեր է խաղացել ամենքիս համար սուրբ գործում, որը այսօր արդեն իրականանալու վրա է: Ամսիս 6-ին, երբ Բիճայի գործը շարունակող ընկերները յաղթական կեցցեներով օդն էին թնդացնում Հայաստանի սիրտ համարված Վանում՝ ծածանելով տանջված հայութեան ազատութեան դրոշակը և այդպիսով Բիճայի երազածն իրականացնում, ինքը՝ Բիճան իր վերջին հրաժեշտն էր տալիս կեանքին...»²:

1 «Մշակ», 1915, № 102, 15 մայիսի, էջ 1: «Հորիզոն», 1915, № 105, 15 մայիսի, էջ 1:

2 Կ. Աղ., Բարսեղ Մելիք-Գրիգորեան (Կարա-Մելիք), «Մշակ», 1915, № 102, 15 մայիսի, էջ 3:

1915 թ. մայիսի 10-ին վախճանվում և 15-ին գերեզմանոցում է ամփոփվում Կարապետ Սարգսյան Սակայանը (հոգեհանգիստը՝ Ջգրաշենի Ավետյաց Սր. Աստվածածին եկեղեցում)¹:

1 «Մշակ», 1915, № 99, 12 մայիսի, էջ 1:

1915 թ. մայիսի 13-ին վախճանվում և 16-ին գերեզմանոցում է ամփոփվում Անանիա Բարաջանյան Բուրդյանը¹:

1 «Մշակ», 1915, № 103, 16 մայիսի, էջ 1:

1915 թ. մայիսի 15-ին վախճանվում և 19-ին գերեզմանոցում է ամփոփվում Մարիամ Սողոմոնյան Դանիելյանը (հոգեհանգիստը՝ Վանքի եկեղեցում)¹:

1 «Հորիզոն», 1915, № 108, 19 մայիսի, էջ 1:

1915 թ. մայիսի 16-ին վախճանվում և 21-ին գերեզմանոցում է ամփոփվում Խանում Հարությունյան Աբրահամյանը (հոգեհանգիստը՝ Էջմիածնեցոց Սր. Գևորգ եկեղեցում)¹:

1 «Հորիզոն», 1915, № 109, 20 մայիսի, էջ 1: «Մշակ», 1915, № 106, 20 մայիսի, էջ 1:

1915 թ. մայիսի 31-ին գերեզմանոցի տոհմական դամբարանում է ամփոփվում Մոսկվայում վախճանված պրակտորշիկ Գևորգ (Ժորժիկ) Սարգսյան Նունուֆարյանը (հոգեհանգիստը՝ Վանքի եկեղեցում)¹:

1916 թ. մայիսի 19-ին Վանքի Մայր եկեղեցում հանգուցյալի մահվան տարելիցի առիթով պատարագ է մատուցվում, նաև հոգեհանգիստ²:

- 1 «Հորիզոն», 1915, № 118, 30 մայիսի, էջ 1: «Մշակ», 1915, № 115, 30 մայիսի, էջ 1:
- 2 «Մշակ», 1916, № 108, 18 մայիսի, էջ 1; № 109, 19 մայ., էջ 1:

1915 թ. հունիսի 1-ին վախճանվում և 4-ին գերեզմանոցում է ամփոփվում Աստղիկ Պարունայանցը (հոգեհանգիստը՝ Թանդոյան Սր. Աստվածածին եկեղեցում)¹:

- 1 «Հորիզոն», 1915, № 122, 4 յունիսի, էջ 1:

1915 թ. հունիսի 14-ին վախճանվում և 18-ին գերեզմանոցում է ամփոփվում Հայկանուշ Ալեքսանյան Սիրգայանցը (հոգեհանգիստը՝ Վանքի եկեղեցում)¹:

- 1 «Հորիզոն», 1915, № 133, 17 յունիսի, էջ 1:

1915 թ. հունիսի 19-ին վախճանվում և 20-ին գերեզմանոցում է ամփոփվում Շուշանիկ Գասպարյանը (հոգեհանգիստը՝ Վանքի եկեղեցում)¹:

- 1 «Հորիզոն», 1915, № 136, 20 յունիսի, էջ 1:

1915 թ. հուլիսի 3-ին վախճանվում և 5-ին գերեզմանոցում է ամփոփվում երիտասարդ դերասան Համբարձում Սանթրոնյանը (հոգեհանգիստը՝ Հավլաբարի Սր. Մինաս եկեղեցում)¹:

- 1 «Հորիզոն», 1915, № 148, 6 յուլիսի, էջ 1; № 150, 8 յուլ., էջ 4: «Մշակ», 1915, № 144, 5 յուլիսի, էջ 1:

1915 թ. հուլիսի 11-ին վախճանվում և 16-ին գերեզմանոցում է ամփոփվում Հովնանյան դպրոցի վարդապետիկ աշակերտուհի Վարդուհի Համբարձումյան Հովհաննիսյանցը (հոգեհանգիստը՝ Ճուղուրեթի Սր. Աստվածածին եկեղեցում)¹:

- 1 «Հորիզոն», 1915, № 157, 16 յուլիսի, էջ 1:

1915 թ. հուլիսի կեսերին վախճանվում և գերեզմանոցում է ամփոփվում բժիշկ Ռուբեն Մանուելյանը: Ի դեպ, 1917 թ. հուլիսի 16-ին Քանայանց Սր. Գևորգ եկեղեցում կատարվում է հոգեհանգիստ՝ ի հիշատակ հանգուցյալի մահվան երկրորդ տարելիցի¹:

- 1 «Մշակ», 1917, № 146, 16 յուլիսի, էջ 1:

1915 թ. հուլիսի 20-ին Բորժոմում վախճանվում և 23-ին գերեզմանոցում է ամփոփվում Պետրոզբաղի պոլիտեխնիկական ինստիտուտի ուսանող Պետրոս Սմբատյան Տեր-Հակոբյանը (հոգեհանգիստը՝ Վանքի եկեղեցում)¹:

- 1 «Հորիզոն», 1915, № 162, 22 յուլիսի, էջ 1; № 163, 23 յուլ., էջ 1: «Մշակ», 1915, № 158, 22 յուլիսի, էջ 1:

1915 թ. հուլիսի 25-ին վախճանվում և 26-ին գերեզմանոցում է ամփոփվում Նատալյա Բաջալյանը (հոգեհանգիստը՝ Մեյդանի Սր. Գևորգ եկեղեցում)¹:

- 1 «Հորիզոն», 1915, № 165, 25 յուլիսի, էջ 1:

1915 թ. հուլիսի 24-ին վախճանվում և 28-ին գերեզմանոցում է ամփոփվում շուշեցի, հայոց դպրոցների ջատագով և բարերար Եսայի-Բեկ Թյունիբեկյանցը¹:



Ի դեպ, ըստ նրա կտակի՝ կնոջ՝ Եղիսաբեթ Թյունիբեկյանի մահից հետո ամբողջ դրամագլուխը (շուրջ 300.000 ռ.) անցնելու էր Կովկասի հայոց բարեգործական և Հայուհյաց բարեգործական ընկերություններին, «...որոնք պետք է ստանան ամեն տարի բանկից դրամագլխի տոկոսիքը և կալուածների եկամուտները և բանան ու պահեն Ղարաբաղի և Երևանի թեմերում հայոց եկեղեցական-ծխական դպրոցներ հայ-լուսատրչական երեխաների համար: Այդ ընկերությունների փակման դեպքում, յիշեալ թեմերում բացված դպրոցներին է տրվում անմիջապէս Պետական Գումայի կողմից՝ տոկոսիքը և եկամուտը ամեն տարի»²:

- 1 «Մշակ», 1915, № 162, 26 յուլիսի, էջ 1; № 163, 28 յուլիսի, էջ 1: «Հովիտ», 1915, № 29, 2 օգոստոսի, էջ 454:
- 2 «Մշակ», 1915, № 163, 28 յուլիսի, էջ 4: Հանգուցյալի մասին տես «Հովիտ», 1915, № 29, 2 օգոստոսի, էջ 441-442:

1915 թ. հուլիսի 26-ին վախճանվում և 30-ին գերեզմանոցում է ամփոփվում Սոնա Քյարամյանը (հոգեհանգիստը՝ Էջմիածնեցոց Սր. Գևորգ եկեղեցում)¹:

- 1 «Հորիզոն», 1915, № 169, 30 յուլիսի, էջ 1:

1915 թ. հուլիսի 29-ին վախճանվում և 31-ին գերեզմանոցում է ամփոփվում Արաքսյա Գևորգյանցը¹:

- 1 «Մշակ», 1915, № 166, 31 յուլիսի, էջ 1:

1915 թ. օգոստոսի 3-ին վախճանվում և 4-ին գերեզմանոցում է ամփոփվում Բոգդան Իվանյան Թոխաթեյանը¹:

- 1 «Մշակ», 1915, № 168, 2 օգոստոսի, էջ 1:

1915 թ. օգոստոսի 5-ին վախճանվում և 7-ին գերեզմանոցում է ամփոփվում Թադեոս Եղիայան Եղիկյանցը¹:

- 1 «Հորիզոն», 1915, № 176, 7 օգոստոսի, էջ 1:

1915 թ. օգոստոսի 4-ին վախճանվում և 8-ին գերեզմանոցում է ամփոփվում 78-ամյա Վարվառե Հովհաննիսյան Առաքեյանցը¹:

- 1 «Մշակ», 1915, № 173, 8 օգոստոսի, էջ 1:

1915 թ. օգոստոսի 9-ին վախճանվում և 16-ին գերեզմանոցում է ամփոփվում Բաղդասար (Ղաղո) Քրիստափորյան Նավթիկյանցը (հոգեհանգիստը՝ Մուղնու Սր. Գևորգ եկեղեցում)¹:

- 1 «Մշակ», 1915, № 179, 15 օգոստոսի, էջ 1:

1915 թ. օգոստոսի 9-ին վախճանվում և 10-ին գերեզմանոցում է ամփոփվում Մազբաղ Մարտիրոսյան Վարդանյանցը (հոգեհանգիստը՝ Ճուղուրեթի Սբ. Աստվածածին եկեղեցում)¹:

1 «Հորիզոն», 1915, № 178, 9 օգոստոսի, էջ 1:

1915 թ. օգոստոսի 9-ին վախճանվում և 13-ին գերեզմանոցում է ամփոփվում տիտղոսակիր խորհրդրդական Իվան Հովակիմյան Տեր-Ղուկասյանցը (հոգեհանգիստը՝ Սբ. Աստվածածին եկեղեցում)¹:

1 «Հորիզոն», 1915, № 181, 13 օգոստոսի, էջ 1:

1915 թ. օգոստոսի 13-ին Միքայել Արամյանցի հիվանդանոցում վախճանվում և 14-ին գերեզմանոցում է ամփոփվում Մարգար Ազնավուրյանը¹:

1 «Հորիզոն», 1915, № 182, 14 օգոստոսի, էջ 1:

1915 թ. օգոստոսի 14-ին վախճանվում և 18-ին գերեզմանոցում է ամփոփվում Թիֆլիսի առաջին գիմնազիոնի IV դասարանցի Հռիփսիմե Բեժանյանցը (հոգեհանգիստը՝ Էջմիածնեցոց Սբ. Գևորգ եկեղեցում)¹:

1 «Հորիզոն», 1915, № 184, 16 օգոստոսի, էջ 1:

1915 թ. օգոստոսի 17-ին վախճանվում և 19-ին գերեզմանոցում է ամփոփվում Մանյակ Սարգսյանը (հոգեհանգիստը՝ Մուղնու եկեղեցում)¹:

1 «Հորիզոն», 1915, № 185, 19 օգոս., էջ 1; № 186, 20 օգոս., էջ 1:

1915 թ. օգոստոսի 16-ին վախճանվում և 20-ին գերեզմանոցում է ամփոփվում Շամիր Բարսեղյան Սարգսյանցը (Գանձակեցի Մռավյան)¹:

1 «Մշակ», 1915, № 181, 19 օգոստոսի, էջ 1:

1915 թ. օգոստոսի 23-ին վախճանվում և 27-ին գերեզմանոցում է ամփոփվում բազմավաստակ մանկավարժ, «Մեղու Հայաստանի» լրագրի հիմնադիր, Թիֆլիսի հայկական թատրոնի «սկզբնապատճառ», ժամանակի ակնավոր քահանա Ստեփան Մանդինյանի որդին՝ Մանդեն Մանդինյանը (ծնվ. 1847 թ.): Հոգեհանգիստը՝ Մուղնու եկեղեցում¹:

Մանդինյանը նախնական ուսումը ստացել է Լազարյան գիմնազիոնում և ճեմարանում՝ ընկերակցելով Սմբատ Շահազիզին: Սկզբում պաշտոնավարում է նույն ճեմարանում, հետո փոխադրվում Թիֆլիս՝ ուսուցչություն անելով Ներսիսյան և պետական դպրոցներում: Ապա բացում է սեփական պրոգիմնազիոնը, որը, սակայն, գոյատևում է 5 տարի: 1881 թ. փոխադրվում է Էջմիածին և 6 տարի ռուսաց լեզու և գրականություն դասավանդում Գևորգյան ճեմարանում: Հետո Երևանում բացում է մասնավոր դպրոց, ապա աշխատում Թիֆլիսի արհեստավորաց դպրոցում²:

1 «Հորիզոն», 1915, № 190, 25 օգոստոսի, էջ 1; № 191, № 26 օգոս., էջ 1; № 192, 27 օգոս., էջ 1: **Մ. Լ.**, Մանդեն Մանդինյան, «Հորիզոն», 1915, № 194, 29 օգոստոսի, էջ 3:

2 **Մ. Լ.**, նշվ. հոդվ., նույն տեղում:

1915 թ. օգոստոսի 26-ին վախճանվում և 29-ին գերեզմանոցում է ամփոփվում Թիֆլիսի բարձրագույն կուրսերի ուսանողուհի Աննա Սարգսյան Ավագյանը (հոգեհանգիստը՝ Վանքի եկեղեցում)¹:

1 «Հորիզոն», 1915, № 193, 28 օգոստոսի, էջ 1:

1915 թ. օգոստոսի 25-ին վախճանվում և 30-ին գերեզմանոցում է ամփոփվում Եփեմյա Ամիրջանյանը (հոգեհանգիստը՝ Մեյդանի Սբ. Գևորգ եկեղեցում)¹: Ի դեպ, նրա հարազատների ցանկությամբ հիշատակը հարգողները պսակների ու ծաղիկների փոխարեն գումարը պետք է հատկացնեին փախուստականներին²:

1 «Հորիզոն», 1915, № 194, 29 օգոստոսի, էջ 1: «Մշակ», 1915, № 188, 27 օգոս., էջ 1:

2 «Մշակ», 1915, № 191, 30 օգոստոսի, էջ 1:

1915 թ. օգոստոսի 25-ին վախճանվում և սեպտեմբերի 1-ին գերեզմանոցում է ամփոփվում Մըմբատ Դանիելյան Դավթյանցը (հոգեհանգիստը՝ Մուղնու Սբ. Գևորգ եկեղեցում)¹:

1 «Հորիզոն», 1915, № 196, 1 սեպտեմբերի, էջ 1:

1915 թ. սեպտեմբերի 16-ին վախճանվում և 20-ին գերեզմանոցում է ամփոփվում բազմավաստակ ուսուցիչ, Նորաշենի եկեղեցական-ծխական դպրոցի հիմնադիրներից 73-ամյա Գևորգ Դավթյան Միլվանյանցը (հոգեհանգիստը՝ Մեյդանի Սբ. Գևորգ եկեղեցում)¹:

Գևորգ Միլվանյանցը ծնվել է 1842 թ. հուլիսի 10-ին: 1864 թ. ավարտելով Ներսիսյան դպրոցը՝ մինչև 1897 թ. նվիրվել է մանուկների կրթության գործին՝ դասավանդելով հայոց եկեղեցական-ծխական դրպրոցներում, մասնավոր պանսիոններում: Միաժամանակ 1880-1890 թթ. ունեցել է իր սեփական ուսումնարան-պանսիոնը²:

1 «Մշակ», 1915, № 205, 19 սեպտեմբերի, էջ 1: «Հորիզոն», 1915, № 210, 18 սեպտ., էջ 3; № 211, 19 սեպտ., էջ 1: **Բերինեան Բ.**, Համեստ ուսուցչի անմահ յիշատակին, «Մշակ», 1915, № 205, 19 սեպտեմբերի, էջ 3:

2 **Բերինեան Բ.**, նշվ. հոդվ., նույն տեղում:

1915 թ. սեպտեմբերի 17-ին վախճանվում և 20-ին գերեզմանոցում է ամփոփվում Հռիփսիմե Հայրապետյան Խաչումյանցը (հոգեհանգիստը՝ Մուղնու Սբ. Գևորգ եկեղեցում)¹:

1 «Հորիզոն», 1915, № 210, 18 սեպտեմբերի, էջ 1:

1915 թ. սեպտեմբերի 18-ին վախճանվում և 20-ին գերեզմանոցում է ամփոփվում փայաջուկցի Բագրատ Ստեփանյան Այվագյանցը (հոգեհանգիստը՝ Էջմիածնեցոց Սբ. Գևորգ եկեղեցում)¹:

1 «Հորիզոն», 1915, № 211, 19 սեպտեմբերի, էջ 1; № 212, 20 սեպտ., էջ 1: «Մշակ», 1915, № 205, 19 սեպտ., էջ 1:

1915 թ. սեպտեմբերի 23-ին վախճանվում և 26-ին գերեզմանոցում է ամփոփվում Եկատերինա Միքայելյան Վարչանյանցը (ծն.՝ իշխանուհի Արամելիք՝

գեներալ-մայորի այրին (հոգեհանգիստը՝ Մուղնու եկեղեցում)¹։

1 «Հորիզոն», 1915, № 216, 25 սեպտեմբերի, էջ 1: «Մշակ», 1915, № 210, 25 սեպտ., էջ 1:

1915 թ. սեպտեմբերի 26-ին գերեզմանոցում է ամփոփվում Երեմիա Ստեփանյան Խանդանյանցը (հոգեհանգիստը՝ Ջգրաշենի Ավետյաց Սբ. Աստվածածին եկեղեցում)¹։

1 «Հորիզոն», 1915, № 216, 25 սեպտեմբերի, էջ 1; № 217, 26 սեպտ., էջ 1: «Մշակ», 1915, № 211, 26 սեպտ., էջ 1:

1915 թ. սեպտեմբերի 25-ին վախճանվում և 29-ին գերեզմանոցում է ամփոփվում Արուսյակ Սարիբեկյան Ալեքսանդրյանը¹։

1 «Մշակ», 1915, № 212, 27 սեպտ., էջ 1; № 213, 29 սեպտ., էջ 1:

1915 թ. սեպտեմբերի 28-ին վախճանվում և հոկտեմբերի 1-ին գերեզմանոցում է ամփոփվում վերին-ազուլիսցի Պողոս Հովհաննիսյան Աղամիրյանցը (հոգեհանգիստը՝ Մուղնու եկեղեցում)¹։

1 «Հորիզոն», 1915, № 220, 30 սեպտեմբերի, էջ 1; № 221, 1 հոկտ., էջ 1: «Մշակ», 1915, № 214, 30 սեպտ., էջ 1:



1915 թ. հոկտեմբերի 1-ին բժավոր տիֆից Արամյանցի հիվանդանոցում վախճանվում և 4-ին գերեզմանոցում է ամփոփվում բժիշկ Համազասպ (Համո) և Արմենակ Օհանջանյանցների քույրը՝ ախալքալաքցի Սաթենիկ Համազասպյան Օհանջանյանցը (հոգեհանգիստը՝ Ջգրաշենի Սբ. Ավետյաց եկեղեցում)¹։ Հայտնի է, որ Սաթենիկ Օհանջանյանցի անվան մանկապատանեկան գրադարանի բացման համար, որը տեղի է ունեցել 1916 թ. նոյեմբերի 13-ին², հանգուցյալի հարազատները և ընկերները գումար են նվիրել «Մեղու» աշխատանքի տան վարչությանը³։

1915 թ. նոյեմբերի 15-ին Խոջիվանքում Ջավեն վարդապետի գլխավորությամբ կատարվում է հոգեհանգստյան արարողություն Սաթենիկ Օհանջանյանի, Սիմոն Ջավարյանի և Նիկոլ Դումանի գերեզմանների վրա⁴ (նրանց տապանաքարերը գրտնրվում էին իրար կից)⁵։ 1916 թ. հոկտեմբերի 2-ին նըշվում է հանգուցյալի մահվան տարեկիցը⁶։

1 «Հորիզոն», 1915, № 223, 3 հոկտեմբերի, էջ 1; № 224, 4 հոկտ., էջ 1; № 225, 6 հոկտ., էջ 3; № 227, 8 հոկտ., էջ 3: Նրա մասին տես նաև **Եսայան Զ.**, Կեանք մը, «Հորիզոն», 1915, № 250, 6 նոյեմբերի, էջ 1: Վերջին գաղթից հետո Վանից հասնում է Իգդիր, հետո՝ Էջմիածին (№ 227, 8 հոկտ., էջ 3):
2 «Հորիզոն», 1916, № 254, 12 նոյ., էջ 3; № 255, 13 նոյ., էջ 1, 3:
3 «Հորիզոն», 1915, № 225, 6 հոկտ., էջ 3:
4 **Ռ.**, Հոգեհանգիստ, «Հորիզոն», 1915, № 259, 17 նոյեմբերի, էջ 2: **Օզանեան Մ.**, Մեր պանթեոնի մեռելները, «Հորիզոն», 1915, № 260, 18 նոյեմբերի, էջ 2:

5 **Օզանեան Մ.**, նշվ. հոդվ., «Հորիզոն», 1915, № 260, 18 նոյեմբերի, էջ 1:

6 «Հորիզոն», 1916, № 219, 1 հոկտ., էջ 1; № 220, 2 հոկտ., էջ 1:

1915 թ. հոկտեմբերի 14-ին գերեզմանոցում է ամփոփվում Վահան Մինասյան Տեր-Ջաքարյանցը (հոգեհանգիստը՝ Նորաշենի Սբ. Աստվածածին եկեղեցում)¹։

1 «Հորիզոն», 1915, № 232, 14 հոկտեմբերի, էջ 1:

1915 թ. հոկտեմբերի 27-ին վախճանվում և 29-ին գերեզմանոցում է ամփոփվում Օվսաննա Աղամիրյան Սիրզայանցը¹։

1 «Հորիզոն», 1915, № 243, 29 հոկտեմբերի, էջ 1:

1915 թ. հոկտեմբերի 27-ին վախճանվում և նոյեմբերի 1-ին գերեզմանոցում է ամփոփվում Գրիգոր Գրիգորյան Խալաթյանցը (հոգեհանգիստը՝ Քամոյանց Սբ. Գևորգ եկեղեցում)¹։

1 «Հորիզոն», 1915, № 245, 31 հոկտեմբերի, էջ 1:

1915 թ. նոյեմբերի 2-ին վախճանվում և 5-ին գերեզմանոցում է ամփոփվում Ռուբեն Սանթրոքյանը (հոգեհանգիստը՝ Սբ. Կարապետ եկեղեցում)¹։

1 «Հորիզոն», 1915, № 247, 3 նոյ., էջ 1; № 248, 4 նոյ., էջ 1:

1919 թ. նոյեմբերի 2-ին Խոջիվանքի եկեղեցում կատարվում է պատարագ, իսկ գերեզմանի մոտ՝ հոգեհանգիստ՝ ի հիշատակ Սարգիս Ոսկանյան Տեր-Ոսկանյանցի մահվան 5-րդ տարեկիցի¹։

1 «Աշխատատար», 1919, № 230, 1 նոյեմբերի, էջ 1:

1915 թ. նոյեմբերի 4-ին գերեզմանոցում է ամփոփվում Գայանե Սարգսյան Դոշոյանցը (հոգեհանգիստը՝ Մուղնու Սբ. Գևորգ եկեղեցում)¹։ 1916 թ. նոյեմբերի 6-ին նշվում է մահվան տարեկիցը²։

1 «Հորիզոն», 1915, № 248, 4 նոյեմբերի, էջ 1:

2 «Հորիզոն», 1916, № 248, 5 նոյեմբերի, էջ 1:

1915 թ. նոյեմբերի 5-ին վախճանվում և 10-ին գերեզմանոցում է ամփոփվում Ռուբեն Ջոհրաբյան Բեգիջանյանցը (հոգեհանգիստը՝ Մուղնու Սբ. Գևորգ եկեղեցում)¹։

1 «Հորիզոն», 1915, № 253, 10 նոյեմբերի, էջ 1:

1915 թ. նոյեմբերի 8-ին վախճանվում և 10-ին գերեզմանոցում է ամփոփվում Թիֆլիսի Առևտրական դպրոցի 5-րդ դասարանի աշակերտ Վաղարշակ Երվանդյան Մամիկոնյանցը¹։

1 «Մշակ», 1915, № 249, 10 նոյեմբերի, էջ 1:

1915 թ. նոյեմբերի 7-ին վախճանվում և 12-ին գերեզմանոցում է ամփոփվում Արմենակ Մաղաքյան Սիրաքյանցը (հոգեհանգիստը՝ Հավլաբարի Էջմիածնեցոց Սբ. Գևորգ եկեղեցում)¹։

1 «Հորիզոն», 1915, № 255, 12 նոյեմբերի, էջ 1:

1915 թ. նոյեմբերի 9-ին վախճանվում և 14-ին գերեզմանոցում է ամփոփվում Ալեքսանդր Գևորգյան

Ալիխանյանը (հոգեհանգիստը՝ Ջգրաշենի Ավետյաց Սբ. Աստվածածին եկեղեցում)¹:

¹ «Հորիզոն», 1915, № 256, 13 նոյեմբերի, էջ 1:

1915 թ. նոյեմբերի 18-ին վախճանվում և 22-ին գերեզմանոցում է ամփոփվում Վահան Գանիելյան Դավթյանը (հոգեհանգիստը՝ Թանդոյան Սբ. Աստվածածին եկեղեցում)¹:

¹ «Հորիզոն», 1915, № 263, 21 նոյեմբերի, էջ 1: «Մշակ», 1915, № 259, 21 նոյ., էջ 1:

1915 թ. նոյեմբերի 25-ին վախճանվում և 29-ին գերեզմանոցում է ամփոփվում Օվսաննա Արարատյանը¹:

¹ «Մշակ», 1915, № 264, 28 նոյեմբերի, էջ 1:



1915 թ. նոյեմբերի 28-ին վախճանվում և դեկտեմբերի 3-ին գերեզմանոցում՝ Բաֆ-ֆու շիրմի հարևանությամբ է ամփոփվում Ներսիսյան դրպրոցի տեսուչ, մանկավարժ, հասարակական և թատերական գործիչ սղնախեցի 72-ամյա Սեդրակ Մանդինյանը (04.04.1844): Հոգեհանգիստը՝ Վանքի եկեղեցում¹:

1916 թ. նոյեմբերի 27-ին նշվում է հանգուցյալի մահվան տարելիցը²:

Տապանաքարին արձանագրված է եղել.

*Սեդրաք Մանդինեան, / 4 ասր., 1844 - 28 նոյեմբ. 1915*³:

¹ «Հորիզոն», 1915, № 269, 1 դեկտեմբերի, էջ 1; № 270, 2 դեկտ., էջ 1, կենսագրականը՝ էջ 3, № 271, 3 դեկտ., էջ 1: **Հ. Ա.**, Սեդրաք Մանդինեան, «Մշակ», 1915, № 265, 1 դեկտ., էջ 3: Հանգուցյալի մասին տե՛ս **Գանիելյան Ա.**, Սեդրակ Մանդինյան, Երևան, 1964:

² «Հորիզոն», 1916, № 265, 26 նոյեմբերի, էջ 1:

³ **Երեմեան Ա.**, Թիֆլիսի հայկական պանթեոններում, էջ 23-24:

1915 թ. դեկտեմբերի 1-ին վախճանվում և 6-ին գերեզմանոցում է ամփոփվում Հեղինե Սիմեոնյան Նալբանդյանը (հոգեհանգիստը՝ Քամոյանց Սբ. Գևորգ եկեղեցում)¹:

¹ «Հորիզոն», 1915, № 273, 5 դեկտեմբերի, էջ 1; № 274, 6 դեկտ., էջ 1: «Մշակ», 1915, № 269, 5 դեկտ., էջ 1:

1915 թ. դեկտեմբերի 2-ին վախճանվում և 3-ին գերեզմանոցում է ամփոփվում Բախսա Արշակյան Ղևոնդյանը¹:

¹ «Մշակ», 1915, № 266, 2 դեկտեմբերի, էջ 1:

1915 թ. դեկտեմբերի 6-ին վախճանվում և 8-ին գերեզմանոցում է ամփոփվում Սեդրակ Սարգսյան Էյրամճյանը¹:

¹ «Հորիզոն», 1915, № 277, 10 դեկտեմբերի, էջ 1:

1915 թ. դեկտեմբերի 10-ին գերեզմանոցում է ամփոփվում Ալաշկերտում զոհված երգվյալ հավա-

տարմատարի օգնական, ենթասպա Սարգիս Ալ. Իսրայելյանը (հոգեհանգիստը՝ Թանդոյան Սբ. Աստվածածին եկեղեցում)¹:

¹ «Հորիզոն», 1915, № 276, 9 դեկտ., էջ 1; № 277, 10 դեկտ., էջ 1:

1915 թ. դեկտեմբերի 17-ին գերեզմանոցում է ամփոփվում Մկրտիչ Ավետյանը (հոգեհանգիստը՝ Էջմիածնեցոց Սբ. Գևորգ եկեղեցում)¹:

¹ «Հորիզոն», 1915, № 283, 17 դեկտեմբերի, էջ 1:

1915 թ. դեկտեմբերի 16-ին վախճանվում և 20-ին գերեզմանոցում է ամփոփվում դերասանուհի 51-ամյա տիկ. Փառանձեն Սաղաթեյանը (ծն.՝ Սահակյան): Հոգեհանգիստը՝ Մուղնու Սբ. Գևորգ եկեղեցում¹: 1916 թ. դեկտեմբերի 18-ին նշվում է հանգուցյալի մահվան տարելիցը²: Նրա հիշատակին աղյս էլ տապանաքար չի տեղադրվում³:

¹ «Հորիզոն», 1915, № 284, 18 դեկտ., էջ 1; № 285, 19 դեկտ., էջ 1, № 286, 20 դեկտ., էջ 1: «Մշակ», 1915, № 281, 19 դեկտ., էջ 1:

² «Հորիզոն», 1916, № 282, 18 դեկտեմբերի, էջ 1:

³ **Երեմեան Ա.**, Թիֆլիսի հայկական պանթեոններում, էջ 58-59:

1915 թ. դեկտեմբերի 25-ին վախճանվում և 26-ին գերեզմանոցում է ամփոփվում Մելքոն Աղավեյանը¹:

¹ «Մշակ», 1915, № 287, 26 դեկտեմբերի, էջ 1:

1915 թ. դեկտեմբերի 27-ին վախճանվում և 31-ին գերեզմանոցում է ամփոփվում Սարգիս Մարտիրոսյան Նունուփարյանը¹:

¹ «Մշակ», 1915, № 289, 29 դեկտեմբերի, էջ 1:

1916

1916 թ. դեկտեմբերի 30-ին վախճանվում և 1916 թ. հունվարի 3-ին գերեզմանոցում է ամփոփվում Շուշանիկ Հակոբյան Աղաջանյանը (հոգեհանգիստը՝ Մուղնու Սբ. Գևորգ եկեղեցում)¹:

¹ «Հորիզոն», 1916, № 2, 3 յունվարի, էջ 1:

1916 թ. հունվարի 1-ին վախճանվում և 4-ին գերեզմանոցում է ամփոփվում Նարինգյուլ (Մարիամ) Նիկողոսյան Դավթյանը¹:

¹ «Մշակ», 1916, № 2, 3 յունվարի, էջ 1:

1916 թ. հունվարի 7-ին վախճանվում և 10-ին գերեզմանոցում է ամփոփվում Խաչատուր Վարդանյան Նազարբեգյանը (հոգեհանգիստը՝ Քամոյանց Սբ. Գևորգ եկեղեցում)¹:

¹ «Մշակ», 1916, № 4, 9 յունվարի, էջ 1; № 5, 10 յունվարի, էջ 1:

1916 թ. հունվարի 12-ին «Օրիանտ» հյուրանոցում ինքնասպան է լինում¹ և 17-ին տոհմական գերեզմանոցում ամփոփվում Բելգոբորոյան-Ուլանյան 12-րդ գնդի ռոտմիստր, 45-ամյա իշխան Գևորգ Գրիգորյան Բեհբուդյանը²:

¹ «Մշակ», 1916, № 8, 15 յունվարի, էջ 3:

² «Մշակ», 1916, № 9, 16 յունվարի, էջ 2:

1916 թ. հունվարի 13-ին վախճանվում և 17-ին գերեզմանոցում է ամփոփվում Գայանյան օրիորդաց

դպրոցի շրջանավարտ Խոսրովիդուխտ (Վարյա) Միքայելյան Ղազարյանցը (հոգեհանգիստը՝ Ջգրաշենի Ավետյաց Սբ. Աստվածածին եկեղեցում)¹:

¹ «Հորիզոն», 1916, № 11, 17 յունարի, էջ 1: «Մշակ», 1916, № 10, 17 յուն., էջ 1:

1916 թ. հունվարի 15-ին վախճանվում և 17-ին գերեզմանոցում է ամփոփվում Շահգադե (Այանի) Հովհաննիսյան Թումանյանցը (հոգեհանգիստը՝ Ճուրղորեթի Սբ. Աստվածածին եկեղեցում)¹:

¹ «Հորիզոն», 1916, № 11, 17 յունարի, էջ 1:

1916 թ. հունվարի 18-ին վախճանվում և 21-ին գերեզմանոցում է ամփոփվում Գարեգին Մնացականյան Ջաղինյանցը (հոգեհանգիստը՝ Թանդոյան Սբ. Աստվածածին եկեղեցում)¹:

¹ «Հորիզոն», 1916, № 13, 20 յունարի, էջ 1:

1916 թ. հունվարի 20-ին վախճանվում և 23-ին գերեզմանոցում է ամփոփվում Նունե Ճուղուրյանը՝ Հարություն քահանա Ճուղուրյանի կողակիցը (հոգեհանգիստը՝ Թանդոյան Սբ. Աստվածածին եկեղեցում)¹:

¹ «Հորիզոն», 1916, № 16, 23 յունարի, էջ 1; № 17, 24 յուն., էջ 1: «Մշակ», 1916, № 15, 23 յուն., էջ 1:

1916 թ. հունվարի 22-ին վախճանվում և 26-ին գերեզմանոցում է ամփոփվում հայ դպրոցի ջատագով և բարերար 80-ամյա Մարի Գավթյան Պոպովյանցը¹:

¹ «Հորիզոն», 1916, № 18, 26 յունարի, էջ 1: «Մշակ», 1916, № 17, 26 յուն., էջ 1:

1916 թ. հունվարի 26-ին վախճանվում և 31-ին գերեզմանոցում է ամփոփվում Ավետիք Մարտիրոսյան Քոչարյանցը (հոգեհանգիստը՝ Կուկիայի Սբ. Աստվածածին եկեղեցում)¹:

¹ «Հորիզոն», 1916, № 22, 30 յունարի, էջ 1:

1916 թ. հունվարի 27-ին վախճանվում և 30-ին գերեզմանոցում է ամփոփվում Սոֆյա Պալոյանը (հոգեհանգիստը՝ Սբ. Լուսավորիչ եկեղեցում)¹:

¹ «Հորիզոն», 1916, № 21, 29 յունարի, էջ 1; № 22, 30 յուն., էջ 1: «Մշակ», 1916, № 20, 29 յուն., էջ 1:

1916 թ. հունվարի 28-ին վախճանվում և 31-ին գերեզմանոցում է ամփոփվում Ջվարթ Հարությունյանցը¹:

¹ «Մշակ», 1916, № 21, 30 յունվարի, էջ 1:

1916 թ. հունվարի 29-ին վախճանվում և փետրվարի 2-ին գերեզմանոցում է ամփոփվում Սեդրակ Ավետիքյան Սահակյանցը (հոգեհանգիստը՝ Քամոյանց Սբ. Գևորգ եկեղեցում)¹:

¹ «Հորիզոն», 1916, № 24, 2 փետրարի, էջ 1:

1916 թ. փետրվարի 4-ին գերեզմանոցում է ամփոփվում Հովսեփ Մելիք-Հովհաննիսյանը¹:

¹ «Հորիզոն», 1916, № 26, 4 փետրարի, էջ 1:

1916 թ. փետրվարի 7-ին գերեզմանոցում է ամփոփվում Խաչատուր Խոջամիրյանը (հոգեհանգիստը՝ Քամոյանց Սբ. Գևորգ եկեղեցում)¹:

Ի դեպ, հանգուցյալի հիշատակին պսակի փոխարեն Ջանգեզուրից Հայաստանի վերաշինության հանձնաժողովին փոխանցվել է 25, իսկ Տ. Նազարյանի ճաշարանին՝ 50 ռ.²:

¹ «Հորիզոն», 1916, № 27, 5 փետր., էջ 1; № 29, 7 փետր., էջ 1: «Մշակ», 1916, № 27, 6 փետրվարի, էջ 1:

² «Մշակ», 1916, № 28, 7 փետրվարի, էջ 1:

1916 թ. փետրվարի 6-ին վախճանվում և 9-ին գերեզմանոցում է ամփոփվում Գաբրիել Դեմուրյան Հարությունյանցը (հոգեհանգիստը՝ Հավլաբարի Էջմիածնեցոց Սբ. Գևորգ եկեղեցում)¹:

¹ «Հորիզոն», 1916, № 30, 9 փետրարի, էջ 1:

1916 թ. փետրվարի 7-ին վախճանվում և 11-ին գերեզմանոցում է ամփոփվում Արշակ Ենոքյան Դավթյանցը¹:

¹ «Մշակ», 1916, № 29, 9 փետրվարի, էջ 1:

1916 թ. փետրվարի 12-ին վախճանվում և 14-ին գերեզմանոցում է ամփոփվում Ավետիք Արիստակեսյանը (հոգեհանգիստը՝ Ջգրաշենի Ավետյաց Սբ. Աստվածածին եկեղեցում)¹:

¹ «Հորիզոն», 1916, № 35, 15 փետրարի, էջ 1:

1916 թ. փետրվարի 12-ին վախճանվում և 16-ին գերեզմանոցում է ամփոփվում Նունե Հովհաննիսյան Փուլինյանցը¹:

¹ «Մշակ», 1916, № 35, 16 փետրվարի, էջ 2: «Հորիզոն», 1916, № 36, 16 փետր., էջ 1:

1916 թ. փետրվարի 18-ին վախճանվում և 20-ին գերեզմանոցում է ամփոփվում Միրզա Արզումանյանը (հոգեհանգիստը՝ Կուկիայի Սբ. Աստվածածին եկեղեցում)¹:

¹ «Հորիզոն», 1916, № 39, 20 փետրարի, էջ 1:

1916 թ. փետրվարի 21-ին վախճանվում և 28-ին գերեզմանոցում է ամփոփվում Թիֆլիսի վաճառականական բանկի տնօրեն և Բեթղեհեմի Սբ. Աստվածածին եկեղեցու դպրոցի հոգաբարձու Հովհաննես Միքայելյան Խուդադյանցը (հոգեհանգիստը՝ Մուղնու Սբ. Գևորգ եկեղեցում)¹: 1920 թ. մարտի 27-ին Մուղնու Սբ. Գևորգ եկեղեցում կատարվում է հոգեհանգիստ՝ ի հիշատակ բարերար Հովհաննես Խուդադյանցի²:

¹ «Հորիզոն», 1916, № 41, 23 փետրարի, էջ 1; № 43, 25 փետր., էջ 1; № 45, 27 փետր., էջ 1; № 46, 28 փետր., էջ 1: «Մշակ», 1916, № 40, 23 փետր., էջ 1:

² «Աշխատատր», 1920, № 70, 27 մարտի, էջ 1:

1916 թ. փետրվարի 23-ին գերեզմանոցում է ամփոփվում Երմոնյա Գրիգորյան Ավետիսյանցը (հոգեհանգիստը՝ Քամոյանց Սբ. Գևորգ եկեղեցում)¹:

¹ «Հորիզոն», 1916, № 41, 23 փետրարի, էջ 1:

1916 թ. փետրվարի 23-ին վախճանվում և 27-ին գերեզմանոցում է ամփոփվում Կատարինե Տեր-Պետրոսյան Քանդարյանցը (ծն.՝ Պատկանյան)¹:

¹ «Մշակ», 1916, № 42, 25 փետրվարի, էջ 2:

1916 թ. մարտի 3-ին վախճանվում և տոհմական դամբարանում է ամփոփվում Քաղաքային դումայի նախկին անդամ, Թիֆլիսի իգական առաջին գիմնազիայի պատվավոր հոգաբարձու Նիկողայոս Հովսեփյան Սիրիմանյանցը¹:

¹ Кавказ. № 52. 6 марта 1916 г. С. 1.

1916 թ. մարտի 9-ին վախճանվում և 13-ին գերեզմանոցում է ամփոփվում Նատալյա Բարսեղյան Նազարեթյանցը (հոգեհանգիստը՝ Վանքի եկեղեցում)¹:

¹ «Հորիզոն», 1916, № 57, 12 մարտի, էջ 1; № 58, 13 մարտի, էջ 1:

1916 թ. մարտի 17-ին վախճանվում և 29-ին գերեզմանոցում է ամփոփվում Արշակ Միքայելյան Ասլանազյանցը (հոգեհանգիստը՝ Թանդոյան Սբ. Աստվածածին եկեղեցում)¹:

¹ «Հորիզոն», 1916, № 70, 29 մարտի, էջ 1:

1916 թ. մարտի 28-ին վախճանվում և ապրիլի 3-ին գերեզմանոցում է ամփոփվում «Եղբայր Մելլանյանների ծխատոտի գործարան»-ի ղեկավար Եղիշե Նիկիտյան (Սկրտչյան) Մելլանյանցը (հոգեհանգիստը՝ Մուղնու Սբ. Գևորգ եկեղեցում)¹:

¹ «Մշակ», 1916, № 74, 3 ապրիլի, էջ 1: «Հորիզոն», 1916, № 74, 2 ապր., էջ 1; № 75, 3 ապր., էջ 1:

1916 թ. մարտի 2-րդ կեսին վախճանվում և գերեզմանոցում է ամփոփվում Կովկասի հայոց բարեգործական ընկերության բարերար Հովհաննես Դավթյան Խուրդոյանցը: Մեկ տարի անց՝ 1917 թ. մարտի 18-ին, Մուղնու Սբ. Գևորգ եկեղեցում կատարվում է հոգեհանգիստ՝ ի հիշատակ հանգուցյալի մահվան տարելիցի¹:

¹ «Մշակ», 1917, № 58, 17 մարտի, էջ 2; № 59, 18 մարտի, էջ 1:

1916 թ. ապրիլի 1-ին վախճանվում և 3-ին գերեզմանոցում է ամփոփվում Դավիթ Բասենցյանը (հոգեհանգիստը՝ Չորաբաշի Սբ. Գևորգ եկեղեցում)¹:

¹ «Հորիզոն», 1916, № 75, 3 ապրիլի, էջ 1:

1916 թ. մարտի 30-ին Բաղեշի մոտ վիրավորվում և Կարսում վախճանվում է Կամավորական առաջին գնդի վաշտապետ ախալցքիացի Արտաշես Մուճյանը¹: Հերոսի դին փոխադրում են Տփղիս և ապրիլի 17-ին ամփոփում գերեզմանոցում (հոգեհանգիստը՝ Վանքի եկեղեցում)²:



¹ Արտաշես Մուճյանի մասին ավելի մանրամասն տե՛ս մեր «Ախալցխա» (Երևան, 2008, էջ 63) աշխատության մեջ: Նաև՝ «Ֆիլմ», 1990, № 5, 20-28 փետրվարի:

² «Մշակ», 1916, № 79, 14 ապրիլի, էջ 2; № 82, 17 ապր., էջ 1; № 83, 19 ապր., էջ 3: «Հորիզոն», 1916, № 80, 14 ապր., էջ 1; № 82, 16 ապր., էջ 1; № 83, 17 ապր., էջ 2: «Գաղափար», 1916, № 26, 20 ապրիլի, էջ 3 («Ապրիլի 17-ին կատարեց Անդրանիկ բանակի վաշտապետ Արտաշես Մուճյանի՝ ուխտեակներից մեկի թաղումը Խօջիվանքի գերեզմանատանը...»):

1916 թ. ապրիլի 11-ին վախճանվում և 17-ին գերեզմանոցում է ամփոփվում վաճառականների ավագի նախկին օգնական Բարսեղ (Վասիլի) Սարգսյան Եղիազարյանցը (հոգեհանգիստը՝ Մուղնու Սբ. Գևորգ եկեղեցում)¹: Մայիսի 19-ին Ջգրաշենի Սբ. Ավետյաց եկեղեցում պատարագ է մատուցվում ի հիշատակ մահվան քառասուրյակի²:

¹ «Մշակ», 1916, № 81, 16 ապրիլի, էջ 1; № 82, 17 ապր., էջ 1: «Հորիզոն», 1916, № 82, 16 ապր., էջ 1; № 83, 17 ապր., էջ 2:

² «Մշակ», 1916, № 109, 19 մայիսի, էջ 1:

1916 թ. ապրիլի 12-ին գերեզմանոցում է ամփոփվում Մարիամ (Մակի) Թոմասյան Խեչումյանցը (հոգեհանգիստը՝ Սբ. Աստվածածին եկեղեցում)¹:

¹ «Հորիզոն», 1916, № 79, 10 ապրիլի, էջ 2:

1916 թ. ապրիլի 21-ին գերեզմանոցում է ամփոփվում Միքայել Գերասիմյան Փարսադանյանցը¹:

¹ «Մշակ», 1916, № 83, 19 ապրիլի, էջ 2; № 84, 20 ապր., էջ 1; № 85, 21 ապր., էջ 1:

1916 թ. ապրիլի 19-ին վախճանվում և 23-ին գերեզմանոցում է ամփոփվում Հաջիպապ Հայրաբաբանյանը (հոգեհանգիստը՝ Ջգրաշենի Ավետյաց Սբ. Աստվածածին եկեղեցում)¹:

¹ «Հորիզոն», 1916, № 87, 22 ապրիլի, էջ 1; № 89, 24 ապր., էջ 1:

1916 թ. ապրիլի 23-ին վախճանվում և 26-ին գերեզմանոցում է ամփոփվում Գրիգոր (Գիգո) Դավթյան Ջուրյանցը (հոգեհանգիստը՝ Վանքի եկեղեցում)¹:

¹ «Հորիզոն», 1916, № 90, 26 ապրիլի, էջ 1: «Մշակ», 1916, № 89, 26 ապր., էջ 2:

1916 թ. ապրիլի 27-ին վախճանվում և մայիսի 1-ին գերեզմանոցում է ամփոփվում Ներսես Մարգարյան Մելիք-Փաշայանցը (հոգեհանգիստը՝ Քամոյանց Սբ. Գևորգ եկեղեցում)¹: 1917 թ. ապրիլի 30-ին նույն եկեղեցում կատարվում է հոգեհանգիստ՝ ի հիշատակ մահվան առաջին տարելիցի²:

Խաչատուր և Սիրանուշ Մելիք-Փաշայանները նրա հիշատակին 50 ռ. են նվիրում «Լույս» ընկերությանը՝ հօգուտ չքավոր երեխաների ձրի ուսումնարանի³:

¹ «Հորիզոն», 1916, № 94, 30 ապրիլի, էջ 1:

² «Մշակ», 1917, № 87, 29 ապրիլի, էջ 1; № 88, 30 ապր., էջ 1:

³ «Հորիզոն», 1916, № 95, 1 մայիսի, էջ 3:

1916 թ. ապրիլի 27-ին վախճանվում և 30-ին գերեզմանոցում է ամփոփվում Հովհաննես Բաղդա-

սարյանը (հոգեհանգիստը՝ Սբ. Գրիգոր Լուսավորիչ եկեղեցում)¹:

1 «Հորիզոն», 1916, № 94, 30 ապրիլի, էջ 1:

1916 թ. ապրիլի 28-ին վախճանվում և 30-ին գերեզմանոցում է ամփոփվում Հախնազար Գանադյանցը (հոգեհանգիստը՝ Մեղրանի Սբ. Գևորգ եկեղեցում)¹:

1 «Հորիզոն», 1916, № 94, 30 ապրիլի, էջ 1:

1916 թ. ապրիլի 26-ին վախճանվում և մայիսի 1-ին գերեզմանոցում է ամփոփվում Գրիգոր Կարապետյան Կուզանյանցը (հոգեհանգիստը՝ Ջգրաշենի Սբ. Ավետյաց եկեղեցում)¹: Ի հիշատակ հանգուցյալի՝ Ջաքար Ջաքարյանը 25 ռ. է նվիրում «Նվեր մանուկներին» ընկերության վարչությանը²:

1 «Հորիզոն», 1916, № 95, 1 մայիսի, էջ 1:

2 Նշվ. հոդվ., էջ 3:

1916 թ. ապրիլի 28-ին վախճանվում և մայիսի 1-ին գերեզմանոցում է ամփոփվում դերձակ Լևոնի դուստրը՝ 7-ամյա Հռիփսիմե Դեպեյանցը¹:

1 «Մշակ», 1916, № 93, 30 ապրիլի, էջ 1:

1916 թ. ապրիլի 29-ին վախճանվում և մայիսի 1-ին գերեզմանոցում է ամփոփվում Տիգրան Գանիելյան Դավթյանցը¹:

1 «Մշակ», 1916, № 94, 1 մայիսի, էջ 1:

1916 թ. ապրիլի 30-ին վախճանվում և մայիսի 5-ին գերեզմանոցում է ամփոփվում Պետրոզարտի առևտրական ինստիտուտի ուսանող Երվանդ Ավետիսյանը (հոգեհանգիստը՝ Նորաշենի Սբ. Աստվածածին եկեղեցում)¹: Ի դեպ, 1917 թ. մայիսի 7-ին տեղի է ունենում տարելիցի հանդեսի և մահարձանի օժման արարողությունը²:

1 «Հորիզոն», 1916, № 97, 4 մայիսի, էջ 1:

2 «Հորիզոն», 1917, № 94, 7 մայիսի, էջ 1:

1916 թ. մայիսի 1-ին գերեզմանոցում է ամփոփվում Ներսես Մարգարյան Մելիք-Փաշայանցը¹:

1 «Մշակ», 1916, № 91, 28 ապրիլի, էջ 1; № 93, 30 ապր., էջ 1:

1916 թ. մայիսի 3-ին վախճանվում և 8-ին գերեզմանոցում է ամփոփվում Սաթենիկ Դահրամանյանը (հոգեհանգիստը՝ Սբ. Մարգիս եկեղեցում)¹:

1 «Հորիզոն», 1916, № 100, 7 մայիսի, էջ 1:

1916 թ. մայիսի 6-ին վախճանվում և 8-ին գերեզմանոցում է ամփոփվում Հռիփսիմե Չախարյանցը (հոգեհանգիստը՝ Ջգրաշենի Սբ. Ավետյաց եկեղեցում)¹:

1 «Հորիզոն», 1916, № 101, 8 մայիսի, էջ 1:

1916 թ. մայիսի 6-ին ամուսնու ձեռքով սպանվում և 10-ին գերեզմանոցում է ամփոփվում Հռիփսիմե Գրիգորյան Տեր-Աբրահամյանը (ծն.՝ Տեր-Միքայելյան)¹:

1 «Մշակ», 1916, № 100, 8 մայիսի, էջ 1:

1916 թ. մայիսի 8-ին գերեզմանոցում է ամփոփվում Մուղնու Սբ. Գևորգ եկեղեցու ավագ քահանա, ուսուցիչ Սիմոն Չմշկյանը¹: Թիֆլիսում առաջին օրհորդաց դպրոցի հիմնադիրը²:

1 «Մշակ», 1916, № 99, 7 մայիսի, էջ 1; № 100, 8 մայ., էջ 1: «Հորիզոն», 1916, № 100, 7 մայ., էջ 1; № 101, 8 մայ., էջ 1:

2 «Մշակ», 1916, № 100, 8 մայիսի, էջ 3:

1916 թ. մայիսի 12-ին գերեզմանոցում է ամփոփվում Գաբրիել Մունդուկյանի ավագ դուստրը՝ Նունե Մունդուկյանը¹:

1 «Մշակ», 1916, № 105, 14 մայիսի, էջ 3:

1916 թ. մայիսի 12-ին վախճանվում և 15-ին գերեզմանոցում է ամփոփվում Կարապետ Արզումանյան Օհանյանցը¹:

1 «Մշակ», 1916, № 106, 15 մայիսի, էջ 1:

1916 թ. մայիսի 13-ին գերեզմանոցում է ամփոփվում Սիրական Բուռնուչյանը¹:

1 «Հորիզոն», 1916, № 104, 12 մայիսի, էջ 3:

1916 թ. մայիսի 16-ին վախճանվում և 22-ին գերեզմանոցում է ամփոփվում Թիֆլիսի արական III գիմնազիայի շրջանավարտ Մարտիրոս (Մարտին) Սարգսյան Ստեփանյանցը (հոգեհանգիստը՝ Ջգրաշենի Ավետյաց Սբ. Աստվածածին եկեղեցում)¹: Մեկ տարի անց՝ 1917 թ. մայիսի 21-ին, նույն եկեղեցում կատարվում է հոգեհանգիստ՝ ի հիշատակ հանգուցյալի մահվան առաջին տարելիցի²:

1 «Հորիզոն», 1916, № 112, 22 մայիսի, էջ 1: «Մշակ», 1916, № 108, 18 մայ., էջ 2; № 110, 21 մայ., էջ 1; № 111, 22 մայ., էջ 1:

2 «Մշակ», 1917, № 105, 21 մայիսի, էջ 1:

1916 թ. մայիսի 22-ին գերեզմանոցում է ամփոփվում երդվյալ հավատարմատար Կարապետ (Գերասիմ) Գալստյան Յակուբյանցը (հոգեհանգիստը՝ Քանդանց եկեղեցում)¹:

1 «Մշակ», 1916, № 110, 21 մայիսի, էջ 1; № 111, 22 մայիսի, էջ 1: «Հորիզոն», 1916, № 111, 21 մայիսի, էջ 1; № 112, 22 մայիսի, էջ 1: Кавказское слово. № 113. 21 мая 1916 г. С. 1; № 114. 22 мая 1916 г. С. 1.

1916 թ. մայիսի 22-ին գերեզմանոցում է ամփոփվում Սարվինազ Աղեքսանդրյան Ռաֆայելյանցը (հոգեհանգիստը՝ Սբ. Կարապետ եկեղեցում)¹:

1 «Հորիզոն», 1916, № 111, 21 մայիսի, էջ 1: «Մշակ», 1916, № 110, 21 մայիսի, էջ 1:

1916 թ. մայիսի 25-ին վախճանվում և 28-ին գերեզմանոցում է ամփոփվում Կարսի ռեալական ուսումնարանի աշակերտ Յուլյա Տեր-Աղայանը¹:

1 «Մշակ», 1916, № 115, 27 մայիսի, էջ 1:

1916 թ. մայիսի 26-ին վախճանվում և գերեզմանոցում է ամփոփվում Մնացական Խաչատրյան Շահրեկյանցը¹:

1 «Հորիզոն», 1916, № 117, 28 մայիսի, էջ 1:

1916 թ. մայիսի 15-ին Ռևանդուզի ճակատամարտում զոհվում է և 29-ին գերեզմանոցում է ամփոփվում



վում Հայկական կամավորական IV գնդի հրամանատար 58-ամյա Արշակ Գավաֆյանը՝ Քեռին¹ (հոգեհանգիստը՝ Վանքի ավագ եկեղեցում)²:

1916 թ. մայիսի 21-ին հեռագրով հայտնում են. «Քեռիի մարմինը զորահրամանատարի թոյլտուրքեամբ կը փոխադրուի Մալմաստ և կը թաղուի եկեղեցու բակում»³, սակայն Ազգային բյուրոն հեռագրում է, որ «հայ ռազմիկի աճիւնը փոխադրեն անպատճառ Թիֆլիս»⁴: Մայիսի 28-ին դին կայարանից փոխադրվում է Վանքի եկեղեցի և 29-ին ամփոփվում գերեզմանոցում (հոգեհանգիստը՝ Վանքի եկեղեցում)⁵. «...տեղի ունեցաւ Քեռու թաղումը: Հանգուցեալի մարմինը պատերազմի դաշտից բերած էր Վանքի եկեղեցին: ...խումն բազմութեան ուղեկցութեամբ, առաջնորդուեց Խոջիվանքի գերեզմանատուն...»⁶:

Ի դեպ, Քեռու հիշատակին Միքայել Մելքոնյանցը և Անտոն Գատազյանը Նիկողայան կամրջի հայ վաճառականների շրջանում հանգանակել էին 97 ռ., որից 50 ռ. հատկացվել էր Ս. Նազարյանի ճաշարանին, իսկ 47 ռ.՝ հայ փախստական որբերին⁷:

Քեռու մահվան առնչությամբ Մոսկվայի հայկական կոմիտեի նախագահ Ստ. Մամիկոնյանը Մեսրոպ եպիսկոպոսին ուղարկում է մի հեռագիր, որում նշվում է. «Մոսկվայի հայկական կոմիտեւը իմանալով Քեռիի մահվան լուրը, արտակարգ ժողովում որոշեց խորին ցաւակցութիւն յայտնել մեր ժողովրդի կրած անփոխարինելի կորստի համար: Ընկած հերոսի յիշատակին կօմիտեւը որոշեց կազմել ֆօնդ,

կամատրներին և նրանց ընտանիքներին նպաստ տալու համար: Յիշեալ ֆօնդին յատկացվել է 5000 ռ.: Կօմիտեւը իր ջերմ ցանկութիւնն է յայտնում, որ ժողովրդական առաջնորդի աճիւնը թաղվի իր հայրենիքում»⁸:

- 1 «Մշակ», 1916, № 116, 28 մայիսի, էջ 1; № 117, 29 մայիսի, էջ 1, 3: Թաղման մասին տե՛ս № 118, 31 մայ., էջ 3: «Հորիզոն», 1916, № 113, 24 մայ., էջ 2:
- 2 «Հորիզոն», 1916, № 117, 28 մայիսի, էջ 1: Կենսագրական տվյալների մասին տե՛ս № 113, 24 մայ., էջ 1, իսկ տարբեր հոդվածներ՝ «Հորիզոն», 1916, № 118, 29 մայ., էջ 1-3; № 119, 31 մայիսի, էջ 2: Քեռու՝ Պարսկաստանի ռազմական գործունեության մասին տե՛ս Ֆ.-օ. Քեռին Պարսկաստանում, «Հորիզոն», 1916, № 137, 22 յունիսի, էջ 1-2; № 138, 23 յուն., էջ 2: «Հորիզոն», 1916, № 150, 8 յուլիսի, էջ 1:
- 3 «Հորիզոն», 1916, № 114, 25 մայիսի, էջ 1:
- 4 «Հորիզոն», 1916, № 115, 26 մայիսի, էջ 2:
- 5 «Մշակ», 1916, № 110, 21 մայիսի, էջ 3, № 114, 26 մայ., էջ 3; № 117, 29 մայ., էջ 2; № 118, 31 մայ., էջ 2: «Համբարաբեր», 1916, № 22, 29 մայ., էջ 677-678: «Կոչնակ», 1916, № 32, 5 օգոստոսի, էջ 840: Քեռու մասին մահախոսականներ, հուշեր և զանազան այլ նյութեր տե՛ս «Հորիզոն», 1916, № 117, 28 մայիսի, էջ 2; № 118, 29 մայ., էջ 1-3; № 119, 31 մայ., էջ 2; № 123, 4 յունիսի, էջ 2 և այլն:
- 6 «Գաղափար», 1916, № 43, 1 յունիսի, էջ 3:
- 7 «Մշակ», 1916, № 118, 31 մայիսի, էջ 3:
- 8 «Մշակ», 1916, № 122, 4 յունիսի, էջ 3:

1916 թ. մայիսի 30-ին գերեզմանոցում է ամփոփվում 8-րդ հրացանաձիգ գնդի բժիշկ Վահան Նիսաբյան Գևորգյանը¹:

- 1 «Մշակ», 1916, № 117, 29 մայիսի, էջ 1:

1916 թ. մայիսի 30-ին գերեզմանոցում է ամփոփվում Վարդուհի Կարապետյան Կյուլպենկյանցը (հոգեհանգիստը՝ Մուղնու Սբ. Գևորգ եկեղեցում)¹:

Ի դեպ, նրա զավակները՝ Չարուհին և Մերովբեն, հոգեհացի փոխարեն 100-ական ռուբլի էին փոխանցել Ս. Նազարյանի ճաշարանին, Գայանյան դըպրոցի որբերի ճաշարանին և Ծիրանավորի որբանոցին, իսկ Սոֆյա և Հայկ Թուրաբյանները՝ 20 ռ. Ս. Նազարյանի ճաշարանին²:

- 1 «Մշակ», 1916, № 117, 29 մայիսի, էջ 1: «Հորիզոն», 1916, № 118, 29 մայիսի, էջ 1:
- 2 «Մշակ», 1916, № 118, 31 մայիսի, էջ 3:

1916 թ. հունիսի 4-ին վախճանվում և 7-ին գերեզմանոցում է ամփոփվում Եղիսաբեթ Մողոմոնյան Արամյանցը (հոգեհանգիստը՝ Կուկիայի Սբ. Աստվածածին եկեղեցում)¹:

- 1 «Մշակ», 1916, № 124, 7 հունիսի, էջ 1: «Հորիզոն», 1916, № 125, 7 յունիսի, էջ 1:

1916 թ. հունիսի 4-ին վախճանվում և 7-ին գերեզմանոցում է ամփոփվում Մարիամ Ախաշյանը (հոգեհանգիստը՝ Մուղնու Սբ. Գևորգ եկեղեցում)¹:

- 1 «Հորիզոն», 1916, № 125, 7 յունիսի, էջ 1:

1916 թ. հունիսի 10-ին գերեզմանոցում է ամփոփվում Հովհաննես Հակոբյան Հայրապետյանցը՝ «Ստամբուլցի» (հոգեհանգիստը՝ Սբ. Կարապետ եկեղեցում)¹:

- 1 «Հորիզոն», 1916, № 128, 10 յունիսի, էջ 1:

1916 թ. հունիսի 12-ին վախճանվում և գերեզմանոցում է ամփոփվում Համազասպ Շահինյան Հեքթրյանցը (հոգեհանգիստը՝ Թանդոյան Սբ. Աստվածածին եկեղեցում)¹:

1 «Հորիզոն», 1916, № 131, 15 յունիսի, էջ 1:

1916 թ. հունիսի 14-ին վախճանվում և 19-ին գերեզմանոցում է ամփոփվում Ալեքսանդր (Ալեքսի) Պետրոսյան Մելիքյանցը (հոգեհանգիստը՝ Մուղնու Սբ. Գևորգ եկեղեցում)¹:

1 «Հորիզոն», 1916, № 134, 18 յունիսի, էջ 1:

1916 թ. հունիսի 28-ին Բաթումում վախճանվում և հուլիսի 3-ին գերեզմանոցում է ամփոփվում Անդրանիկի ամենամտերիմ զինակիցներից մեկը՝ գյումուշխանեցի խմբապետ Ավոն (Ավետիս Բզյան, Երիցյան)¹: Հոգեհանգիստը կատարում է Ատրպատակահի թեմի առաջնորդ Ներսես եպիսկոպոսը Վանքի եկեղեցում:



«Բաթումից բերելով՝ Խոջիվանքի գերեզմանատանը հողին յանձնեց հայ մարտիկներից մեկի՝ խմբապետ Աւօի մարմինը: Իբրև կամատրական վաշտերից մեկի ղեկավար, հանգուցեալը կամատրական չարքաշ կեանքի մէջ կորցրել էր իւր առողջութիւնը, իսկ ընտանիքի և սիրասուն դստեր կորուստը հայրենիքում, նրան վշտով գերեզման մըտցրին»²:

1 «Հորիզոն», 1916, № 145, 2 յուլիսի, էջ 1-3; № 146, 3 յուլ., էջ 1-2: «Մշակ», 1916, № 145, 3 յուլիսի, էջ 1: Кавказское слово. № 148. 3 июля 1916 г. С. 3; № 149. 5 июля 1916 г. С. 3.
2 «Գաղափար», 1916, № 56, 6 յուլիսի, էջ 3:

1916 թ. հունիսի 28-ին վախճանվում և հուլիսի 2-ին գերեզմանոցում է ամփոփվում Բաբա Մանուկյան Չանփոլադյանցը (հոգեհանգիստը՝ Մուղնու Սբ. Գևորգ եկեղեցում)¹:

Հանգուցյալի որդիները՝ Եսային, Ալեքսանդրը, Եղիան և Միքայելը, հոր հիշատակին նվիրաբերել են 1500 ռ., որից «...500 ռ. դրվում է վեհ. կաթողիկոսի տրամադրութեան տակ՝ Հայաստանի վերաշինութեանը գործադրելու, 200 ռ.՝ Կովկասեան հայոց բարեգ. ընկերութեանը, 200 ռուբլի՝ Կենտրոնական կոմիտեին, 500 ռ.՝ Հին Նախիջևանի դպրոցի շինութեան համար և 100 ռուբլի Հին Նախիջևանի Ս. Երրորդութիւն եկեղեցուն»²:

1 «Հորիզոն», 1916, № 144, 30 յունիսի, էջ 1; № 145, 2 յուլ., էջ 1: «Մշակ», 1916, № 144, 2 յուլիսի, էջ 1:
2 «Մշակ», 1916, № 148, 7 յուլիսի, էջ 3:

1916 թ. հունիսի 28-ին վախճանվում և հուլիսի 3-ին գերեզմանոցում է ամփոփվում Ստեփան Կարապետյան Գրիգորյանցը (հոգեհանգիստը՝ Էջմիածնեցոց Սբ. Գևորգ եկեղեցում)¹:

1 «Հորիզոն», 1916, № 145, 2 յուլիսի, էջ 1:

1916 թ. հուլիսի 1-ին Մուշի շրջանի մարտերում հերոսաբար զոհվում և օգոստոսի 6-ին գերեզմանոցում է ամփոփվում պողպորուչիկ Արմենակ Եփրեմյան Ատոմյանցը (հոգեհանգիստը՝ Վանքի եկեղեցում)¹. «Յուղարկատրութիւնը և թաղումը տեղի ունեցաւ զինուորական պատիւներով»²:

1 «Հորիզոն», 1916, № 173, 5 օգոստոսի, էջ 1: «Մշակ», 1916, № 172, 5 օգոս., էջ 1: Армянский вестник. № 30. 21 августа 1916 г. С. 15.
2 «Մշակ», 1916, № 176, 10 օգոստոսի, էջ 3:

1916 թ. հուլիսի 3-ին Միքայելյանի անվան հիվանդանոցում վախճանվում և 8-ին գերեզմանոցում է ամփոփվում 80-ամյա Միքայել Եսայան Սալամբեկյանցը (հոգեհանգիստը՝ Վանքի եկեղեցում)¹:

Գայանյան դպրոցի հիմնադիրներից էր, «Հալաբարի Մարիամեան դպրոցի խնամակալ, որի պահպանութեան և ապահովութեան գործում շատ մեծ ծառայութիւն ունի կատարած Կարապետ Թէմուրազեանցի օրով, Հալաբարի Խոջիվանքի գերեզմանատան բարեկարգիչ և վերաշինող, Էջմիածնի վեհարանի վերաշինութեան ղեկավար, Թիֆլիսի Վանքի տաճարի ներքին ու արտաքին և առաջնորդարանի վերանորոգութեան ու բարեկարգութեան ղեկավար Ալ. Մանթաշեանի հաշուով, Մցխէթի տաճարի վերանորոգութեան անդամ, Ծինամաձղվարիանի ուսումնարանի շինութեան ճարտարապետ, որոնց համար ոչ մի վարձ կամ չնչին բան: Միքայել Սալամբեգեան՝ ուսուցիչ: 23 տարի Ներսիսեան հոգևոր դպրոցում, օրիորդաց ինստիտուտում և զավեղենիայում և այլն և այլն»²:

1 «Հորիզոն», 1916, № 149, 7 յուլիսի, էջ 1: «Մշակ», 1916, № 148, 7 յուլ., էջ 1:
2 **Միքայել Սալամբեգեան**, «Մշակ», 1916, № 148, 7 յուլիսի, էջ 3: Նշվել է նաև. «Հանգուցեալը իբրև ուսուցիչ՝ կրթել է մի ամբողջ սերունդ և նրա 1000-աւոր աշակերտները յարգանքով են յիշում նրա անունը: Իբրև ճարտարապետ՝ չի խնայել ոչ մի ջանք մեր հասարակական հիմնարկութիւնները ճարտարապետական և տեխնիքական պատշաճ և վայելուչ վիճակի մէջ դնելու: Իբրև հասարակական գործիչ, վաթսու-

նական թականներից մասնակցել է ժողովրդական հիմնարկությունների բարգաւաճման: Նա ազգային խորական ոգուն դեմ է եղել և նոյնքան աջակցել է վրաց հիմնարկութեանց, որչափ և իր մայրենի հիմնարկութեանց («Գաղափար», 1916, № 57, 8 յուլիսի, էջ 3):

1916 թ. հուլիսի 7-ին վախճանվում և հուլիսի 10-ին գերեզմանոցում է ամփոփվում Արմենակ Ահարոնյանը (հոգեհանգիստը՝ Էջմիածնեցոց Սր. Գևորգ եկեղեցում)¹:

1 «Հորիզոն», 1916, № 152, 10 յուլիսի, էջ 1:

1916 թ. հուլիսի 12-ին վախճանվում և 15-ին գերեզմանոցում է ամփոփվում Գաբրիել Տեր-Գավթյանը¹:

1 «Հորիզոն», 1916, № 156, 15 յուլիսի, էջ 1:

1916 թ. հուլիսի 14-ին վախճանվում և 17-ին գերեզմանոցում է ամփոփվում Սինաս Մելքոնյան Աթաբեկյանը¹:

1 «Հորիզոն», 1916, № 158, 17 յուլիսի, էջ 1: «Մշակ», 1916, № 157, 17 յուլիսի, էջ 1:

1916 թ. հուլիսի 17-ին վախճանվում և օգոստոսի 7-ին գերեզմանոցում է ամփոփվում պողպորուչիկ Վիկտոր Կարապետյան Մանուելյանը (պատարագն ու հոգեհանգիստը՝ Քամոյանց Սր. Գևորգ եկեղեցում)¹: 1917 թ. հուլիսի 16-ին նույն եկեղեցում կատարվում է հանգուցյալի մահվան առաջին տարեկիցին նվիրված հոգեհանգիստ²:

1 «Հորիզոն», 1916, № 174, 6 օգոստոսի, էջ 1: «Մշակ», 1916, № 161, 23 յուլիսի, էջ 2-3; № 173, 6 օգոստոսի, էջ 1: Армянский вестник. № 30. 21 августа 1916 г. С. 15.

2 «Մշակ», 1917, № 146, 16 յուլիսի, էջ 1:

1916 թ. հուլիսի 24-ին վախճանվում և 26-ին գերեզմանոցում է ամփոփվում Փառանձեմ Նազարեթյան Մատոյանը (հոգեհանգիստը՝ Մուղնու Սր. Գևորգ եկեղեցում)¹:

1 «Հորիզոն», 1916, № 164, 26 յուլիսի, էջ 1:

1916 թ. հուլիսի 24-ին վախճանվում և 27-ին գերեզմանոցում է ամփոփվում «Մշակ» թերթի գրաշար Գևորգ (Գիվի) Միքայելյան Պապուլյանը¹: Ի դեպ, 1917 թ. հուլիսի 16-ին տեղի է ունենում հանգուցյալի մահվան առաջին տարեկիցի և հուշարձանի բացման արարողություն²:

1 «Մշակ», 1916, № 163, 26 յուլիսի, էջ 1; № 164, 27 յուլ., էջ 1:

2 «Մշակ», 1917, № 152, 23 յուլիսի, էջ 1:

1916 թ. հուլիսի 27-ին վախճանվում և 31-ին գերեզմանոցում է ամփոփվում Կեկել Մելիքյան Գուլյանը¹:

1 «Մշակ», 1916, № 166, 29 յուլիսի, էջ 1; № 168, 31 յուլիսի, էջ 1:

1916 թ. հուլիսի 31-ին գերեզմանոցում է ամփոփվում Աբրահամ Մարտիրոսյան Եսայբեգյանը (հոգեհանգիստը՝ Թանդոյան Սր. Աստվածածին եկեղեցում)¹: 1917 թ. օգոստոսի 20-ին նշվում է մահվան տարեկիցը²:

1 «Հորիզոն», 1916, № 168, 30 յուլիսի, էջ 1; № 169, 31 յուլ., էջ 1:

2 «Հորիզոն», 1917, № 176, 19 օգոստոսի, էջ 1:

1916 թ. օգոստոսի 1-ին վախճանվում և 4-ին գերեզմանոցում է ամփոփվում Եղիաբեթ Թաթոսյան Ստեփանբեգյանը (հոգեհանգիստը՝ Մուղնու Սր. Գևորգ եկեղեցում)¹: 1917 թ. օգոստոսի 5-ին նշվում է մահվան տարեկիցը²:

1 «Հորիզոն», 1916, № 171, 3 օգոստոսի, էջ 1: «Մշակ», 1916, № 170, 3 օգոս., էջ 1:

2 «Հորիզոն», 1917, № 164, 4 օգոստոսի, էջ 1:

1916 թ. օգոստոսի 7-ին գերեզմանոցում է ամփոփվում բժիշկ Արսեն Արիստակեսյան Խանդամիրյանը (հոգեհանգիստը՝ Մուղնու Սր. Գևորգ եկեղեցում)¹:

1 «Մշակ», 1916, № 174, 7 օգոստոսի, էջ 1: «Հորիզոն», 1916, № 175, 7 օգոս., էջ 1:

1916 թ. օգոստոսի 10-ին վախճանվում և 14-ին գերեզմանոցում է ամփոփվում Արամայիս Մելիք-Արամյանը (հոգեհանգիստը՝ Թանդոյան Սր. Աստվածածին եկեղեցում)¹:

1 «Հորիզոն», 1916, № 181, 14 օգոստոսի, էջ 1:

1916 թ. օգոստոսի 11-ին վախճանվում և 14-ին գերեզմանոցում է ամփոփվում Մելքոն Խաչատրյանը (հոգեհանգիստը՝ Սր. Կարապետ եկեղեցում)¹:

1 «Հորիզոն», 1916, № 180, 13 օգոստոսի, էջ 1: «Մշակ», 1916, № 179, 13 օգոս., էջ 1:

1916 թ. օգոստոսի 17-ին պատերազմում զոհվում և հոկտեմբերի 22-ին գերեզմանոցում է ամփոփվում Կովկասյան հրացանաձիգ 16-րդ գնդի պողպորուչիկ Ներսես Ալեքսանդրյան Բաղդասարյանը (հոգեհանգիստը՝ Մուղնու Սր. Գևորգ եկեղեցում)¹: 1917 թ. սեպտեմբերի 17-ին Քամոյանց Սր. Գևորգ եկեղեցում կատարվում է հոգեհանգստյան արարողություն՝ ի հիշատակ հանգուցյալի մահվան առաջին տարեկիցի²:

1 «Մշակ», 1916, № 235, 21 հոկտեմբերի, էջ 1:

2 «Մշակ», 1917, № 197, 17 սեպտեմբերի, էջ 1:

1916 թ. օգոստոսի 19-ին վախճանվում և 21-ին գերեզմանոցում է ամփոփվում Փեփրոնյա Գրիգորյան Քաբաճյանը (հոգեհանգիստը՝ Վանքի եկեղեցում)¹:

1 «Հորիզոն», 1916, № 186, 21 օգոստոսի, էջ 1:

1916 թ. օգոստոսի 19-ին վախճանվում և 22-ին գերեզմանոցում է ամփոփվում արղահանցի Հարություն Կարապետյան Տեր-Բաղդասարյանը (հոգեհանգիստը՝ Խոջիվանքի եկեղեցում)¹: Ի դեպ, 1917 թ. օգոստոսի 27-ին նշվում է մահվան տարեկիցը²:

1 «Հորիզոն», 1916, № 186, 21 օգոստոսի, էջ 1: «Մշակ», 1916, № 185, 21 օգոս., էջ 1:

2 «Հորիզոն», 1917, № 183, 27 օգոստոսի, էջ 1:

1916 թ. օգոստոսի 21-ին վախճանվում և 25-ին գերեզմանոցում է ամփոփվում Մարթա Գաբրիելյան Բերոյանը (հոգեհանգիստը՝ Էջմիածնեցոց Սր. Գևորգ եկեղեցում)¹:

1 «Հորիզոն», 1916, № 188, 24 օգոստոսի, էջ 1:

1916 թ. օգոստոսի 21-ին վախճանվում և 22-ին գերեզմանոցում է ամփոփվում Միքայել Եգորյան Կանսարականը (հոգեհանգիստը՝ Մուղնու Սբ. Գևորգ եկեղեցում)¹:

¹ «Հորիզոն», 1916, № 189, 25 օգոստոսի, էջ 1:

1916 թ. օգոստոսի 28-ին վախճանվում և սեպտեմբերի 1-ին գերեզմանոցում է ամփոփվում Հոփիսինե Գևորգյան Տեր-Սկրտչյանը (հոգեհանգիստը՝ Հավաբարի Սբ. Սինաս եկեղեցում)¹:

¹ «Հորիզոն», 1916, № 194, 31 օգոստոսի, էջ 1: «Մշակ», 1916, № 193, 31 օգոստոսի, էջ 1:

1916 թ. օգոստոսի 31-ին վախճանվում և սեպտեմբերի 1-ին գերեզմանոցում է ամփոփվում Կատարինե Բոգդանյան Տեր-Դավթյանը (հոգեհանգիստը՝ Կաթողիկե Սբ. Գևորգ եկեղեցում)¹:

¹ «Հորիզոն», 1916, № 194, 31 օգոստոսի, էջ 1: «Մշակ», 1916, № 193, 31 օգոստոսի, էջ 2; № 194, 1 սեպտեմբերի, էջ 1:

1916 թ. օգոստոսի 31-ին վախճանվում և սեպտեմբերի 4-ին գերեզմանոցում է ամփոփվում Հովսեփ Գասպարյանը¹:

¹ «Հորիզոն», 1916, № 197, 3 սեպտ., էջ 1; № 198, 4 սեպտ., էջ 1:

1916 թ. սեպտեմբեր 11-ին վախճանվում և 15-ին գերեզմանոցում է ամփոփվում Մուշեղ Հակոբյան Տեր-Հովհաննիսյանը (հոգեհանգիստը՝ Վանքի եկեղեցում)¹:

¹ «Հորիզոն», 1916, № 205, 15 սեպտեմբերի, էջ 1:

1916 թ. սեպտեմբեր 20-ին վախճանվում և 25-ին գերեզմանոցում է ամփոփվում Սբ. Նշան եկեղեցու քահանա Գրիգոր Շերմազանյանը (հոգեհանգիստը՝ Սբ. Նշան եկեղեցում)¹:

¹ «Հորիզոն», 1916, № 212, 23 սեպտեմբերի, էջ 1; № 213, 24 սեպտ., էջ 1; № 214, 25 սեպտ., էջ 1:

1916 թ. սեպտեմբեր 24-ին վախճանվում և 27-ին գերեզմանոցում է ամփոփվում Մարիամ (Վերոջկա) Հովհաննիսյան Գևորգյանը (հոգեհանգիստը՝ Էջմիածնեցոց Սբ. Գևորգ եկեղեցում)¹:

¹ «Հորիզոն», 1916, № 214, 25 սեպտ., էջ 1; № 215, 27 սեպտ., էջ 1:

1916 թ. հոկտեմբերի 5-ին գերեզմանոցում է ամփոփվում Մարիամ Լալալյանը (հոգեհանգիստը՝ Սբ. Գրիգոր Լուսավորիչ եկեղեցում)¹:

¹ «Հորիզոն», 1916, № 221, 4 հոկտ., էջ 1; № 222, 5 հոկտ., էջ 1:

1916 թ. հոկտեմբերի 4-ին վախճանում և 9-ին գերեզմանոցում է ամփոփվում Նատալյա Սադաղյանը (հոգեհանգիստը՝ Էջմիածնեցոց Սբ. Գևորգ եկեղեցում)¹:

¹ «Հորիզոն», 1916, № 225, 8 հոկտեմբերի, էջ 1:

1916 թ. հոկտեմբերի 12-ին վախճանվում և 15-ին գերեզմանոցում է ամփոփվում Հովհաննես Երզրնկյանը (հոգեհանգիստը՝ Սբ. Նշան եկեղեցում)¹:

¹ «Հորիզոն», 1916, № 230, 15 հոկտեմբերի, էջ 1:

1916 թ. հոկտեմբերի 13-ին վախճանում և 15-ին գերեզմանոցում է ամփոփվում Թիֆլիսի առաջին գիմնազիայի աշակերտ Սամվել Մելիք-Ստեփանյանը (հոգեհանգիստը՝ Խոջիվանքի եկեղեցում)¹:

¹ «Հորիզոն», 1916, № 230, 15 հոկտեմբերի, էջ 1:

1916 թ. հոկտեմբերի 13-ին վախճանվում և 16-ին գերեզմանոցում է ամփոփվում Արշակ Հարությունյան Հակոբջանյանը (հոգեհանգիստը՝ Վանքի եկեղեցում)¹:

¹ «Հորիզոն», 1916, № 231, 16 հոկտեմբերի, էջ 1:

1916 թ. հոկտեմբերի 16-ին գերեզմանոցում է ամփոփվում Լևոն Խոջամիրյանը (հոգեհանգիստը՝ Խոջիվանքի եկեղեցում)¹:

¹ «Հորիզոն», 1916, № 230, 15 հոկտեմբերի, էջ 1:

1916 թ. Կրասնոյարսկում վախճանվում և հոկտեմբերի 16-ին գերեզմանոցում է ամփոփվում Սուրեն Սպանդարյանը (հոգեհանգիստը՝ Քանդանոց եկեղեցում, Դվորցովայա փողոց)¹:

¹ «Գաղափար», 1916, № 85, 16 հոկտեմբերի, էջ 1:

1916 թ. հոկտեմբերի 16-ին վախճանվում և 18-ին գերեզմանոցում է ամփոփվում Մարթա Վարդանյան Սարգսյանը (հոգեհանգիստը՝ Սբ. Կարապետ եկեղեցում)¹:

¹ «Հորիզոն», 1916, № 232, 18 հոկտեմբերի, էջ 1:

1916 թ. հոկտեմբերի 30-ին գերեզմանոցում է ամփոփվում Վարդանուշ Դանիելյանը (հոգեհանգիստը՝ Սբ. Էջմիածնեցոց Սբ. Գևորգ եկեղեցում)¹:

¹ «Հորիզոն», 1916, № 242, 29 հոկտեմբերի, էջ 1; № 243, 30 հոկտ., էջ 1:

1916 թ. նոյեմբերի 6-ին գերեզմանոցում է ամփոփվում Մոսկվայի համալսարանի պատմահոգեբանական ֆակուլտետի երկրորդ կուրսի ուսանողուհի Զիզիկ Մերեբյակյանը (հոգեհանգիստը՝ Սբ. Աստվածածին եկեղեցում)¹:

¹ «Հորիզոն», 1916, № 249, 6 նոյեմբերի, էջ 1:

1916 թ. նոյեմբերի 7-ին գերեզմանոցում է ամփոփվում Աննա Միրոնյան Ռոստոմյանը (հոգեհանգիստը՝ Թանդոյան Սբ. Աստվածածին եկեղեցում)¹:

¹ «Հորիզոն», 1916, № 249, 6 նոյեմբերի, էջ 1:

1916 թ. նոյեմբերի 10-ին գերեզմանոցում է ամփոփվում ռազմաճակատում զոհված հրետանու պորուչիկ Գևորգ Պետրոսյան Զիթոցյանը (հոգեհանգիստը՝ Վանքի եկեղեցում)¹:

¹ «Հորիզոն», 1916, № 252, 10 նոյ., էջ 1; № 253, 11 նոյ., էջ 3:

1916 թ. նոյեմբերի 10-ին վախճանվում և 13-ին գերեզմանոցում է ամփոփվում Ջրի և Էժանազին ճաշարանների ու թեյարանների ընկերության պատ-

վաճակոր անդամ Մելանյա (Մալաշա) Մելքունյան Բաբանասյանցը (հոգեհանգիստը՝ Ջգրաշենի Սբ. Ավետյաց եկեղեցում)¹: Հայտնի է, որ հանգուցյալը տիկին Մարիամ Ծովիանյանի հետ Թիֆլիսում հիմնում է ձրի և էժանագին ճաշարան²:

1 «Հորիզոն», 1916, № 254, 12 նոյեմբերի, էջ 1: «Մշակ», 1916, № 255, 13 նոյ., էջ 1:

2 Տ., Մելանյա Բաբանոսեան, «Մշակ», 1916, № 255, 13 նոյ., էջ 3:

1916 թ. նոյեմբերի 16-ին վախճանվում և 18-ին գերեզմանոցում է ամփոփվում Սերյոժա Բարսեղյանը (հոգեհանգիստը՝ Քանոյանց եկեղեցում)¹:

1 «Հորիզոն», 1916, № 259, 18 նոյեմբերի, էջ 1:

1916 թ. նոյեմբերի 25-ին Միքայել Արամյանցի հիվանդանոցում վախճանվում և դեկտեմբերի 4-ին գերեզմանոցում է ամփոփվում գրող, հասարակական գործիչ շամսխեցի 54-ամյա Սեդրակ Ավագյան Թառայանցը¹:

1 «Մշակ», 1916, № 265, 26 նոյեմբերի, էջ 3; № 267, 29 նոյ., էջ 3: «Հորիզոն», 1916, № 270, 2 դեկտեմբերի, էջ 2; № 271, 3 դեկտ., էջ 1; № 272, 6 դեկտ., էջ 3: «Գաղափար», 1916, № 103, 4 դեկտ., էջ 1: Кавказское слово. № 270. 6 декабря 1916 г. С. 3.

1916 թ. նոյեմբերի 26-ին 67 տարեկանում վախճանվում և դեկտեմբերի 3-ին գերեզմանոցում է ամփոփվում հասարակական գործիչ, հրապարակախոս, լեզվաբան, «Համետ»-ի հայերեն թարգմանիչ, «Մշակ»-ի բազմամյա թղթակից, Հայաստանի վերաշինության հանձնաժողովի, Հայ նպաստամատույց ընկերության վարչության և Հայոց ազգագրական ընկերության անդամ գյումրեցի Ավետիք Մ. Եզեկյանցը (հոգեհանգիստը՝ Վանքի եկեղեցում)¹: 1917 թ. հունվարի 8-ին կատարվում է հոգեհանգիստ՝ ի հիշատակ մահվան քառասնորյակի²:

1 Հ. Ա., Ավետիք Մ. Եզեկեան, «Մշակ», 1916, № 266, 27 նոյեմբերի, էջ 3 և № 269, 1 դեկտեմբերի, էջ 1, 3: Кавказское слово. № 264. 29 ноября 1916 г. С. 3; № 269. 4 декабря 1916 г. С. 3. «Հորիզոն», 1916, № 268, 30 նոյ., էջ 1 (հիշվում է որպես Հայոց որամատիկական ընկերության խորհրդի փոխանդամ), № 269, 1 դեկտ., էջ 1; № 271, 3 դեկտ., էջ 1, 3; № 272, 6 դեկտ., էջ 3:

2 «Մշակ», 1917, № 4, 6 յունվարի, էջ 2:

1916 թ. նոյեմբերի 27-ին վախճանվում և դեկտեմբերի 1-ին գերեզմանոցում է ամփոփվում Գևորգ Բաղդասարյան Նավտիկյանցը (հոգեհանգիստը՝ Մեյդանի Սբ. Գևորգ եկեղեցում)¹:

1 «Հորիզոն», 1916, № 268, 30 նոյեմբերի, էջ 1:

1916 թ. նոյեմբերի 23-ին վախճանվում և 27-ին գերեզմանոցում է ամփոփվում երգվյալ հավատարմատար, փաստաբան երևանցի Վարդան Ի. Եղիազարյանցը¹:

1 «Հովիտ», 1916, № 47, 4 դեկտեմբերի, էջ 739-740: Ա. Աթ., Վարդան Եղիազարեան, «Մշակ», 1916, № 266, 27 նոյեմբ., էջ 3: Кавказ. № 267. 29 ноября 1916 г. С. 3. Кавказское слово. № 260, 24 ноября 1916 г. С. 2.

1916 թ. նոյեմբերի 29-ին վախճանվում և դեկտեմբերի 4-ին գերեզմանոցում է ամփոփվում Գայանյան դպրոցի 7-րդ դասարանի աշակերտուհի Մարուսյան՝ Մարիամ Ստեփանյան Մարտիրոսյանցը (հոգեհանգիստը՝ Մեյդանի Սբ. Գևորգ եկեղեցում)¹:

1 «Հորիզոն», 1916, № 271, 3 դեկտեմբերի, էջ 1:

1916 թ. դեկտեմբերի 1-ին վախճանվում և 11-ին գերեզմանոցում է ամփոփվում Հովհաննես Վարդանյան Բաբայանցը (հոգեհանգիստը՝ Մուղնու Սբ. Գևորգ եկեղեցում)¹:

1 «Հորիզոն», 1916, № 276, 11 դեկտեմբերի, էջ 1:

1916 թ. դեկտեմբերի 8-ին գերեզմանոցում է ամփոփվում Թիֆլիսի փոխադարձ վարկի ընկերության նախկին պաշտոնյա Դավիթ Տեր-Դավթյանը (հոգեհանգիստը՝ Թանդոյան Սբ. Աստվածածին եկեղեցում)¹:

1 «Հորիզոն», 1916, № 273, 7 դեկտ., էջ 1; № 274, 8 դեկտ., էջ 1:

1916 թ. դեկտեմբերի 8-ին գերեզմանոցում է ամփոփվում Գյուլադա Բաղդասարյան Ամիրխանյանցը (հոգեհանգիստը՝ Մեյդանի Սբ. Գևորգ եկեղեցում)¹:

1 «Հորիզոն», 1916, № 273, 7 դեկտեմբերի, էջ 1:

1916 թ. դեկտեմբերի 8-ին վախճանվում և 11-ին գերեզմանոցում է ամփոփվում Արուսյակ Ջոխայանցը (հոգեհանգիստը՝ Էջմիածնեցոց Սբ. Գևորգ եկեղեցում)¹:

1 «Հորիզոն», 1916, № 276, 11 դեկտեմբերի, էջ 1:

1916 թ. դեկտեմբերի 25-ին վախճանվում և 29-ին գերեզմանոցում է ամփոփվում Ավետիք Հարությունյան Մամիկոնյանցը (հոգեհանգիստը՝ Խոջիվանքի Սբ. Աստվածածին եկեղեցում)¹:

1 «Հորիզոն», 1916, № 291, 29 դեկտեմբերի, էջ 1:

1916 թ. դեկտեմբերի 26-ին բժավոր տիֆից վախճանվում և 29-ին գերեզմանոցում է ամփոփվում Պետրոզարդի գյուղատնտեսական ճեմարանի ուսանող, Տիֆլիսի № 40 հիվանդանոցի աշխատակից ազուլիսցի Վաղինակ (Վաղո) Չաքարյան Չարգարյանցը (հոգեհանգիստը՝ Քանոյանց Սբ. Գևորգ եկեղեցում)¹: Ի հիշատակ հանգուցյալի՝ ընկերները մոտ 300 կտոր գիրք են նվիրում Սաթենիկ Օհանջանյանցի անվան մանկական գրադարանին²:

1 «Հորիզոն», 1916, № 290, 28 դեկտեմբերի, էջ 1; № 291, 29 դեկտ., էջ 1, 3:

2 «Հորիզոն», 1916, № 291, 29 դեկտեմբերի, էջ 3:

1916 թ. եղծված արձանագրությամբ տապանաբարին ընթերցվել է.

...Ու .../ սայ/ ...րեան/ ...երդան .../ ...աւ .../
... (1) 916 թ. ... / ... ամսի / ... 18 ամսց:

Հրատ. **Մուրադյան Ս.**, Армянская эпитафия Грузии. Тбилиси, Ереван, 1988, С. 98.

1917

1916 թ. վերջին վախճանվում և 1917 թ. հունվարի 2-ին գերեզմանոցում է ամփոփվում Ասատուր Գեորասիանյան Խաչատրյանցը (հոգեհանգիստը՝ Թանդոյան Սբ. Աստվածածին եկեղեցում)¹: Փետրվարի 5-ին Սբ. Նշան եկեղեցում տեղի է ունենում հոգեհանգիստ՝ ի հիշատակ հանգուցյալի մահվան քառասունօրյակի²:

1 «Հորիզոն», 1917, № 1, 1 յունվարի, էջ 1: «Մշակ», 1917, № 1, 1 յուն., էջ 1:
2 «Մշակ», 1917, № 27, 5 փետրվարի, էջ 2:

1917 թ. հունվարի 1-ին վաղաժամ վախճանվում և 4-ին գերեզմանոցում է ամփոփվում Տրդատ (Ստոպ) Վասակյան Փիլիպպոսյանցը¹:

1 «Մշակ», 1917, № 2, 3 յունվարի, էջ 1:

1917 թ. հունվարի 6-ին վախճանվում և 10-ին գերեզմանոցում է ամփոփվում Թորոս Համբարձումյան Իլոյանցը (հոգեհանգիստը՝ Մեյդանի Սբ. Գևորգ եկեղեցում)¹: Ի դեպ, նրա ցանկությամբ որդին՝ Գևորգը, ի հիշատակ հոր, մի շարք նվիրատվություններ է կատարել (Խարբերդի գաղթականներին, վիրախոս վայրերում գործող հայ դպրոցներին, Կովկասի և Ալեքսանդրապոլի հայոց բարեգործական ընկերություններին, Կաթողիկե եկեղեցու, Էջմիածնեցոց Մարիամյան օրիորդաց ծխական դպրոցներին և այլն)²:

1 «Հորիզոն», 1917, № 5, 10 յունվարի, էջ 1:
2 «Հորիզոն», 1917, № 9, 15 յունվարի, էջ 3:

1917 թ. հունվարի 11-ին գերեզմանոցում է ամփոփվում Զրիի Հերթիֆ գյուղից Մանասե Ասատուրյանը¹:

1 «Գաղափար», 1917, № 119, 18 յունվարի, էջ 3:

1917 թ. հունվարի 11-ին վախճանվում և 13-ին գերեզմանոցում է ամփոփվում Հարություն Սիմոնյան Ավետիսյանցը¹:

1 «Մշակ», 1917, № 8, 13 յունվարի, էջ 1:

1917 թ. հունվարի 11-ին վաղաժամ վախճանվում և 18-ին գերեզմանոցում է ամփոփվում Շուշանիկ Հովհաննիսյան Ղազանջյանցը (ծն.՝ Ափոյան): Հոգեհանգիստը՝ Քամոյանց Սբ. Գևորգ եկեղեցում¹: Ի դեպ, ամուսինը՝ Անուշավան Ղազանջյանցը, կնոջ հիշատակը հավերժացնելու նպատակով 15.000 ռուբլի է նվիրում Սաբուրթալո արվարձանում հայոց եկեղեցական-ծխական դպրոց բացելու համար²: Փետրվարի 26-ին նույն եկեղեցում տեղի է ունենում հոգեհանգիստ մահվան քառասունօրյակի առիթով³: Մեկ տարի անց նույն եկեղեցում կատարված հոգեհանգստի կապակցությամբ հանգուցյալը հիշվում է որպես նորաբաց «Շուշանիկ Անուշավանի Ղազանջյան» դպրոցի բարերարուհի⁴:

1 «Հորիզոն», 1917, № 10, 17 յունվարի, էջ 1: «Մշակ», 1917, № 9, 15 յունվարի, էջ 2; № 10, 17 յուն., էջ 2; № 15, 22 յուն., էջ 1:
2 «Հորիզոն», 1917, № 15, 22 յունվարի, էջ 3:
3 «Մշակ», 1917, № 41, 25 փետրվարի, էջ 1; № 42, 26 փետր., էջ 1:
4 «Մշակ», 1918, № 13, 20 յունվարի, էջ 1:

1917 թ. հունվարի 14-ին ոտքն անդամահատելուց հետո վախճանվում և 18-ին գերեզմանոցում է ամփոփվում Հայկական 6-րդ կամավորական գնդի զինվոր ռոդոսթոցի Հակոբ Սիմոնյանը¹:

1 «Մշակ», 1917, № 11, 18 յունվարի, էջ 1: «Գաղափար», 1917, № 119, 18 յունվարի, էջ 1:

1917 թ. հունվարի 18-ին գերեզմանոցում է ամփոփվում Հովհաննյան օր. դպրոցի IV դասարանի աշակերտուհի Արուսյակ Թայիրյանը (հոգեհանգիստը՝ Շամքորեցոց Կարմիր Ավետարան եկեղեցում)¹:

1 «Հորիզոն», 1917, № 18, 26 յունվարի, էջ 1:

1917 թ. հունվարի 30-ին վախճանվում և փետրվարի 1-ին գերեզմանոցում է ամփոփվում Կատարինե Մելիք-Ղազարյանը (հոգեհանգիստը՝ Քամոյանց Սբ. Գևորգ եկեղեցում)¹:

1 «Հորիզոն», 1917, № 23, 1 փետրվարի, էջ 1:

1917 թ. փետրվարի 1-ին Սարիղամիշում բժավոր տիֆից վախճանվում և 9-ին գերեզմանոցում է ամփոփվում տեղի № 1 հիվանդանոցի և Քաղաքների Միության գլխավոր բժիշկ, ազգային ազատամարտի մասնակից (որպես բժիշկ ծառայել է նախ Եփրեմ Խանին, ապա Քեռու բանակում) պարսկահայ Արշակ (Կարո) Կարապետյան Կարապետյանցը (հոգեհանգիստը՝ Մուղնու Սբ. Գևորգ եկեղեցում)¹: Ի դեպ, նույն եկեղեցում հանգուցյալի քառասունօրյակի հոգեհանգիստը տեղի է ունենում մարտի 19-ին²:

1 «Հորիզոն», 1917, № 26, 4 փետրվարի, էջ 1; № 27, 5 փետր., էջ 1, 3; № 29, 8 փետր., էջ 1, 3; № 30, 9 փետր., էջ 1; № 34, 17 փետր., էջ 1: «Մշակ», 1917, № 30, 9 փետր., էջ 1:
2 «Մշակ», 1917, № 59, 18 մարտի, էջ 1:

1917 թ. փետրվարի 2-ին վախճանվում և 5-ին գերեզմանոցում է ամփոփվում Հովհաննես Օհանջանյանը (հոգեհանգիստը՝ Մուղնու Սբ. Գևորգ եկեղեցում)¹:

1 «Հորիզոն», 1917, № 27, 5 փետրվարի, էջ 3:

1917 թ. փետրվարի 3-ին վախճանվում և 7-ին գերեզմանոցում է ամփոփվում Վառվառե Սողոմոնյան Սողովյուկան¹:

1 «Մշակ», 1917, № 28, 7 փետրվարի, էջ 1:

1917 թ. փետրվարի 6-ին վախճանվում և 7-ին գերեզմանոցում է ամփոփվում Ստեփան Այվազյանցը¹:

1 «Հորիզոն», 1917, № 28, 7 փետրվարի, էջ 3:

1917 թ. փետրվարի 7-ին վախճանվում և 11-ին գերեզմանոցում է ամփոփվում Սոնիկ Բոգդանյան (Բուրդանյան) Պողոսյանցը (հոգեհանգիստը՝ Ջրգրաշենի Ավետյաց Սբ. Աստվածածին եկեղեցում)¹: 1918 թ. նշվում է մահվան տարեկիցը²:

1 «Հորիզոն», 1917, № 30, 9 փետր., էջ 1; № 31, 11 փետր., էջ 1:
2 «Մշակ», 1918, № 31, 11 փետրվարի, էջ 1:

1917 թ. փետրվարի 14-ին վախճանվում և 19-ին գերեզմանոցում է ամփոփվում Սարմե Անանյանը

(հոգեհանգիստը՝ Նորաշենի Սբ. Աստվածածին եկեղեցում)¹: 1918 թ. փետրվարի 14-ին կատարվում է մահվան տարելիցի արարողություն²:

- 1 «Հորիզոն», 1917, № 35, 18 փետրարի, էջ 1: «Մշակ», 1917, № 35, 15 փետր., էջ 1:
2 «Հորիզոն», 1918, № 33, 14 փետրվարի, էջ 1:

1917 թ. փետրվարի 17-ին վախճանվում և 19-ին գերեզմանոցում է ամփոփվում Թեոդոսիայի Խալիայան ուսումնարանի շրջանավարտ, վաճառական, «Մշակ»-ի թղթակից վերինագույիսցի 70-ամյա Բարդասար Խաչատրյան Քալանթարյանը (հոգեհանգիստը՝ Ջգրաշենի Սբ. Ավետյաց եկեղեցում)¹:

- 1 «Մշակ», 1917, № 36, 19 փետրվարի, էջ 1, 3:

1917 թ. փետրվարի 19-ին գերեզմանոցում է ամփոփվում Սարգիս Մանվելյանը (հոգեհանգիստը՝ Սբ. Նշան եկեղեցում)¹:

- 1 «Հորիզոն», 1917, № 36, 19 փետրարի, էջ 1:

1917 թ. փետրվարի 17-ին վախճանվում և 21-ին գերեզմանոցում է ամփոփվում Վարդուհի Բոյախյանը (հոգեհանգիստը՝ Էջմիածնեցոց Սբ. Գևորգ եկեղեցում)¹:

- 1 «Հորիզոն», 1917, № 37, 21 փետրարի, էջ 1:

1917 թ. փետրվարի 21-ին գերեզմանոցում է ամփոփվում Հովհաննես Գալստյան Արգարյանը (հոգեհանգիստը՝ Վանքի եկեղեցում)¹:

- 1 «Հորիզոն», 1917, № 37, 21 փետրարի, էջ 1: «Մշակ», 1917, № 37, 21 փետրվարի, էջ 2:

1917 թ. փետրվարի 20-ին վախճանվում և 26-ին գերեզմանոցում է ամփոփվում Սերգեյ Պողոսյան Փիրումյանը (հոգեհանգիստը՝ Վանքի եկեղեցում)¹:

- 1 «Հորիզոն», 1917, № 41, 25 փետր., էջ 1; № 42, 26 փետր., էջ 1: «Մշակ», 1917, № 40, 24 փետր., էջ 1; № 42, 26 փետր., էջ 1:

1917 թ. փետրվարի 23-ին վախճանվում և 26-ին գերեզմանոցում՝ տոհմական դամբարանում է ամփոփվում Վառվառե Վասիլյան Թամամյանը (հոգեհանգիստը՝ Մուղնու Սբ. Գևորգ եկեղեցում)¹:

- 1 «Հորիզոն», 1917, № 41, 25 փետրարի, էջ 1; № 42, 26 փետր., էջ 1: «Մշակ», 1917, № 40, 24 փետր., էջ 2; № 41, 25 փետր., էջ 1; № 42, 26 փետր., էջ 1; № 46, 3 մարտի, էջ 1:

1917 թ. փետրվարի 27-ին վախճանվում և մարտի 2-ին գերեզմանոցում է ամփոփվում Շողակաթ Խաչիկյանը (հոգեհանգիստը՝ Թանդոյան Սբ. Աստվածածին եկեղեցում)¹:

- 1 «Հորիզոն», 1917, № 44, 1 մարտի, էջ 1: «Մշակ», 1917, № 45, 2 մարտի, էջ 1:

1917 թ. փետրվարի 27-ին վախճանվում և մարտի 4-ին գերեզմանոցում է ամփոփվում Գևորգ Ալլախվերդյանը (հոգեհանգիստը՝ Թանդոյան Սբ. Աստվածածին եկեղեցում)¹:

- 1 «Հորիզոն», 1917, № 47, 4 մարտի, էջ 1:

1917 թ. փետրվարի 28-ին վախճանվում և մարտի 5-ին գերեզմանոցում է ամփոփվում Հերիքնազ Աշրաֆյանը¹:

- 1 «Մշակ», 1917, № 47, 4 մարտի, էջ 1:

1917 թ. փետրվարի 28-ին վախճանվում և մարտի 5-ին գերեզմանոցում է ամփոփվում Աննա Ոսկանյան Տեր-Հակոբյանը (հոգեհանգիստը՝ Մուղնու Սբ. Գևորգ եկեղեցում)¹:

- 1 «Հորիզոն», 1917, № 47, 4 մարտի, էջ 1; № 48, 5 մարտի, էջ 1: «Մշակ», 1917, № 48, 5 մարտի, էջ 1:

1917 թ. մարտի 4-ին վախճանվում և 8-ին գերեզմանոցում է ամփոփվում Սիմեոն Խաչատրյան Դոշոյանը (հոգեհանգիստը՝ Սբ. Կարապետ եկեղեցում)¹:

- 1 «Հորիզոն», 1917, № 49, 7 մարտի, էջ 1:

1917 թ. մարտի 14-ին գերեզմանոցում է ամփոփվում Կատարինե Բուդաղյան Ջանփոլադյանը (հոգեհանգիստը՝ Վանքի եկեղեցում)¹:

- 1 «Հորիզոն», 1917, № 54, 12 մարտի, էջ 1: «Մշակ», 1917, № 54, 12 մարտի, էջ 2:

1917 թ. մարտի 14-ին վախճանվում և 18-ին գերեզմանոցում է ամփոփվում Ռոստոմ Ավագյան Մարտիրոսյանը (հոգեհանգիստը՝ Վանքի եկեղեցում)¹: Ի հիշատակ մորեղբոր՝ Գևորգ Մովսիսյան Չիլինգարյանը Հայոց ազգագրական ընկերության գրադարանին է նվիրում 1000 ռ.²: Նույն թվականի ապրիլի 23-ին Վանքի եկեղեցում կատարվում է հոգեհանգիստ՝ ի հիշատակ հանգուցյալի մահվան քառասուրյակի³: Մեկ տարի անց՝ 1918 թ. մարտի 18-ին, նշվում է տարելիցը⁴:

- 1 «Հորիզոն», 1917, № 56, 15 մարտի, էջ 1; № 58, 17 մարտի, էջ 1; № 59, 18 մարտի, էջ 1: «Մշակ», 1917, № 56, 15 մարտի, էջ 2; № 58, 17 մարտի, էջ 1; № 59, 18 մարտի, էջ 1; № 68, 2 ապրիլի, էջ 1:
2 «Մշակ», 1917, № 58, 17 ապրիլի, էջ 3:
3 «Մշակ», 1917, № 81, 22 ապրիլի, էջ 2; № 82, 23 ապրիլի, էջ 1:
4 «Մշակ», 1918, № 57, 17 մարտի, էջ 1:

1917 թ. մարտի 15-ին վախճանվում և 16-ին գերեզմանոցում է ամփոփվում Հարություն Այվազյան Դովլաթյանը (հոգեհանգիստը՝ Ջգրաշենի Ավետյաց Սբ. Աստվածածին եկեղեցում)¹:

- 1 «Հորիզոն», 1917, № 56, 15 մարտի, էջ 1:

1917 թ. մարտի 15-ին վախճանվում և 18-ին գերեզմանոցում է ամփոփվում Կովկասի հայոց բարեգործական ընկերության բարերար Բարսեղ (Վասիլ) Ավագյան Դավթյանը (հոգեհանգիստը՝ Սբ. Նշան եկեղեցում)¹: Ապրիլի 30-ին Ջգրաշենի Սբ. Ավետյաց եկեղեցում մահվան քառասուրյակի առիթով կատարվում է հոգեհանգիստ²: Կտակի համաձայն՝ ամժառանգ Բ. Դավթյանը մոտ 300.000 ռուբլի կազմող հարստության մեծագույն մասը նվիրում է Գալստյան օրհորդաց դպրոցին և ԿՀԲԸ ընկերությանը³:

- 1 «Հորիզոն», 1917, № 58, 17 մարտի, էջ 1; № 59, 18 մարտի, էջ 1: «Մշակ», 1917, № 58, 17 մարտի, էջ 2; № 59, 18 մարտի, էջ 1; № 60, 21 մարտի, էջ 1:
- 2 «Մշակ», 1917, № 88, 30 ապրիլի, էջ 1:
- 3 «Մշակ», 1917, № 59, 18 մարտի, էջ 3:

1917 թ. մարտի 22-ին վախճանվում և 26-ին գերեզմանոցում է ամփոփվում Բաղդասար Եղիզարյանը (հոգեհանգիստը՝ Էջմիածնեցոց Սբ. Գևորգ եկեղեցում)¹:

1 «Հորիզոն», 1917, № 64, 25 մարտի, էջ 1:

1917 թ. մարտի 31-ին հետին չքավորության մեջ վախճանվում (28.04. 1865, ք. Ջաքաթալա) և ապրիլի 9-ին գերեզմանոցում է ամփոփվում «Մշակ» թերթի աշխատակից բանաստեղծ Ալեքսանդր Հովսեփյան Ծատուրյանը (հոգեհանգիստը՝ Վանքի եկեղեցում)¹: Ի դեպ, ապրիլին նրա անունով է վերանվանվում «Նախկին կայսր Նիկոլայ II-ի անուն քաղաքային դպրոցը»²: Մայիսի 14-ին մահվան քառասունօրյակի առիթով եկեղեցում կատարվում է հոգեհանգիստ³: 1918 ապրիլի 1-ին նշվում է տարելիցը⁴:



Հայտնի է, որ մահվանից առաջ բանաստեղծը գրել էր իր տապանագիրը.

«Երբ կը մեռնեմ, պարզ ու անշուք իմ շիրիմ Դուք զարդարեք լոկ մի խաչով հասարակ. Վշտի խաչն էր կեանքիս միակ մտերիմ, Թո՛ղ եւ յաւերծ միրիս անցնե խաչի տակ...»⁵:

Վերոնշյալի փոխարեն, սակայն, բանաստեղծի տապանաքարին արձանագրվում է.

Բանաստեղծ Ալեքսանդր Ծատուրեան, 1865-1917⁶:

- 1 «Մշակ», 1917, № 69, 6 ապրիլի, էջ 1-4; № 70, 7 ապր., էջ 1; № 71, 9 ապր., էջ 1: Հանգուցյալի հիշատակին նվիրված նյութերը տես՝ № 71, 9 ապր., էջ 2-3: «Հորիզոն», 1917, № 68, 2 ապրիլի, էջ 2; № 69, 6 ապր., էջ 1; № 70, 7 ապր., էջ 1; № 71, 9 ապր., էջ 1, իսկ քաղման մանրամասնությունները՝ Մ. Է., Ծատուրեանի քաղումը, «Հորիզոն», 1917, № 72, 11 ապր., էջ 4:
- 2 «Հորիզոն», 1917, № 84, 26 ապրիլի, էջ 3:
- 3 «Մշակ», 1917, № 98, 13 մայիսի, էջ 1; № 99, 14 մայիսի, էջ 1:
- 4 «Մշակ», 1918, № 68, 31 մարտի, էջ 1: «Հորիզոն», 1918, № 68, 31 մարտի, էջ 1:
- 5 **Երեմեան Ա.**, Թիֆլիսի հայկական պանթեոններում, էջ 40-43:
- 6 Նշվ. աշխ., էջ 43 (ծննդյան տարեթիվը նշված է նաև 1864):

1917 թ. ապրիլի 7-ին գերեզմանոցում է ամփոփվում Վարդուհի Սկրտչյան Սողոմոնյանը (հոգեհանգիստը՝ Թանդոյան Սբ. Աստվածածին եկեղեցում)¹:

1 «Հորիզոն», 1917, № 69, 6 ապրիլի, էջ 1:

1917 թ. ապրիլի 4-ին վախճանվում և 9-ին գերեզմանոցում է ամփոփվում Արամ Աստվածատրյանը¹:

1 «Մշակ», 1917, № 70, 7 ապրիլի, էջ 1: «Հորիզոն», 1917, № 70, 7 ապրիլի, էջ 1:

1917 թ. ապրիլի 8-ին գերեզմանոցում է ամփոփվում Գաբրիել Աբեղյանը (հոգեհանգիստը՝ Կուկիայի Սբ. Աստվածածին եկեղեցում)¹:

1 «Հորիզոն», 1917, № 70, 7 ապրիլի, էջ 1:

1917 թ. ապրիլի 9-ին գերեզմանոցում է ամփոփվում լեռնային ճարտարագետ Արտեմի Սերգեյյան Բեկզադյանը (հոգեհանգիստը՝ Քամոյանց Սբ. Գևորգ եկեղեցում)¹:

1 «Հորիզոն», № 71, 9 ապրիլի, էջ 1:

1917 թ. ապրիլի 17-ին վախճանվում և 22-ին գերեզմանոցում է ամփոփվում իշխանուհի Եղիսաբեթ Դավթյան Բեհբուդյանը (հոգեհանգիստը՝ Քամոյանց Սբ. Գևորգ եկեղեցում)¹:

1 «Հորիզոն», 1917, № 79, 20 ապրիլի, էջ 1:

1917 թ. ապրիլի 15-ին վախճանվում և 23-ին գերեզմանոցում է ամփոփվում Սաթենիկ Բարխուդարյանը (հոգեհանգիստը՝ Ջգրաշենի Ավետյաց Սբ. Աստվածածին եկեղեցում)¹:

1 «Հորիզոն», 1917, № 81, 22 ապրիլի, էջ 1:

1917 թ. ապրիլի 16-ին 7-րդ լազարեթում վախճանվում և 23-ին գերեզմանոցում է ամփոփվում Սահակ Նավասարդյանը (հոգեհանգիստը՝ Խոջիվանքի մատուռում)¹:

1 «Հորիզոն», 1917, № 79, 20 ապրիլի, էջ 1; № 80, 21 ապր., էջ 1; № 81, 22 ապր., էջ 1:

1917 թ. ապրիլի 30-ին վախճանվում և մայիսի 4-ին գերեզմանոցում է ամփոփվում գեղարվեստագետ-ճարտարապետ, նկարիչ, Հայոց ազգագրական ընկերության նախկին անդամ շուշեցի Քրիստափոր Աստվածատրյան Տեր-Սարգսյանը (ծնվ. 1875 թ.): Հոգեհանգիստը՝ Մուղնու Սբ. Գևորգ եկեղեցում)¹: Հունիսի 11-ին քառասունօրյակի առիթով նույն եկեղեցում կատարվում է հոգեհանգստյան արարողություն²: Մեկ տարի անց՝ 1918 թ. մայիսի 12-ին, նշվում է հանգուցյալի մահվան տարելիցը³:

- 1 «Մշակ», 1917, № 90, 3 մայիսի, էջ 1-2: Կենսագրականը տես՝ № 91, 4 մայ., էջ 3: «Հորիզոն», 1917, № 90, 3 մայ., էջ 1; № 91, 4 մայ., էջ 1:
- 2 «Մշակ», 1917, № 121, 10 յունիսի, էջ 1:
- 3 «Մշակ», 1918, № 86, 12 մայիսի, էջ 1:

1917 թ. մայիսի 1-ին վախճանվում և 3-ին գերեզմանոցում է ամփոփվում Շողակաթ Ժախյանը (հոգեհանգիստը՝ Մետեխի Սբ. Գևորգ եկեղեցում)¹:

1 «Հորիզոն», 1917, № 90, 3 մայիսի, էջ 1:

1917 թ. մայիսի 15-ին վախճանվում և 18-ին գերեզմանոցում է ամփոփվում Տփղիսի տոհմական պատվավոր քաղաքացի Հովհաննես Հարությունյան Սուզանաճյանը (հոգեհանգիստը՝ Մուղնու Սբ. Գևորգ եկեղեցում)¹:

1 «Հորիզոն», 1917, № 101, 17 մայիսի, էջ 1; № 102, 18 մայիսի, էջ 1:

1917 թ. մայիսի 17-ին վախճանվում և 21-ին գերեզմանոցում է ամփոփվում Ալեքսանդր Գաբրիելյան Շաղինյանցը¹:

¹ «Մշակ», 1917, № 105, 21 մայիսի, էջ 1-2:

1917 թ. մայիսի 19-ին վախճանվում և 21-ին գերեզմանոցում է ամփոփվում Կեկել Հարությունյանը (հոգեհանգիստը՝ Մեյդանի Սբ. Գևորգ եկեղեցում)¹:

¹ «Հորիզոն», 1917, № 105, 21 մայիսի, էջ 1:

1917 թ. մայիսի 20-ին վախճանվում և 23-ին գերեզմանոցում է ամփոփվում Մալմաստի Ղզլջա գյուղից Մարգարիտ Հակոբյանցը (հոգեհանգիստը՝ Մեյդանի Սբ. Գևորգ եկեղեցում)¹:

¹ «Մշակ», 1917, № 106, 23 մայիսի, էջ 1: «Հորիզոն», 1917, № 106, 23 մայիսի, էջ 1:

1920 թ. մարտի 4-ին վախճանվում և 7-ին գերեզմանոցում է ամփոփվում Արամ Փոքրիկյանը (հոգեհանգիստը՝ Մեյդանի Սր. Գևորգ եկեղեցում)¹. «Արամը, լինելով ժողովուրդների համերաշխութեան ջերմ կողմնակից, գործնականապես աշխատում էր հայ, վրաց և թուրք խճճած իրականութեան մեջ իրականացնել այն: Անդրկովկասեան անարխիստի և տաճիկների ներարշախի ժամանակ նա, լինելով Դաշնակցութեան գարդիստի հարիւրապետներից մէկը, իր անձնական բարեմասնութիւններով մեծապէս նպաստեց Թիֆլիսում անիշխանութիւնը վերացնելու, կարգը վերականգնելու և հարևան ժողովուրդների խաղաղ կենակցութիւնը ապահովելու: Վերջին խնդրում առանձնապէս երախտապարտ պիտի զգան իրենց Արամի հանդէպ Օրթանալայի հայ և թուրք աշխատատրութիւնները: Հայ-վրացական չարաբաստիկ կոնֆլիկտի միջոցին Արամը ձերբակալեց Թիֆլիսում որպէս նախկին դաշնակցական գարդիստի և Մետեխի բանտը նետուեց: Ամբողջ 6 ամիս նա մնալով բանտի գաղճ մթնոլորտում և հիւժող պայմաններում, հիւանդացաւ, որը աւելի ևս սաստկացաւ բանտից դուրս և վերջը գերեզման տարաւ նրան»²:

1 «Աշխատատր», 1920, № 54, 7 մարտի, էջ 1:

2 Պ. Յ.-Պ., Արամ Փոքրիկեան, «Աշխատատր», 1920, № 54, 7 մարտի, էջ 2:

1920 թ. մարտի 8-ին վախճանվում և 9-ին գերեզմանոցում է ամփոփվում Խանում Բաղալյանը (հոգեհանգիստը՝ Խոջիվանքի եկեղեցում)¹:

1 «Աշխատատր», 1920, № 55, 9 մարտի, էջ 1:

1920 թ. մարտի 12-ին վախճանվում և 14-ին գերեզմանոցում է ամփոփվում Ռոստոմի բաժանմունքի կառավարիչ Սահակ Խալաթյանը (հոգեհանգիստը՝ Մուղնու Սր. Գևորգ եկեղեցում)¹:

1 «Աշխատատր», 1920, № 59, 14 մարտի, էջ 1:

1920 թ. մարտի 15-ին վախճանվում և 17-ին գերեզմանոցում է ամփոփվում Օսաննա Սահակյան Գևորգյանցը (հոգեհանգիստը՝ Քամոյանց Սբ. Գևորգ եկեղեցում)¹:

1 «Աշխատատր», 1920, № 62, 17 մարտի, էջ 1:

1920 թ. մարտի 16-ին վախճանվում և 18-ին գերեզմանոցում է ամփոփվում Գուրգենդուխտ Մերկելիոսյան Ալվազյանցը (հոգեհանգիստը՝ Թանդոյան Սբ. Աստվածածին եկեղեցում)¹:

1 «Աշխատատր», 1920, № 63, 18 մարտի, էջ 1:

1920 թ. մարտի 21-ին վախճանվում և 24-ին գերեզմանոցում է ամփոփվում Տիգրանակերտի հայրենակցական միության վարչության նախկին անդամ Պետրոս Բրուտյանը (հոգեհանգիստը՝ Սբ. Կարապետ եկեղեցում)¹:

1 «Աշխատատր», 1920, № 66, 23 մարտի, էջ 1:

1920 թ. մարտի 20-ին վախճանվում և 25-ին գերեզմանոցում է ամփոփվում Գեոնովափե Իսահակյանը (Չարիֆյան)¹:

1 «Աշխատատր», 1920, № 68, 25 մարտի, էջ 1:

1920 թ. մարտի 23-ին թոքախտից վախճանվում և 27-ին գերեզմանոցում է ամփոփվում Ներսիսյան դպրոցի ուսուցիչ, գրականագետ, քննադատ մանկավարժ Մամբրե Մատենճյանը (ծնվ. 21.10.1880, Բաբերդ): Հոգեհանգիստը՝ Վանքի Մայր եկեղեցում)¹:

Մ. Մատենճյանին ժամանակավորապես ամփոփում են Բաֆֆու շիրմի մոտ, քանի որ հանգուցյալը ցանկացել էր թաղվել Սանահնում²: Ընդառաջելով բազմաթիվ դիմումներին՝ «Աշխատատր» թերթի խմբագրությունը բացում է հանգուցյալի գերեզմանի վրա հուշարձան կանգնեցնելու ֆոնդ, որին էլ նրա մահվանից հետո՝ առաջին իսկ օրերին, փոխանցվել էր 1300 ռուբլի³:

Տապանաքարին արձանագրված է եղել միայն անուն-ազգանունը.

Մամբրե Մատենճեան⁴:

1 «Աշխատատր», 1920, № 68, 25 մարտի, էջ 1; № 69, 26 մարտի, էջ 1; № 70, 27 մարտի, էջ 1, էջ 2 (կան տարբեր հոդվածներ): Նրա մասին տես **Փիրումեան Տ.**, Մամբրե Մատենճեան, «Աշխատատր», 1920, № 68, 25 մարտի, էջ 2: ՀՍՀ, հ. 7, Երևան, 1981, էջ 286:

2 Թաղման մասին տես **Ա.**, Մամբրե Մատենճեանի թաղումը, «Աշխատատր», 1920, № 71, 30 մարտի, էջ 3:

3 «Աշխատատր», 1920, № 70, 27 մարտի, էջ 3: Կից տրված է նվիրատուների ցանկը:

4 **Երեմեան Ա.**, Թիֆլիսի հայկական պանթեոններում, էջ 21:

1920 թ. մարտի 29-ին ողբերգական մահով վախճանվում և ապրիլի 1-ին գերեզմանոցում է ամփոփվում Աստղիկ Տեր-Սահակյանը (հոգեհանգիստը՝ Քամոյանց Սբ. Գևորգ եկեղեցում)¹:

1 «Աշխատատր», 1920, № 72, 31 մարտի, էջ 1:

1920 թ. ապրիլի 2-ին եղբրական մահով վախճանվում և 8-ին գերեզմանոցում է ամփոփվում Ռու-

բեն (Տիգրան) Սաֆարյանը (հոգեհանգիստը՝ Մուղնու Սբ. Գևորգ եկեղեցում)¹:

1 «Նոր աշխատատր», 1920, № 6, 8 ապրիլի, էջ 1:

1920 թ. ապրիլի 16-ին վախճանվում և 18-ին գերեզմանոցում է ամփոփվում Աստղիկ Միրիմանյանը (հոգեհանգիստը՝ Վանքի Ավազ եկեղեցում)¹:

1 «Նոր աշխատատր», 1920, № 11, 17 ապրիլի, էջ 1:

1920 թ. ապրիլի 23-ին վախճանվում և 27-ին գերեզմանոցում է ամփոփվում լաբքսանդրապոլցի Սամսոն Ենոքյան Չուֆալակյանցը (հոգեհանգիստը՝ Թանդոյան Սբ. Աստվածածին եկեղեցում)¹:

1 «Նոր աշխատատր», 1920, № 18, 25 ապր., էջ 4; № 19, 27 ապր., էջ 1:

1920 թ. ապրիլի 26-ին թոքախտից վախճանվում և 28-ին գերեզմանոցում է ամփոփվում սուղացի 32-ամյա Հովակիմ Ջանոյանը¹:

1 **Աբելեան Պ.**, Յովակիմ Ջանոյեան, «Նոր աշխատատր», 1920, № 25, 5 մայիսի, էջ 3:

1920 թ. ապրիլի 27-ին թոքերի բորբոքումից վախճանվում և մայիսի 1-ին գերեզմանոցում է ամփոփվում Ներսիսյան դպրոցի նախկին ուսուցիչ և Պոլիտեխնիկական ինստիտուտի դասախոս, լրագրող 68-ամյա Նիկողայոս Տեր-Հարությունյանը՝ Հարոն (հոգեհանգիստը՝ Վանքի Մայր եկեղեցում)¹:

1 «Նոր աշխատատր», 1920, № 22, 30 ապրիլի, էջ 1; № 23, 1 մայիսի, էջ 1: Ծնվել է Թիֆլիսում՝ քահանայի ընտանիքում: Ներսիսյան դպրոցում ուսանելուց հետո սովորել է Փարիզի համալսարանում: 1880-ական թթ. վերադառնում է Թիֆլիս և ֆրանսերեն դասավանդում Ներսիսյան դպրոցում, ապա՝ պոլիտեխնիկումում: Թղթակցում է «Մշակ», «Մեղու» և «Արձագանք» թերթերին (**Փիրումեան Տ.**, Յարոյ, «Նոր աշխատատր», 1920, № 22, 30 ապրիլի, էջ 2:

1920 թ. ապրիլի 29-ին վախճանվում և մայիսի 1-ին գերեզմանոցում է ամփոփվում Մամիկոն Աղաբաբյան Սարգսյանցը (հոգեհանգիստը՝ Մուղնու Սբ. Գևորգ եկեղեցում)¹:

1 «Նոր աշխատատր», 1920, № 22, 30 ապրիլի, էջ 1; № 23, 1 մայիսի, էջ 1:

1920 թ. մայիսի 2-ին վախճանվում և 6-ին գերեզմանոցում է ամփոփվում Վարսենիկ Արշակյան Վասիլյանցը (հոգեհանգիստը՝ Շամքորեցոց Կարմիր Ավետարան եկեղեցում)¹: Հունիսի 13-ին նույն եկեղեցում կատարվում է հոգեհանգիստ՝ ի հիշատակ հանգուցյալի մահվան քառասունօրյակի²:

1 «Նոր աշխատատր», 1920, № 26, 6 մայիսի, էջ 1:

2 «Նոր աշխատատր», 1920, № 54, 12 յունիսի, էջ 1:

1920 թ. մայիսի 5-ին վախճանվում և 6-ին գերեզմանոցում է ամփոփվում Վասիլ Համբարձումյան Խեչանյանցը¹:

1 «Նոր աշխատատր», 1920, № 26, 6 մայիսի, էջ 1:

1920 թ. մայիսի 17-ին վախճանվում և 20-ին գերեզմանոցում է ամփոփվում Սեդրակ (Սերյոժա)

Խաչատրյան Սիմոնյանը (հոգեհանգիստը՝ Կուկիայի Նորաշեն Սբ. Աստվածածին եկեղեցում)¹:

1 «Նոր աշխատատր», 1920, № 37, 19 մայիսի, էջ 1:

1920 թ. մայիսի 21-ին վախճանվում և 23-ին գերեզմանոցում է ամփոփվում «Աշխատատր» տպարանի 40 տարվա գրաշար 60-ամյա Դավիթ Սարդարյանը (հոգեհանգիստը՝ Կուկիայի Նորաշեն Սբ. Աստվածածին եկեղեցում)¹:

1 «Նոր աշխատատր», 1920, № 40, 23 մայիսի, էջ 1-2:

1920 թ. մայիսի 22-ին վախճանվում և 25-ին գերեզմանոցում է ամփոփվում «Մեղու» ընկերության անդամ Գայանե Մելքոնյան Օհանջանյանը (հոգեհանգիստը՝ Ջգրաշենի Սբ. Ավետյաց եկեղեցում)¹: Մայիսի 30-ին ընկերության շենքում (Լազարևսկայա 1) կատարվում է հոգեհանգիստ՝ ի հիշատակ հանգուցյալի²:

1 «Նոր աշխատատր», 1920, № 41, 25 մայիսի, էջ 1:

2 «Նոր աշխատատր», 1920, № 44, 30 մայիսի, էջ 1:

1920 թ. մայիսի 2-ին Կ.Պոլսում վախճանվում և հունիսի 13-ին գերեզմանոցում է ամփոփվում դերասան ներքինագուլիսի Օվի (Հովհաննես) Առաքելյան Սևումյանը (հոգեհանգիստը՝ Մուղնու Սբ. Գևորգ եկեղեցում)¹:

1 «Մշակ», 1920, № 25, 30 մայիսի, էջ 1; № 36, 12 յունիսի, էջ 1; «Նոր աշխատատր», 1920, № 54, 12 յունիսի, էջ 1: Ի դեպ, դիակը հանգուցյալի տիկնոջ՝ դերասանուհի, երգչուհի Լյուսի Սևումյանի ուղեկցությամբ հունիսի 9-ին բերվում է Թիֆլիս («Նոր աշխատատր», 1920, № 53, 11 յունիսի, էջ 3): Հավելենք, որ մինչ այդ՝ մայիսի 30-ին, Մուղնու Սբ. Գևորգ եկեղեցում հանգուցյալի հիշատակին կատարվում է հոգեհանգիստ («Նոր աշխատատր», 1920, № 44, 30 մայիսի, էջ 1):

1920 թ. մայիսի 30-ին վախճանվում և հունիսի 1-ին գերեզմանոցում է ամփոփվում 1-ին Հայկական Լիսիցյան գիմնազիայի 2-րդ դասարանի աշակերտ Վահե Մարգարյան Հովսեփյանը (հոգեհանգիստը՝ Ջգրաշենի Սբ. Ավետյաց եկեղեցում)¹:

1 «Նոր աշխատատր», 1920, № 44, 30 մայիսի, էջ 3; № 45, 1 յունիսի, էջ 1:

1920 թ. հունիսի 2-ին վախճանվում և 6-ին գերեզմանոցում է ամփոփվում Խորեն Սիմոնյան Անիստյանը (հոգեհանգիստը՝ Թանդոյան Սբ. Աստվածածին եկեղեցում)¹:

1 «Նոր աշխատատր», 1920, № 48, 5 յունիսի, էջ 1; № 49, 6 յունիսի, էջ 1:

1920 թ. հունիսի 3-ին վախճանվում և 6-ին գերեզմանոցում է ամփոփվում Ստեփան վարժապետ Արմբատյանը (հոգեհանգիստը՝ Քամոյանց Սբ. Գևորգ եկեղեցում)¹:

1 «Նոր աշխատատր», 1920, № 49, 6 յունիսի, էջ 1:

1920 թ. հունիսի 4-ին վախճանվում և 8-ին գերեզմանոցում է ամփոփվում Ստեփան Հակոբյան Դուրյուղյանը (հոգեհանգիստը՝ Թանդոյան Սբ. Աստվածածին եկեղեցում)¹: Հուլիսի 18-ին Մուղնու

Սբ. Գևորգ եկեղեցում մատուցվում է պատարագ, և կատարվում հոգեհանգիստ՝ ի հիշատակ հանգուցյալի մահվան քառասունօրյակի²:

1 «Նոր աշխատատր», 1920, № 49, 6 յունիսի, էջ 1; № 50, 8 յունիսի, էջ 1:

2 «Նոր աշխատատր», 1920, № 82, 17 յուլիսի, էջ 1:

1920 թ. հունիսի 6-ին վախճանվում և 9-ին գերեզմանոցում է ամփոփվում Թանդոյան օրհորդաց դպրոցի 5-րդ դասարանի աշակերտուհի Սաթենիկ Հովհաննիսյան Շահգյաղյանը (հոգեհանգիստը՝ Թանդոյան Սբ. Աստվածածին եկեղեցում)¹:

1 «Նոր աշխատատր», 1920, № 50, 8 յունիսի, էջ 1; № 51, 9 յունիսի, էջ 1:

1920 թ. հունիսի 6-ին վախճանվում և 9-ին գերեզմանոցում է ամփոփվում Մարիամ Աֆրիկյանը (հոգեհանգիստը՝ Ջգրաշենի Սբ. Ավետյաց եկեղեցում)¹:

1 «Նոր աշխատատր», 1920, № 50, 8 յունիսի, էջ 1; № 51, 9 յունիսի, էջ 1:

1920 թ. հունիսի 11-ին վախճանվում և 15-ին գերեզմանոցում է ամփոփվում Մարիամ Գալստյան Ջավախյանը (հոգեհանգիստը՝ Էջմիածնեցոց Սբ. Գևորգ եկեղեցում)¹:

1 «Նոր աշխատատր», 1920, № 56, 15 յունիսի, էջ 1:

1920 թ. հունիսի 16-ին վախճանվում և 18-ին գերեզմանոցում է ամփոփվում Գարեգին Սահակյան Մսերյանը (հոգեհանգիստը՝ Էջմիածնեցոց Սբ. Գևորգ եկեղեցում)¹:

1 «Նոր աշխատատր», 1920, № 59, 18 յունիսի, էջ 1:

1920 թ. հունիսի 17-ին վախճանվում և 20-ին գերեզմանոցում է ամփոփվում Արզար Սահակյան Աթաբեգյանը (հոգեհանգիստը՝ Էջմիածնեցոց Սբ. Գևորգ եկեղեցում)¹:

1 «Նոր աշխատատր», 1920, № 61, 20 յունիսի, էջ 1:

1920 թ. հունիսի 28-ին վախճանվում և հուլիսի 1-ին գերեզմանոցում է ամփոփվում Վասիլ Ալեքսանյան Ջաղինյանը (հոգեհանգիստը՝ Էջմիածնեցոց Սբ. Գևորգ եկեղեցում)¹:

1 «Նոր աշխատատր», 1920, № 70, 1 յուլիսի, էջ 1:

1920 թ. հուլիսի 11-ին գերեզմանոցում է ամփոփվում Մանգլիսում վախճանված Պետրոս (Պետյա) Կոնստանդինյան Տեր-Հովհաննիսյանը (հոգեհանգիստը՝ Մուղնու Սբ. Գևորգ եկեղեցում)¹:

1 «Նոր աշխատատր», 1920, № 77, 11 յուլիսի, էջ 1:

1920 թ. հուլիսի 15-ին վախճանվում և 18-ին գերեզմանոցում է ամփոփվում օրացույցներ կազմող Մակար Եգորյան Չմշկյանը (հոգեհանգիստը՝ Քամոյանց Սբ. Գևորգ եկեղեցում)¹:

1 «Նոր աշխատատր», 1920, № 82, 17 յուլիսի, էջ 2; № 83, 18 յուլիսի, էջ 1:

1920 թ. հուլիսի 20-ին վախճանվում և 22-ին գերեզմանոցում է ամփոփվում Օլյա Չարչողյանը (ծն.

Գոզալյան): Հոգեհանգիստը՝ Նորաշենի Սբ. Աստվածածին եկեղեցում¹:

¹ «Նոր աշխատատր», 1920, № 85, 22 յուլիսի, էջ 1:

1920 թ. հուլիսի 23-ին վախճանվում և 25-ին գերեզմանոցում է ամփոփվում Կովկասի հայոց բարեգործական ընկերության բարերար Ալեքսանդր Քրիստափորյան Ղարաջյանը (հոգեհանգիստը՝ Ջգրաշենի Սբ. Ավետյաց եկեղեցում)¹:

¹ «Մշակ», 1920, № 59, 25 յուլիսի, էջ 1: «Նոր աշխատատր», 1920, № 88, 25 յուլ., էջ 1:

1920 թ. օգոստոսի 3-ին գերեզմանոցում է ամփոփվում Թագուհի Խիթարյան Գալստյանը (հոգեհանգիստը՝ Էջմիածնի Սբ. Աստվածածին եկեղեցում)¹:

¹ «Նոր աշխատատր», 1920, № 94, 1 օգոստոսի, էջ 1; № 95, 3 օգոստոսի, էջ 1:

1920 թ. օգոստոսի 3-ին վախճանվում և 5-ին գերեզմանոցում է ամփոփվում երդվյալ հավատարմատար Արտեմ Սմբատյան Դավթյանը (հոգեհանգիստը՝ Մուղնու Սբ. Գևորգ եկեղեցում)¹:

¹ «Նոր աշխատատր», 1920, № 97, 5 օգոստոսի, էջ 1:

1920 թ. օգոստոսի 7-ին վախճանվում և 11-ին գերեզմանոցում է ամփոփվում Եվա Աբրահամյան Տեր-Խաչատրյանը (հոգեհանգիստը՝ Թանդոյան եկեղեցում)¹:

¹ «Մշակ», 1920, № 67, 10 օգոստոսի, էջ 1: «Նոր աշխատատր», 1920, № 101, 10 օգոստոսի, էջ 2; № 102, 11 օգոստոսի, էջ 1:

1920 թ. օգոստոսի 14-ին գերեզմանոցում է ամփոփվում Սյրտիչ Կարապետյան Գրիգորյանը (հոգեհանգիստը՝ Ջգրաշենի Սբ. Ավետյաց եկեղեցում)¹:

¹ «Նոր աշխատատր», 1920, № 105, 14 օգոստոսի, էջ 2:

1920 թ. օգոստոսի 24-ին գերեզմանոցում է ամփոփվում Երվանդ Առաքելյան Կիրակոսյանը (հոգեհանգիստը՝ Մեղանի Սբ. Գևորգ եկեղեցում)¹:

¹ «Նոր աշխատատր», 1920, № 113, 24 օգոստոսի, էջ 1:

1920 թ. օգոստոսի 22-ին վախճանվում և 26-ին գերեզմանոցում է ամփոփվում Գուրգեն Հարությունյան Հովսեփյանը (հոգեհանգիստը՝ Էջմիածնեցոց Սբ. Գևորգ եկեղեցում)¹:

¹ «Նոր աշխատատր», 1920, № 114, 25 օգոստոսի, էջ 1; № 115, 26 օգոստոսի, էջ 1:

1920 թ. օգոստոսի 28-ին վախճանվում և 31-ին գերեզմանոցում է ամփոփվում 5-րդ գիմնազիայի 7-րդ դասարանի աշակերտ Աշոտ Գրիգորյան Մարտիրոսյանը (հոգեհանգիստը՝ Էջմիածնեցոց Սբ. Գևորգ եկեղեցում)¹:

¹ «Նոր աշխատատր», 1920, № 118, 29 օգոստոսի, էջ 1:

1920 թ. սեպտեմբերի 11-ին վախճանվում և 14-ին գերեզմանոցում է ամփոփվում Վրաստանում Հա-

յաստանի Հանրապետության դիվանագիտական նախկին ներկայացուցիչ, Նորաշենի ծխական հոգաբարձության անդամ Լևոն Գևորգյան Եվանդուլյանը (հոգեհանգիստը՝ Նորաշենի Սբ. Աստվածածին եկեղեցում)¹:

¹ «Մշակ», 1920, № 89, 14 սեպտեմբերի, էջ 1:

1920 թ. սեպտեմբերի 16-ին վախճանվում և գերեզմանոցում է ամփոփվում Գեորգի Ալեքսանդրյան Շաղինյանը¹:

¹ Слово. № 212. 18 сентября г.

1920 թ. հոկտեմբերի 30-ին վախճանվում և նոյեմբերի 2-ին գերեզմանոցում է ամփոփվում Եփենյա Հարությունյանը¹:

¹ «Մշակ», 1920, № 125, 2 նոյեմբերի, էջ 1:

1920 թ. նոյեմբերի 17-ին գերեզմանոցում է ամփոփվում հրդեհի վնասները փոխհատուցող ապահովագրական ընկերության բազմամյա հաշվապահ, ապա վարչության անդամ Բարսեղ Կարապետյան Բարսամյանը¹:

¹ Слово. № 262. 17 ноября 1920 г.; № 263, 18 ноября 1920 г.

1920 թ. նոյեմբերի 30-ին գերեզմանոցում է ամփոփվում Հովակիմ Առաքելյան Բարսեղյանը¹:

¹ «Մշակ», 1920, № 149, 30 նոյեմբերի, էջ 1:

1920 թ. դեկտեմբերի 28-ին վախճանվում և 30-ին գերեզմանոցում է ամփոփվում Նունե Մարտիրոսյան Բասենցյանը¹:

¹ «Մշակ», 1920, № 170, 30 դեկտեմբերի, էջ 1:

1920 թ. դեկտեմբերի 30-ին գերեզմանոցում է ամփոփվում Գևորգ Մարգարյան Ջավախյանը¹:

¹ «Մշակ», 1920, № 170, 30 դեկտեմբերի, էջ 1:

1921

1921 թ. փետրվարի 3-ին հետին թշվառության մեջ վախճանվում և 9-ին գերեզմանոցում է ամփոփվում բանասեր, ուսուցիչ և դպիր, բազմաթիվ անտիպ և տպագիր աշխատությունների հեղինակ վանեցի Գևորգ Գրիգորյան Շերենցը¹: Ի դեպ, Համիդյան ջարդերից հետո բնակություն հաստատելով Թիֆլիսում՝ մինչև 1920 թ. տիրացու է եղել Թանդոյան Սբ. Աստվածածին եկեղեցում²:

¹ «Մշակ», 1921, № 27, 6 փետրվարի, էջ 1: Տեր-Սյրտիչյան Ե., Գանձեր Վասպուրականի, Պոսթոն, 1966, հ. Ա, էջ 391: Վարդանյան Մ., Գևորգ Շերենց, «Լրաբեր հասարակական գիտությունների», 2005, № 3, էջ 183-187:

² Մանրամասն տե՛ս Լեօ, Գեորգ Շերենց, «Մշակ», 1921, № 28, 8 փետրվարի, էջ 2-3:

1921 թ. փետրվարի 5-ին վախճանվում և 8-ին գերեզմանոցում է ամփոփվում Լուսիկ Եփրեմյան Խաչատրյանը (հոգեհանգիստը՝ Քամոյանց Սբ. Գևորգ եկեղեցում)¹:

¹ «Մշակ», 1921, № 27, 6 փետրվարի, էջ 1:

1921 թ. փետրվարի 8-ին գերեզմանոցում է ամփոփվում Ջավահիր Բաղդանյան Գասպարյանցը (հոգեհանգիստը՝ Ջգրաշենի Սբ. Ավետյաց եկեղեցում)¹։

1921 թ. փետրվարի 8-ին վախճանվում և 13-ին գերեզմանոցում է ամփոփվում վաճառական Սիմոն Հակոբյան Մատինյանցը (հոգեհանգիստը՝ Կուկիայի Նորաշեն Սբ. Աստվածածին եկեղեցում)¹։ Ի դեպ, ամուսնու հիշատակին կինը 60,000 ռուբլի է նվիրում Էջմիածնեցոց ծխական դպրոցին, 20,000 ռ.՝ Գերմանական որբախնամ ընկերությանը, 30,000-ական ռ.՝ Կուսանաց անապատին, ԿՀԲ և Մայրության և երեխաների պաշտպանության ընկերություններին²։

1 «Մշակ», 1921, № 30, 10 փետրվարի, էջ 1; № 32, 12 փետր., էջ 1; № 33, 13 փետր., էջ 1:

2 «Մշակ», 1921, № 35, 16 փետրվարի, էջ 4:



1921 թ. փետրվարի 15-ին վախճանվում և 18-ին գերեզմանոցում է ամփոփվում ազգային-հասարակական գործիչ, իրավաբան, Տփղիսի հաշտարար դատավոր Մարկոս Եսայան Դոլուխանյանցը¹։ Իշխանուհի Մարիամ Թունանյանի հայրը։

1 «Մշակ», 1921, № 36, 17 փետրվարի, էջ 1; № 37, 18 փետր., էջ 1:

1922

1922 թ. հունվարի 14-ին վախճանվում և գերեզմանոցում է ամփոփվում շուլավերցի գուսան Հազիրը (Աբրահամ Գավթյան Աբրահամյանց՝ Աբրո, ծնվ. 1845 թ.)¹։

1 **Խաչատրյան Հ.**, Խոջիվանք, «Հայոց լեզուն և գրականությունը դպրոցում», 1988, № 1, էջ 62: Ավելի մանրամասն տես **Ասլանյան Մ., Կարապետյան Մ.**, Շուլավեր, Երևան, 2002, էջ 173-174:



1922 թ. ապրիլի 19-ին գերեզմանոցում է ամփոփվում չարագործի ձեռքով սպանված Արտաշես Արագի Շահվերդյանը (հոգեհանգիստը՝ Քամոյանց Սբ. Գևորգ եկեղեցում)¹։

1 Заря востока. 18 апреля 1922 г.

1922 թ. հուլիսի 23-ին գերեզմանոցում է ամփոփվում Բ. Մ. Աթայանցը¹։

1 Правда Грузии. № 391, 22 июля 1922 г.; № 392. 23 июля 1922 г.

1922 թ. հոկտեմբերի 8-ին վախճանվում և գերեզմանոցում է ամփոփվում Նիկոլայ Իսահակի Ժամհարյանցը¹։

1 Заря востока. № 95. 10 октября 1922 г. С. 4; № 96, 11 октября 1922 г. С. 4.

1922 թ. նոյեմբերի 11-ին գերեզմանոցում է ամփոփվում Հովհաննես Ջաքարյան Ճերմակ-Բազյանցը¹։

1 Заря востока. № 122. 11 ноября 1922 г. С. 4.



1922 թ. նոյեմբերի 16-ին գերեզմանոցում է ամփոփվում նկարիչ Վանո Գևորգի Խոջաբեկյանը (ծնվ. 1875 թ.)¹։ Հայտնի է, որ սկզբում ամփոփվում է Վերայի հայոց գերեզմանոցում, որտեղ մահվան տարելիցի կապակցությամբ տապանաքար է տեղադրվում², սա-



կայն Խոջիվանքում պանթեոնի կազմավորումից հետո աճյունը վերահուղարկավորվում է³: 1923 թ. նոյեմբերի 25-ին նկարչի մահվան առաջին տարելիցի առթիվ Վերայի գերեզմանոցում կանգնեցվում է տապանաքար⁴:

- 1 **Խաչատրյան Հ.**, Խոջիվանք, «Հայոց լեզուն և գրականությունը դպրոցում», 1988, № 1, էջ 62:
- 2 **Շարբաբյան Գ.**, Ժողովրդական նկարիչ Վանո Խոջաբեկյան (Մահվան 1-ին տարեդարձի առթիվ), «Մարտակոչ», 1923, № 228, 25 նոյեմբերի, էջ 4:
- 3 «Վրաստան», 1988, 25 հունիսի:
- 4 **Շարբաբյան Գ.**, նույն տեղում:

1922 թ. նոյեմբերի 23-ին գերեզմանոցում է ամփոփվում 8-րդ տեխնիկումի աշակերտ Վանի Խոջափարուխյանը¹:

- 1 Заря востока. № 132. 23 ноября 1922 г. С. 5.

1922 թ. դեկտեմբերի 1-ին վախճանվում և 3-ին գերեզմանոցում է ամփոփվում ինժեներ Հովհաննես Բեգլարյան Դուրլխանյանը¹:

- 1 Заря востока. № 140, 2 декабря 1922 г. С. 4.

1922 թ. դեկտեմբերի 3-ին վախճանվում և 6-ին գերեզմանոցում է ամփոփվում Մկրտիչ Սարգսյան Հունանյանը¹:

- 1 Заря востока. № 142, 5 декабря 1922 г. С. 6.

1922 թ. դեկտեմբերի 2-ին վախճանվում և 7-ին գերեզմանոցում է ամփոփվում դր. Բեսսարիոն Ավետյան Պոպյանը¹:

- 1 Заря востока. № 142, 5 декабря 1922 г. С. 6.

1922 թ. դեկտեմբերի 18-ին վախճանվում և 21-ին գերեզմանոցում է ամփոփվում Երանուհի Պետրոսյան Վարդանյանը¹:

- 1 Заря востока. № 155, 20 декабря 1922 г. С. 4.

1922 թ. դեկտեմբերի 19-ին վախճանվում և 21-ին գերեզմանոցում է ամփոփվում հայտնի գործարար-արդյունաբերող, բարեգործ, ազգային-հասարակական գործիչ, ծնունդով Արցախի Քյաթուկ գյուղից Միքայել Հովսեփյան Արամյանը (հոգեհանգիստը՝ Ջգրաշենի Սբ. Ավետյաց եկեղեցում)¹:

- 1 Заря востока. № 155, 20 декабря 1922 г. С. 4; № 156, 21 декабря 1922 г. С. 4. «Երեկոյան Երևան», 1991, 22 ապրիլի: **Անբանեսյան Վ.**, Միքայել Արամյան, Երևան, 2011:

1922 թ. դեկտեմբերի 14-ին վախճանվում և 17-ին գերեզմանոցում է ամփոփվում Դաստազյուլ Գրիգորյան Գյուլմսիրյանը¹:

- 1 Заря востока. № 152, 16 декабря 1922 г. С. 3.

1922 թ. դեկտեմբերի 26-ին վախճանվում և 28-ին գերեզմանոցում է ամփոփվում Սոֆյա Գերասիմյան Բարսեղյանը¹:

- 1 Заря востока. № 161, 27 декабря 1922 г. С. 4.

1923

1923 թ. հունվարի 19-ին վախճանվում և 23-ին գերեզմանոցում է ամփոփվում ՌՍՖՍՀ Պետական բանկի արտարժույթային բաժնի ղեկավար Սիմեոն Եղայան Պետրոսյանը (հոգեհանգիստը՝ Մուղնու Սբ. Գևորգ եկեղեցում)¹:

- 1 Заря востока. № 15, 21 января 1923 г. С. 5.

1923 թ. հունվարի 31-ին վախճանվում և փետրվարի 3-ին գերեզմանոցում է ամփոփվում Վանիչկա Գերասիմյան Էլչիրեկյանը¹:

- 1 Заря востока. № 24, 2 февраля 1923 г. С. 4.

1923 թ. մարտի 4-ին վախճանվում և 7-ին գերեզմանոցում է ամփոփվում Աննա Պողոսյան Լազարյանը¹:

- 1 Заря востока. № 51, 6 марта 1923 г. С. 3.

1923 թ. մարտի 8-ին գերեզմանոցում է ամփոփվում Եփենյա Հովսեփյան Քալանթարյանը¹:

- 1 Заря востока. № 52, 7 марта 1923 г. С. 4.

1923 թ. մարտի 18-ին գերեզմանոցում է ամփոփվում ուսանող Աշոտ Բախշիյան Տեր-Մաթևոսյանը¹:


- 1 Заря востока. № 59, 16 марта 1923 г. С. 4.

1923 թ. մարտի 20-ին վախճանվում և 25-ին գերեզմանոցում է ամփոփվում Աննա Սողոմոնյան Արիյանը¹:

- 1 Заря востока. № 65, 23 марта 1923 г. С. 4.

1923 թ. մարտի 23-ին 54 տարեկանում (ծնվ. 19.02.1869, գ. Դսեղ) վախճանվում և գերեզմանոցում է ամփոփվում ազգային-հասարակական գործիչ, մեծանուն գրող, Ամենայն Հայոց բանաստեղծ Հովհաննես Թումանյանը (քաղաքացիական հոգեհանգիստը՝ ապրիլի 8-ին, Հայարտան ալգում)¹: Նրա «անպաճույճ քարի վրան սեւ տառերով փորագրւում» է եղել.

Յովհաննէս Թումանեան, | 1869-1923²:





Յավով նշենք, որ գերեզմանոցի՝ 1937-1938 թ. վանդալիզմից զերծ չի մնում նաև Հովհաննես Թումանյանի շիրմաքարը: Այդ մասին 1938 թ. օգոստոսի վերջերին ականատեսը մեծագույն վրդովմունքով գրում է. «...ինձ է մօտենում մի տարիքոտ կին, սեղգեսաների մէջ պարուրուած...»

–Ես Թումանյանի այրին եմ,– թոթովեց տիկինը՝ թաշկինակը մօտեցնելով աչքերին.– Ողորմած հոգու գերեզմանը տակնուվրայ են արել. շիրիմի քարն էլ էն է, դռան մօտ ընկած: ...Քանի՜ անգամ ներկայ են եղել, երբ կառապանները եկել էին տանելու... դրամ եմ տուել ամեն անգամ, խնդրել, որ չտանեն Օհաննեսի տապանաքարը: Նրանցից շատերը գիտեն արդէն եւ չեն տանում, բայց յանկարծ մի նորը գայ եւ տանի... ի՞նչ կարող եմ անել»³:

1 *Заря востока*. № 79. 8 апреля 1923 г. С. 3.

2 **Երեմեան Ա.**, Թիֆլիսի հայկական պանթեոններում, Վիեննա, 1940, էջ 33-35:

3 **Գերումեան Հ.**, նշվ. հոդվ., «Հայրենիք», 1948, № 12, էջ 26:

1923 թ. մարտի 24-ին վախճանվում և 29-ին գերեզմանոցում է ամփոփվում Մարիա Գրիգորյան Հարությունյանը (ծն.՝ Արեշյանց)¹:

1 *Заря востока*. № 69. 28 марта 1923 г. С. 5.

1923 թ. ապրիլի 11-ին վախճանվում և 15-ին գերեզմանոցում է ամփոփվում Մարթա Թաթոյան Արիկյանը¹:

1 *Заря востока*. № 83. 14 апреля 1923 г. С. 4.

1923 թ. մայիսի 6-ին գերեզմանոցում է ամփոփվում Արմենակ Արկադիի Միրզոյանը¹:

1 *Заря востока*. № 99. 4 мая 1923 г. С. 4.

1923 թ. հունիսի 13-ին վախճանվում և 17-ին գերեզմանոցում է ամփոփվում բժիշկ Գրիգոր Արկադիի Քոչարյանը¹:

1 *Заря востока*. № 136. 16 июня 1923 г. С. 4.

1923 թ. հունիսի 14-ին վախճանվում և 17-ին գերեզմանոցում է ամփոփվում բժշկ. դր. Հովհաննես Գրիգորյան Մելիքյանը¹:

1 *Заря востока*. № 137. 17 июня 1923 г. С. 6.

1923 թ. հունիսի 18-ին վախճանվում և 20-ին գերեզմանոցում է ամփոփվում Մարիա Բարսեղյան Ծովյանը¹:

1 *Заря востока*. № 138. 19 июня 1923 г. С. 4.

1923 թ. հունիսի 28-ին վախճանվում և 29-ին գերեզմանոցում է ամփոփվում Գրիգոր Հովհաննիսյան Ջանահյանը¹:

1 *Заря востока*. № 147. 29 июня 1923 г. С. 4.

1923 թ. հուլիսի 9-ին վախճանվում և 11-ին գերեզմանոցի տոհմական դամբարանում է ամփոփվում Դավիթ Հովսեփյան Բեհրուդյանը¹:

1 *Заря востока*. № 157. 11 июля 1923 г. С. 4.

1923 թ. հոկտեմբերի 31-ին վախճանվում և գերեզմանոցում է ամփոփվում երդվյալ հավատարմատար Ռոստոմ Իվանի Ղարաբեկյանը (հոգեհանգիստը՝ Կաթողիկե Սբ. Գևորգ եկեղեցում)¹:

1 *Заря востока*. № 254. 3 ноября 1923 г.

1924

1924 թ. հունվարի 15-ին գերեզմանոցում է ամփոփվում Համբարձում Տիգրանյան Յուզբաշյանը¹:

1 *Заря востока*. № 477. 15 января 1924 г. С. 5.

1924 թ. փետրվարի 10-ին գերեզմանոցում է ամփոփվում Բոգրան Գրիգորյան Քաթանջյանը¹:

1 *Заря востока*. № 500. 10 февраля 1924 г. С. 5.

1924 թ. փետրվարի 17-ին գերեզմանոցում է ամփոփվում Բարսեղ Գրիգորյան Մամուլյանը¹:

1 *Заря востока*. № 505. 16 февраля 1924 г. С. 4.

1924 թ. փետրվարի 17-ին գերեզմանոցում է ամփոփվում Հովհաննես Գերասիմյան Մեծատունյանը¹:

1 *Заря востока*. № 506. 17 февраля 1924 г. С. 5.

1924 թ. փետրվարի 20-ին վախճանվում և 24-ին գերեզմանոցում է ամփոփվում Աննա Միքայելյան Քոչարյանը¹:

1 *Заря востока*. № 511. 23 февраля 1924 г. С. 8.

1924 թ. մարտի 2-ին գերեզմանոցում է ամփոփվում դր. Ղուկաս Նազարեթյան Մաղոյանը¹:

1 *Заря востока*. № 516. 1 марта 1924 г. С. 4.

1924 թ. մարտի 5-ին վախճանվում և 9-ին գերեզմանոցում է ամփոփվում թատերական բազմավաստակ գործիչ, դերասան, «Հուշարար» ամսագրի խմբագիր և լուսանկարիչ պոլսեցի Արամ Վրույրը



(ծնվ. 13.03.1863)¹: Շուրջ 40 տարի՝ սկսած 1883 թ.-ից, ծառայել է հայ բեմին²:

¹ Ավետյան Գր., Ա. Վրույր, «Մարտակոչ», 1924, № 59, 9 մարտի, էջ 3:

² Երեմեան Ա., Թիֆլիսի հայկական պանթեոններում, էջ 60:

1924 թ. մարտի 9-ին գերեզմանոցում է ամփոփվում Օլգա Գևորգյան Հովսեփյանցը¹:

¹ Заря востока. № 523. 9 марта 1924 г. С. 4.

1924 թ. մարտի 22-ին վախճանվում և 23-ին գերեզմանոցում է ամփոփվում Դշխուհի Աբրամյան Մելքոնյանցը¹:

¹ Заря востока. № 533. 23 марта 1924 г. С. 7.

1924 թ. մարտի 22-ին վախճանվում և 25-ին գերեզմանոցում է ամփոփվում գրաշարական հին սերունդի ներկայացուցիչ Սարգիս (Փիլո) Սաղոյանը (ծնվ. 1870 թ.)¹:

¹ Մաքինաջյան Կ., Ընկ. Ս. Սաղոյան, «Մարտակոչ», 1924, № 70, 25 մարտի, էջ 3: Заря востока. № 534. 25 марта 1924 г. С. 6.

1924 թ. ապրիլի 3-ին գերեզմանոցում է ամփոփվում Կոնստանդին Հովսեփյան Մանթաշյանցը (հոգեհանգիստը՝ Նորաշենի Սբ. Աստվածածին եկեղեցում)¹:

¹ Заря востока. № 541. 3 апреля 1924 г. С. 8.

1924 թ. ապրիլի 8-ին վախճանվում և 10-ին գերեզմանոցում է ամփոփվում Դարյա Կարապետյան Տեր-Աբրամյանցը¹:

¹ Заря востока. № 547. 10 апреля 1924 г. С. 6.

1924 թ. ապրիլի 12-ին վախճանվում և 16-ին գերեզմանոցում է ամփոփվում Աշխեն Գևորգյան Հարությունյանցը¹:

¹ Заря востока. № 551. 15 апреля 1924 г. С. 6.

1924 թ. ապրիլի 24-ին գերեզմանոցում է ամփոփվում Տիգրան Կիրակոսյան Մովսիսյանցը¹:

¹ Заря востока. № 558, 23 апреля 1924 г. С. 4.

1924 թ. մայիսի 22-ին վախճանվում և 24-ին գերեզմանոցում է ամփոփվում Սոֆյա Գրիգորյան Շելկովնիկյանցը¹:

¹ Заря востока. № 584. 24 мая 1924 г. С. 6.

1924 թ. հունիսի 16-ին ավազակների ձեռքով սպանվում և 19-ին գերեզմանոցում է ամփոփվում Արգար Չնշկյանը¹:

¹ Заря востока. № 605. 1924 г. С. 5.

1924 թ. հունիսի 28-ին վախճանվում և 30-ին գերեզմանոցում է ամփոփվում մեխանիկ Բեգլար Օհանյան Դանիելյանցը¹:

¹ Заря востока. № 614. 29 июня 1924 г. С. 5.

1924 թ. հուլիսի 19-ին գերեզմանոցում է ամփոփվում Առաքել Առաքելյան Մնացականյանցը¹:

¹ Заря востока. № 628. 18 июля 1924 г.

1924 թ. օգոստոսի 9-ին վախճանվում և 10-ին գերեզմանոցում է ամփոփվում Մարտիրոս Սուլեյմանի Հարությունյանցը¹:

¹ Заря востока. № 647. 10 августа 1924 г. С. 3.

1924 թ. օգոստոսի 12-ին Մանգլիսում վախճանվում և 15-ին գերեզմանոցում է ամփոփվում շրջանային ինժեներ-տեխնոլոգ Ռուբեն Միքայելյան Տեր-Նիկողոսյանցը¹:

¹ Заря востока. № 650. 14 августа 1924 г. С. 3. Рабочая правда. № 184, 15 августа 1924 г.

1924 թ. օգոստոսի 14-ին գերեզմանոցում է ամփոփվում Հովհաննես Սարգսյան Խուրթարյանցը¹:

¹ Заря востока. № 649. 13 августа 1924 г. С. 6.

1924 թ. օգոստոսի 31-ին գերեզմանոցում է ամփոփվում Բոգդան Ղազարյան Հարությունյանցը¹:

¹ Заря востока. № 663. 29 августа 1924 г. С. 4.

1924 թ. սեպտեմբերի 1-ին գերեզմանոցում է ամփոփվում Ելիզավետա Շահրազյան Մարյանցը¹:

¹ Заря востока. № 665. 31 августа 1924 г. С. 5.

1924 թ. հոկտեմբերի 12-ին գերեզմանոցում է ամփոփվում Հարություն Մովսիսյան Տեր-Եսայան-Երիցյանցը¹:

¹ Заря востока. № 700. 11 октября 1924 г. С. 6.

1924 թ. հոկտեմբերի 22-ին վախճանվում և 25-ին գերեզմանոցում է ամփոփվում Նինա Ալեքսանդրյան Ալադադյանցը (ծն.՝ Մելիքյանց)¹:

¹ Заря востока. № 712. 25 октября 1924 г. С. 6.

1924 թ. նոյեմբերի 13-ին վախճանվում և 15-ին գերեզմանոցում է ամփոփվում բժիշկ Գրիգոր Ստեփանյան Դավթյանը¹:

¹ Заря востока. № 728. 14 ноября 1924 г. С. 6.

1924 թ. նոյեմբերի 16-ին գերեզմանոցում է ամփոփվում Պողոս Մելքոնյան Դարչինյանը¹:

¹ Заря востока. № 728. 14 ноября 1924 г. С. 6.

1924 թ. նոյեմբերի 27-ին վախճանվում և դեկտեմբերի 1-ին գերեզմանոցում են ամփոփվում Խոջիվանքի վանահայր, ավագ քահանա Բարդուղիմեոս Մարկոսյանը (ծնվ. 1847 թ., Խոջիվանքում պաշտոնավարել է 1887 թ.-ից) և կինը՝ Աննա Կարապետյան Մարկոսյանը¹: Նրանց մահվան տարելիցի կապակցությամբ 1925 թ. նոյեմբերի 8-ին հոգեհանգրստյան արարողություն է կատարվում նախ Խոջիվանքի եկեղեցում, ապա գերեզմանի մոտ²:

¹ Заря востока. № 741. 30 ноября 1924 г. С. 5.

² «Մարտակոչ», 1925, № 257, 7 նոյեմբերի, էջ 5:

1924 թ. դեկտեմբերի 4-ին վախճանվում և 6-ին գերեզմանոցում է ամփոփվում Գագիկ Դավթյան Դավթյանը¹:

¹ Заря востока. № 745. 5 декабря 1924 г. С. 6.

1924 թ. դեկտեմբերի 10-ին վախճանվում և 14-ին գերեզմանոցում է ամփոփվում Նինա Ալեքսանդրյան Ահարոնյանը¹:

¹ Заря востока. № 752, 13 декабря 1924 г. С. 6.

1924 թ. դեկտեմբերի 11-ին գերեզմանոցում է ամփոփվում Սոֆյա Թումանյան Արրահանյանը (ծընյալ՝ Յարամիշյան)¹:

¹ Заря востока. № 750. 11 декабря 1924 г. С. 5.

1924 թ. դեկտեմբերի 13-ին վախճանվում և 17-ին գերեզմանոցում է ամփոփվում Արտեմ Գերասիմյան Սիրգոյանը¹:

¹ Заря востока. № 755. 17 декабря 1924 г. С. 6.

1924 թ. դեկտեմբերի 15-ին վախճանվում և 18-ին գերեզմանոցում է ամփոփվում դր. Հմայակ Արեստլոյան Տեր-Գաբրիելյանը¹:

¹ Заря востока. № 756. 18 декабря 1924 г. С. 7.

1924 թ. դեկտեմբերի 17-ին վախճանվում և 19-ին գերեզմանոցում է ամփոփվում Նինա Գրիգորյան Բուդդանյանը¹:

¹ Заря востока. № 757. 19 декабря 1924 г. С. 6.

1924 թ. դեկտեմբերի 21-ին գերեզմանոցում է ամփոփվում Ռոման (Ռոստոմ) Նիկիտայի Տեր-Կարապետյանը¹:

¹ Заря востока. № 758. 20 декабря 1924 г. С. 5.

1924 թ. դեկտեմբերի 28-ին գերեզմանոցում է ամփոփվում Գրիգոր Ղազիկյանը¹:

¹ Заря востока. № 764. 27 декабря 1924 г. С. 4.

1924 թ. դեկտեմբերի 28-ին գերեզմանոցում է ամփոփվում Ավետիք (Սաշիկո) Միքայելյան Շալանյանը¹:

¹ Заря востока. № 765. 28 декабря 1924 г. С. 5.

1925

1925 թ. հունվարի 23-ին վախճանվում և 25-ին գերեզմանոցում է ամփոփվում Իսահակ Աստվածատրյան Խալաթյանը՝ Յակոն¹:

¹ Заря востока. № 786. 24 января 1925 г. С. 5.

1925 թ. փետրվարի 9-ին վախճանվում և 11-ին գերեզմանոցում է ամփոփվում 76-րդ աշխատանքային դպրոցի ուսուցիչ, բժիշկ Հովհաննես Սարգսյան Իգիթյանը¹: Հայտնի է, որ 1912 թ. Հավլաբարի 4-դասյա իգական դպրոցին նվիրում է 200 ռուբլի²:

¹ Հարությունյան Գ., Մեր ուսուցչի հիշատակին, «Մարտակոչ», 1925, № 34, 11 փետրվարի, էջ 2: Заря востока. № 800, 10 февраля 1925 г. С. 5.

² «Հորիզոն», 1912, № 132, 22 հունիսի, էջ 2:

1925 թ. մարտի 7-ին գերեզմանոցում է ամփոփվում Աննա Բեգլարյան Խաչատուրյանը¹:

¹ Заря востока. № 821. 7 марта 1925 г. С. 6.

1925 թ. մարտի 6-ին վախճանվում և 9-ին գերեզմանոցում է ամփոփվում Գրիգոր (Գրիշա) Սարգսյան Սարգոյանը¹:

¹ Заря востока. № 822. 8 марта 1925 г. С. 7.

1925 թ. մարտի 12-ին վախճանվում և 15-ին գերեզմանոցում է ամփոփվում Մարգո Շամիրյան Թահևուսյանը¹:

¹ Заря востока. № 826. 14 марта 1925 г. С. 5.

1925 թ. մարտի 13-ին վախճանվում և գերեզմանոցում է ամփոփվում գրականասեր, «Երի՛ հա՛...» ձեռագիր շաբաթաթերթի աշխատակից Լևոն Գրիգորյան Խոջամիրյանը: Մայիսի 24-ին մահվան քառասնորյակի կապակցությամբ կատարվում է հոգեհանգստյան արարողություն¹:

¹ «Մարտակոչ», 1925, № 117, 24 մայիսի, էջ 4:

1925 թ. մարտի 18-ին գերեզմանոցում է ամփոփվում Գարեգին Անտոնյան Սունդուկյանը¹:

¹ Заря востока. № 829. 18 марта 1925 г. С. 7.

1925 թ. օգոստոսի 1-ին վախճանվում և 5-ին գերեզմանոցում է ամփոփվում հաշվապահ Մերգեյ Հովսեփյան Ղազարյանը¹:

¹ Заря востока. № 942. 4 августа 1925 г. С. 8; № 943. 5 августа 1925 г. С. 6.

1925 թ. սեպտեմբերի 8-ին վախճանվում և 10-ին գերեզմանոցում է ամփոփվում Գևորգ (Գիորգի) Քրիստափորյան Լոթյանը¹:

¹ Заря востока. № 973. 10 сентября 1925 г. С. 5.

1925 թ. սեպտեմբերի 10-ին գերեզմանոցում է ամփոփվում Ալեքսանդր Չաքարյան Ստեփանյանը¹:

¹ Заря востока. № 973, 10 сентября 1925 г. С. 5.

1926

1926 թ. հունվարի 7-ին վախճանվում և 9-ին գերեզմանոցում է ամփոփվում Ալեքսեյ Գաբրիելյան Աղայանը¹:

1 «Մարտակոչ», 1926, № 6, 9 հունվարի, էջ 4:



1926 թ. հունվարի 12-ին վախճանվում և 17-ին գերեզմանոցում է ամփոփվում ծընունդով բաղեշցի (ծնվ. 1858 թ.) դերասանուհի Չաբելը (Մարիամ Սախավյան-Կնոբոզովա)¹: Ի դեպ, նրան ամփոփում են դերասան Գևորգ Պետրոսյանցի շիրմին կից, իսկ «Հանգուցյալի թաղման ծախքերի

համար Անդրկովկասի կառավարությունը հատկացրել է օժանդակություն, համաձայն Հայաստանի խորհրդի միջնորդության»²:

1 **Երեմեան Ա.**, Թիֆլիսի հայկական պանթեոններում, էջ 61: Տե՛ս նաև **Լ.**, Չկա հայ բեմի մայրիկը, «Մարտակոչ», 1926, № 10, 14 հունվարի, էջ 3; № 12, 16 հունվ., էջ 4; № 13, 17 հունվ., էջ 4:
2 «Մարտակոչ», 1926, № 12, 16 հունվարի, էջ 3:

1926 թ. հունվարի 11-ին վախճանվում և գերեզմանոցում է ամփոփվում ուսուցիչ Հովհաննես Միքայելյան Սունդուկյանը¹:

1 «Մարտակոչ», 1926, № 8, 12 հունվարի, էջ 4: Տե՛ս նաև **Մ. Գ.**, Սանուկների բարեկամը, «Մարտակոչ», 1926, № 10, 14 հունվ., էջ 3:

1926 թ. հունվարի 21-ին վախճանվում և 24-ին գերեզմանոցում է ամփոփվում Գրիգոր Ասատուրյան Գրիգորյանը¹:

1 «Մարտակոչ», 1926, № 18, 24 հունվարի, էջ 4:

1926 թ. հունվարի 23-ին վախճանվում և 27-ին գերեզմանոցում է ամփոփվում Ժողովրդական տան հայկական բաժնի հիմնադիրներից գյումրեցի Միքայել Գևորգյան Ստամբուլյանը (ծնվ. 1876 թ.)¹:

1 «Մարտակոչ», 1926, № 19, 26 հունվարի, էջ 4: Տե՛ս նաև **Գավթյան Ա.**, Միքայել Ստամբուլյան, «Մարտակոչ», 1926, № 20, 27 հունվարի, էջ 5:

1926 թ. հունվարի 26-ին վախճանվում և 31-ին գերեզմանոցում է ամփոփվում Ավետիք Արտեմյան Գոզայանը¹:

1 «Մարտակոչ», 1926, № 23, 30 հունվարի, էջ 4:

1926 թ. հունվարի 28-ին վախճանվում և 31-ին գերեզմանոցում է ամփոփվում Սրբուհի Ճերմակյանը¹:

1 «Մարտակոչ», 1926, № 24, 31 հունվարի, էջ 4:

1926 թ. փետրվարի 9-ին գերեզմանոցում է ամփոփվում Հրանտիկ Տիգրանյան Աթաբեկյանը¹:

1 «Մարտակոչ», 1926, № 31, 9 փետրվարի, էջ 4:

1926 թ. փետրվարի 25-ին գերեզմանոցում է ամփոփվում Սերոբ Առաքելյան Ֆրանգուլյանը¹:

1 «Մարտակոչ», 1926, № 45, 25 փետրվարի, էջ 6:

1926 թ. փետրվարի 28-ին վախճանվում և մարտի 3-ին գերեզմանոցում է ամփոփվում Կաշվի տրեստի հաշվապահ նուխեցի Հարություն Գաբրիելյան Մաֆարյանը¹:

1 «Մարտակոչ», 1926, № 48, 2 մարտի, էջ 4; № 49, 3 մարտի, էջ 4:

1926 թ. մարտի 9-ին վախճանվում և 12-ին գերեզմանոցում է ամփոփվում Ղարաքիլիսայի հիդրոէլեկտրակայանի վարիչ Մարտիրոս Օհաննեսյան Սիմոնյանը՝ Կրոն¹:

1 «Մարտակոչ», 1926, № 56, 11 մարտի, էջ 4:

1926 թ. մարտի 25-ին վախճանվում և 27-ին գերեզմանոցում է ամփոփվում Ամալյա Մումբաթյան Բասենցյանը (ծն.՝ Ղազարյանց): Հոգեհանգիստը՝ Վանքի եկեղեցում¹:

1 «Մարտակոչ», 1926, № 68, 27 մարտի, էջ 4:

1926 թ. ապրիլի 2-ին վախճանվում և 6-ին գերեզմանոցում է ամփոփվում Թիֆլիսի Հայ արվեստի տան աշխատակից, մանկավարժ, քրդագետ, եզդիների դպրոցի վարիչ Հակոբ Ղազարյանը՝ Լազոն (Ափե Լազո)¹: 1927 թ. ապրիլի 3-ին գերեզմանոցում կատարվում է սգահանդեսի արարողություն՝ ի հիշատակ մահվան տարելիցի²:



1 «Մարտակոչ», 1926, № 75, 4 ապրիլի, էջ 4; № 76, 6 ապրիլի, էջ 3: Տե՛ս նաև **Խաչատրյան Հ.**, Խոջիվանք, «Հայոց լեզուն և գրականությունը դպրոցում», 1988, № 1, էջ 62:
2 «Մարտակոչ», 1927, № 74, 3 ապրիլի, էջ 4:

1926 թ. ապրիլի 7-ին վախճանվում և 11-ին գերեզմանոցում է ամփոփվում Հակոբ Ստեփանյան Խաչատուրյանը¹:

1 «Մարտակոչ», 1926, № 81, 11 ապրիլի, էջ 4:

1926 թ. ապրիլի 22-ին վախճանվում և 23-ին գերեզմանոցում է ամփոփվում Հերսիլիա Տեր-Պողոսյանը (հոգեհանգիստը՝ Վանքի մայր եկեղեցում)¹:

1 «Մարտակոչ», 1926, № 90, 22 ապրիլի, էջ 6:

1926 թ. ապրիլի 28-ին վախճանվում և 30-ին գերեզմանոցում է ամփոփվում դերասան Աղայանի կինը՝ Նիման¹:

1 «Մարտակոչ», 1926, № 96, 29 ապրիլի, էջ 4:

1926 թ. մայիսի 6-ին վախճանվում և 8-ին գերեզմանոցում է ամփոփվում Ավետիք Թորոսյան Աղսախալյանը¹:

¹ «Մարտակոչ», 1926, № 102, 8 մայիսի, էջ 4:

1926 թ. մայիսի 9-ին գերեզմանոցում է ամփոփվում Մելիք Քյոսյանը¹:

¹ «Մարտակոչ», 1926, № 103, 9 մայիսի, էջ 4:

1926 թ. մայիսի 12-ին վախճանվում և 18-ին գերեզմանոցում է ամփոփվում Դավիթ Ալեքսանդրյան Գալստյանը¹:

¹ «Մարտակոչ», 1926, № 108, 15 մայիսի, էջ 4:

1926 թ. մայիսի 19-ին վախճանվում և 23-ին գերեզմանոցում է ամփոփվում Գրիգոր ավագ քահանա Մանդակունի (հոգեհանգիստը՝ Չորաբաշի Սբ. Գևորգ եկեղեցում)¹: Ի դեպ, 1927 թ. մայիսի 29-ին նույն եկեղեցում պատարագ է մատուցվում մահվան տարելիցի առիթով²:

¹ «Մարտակոչ», 1926, № 112, 20 մայիսի, էջ 4; № 113, 21 մայիսի, էջ 4; № 114, 22 մայիսի, էջ 4:

² «Մարտակոչ», 1927, № 120, 29 մայիսի, էջ 4:

1926 թ. մայիսի 27-ին վախճանվում և 30-ին գերեզմանոցում է ամփոփվում Կարապետ Հարությունյան Թևանյանը¹:

¹ «Մարտակոչ», 1926, № 120, 29 մայիսի, էջ 4; № 121, 30 մայիսի, էջ 4:

1926 թ. մայիսի 28-ին վախճանվում և 30-ին գերեզմանոցում է ամփոփվում Թադևոս Խուդավերդյանը¹:

¹ «Մարտակոչ», 1926, № 121, 30 մայիսի, էջ 4:

1926 թ. մայիսի 29-ին վախճանվում և 30-ին գերեզմանոցում է ամփոփվում Նազարեթ Ավետիսյան Գրիգորյանը¹:

¹ «Մարտակոչ», 1926, № 121, 30 մայիսի, էջ 4:

1926 թ. հունիսի 14-ին վախճանվում և 15-ին գերեզմանոցում է ամփոփվում Մարիամ Զիլ-Հակոբյանը¹:

¹ «Մարտակոչ», 1926, № 134, 15 հունիսի, էջ 4:

1926 թ. հունիսի 17-ին գերեզմանոցում է ամփոփվում Ավետիք Շարաչյանը¹:

¹ «Մարտակոչ», 1926, № 135, 16 հունիսի, էջ 4; № 136, 17 հունիսի, էջ 4:

1926 թ. հունիսի 24-ին վախճանվում և 27-ին գերեզմանոցում է ամփոփվում Սպիրիդոն Ալեքսանյան Կուսիկյանը¹:

¹ «Մարտակոչ», 1926, № 144, 26 հունիսի, էջ 4:

1926 թ. հուլիսի 1-ին վախճանվում և 3-ին գերեզմանոցում է ամփոփվում Խոջիվանքի պահապան Լևոնի որդին՝ Սերյոժա Մինասյանը¹:

¹ «Մարտակոչ», 1926, № 150, 3 հուլիսի, էջ 4:

1926 թ. հուլիսի 17-ին վախճանվում և 19-ին գերեզմանոցում է ամփոփվում Սիրանուշ Աբովյանը¹:

¹ «Մարտակոչ», 1926, № 163, 18 հուլիսի, էջ 4:

1926 թ. հուլիսի 18-ին վախճանվում և 21-ին գերեզմանոցում է ամփոփվում հուշարար Միքայել Չարչարյանը¹:

¹ «Մարտակոչ», 1926, № 164, 21 հուլիսի, էջ 4:

1926 թ. հուլիսի 21-ին վախճանվում և 23-ին գերեզմանոցում է ամփոփվում Մրվաթ Սահակյան Խալաթյանը¹:

¹ «Մարտակոչ», 1926, № 166, 23 հուլիսի, էջ 4:

1926 թ. հուլիսի 28-ին վախճանվում և 30-ին գերեզմանոցում է ամփոփվում ուսանող Եղիշե Ասլանյանը¹:

¹ «Մարտակոչ», 1926, № 172, 30 հուլիսի, էջ 4:

1926 թ. օգոստոսի 25-ին վախճանվում և 29-ին գերեզմանոցում է ամփոփվում Խաթուն Ասատուրյան Մուրադխանյանը¹:

¹ «Մարտակոչ», 1926, № 196, 29 օգոստոսի, էջ 4:

1926 թ. սեպտեմբերի 11-ին վախճանվում և 13-ին գերեզմանոցում է ամփոփվում Մարիամ Միրզոյանը¹:

¹ «Մարտակոչ», 1926, № 208, 12 սեպտեմբերի, էջ 4:

1926 թ. սեպտեմբերի 17-ին վախճանվում և 22-ին գերեզմանոցում է ամփոփվում Եղիսաբեթ Ավագյան Տեր-Դավթյանը (հոգեհանգիստը՝ Ջգրաշենի Սբ. Ավետյաց եկեղեցում)¹:

¹ «Մարտակոչ», 1926, № 214, 19 սեպտ., էջ 4; № 215, 22 սեպտ., էջ 4:

1926 թ. սեպտեմբերի 18-ին վախճանվում և 22-ին գերեզմանոցում է ամփոփվում Սյրտիչ Փաշալյանը¹: 1927 թ. սեպտեմբերի 26-ին Խոջիվանքում կատարվում է մահվան տարելիցի արարողություն²:

¹ «Մարտակոչ», 1926, № 215, 22 սեպտեմբերի, էջ 4:

² «Մարտակոչ», 1927, № 217, 25 սեպտեմբերի, էջ 4:

1926 թ. հոկտեմբերի 6-ին վախճանվում և 9-ին գերեզմանոցում է ամփոփվում Մուսամբար Գևորգյան Օհանջանյանը¹:

¹ «Մարտակոչ», 1926, № 229, 8 հոկտեմբերի, էջ 2; № 230, 9 հոկտ., էջ 4:

1926 թ. հոկտեմբերի 18-ին վախճանվում և 21-ին գերեզմանոցում է ամփոփվում Ավագ Արիստակեսի Արիստակեսյանը՝ Հաջին¹:

¹ «Մարտակոչ», 1926, № 239, 20 հոկտ., էջ 4; № 240, 21 հոկտ., էջ 4:

1926 թ. նոյեմբերի 5-ին վախճանվում և 7-ին գերեզմանոցում է ամփոփվում Հաջիբաբ Վարոսյան Եֆրիկյանը¹:

¹ «Մարտակոչ», 1926, № 255, 7 նոյեմբերի, էջ 6:

1926 թ. նոյեմբերի 8-ին գերեզմանոցում է ամփոփվում Գենովաբե Խոջայանը¹:

¹ «Մարտակոչ», 1926, № 256, 9 նոյեմբերի, էջ 4:

1926 թ. նոյեմբերի 17-ին Թիֆլիսի կայարանում վախճանվում և 20-ին գերեզմանոցում է ամփոփվում Աննա Մարկոսյանը¹:

1 «Մարտակոչ», 1926, № 266, 20 նոյեմբերի, էջ 4:



1926 թ. նոյեմբերի 28-ին վախճանվում և դեկտեմբերի 1-ին գերեզմանոցում է ամփոփվում վաստակավոր մանկավարժ և հայտնի մանկագիր Հակոբ Աղաբաբը (26.11.1875, ք. Տիֆլիս): Հայրը՝ Բեժան Աղաբաբյանը, Տավուշի Կողբ գյուղից էր¹: 20 տարեկանից աշխատակցել է «Աղբիւր», «Հաս-



կեր», «Կարմիր ծիլեր» մանկական ամսագրերին: Պաշտոնավարել է հայկական դպրոցներում²:

Տասյանաբարին արձանագրված է եղել.

Մանուկների / քարեկամ / բանաստեղծ / Հակոբ Աղաբաբ, / 1875-1926³:

1 «Մարտակոչ», 1926, № 274, 30 նոյեմբերի, էջ 4; № 276, 1 դեկտ., էջ 4: **Ավյան Ս.**, Հակոբ Աղաբաբի քաղումը, «Մարտակոչ», 1926, № 277, 3 դեկտ., էջ 4: Ի դեպ, այլ տեղեկության համաձայն՝ ծնվել է Տավուշի մարզի Սեբար գյուղում:

2 **Սիմել Մեղ.** Հայ կեանքը, «Հայրենիք», 1927, № 4 (52), էջ 156:

3 **Երեմյան Ա.**, Թիֆլիսի հայկական պանթեոններում, էջ 43:

1926 թ. դեկտեմբերի 2-ին վախճանվում և 5-ին գերեզմանոցում է ամփոփվում Նինա Բարսեղյան Կախոյանը¹:

1 «Մարտակոչ», 1926, № 279, 5 դեկտեմբերի, էջ 4:

1926 թ. դեկտեմբերի 4-ին վախճանվում և 8-ին գերեզմանոցում է ամփոփվում Շողակաթ Տեր-Հարությունյանը¹:

1 «Մարտակոչ», 1926, № 281, 8 դեկտեմբերի, էջ 4:

1926 թ. դեկտեմբերի 16-ին վախճանվում և 19-ին գերեզմանոցում է ամփոփվում Սիքայել Մանուկյան Ավետիսյանը¹:

1 «Մարտակոչ», 1926, № 290, 18 դեկտեմբերի, էջ 4; № 291, 19 դեկտ., էջ 4:

1926 թ. դեկտեմբերի 19-ին գերեզմանոցում է ամփոփվում Ալեքսանդր Դարիբյանը¹:

1 «Մարտակոչ», 1926, № 290, 18 դեկտ., էջ 4; № 291, 19 դեկտ., էջ 4:

1926 թ. դեկտեմբերի 19-ին գերեզմանոցում է ամփոփվում Սիրան Բագարովը¹:

1 «Մարտակոչ», 1926, № 291, 19 դեկտեմբերի, էջ 4:

1926 թ. դեկտեմբերի 26-ին վախճանվում և 28-ին գերեզմանոցում է ամփոփվում Աշխեն Աբրահամյանը¹:

1 «Մարտակոչ», 1926, № 297, 28 դեկտեմբերի, էջ 4:

1927

1926 թ. դեկտեմբերի 29-ին վախճանվում և 1927 թ. հունվարի 2-ին գերեզմանոցում է ամփոփվում Մըկրրտիչ Մ. Ղազարյանը (հոգեհանգիստը՝ Սբ. Լուսավորիչ եկեղեցում)¹:

1 «Մարտակոչ», 1927, № 1, 1 հունվարի, էջ 4:

1926 թ. դեկտեմբերի 26-ին վախճանվում և 1927 թ. հունվարի 2-ին գերեզմանոցում է ամփոփվում Բագրատ Աբրահամյան Արմաղանյանը (հոգեհանգիստը՝ Սբ. Գևորգ եկեղեցի եկեղեցում)¹:

1 «Մարտակոչ», 1927, № 1, 1 հունվարի, էջ 4:

1927 թ. հունվարի 6-ին վախճանվում և 9-ին գերեզմանոցում է ամփոփվում Սալոմե Տեր-Սահակյանը¹:

1 «Մարտակոչ», 1927, № 5, 8 հունվարի, էջ 4; № 6, 9 հուն., էջ 4:

1927 թ. հունվարի 9-ին վախճանվում և 12-ին գերեզմանոցում է ամփոփվում Մեյրանի Սբ. Գևորգ եկեղեցու ավագ քահանա 81-ամյա Ստեփանոս Սամուելյանը¹:

1 «Մարտակոչ», 1927, № 7, 11 հունվարի, էջ 4: Ծնվել է 1845 թ. հոկտեմբերի 22-ին Բեսարաբիայի Գրիգորիուպոլ քաղաքում (աշխարհիկ անունը՝ Գրիգոր): Սովորել է ծննդավայրի ծխական, ապա՝ Խալիբյան դպրոցում, որն ավարտելուց հետո դասավանդել է նույն դպրոցում, Էջմիածնի Գևորգյան ճեմարանում, Կերչի, Թիֆլիսի Նիկողոսակի, 3-րդ արական գիմնազիայի, Ներսիսյան, Հովնանյան, Գայանյան դպրոցներում մինչև 1919 թ.: 1870 թ. ձեռնադրվել է քահանա և պաշտոնավարել Թեոդոսիայում, Կերչում, իսկ 1876 թ.-ից՝ Թիֆլիսում: 1894 թ. նշանակվել է Կովկասյան գործառնների հովիվ: 1883 թ.-ից մինչև կյանքի վերջը Մեյրանի Սբ. Գևորգ եկեղեցու ծխատեր քահանան էր: 1921 թ. նշվում է նրա գործունեության 50-ամյակը և այդ առիթով հրատարակվում գրքույկ՝ «Յիսամմեակ ուսուցիչ Ստեփանոս ա. ք. Սամուելյանի մանկավարժական և քահանայական գործունեության-կենսագրական ակնարկներ» խորագրով («Ազատ եկեղեցի», 1927, № 1, էջ 27):

1927 թ. հունվարի 9-ին վախճանվում և 12-ին գերեզմանոցում է ամփոփվում Լիզա Գարեգինյան Բարիկյանը¹:

1 «Մարտակոչ», 1927, № 7, 11 հունվարի, էջ 4:

1927 թ. հունվարի 10-ին վախճանվում և 13-ին գերեզմանոցում է ամփոփվում ժողովրդական գործիչ, արհեստավոր, նկարիչ Արսեն Տեր-Գրիգորյանը՝ Մորուք Արսենը¹:

1 «Մարտակոչ», 1927, № 8, 12 հունվարի, էջ 4; № 9, 13 հուն., էջ 4:

1927 թ. հունվարի 22-ին Երևանում վախճանվում և 26-ին գերեզմանոցում է ամփոփվում Վահան Տաճատյան Վարդանյանը¹:

1 «Մարտակոչ», 1927, № 18, 25 հունվարի, էջ 4:

1927 թ. հունվարի 24-ին վախճանվում և 26-ին գերեզմանոցում է ամփոփվում Փառանձեն Վանյան Արոնցը¹:

¹ «Մարտակոչ», 1927, № 19, 26 հունվարի, էջ 4:

1927 թ. հունվարի 26-ին վախճանվում և 30-ին գերեզմանոցում է ամփոփվում Քարմելե Շալճյան Մինասյանը (հոգեհանգիստը՝ Սբ. Լուսավորիչ եկեղեցում)¹:

¹ «Մարտակոչ», 1927, № 23, 30 հունվարի, էջ 4; № 27, 4 փետրվարի, էջ 4:

1927 թ. հունվարի 31-ին Կամոյի անվան հիվանդանոցում վախճանվում և փետրվարի 1-ին գերեզմանոցում է ամփոփվում Հնայակ Մանուկյան Տեր-Սարգսյանցը¹:

¹ «Մարտակոչ», 1927, № 24, 1 փետրվարի, էջ 4:

1927 թ. հունվարի 31-ին վախճանվում և փետրվարի 5-ին գերեզմանոցում է ամփոփվում Ավետիս Քրիստափորյան Սուլխանյանցը¹:

¹ Заря востока. № 1396. 5 февраля 1927 г. С. 4.

1927 թ. փետրվարի 1-ին Զյուրդամիր կայարանում վախճանվում և 5-ին գերեզմանոցում է ամփոփվում բժիշկ դր. Գարեգին Ավետիսյան Մնացականյանցը¹:

¹ Заря востока. № 1395. 4 февраля 1927 г. С. 4; № 1396. 5 февраля 1927 г. С. 4.

1927 թ. փետրվարի 9-ին վախճանվում և 11-ին գերեզմանոցում է ամփոփվում Սոֆյա Կարապետյան Ղազարյանցը¹:

¹ «Մարտակոչ», 1927, № 33, 11 փետրվարի, էջ 4:

1927 թ. փետրվարի 9-ին վախճանվում և 13-ին գերեզմանոցում է ամփոփվում Մեխակ Ղարաջյանը (հոգեհանգիստը՝ Ջգրաշենի Սբ. Ավետյաց եկեղեցում)¹:

¹ «Մարտակոչ», 1927, № 35, 13 փետրվարի, էջ 4:

1927 թ. փետրվարի 9-ին վախճանվում և գերեզմանոցում է ամփոփվում բազմապատակ բժիշկ Գևորգ Մարտինյան Լազարյանցը¹:

¹ Рабочая правда. № 34. 12 февраля 1927 г.

1927 թ. փետրվարի 13-ին գերեզմանոցում է ամփոփվում Մարիամ Բարլումյանցը¹:

¹ «Մարտակոչ», 1927, № 34, 12 փետրվարի, էջ 4:

1927 թ. փետրվարի 13-ին վախճանվում և 17-ին գերեզմանոցում է ամփոփվում Սերգո Հակոբյան Պանյանցը¹:

¹ «Մարտակոչ», 1927, № 37, 16 փետրվարի, էջ 4:

1927 թ. փետրվարի 18-ին վախճանվում և 20-ին գերեզմանոցում է ամփոփվում Աննա Պապայան Թերզյանցը¹:

¹ «Մարտակոչ», 1927, № 41, 20 փետրվարի, էջ 4:

1927 թ. փետրվարի 20-ին գերեզմանոցում է ամփոփվում «Ինտերնացիոնալ» առաջին պետական կարտոնային ֆաբրիկայի վերատեսչի օգնական Սուրեն Ստեփանյան Ալանյանցը¹:

¹ «Մարտակոչ», 1927, № 41, 20 փետրվարի, էջ 4:

1927 թ. փետրվարի 19-ին վախճանվում և 21-ին գերեզմանոցում է ամփոփվում Պետրոս Գ. Ջաքարյանը¹:

¹ «Մարտակոչ», 1927, № 41, 20 փետրվարի, էջ 4:

1927 թ. փետրվարի 27-ին գերեզմանոցում են ամփոփվում Արտաշես (Արտյուշա) Մանթուրյանը և Ռուզան Պետրոսյան Էլչիբեգյանը¹:

¹ «Մարտակոչ», 1927, № 46, 27 փետրվարի, էջ 4:

1927 թ. փետրվարի 27-ին վախճանվում և մարտի 1-ին գերեզմանոցում է ամփոփվում «Մարտակոչ»-ի գրաշար Մկրտիչ (Միկիչ) Կիրակոսյանը¹:

¹ «Մարտակոչ», 1927, № 47, 1 մարտի, էջ 4:

1927 թ. մարտի 3-ին գերեզմանոցում է ամփոփվում Մարգիս (Մաքո) Արիստակեսյան Գևորգյանցը¹:

¹ «Մարտակոչ», 1927, № 48, 2 մարտի, էջ 4:

1927 թ. մարտի 7-ին վախճանվում և 9-ին գերեզմանոցում է ամփոփվում Գրիգոր Գաբրիելյան Հարությունյանցը¹:

¹ «Մարտակոչ», 1927, № 54, 9 մարտի, էջ 4:

1927 թ. մարտի 12-ին վախճանվում և 15-ին գերեզմանոցում է ամփոփվում Պավել Դմիտրիի Մելիք-Շահնազարյանցը¹:

¹ Заря востока. № 1426. 15 марта 1927 г. С. 6.

1927 թ. մարտի 17-ին վախճանվում և 18-ին գերեզմանոցում է ամփոփվում Հովհաննես (Իվան) Միքայելյան Ալիսանյանցը¹:

¹ Заря востока. № 1429. 18 марта 1927 г. С. 6.

1927 թ. մարտի 17-ին վախճանվում և 20-ին գերեզմանոցում է ամփոփվում Էդուարդ Վշտունին¹:

¹ «Մարտակոչ», 1927, № 61, 18 մարտի, էջ 4; № 62, 20 մարտի, էջ 4:

1927 թ. մարտի 17-ին վախճանվում և 20-ին գերեզմանոցում է ամփոփվում Աննա Զերեսթեջյանցը¹:

¹ Заря востока. № 1430. 20 марта 1927 г. С. 6.

1927 թ. մարտի 18-ին վախճանվում և 20-ին գերեզմանոցում է ամփոփվում Սոֆյա Գարսոյանցը¹:

¹ Заря востока. № 1430. 20 марта 1927 г. С. 6.

1927 թ. մարտի 28-ին գերեզմանոցում է ամփոփվում Մարգարիտա Մելքունյանը¹:

¹ Заря востока. № 1436. 27 марта 1927 г. С. 6.

1927 թ. մարտի 30-ին գերեզմանոցում է ամփոփվում Ավետիս Մելքոնյան Նահապետյանցը¹:

¹ Заря востока. № 1439. 30 марта 1927 г.

1927 թ. ապրիլի 7-ին վախճանվում և 10-ին գերեզմանոցում է ամփոփվում Հարություն Գրիգորյան Սապոնճյանցը¹:

¹ «Մարտակոչ», 1927, № 80, 10 ապրիլի, էջ 4:

1927 թ. ապրիլի 9-ին վախճանվում և 12-ին գերեզմանոցում է ամփոփվում Հայկանուշ Շաղինյանցը¹:

¹ Заря востока. № 1449. 12 апреля 1927 г. С. 6.

1927 թ. ապրիլի 11-ին վախճանվում և 12-ին գերեզմանոցում է ամփոփվում Նադեժդա Վարդանյանցը¹:

¹ Заря востока. № 1449. 12 апреля 1927 г. С. 6.

1927 թ. ապրիլի 12-ին վախճանվում և 16-ին գերեզմանոցում՝ Գրիգոր Արծրունու գերեզմանի հարևանությամբ է ամփոփվում բանահավաք, ազգագրագետ Տիգրան Նավասարդյանը (ծնվ. 1861 թ., Էջմիածին)¹: 1882-1903 թթ. ընթացքում հեղինակել է 12 աշխատություն, որոնցից 10-ը պարունակում են Հայաստանի ամենախուլ վայրերի բնակիչներից գրի առնված 80 հեքիաթ, 11-րդ հատորը՝ ասացվածքներ, հանելուկներ և այլն, իսկ 12-րդը բարբառների բառարան է²:

¹ «Մարտակոչ», 1927, № 84, 15 ապրիլի, էջ 4; № 85, 16 ապրիլի, էջ 4; Заря востока. № 1452. 15 апреля 1927 г. С. 6.

² Заря востока. № 1453, 16 апреля 1927 г. С. 5.

1927 թ. ապրիլի 11-ին վախճանվում և 17-ին գերեզմանոցում է ամփոփվում փոխգնդապետ Ալեքսանդր (Մաշա) Գավթյան Բաժբեուկ-Մելիքյանցը¹:

¹ Заря востока. № 1459. 23 апреля 1927 г. С. 6.

1927 թ. ապրիլի 14-ին վախճանվում և 17-ին գերեզմանոցում է ամփոփվում Մալքի Կարապետյան Տեր-Միքայելյանցը¹:

¹ Заря востока. № 1453. 16 апреля 1927 г. С. 6.

1927 թ. ապրիլի 16-ին վախճանվում և 19-ին գերեզմանոցում է ամփոփվում Ասատուր Թամասյան Սկրտունյանցը¹:

¹ Заря востока. № 1455. 19 апреля 1927 г. С. 6.

1927 թ. ապրիլի 17-ին վախճանվում և 19-ին գերեզմանոցում է ամփոփվում Հովհաննես Թումանյանի դուստրը՝ Անուշը¹:

¹ «Մարտակոչ», 1927, № 87, 19 ապրիլի, էջ 4; Заря востока. № 1455. 19 апреля 1927 г. С. 6.

1927 թ. ապրիլի 16-ին վախճանվում և 19-ին գերեզմանոցում է ամփոփվում Աննա Աթաբեկյան-Մամուչարյանցը¹:

¹ Заря востока. № 1455. 19 апреля 1927 г. С. 6.

1927 թ. ապրիլի 20-ին վախճանվում և 21-ին գերեզմանոցում է ամփոփվում Սավինազ Հարությունյան Տալյանը¹:

¹ «Մարտակոչ», 1927, № 89, 21 ապրիլի, էջ 4:

1927 թ. ապրիլի 24-ին վախճանվում և 27-ին գերեզմանոցում է ամփոփվում Վարդուհի Աղամյանը¹:

¹ «Մարտակոչ», 1927, № 93, 27 ապրիլի, էջ 4; Заря востока. № 1461. 27 апреля 1927 г. С. 6.

1927 թ. մայիսի 17-ին վախճանվում և 21-ին գերեզմանոցում է ամփոփվում Դավիթ Մատթեոսյան Ստեփանյանցը¹:

¹ «Մարտակոչ», 1927, № 113, 21 մայիսի, էջ 4:

1927 թ. մայիսի 23-ին գերեզմանոցում է ամփոփվում Կարապետ Ներսիսյան Մոկոզյանցը¹:

¹ Заря востока. № 1482. 22 мая 1927 г. С. 6.

1927 թ. հունիսի 2-ին գերեզմանոցում է ամփոփվում հայ բեմի նվիրյալ թելավեցի Շուշանիկ Եվանզույանը¹:

¹ Բր., Շուշանիկ Յեվանզույեան, «Մարտակոչ», 1927, № 132, 12 հունիսի, էջ 4:

1927 թ. հունիսի 3-ին վախճանվում և 5-ին գերեզմանոցում է ամփոփվում Լևոն Անդրեասյան Չիլինգարյանցը¹:

¹ «Մարտակոչ», 1927, № 126, 5 հունիսի, էջ 4:

1927 թ. հունիսի 5-ին վախճանվում և 8-ին գերեզմանոցում է ամփոփվում Հռիփսիմե Թալիրյանը¹:

¹ «Մարտակոչ», 1927, № 128, 8 հունիսի, էջ 4:

1927 թ. հունիսի 8-ին վախճանվում և 10-ին գերեզմանոցում է ամփոփվում Վաստ Բադալյան Ղազարյանցը¹:

¹ «Մարտակոչ», 1927, № 130, 10 հունիսի, էջ 4:

1927 թ. հունիսի 19-ին գերեզմանոցում է ամփոփվում Վոլոչկա Թադևոսյան Բեժանյանցը¹:

¹ Заря востока. № 1506. 19 июня 1927 г. С. 5.

1927 թ. հունիսի 19-ին գերեզմանոցում է ամփոփվում Եփեմյա Սոսյան Վարդունյանցը¹:

¹ Заря востока. № 1506. 19 июня 1927 г. С. 5.

1927 թ. հունիսի 26-ին վախճանվում և 29-ին գերեզմանոցում է ամփոփվում Վառվառա Գերասիմյան Փուլինյանցը (ծն.՝ Ջուրաբյան)¹:

¹ Заря востока. № 1513. 29 июня 1927 г. С. 4.

1927 թ. հունիսի 29-ին վախճանվում և հուլիսի 3-ին գերեզմանոցում է ամփոփվում Օվսաննա Գրիգորյան Առաքելյանցը¹:

¹ «Մարտակոչ», 1927, № 147, 1 հուլիսի, էջ 4:

1927 թ. հուլիսի 6-ին վախճանվում և 10-ին գերեզմանոցում է ամփոփվում «Մարտակոչ»-ի գրաշար Կոլյա Դավթյան Ռոստոմյանցը¹:

¹ «Մարտակոչ», 1927, № 155, 10 հուլիսի, էջ 4:

1927 թ. հուլիսի 7-ին վախճանվում և 10-ին գերեզմանոցում է ամփոփվում «Մարտակոչ»-ի գրաշար, Բանվորական, գյուղացիական և կարմիրբանակա-

յին պատգամավորների Թիֆլիսի խորհրդի նախագահության անդամ Աբրահամ Հովհաննիսյան Ռոստոմյանցը¹:

¹ «Մարտակոչ», 1927, № 155, 10 հուլիսի, էջ 4:

1927 թ. հուլիսի 12-ին վախճանվում և 14-ին գերեզմանոցում է ամփոփվում Վարդան Բալարեկյան Մուշեղյանցը¹:

¹ «Մարտակոչ», 1927, № 157, 13 հուլիսի, էջ 4:

1927 թ. հուլիսի 17-ին վախճանվում և 21-ին գերեզմանոցում է ամփոփվում Գևորգ Մելիքյանը¹:

¹ «Մարտակոչ», 1927, № 162, 19 հուլիսի, էջ 4:

1927 թ. հուլիսի 19-ին վախճանվում և 21-ին գերեզմանոցում է ամփոփվում Նատալյա Հովսեփյան Միրիմանյանցը (հոգեհանգիստը՝ գլխավոր, նախկին՝ Միքայելյան հիվանդանոցի մատուռում)¹:

¹ Заря востока. № 1531. 20 июля 1927 г. С. 4.

1927 թ. հուլիսի 19-ին վախճանվում և 24-ին գերեզմանոցում է ամփոփվում ատամնաբույժ Արշակ Թադևոսյան Երվանդյանցը (հոգեհանգիստը՝ Նորաշենի Սբ. Աստվածածին եկեղեցում)¹:

¹ «Մարտակոչ», 1927, № 166, 23 հուլիսի, էջ 4: Заря востока. № 1534. 23 июля 1927 г. С. 4.

1927 թ. օգոստոսի 11-ին վախճանվում և 14-ին գերեզմանոցում է ամփոփվում սահմանապահ Սերգեյ Արկադյան Միրումյանցը¹:

¹ Заря востока. № 1552. 13 августа 1927 г. С. 6.

1927 թ. օգոստոսի 15-ին գերեզմանոցում է ամփոփվում Մարիա Գերասիմյան Ներսիսյանցը¹:

¹ Заря востока. № 1552. 13 августа 1927 г. С. 6.

1927 թ. օգոստոսի 15-ին գերեզմանոցում է ամփոփվում Ելիզավետա Ավետյան Գոնյանցը¹:

¹ Заря востока. № 1552, 13 августа 1927 г. С. 6.

1927 թ. օգոստոսի 23-ին Շահպարտյան հիվանդանոցում վախճանվում և 28-ին գերեզմանոցում է ամփոփվում Մարտիրոս (Մատի) Հայրապետյանը¹:

¹ «Մարտակոչ», 1927, № 195, 28 օգոստոսի, էջ 4:

1927 թ. օգոստոսի 24-ին Շահպարտյան հիվանդանոցում վախճանվում և 28-ին գերեզմանոցում է ամփոփվում Աստվածատուր Հովհաննիսյան Ալլահվերդյանցը¹:

¹ «Մարտակոչ», 1927, № 195, 28 օգոստոսի, էջ 4:

1927 թ. սեպտեմբերի 19-ին Կուր գետի վարարմանը զոհ է գնում և գերեզմանոցում ամփոփվում № 46 ճարտարապետաշինարարական ուսումնարանի ուսանող Լյովոշկա Տեր-Մովսիսյանը¹:

¹ Заря востока. № 1581. 20 сентября 1927 г. С. 6.

1927 թ. սեպտեմբերի 23-ին վախճանում և 25-ին գերեզմանոցում ամփոփվում Սիմոն Գրիգորյան Ջանիբեկյանցը¹:

¹ Заря востока. № 1585. 25 сентября 1927 г. С. 6.

1927 թ. հոկտեմբերի 18-ին գերեզմանոցում է ամփոփվում Սիրանուշ Հովսեփյանցը¹:

¹ Заря востока. № 1604. 18 октября 1927 г. С. 6.

1927 թ. հոկտեմբերի 25-ին գերեզմանոցում է ամփոփվում Ելիզավետա Բաղդասարյան Գաղիշչյանցը¹:

¹ Заря востока. № 1610. 25 октября 1927 г. С. 6.

